ԵՐԵՎԱՆԻ Վ. ԲՐՅՈՒՍՈՎԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ԼԵԶՎԱՀԱՍԱՐԱԿԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՇԱՀԻՆՅԱՆ ԱՆԻ ՀՐԱՉՅԱՅԻ

ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԳԻՏԵԼԻՔԱՀԵՆՔ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

ԺԳ.00.01 «Մանկավարժության տեսություն և պատմություն» մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար

Գիտական ղեկավար՝ մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Հայկ Հմայակի Պետրոսյան

ԵՐԵՎԱՆ-2018

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ....4

ԳԼՈՒԽ I. ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԷՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԳԻՏԵԼԻՔԱՀԵՆՔ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ....10

1.1. Մտավոր սեփականության պատմական զարգացումը, տեսակները և առանձնահատկությունները....10

1.2. Մտավոր սեփականության պահպանման ոլորտի կարգավորման և բարեփոխման ազգային ու միջազգային փորձը....27

1.3. Մտավոր սեփականության ոլորտի հիմնախնդիրները ՀՀ գիտելիքահենք տնտեսության զարգացման համատեքստում....36

ԳԼՈՒԽ II. ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀՀ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ....46

2.1. ՀՀ բուհերի դերը մտավոր սեփականության ոլորտի բարեփոխման գործընթացներում....46

2.2. ՀՀ բուհերում հեղինակային իրավունքի պահպանման օրենսդրական հիմքերը....60

2.3. Մտավոր սեփականության կրթության կազմակերպման և իրականացման նախադրյալները ՀՀ բուհական համակարգում....73

2.3.1. Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարանի և Կենտրոնական Ասիայի ամերիկյան համալսարանի գործունեության համեմատական վերլուծություն....73

2.3.2. Մտավոր սեփականության կրթության կազմակերպման ինստիտուցիոնալ մոտեցումները (Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարանի օրինակով)....82

ԳԼՈՒԽ III. ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԵՎ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԳԻՏԱԿԱՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ ՀՀ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ....92

3.1. Մտավոր սեփականության պահպանման ռազմավարական մոտեցումները ՀՀ բուհերում....92

3.2. Ակադեմիական ազնվության պահպանման հիմնախնդիրներն ու դրանց լուծման մանկավարժագիտական մոտեցումները ՀՀ բուհերում....116

3.3. ՀՀ բուհերում գրագողության դրսևորումները և դրա կանխարգելման մանկավարժական ուղիները....131

3.4. Մտավոր սեփականության կրթության կազմակերպման մոդելը ՀՀ բուհերի համար..149

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ 158

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ 161

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ 176

ՀԱՎԵԼՎԱԾ 1. «ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ» ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑԻ ՆԿԱՐԱԳԻՐ 176

ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՄԱՍԻՆ ՀՀ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐ 186

ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈԼՈՐՏԻ ԱՌԱՆՑՔԱՅԻՆ ԴԵՐԱԿԱՏԱՐՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ (ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ՂՐՂԶՍՏԱՆԻ ՕՐԻՆԱԿՈՎ) 196

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Թեմայի արդիականությունը: Գիտելիքահենք տնտեսության կայուն զարգացման համատեքստում աշխատանքի և կրթության շուկաների համաչափ զարգացման համար առավել քան երբևէ կարևորվում են մտավոր ներուժի բացահայտումը, արդյունավետ օգտագործումն ու գնահատումը, նորարարության ու ստեղծարարության խթանումը: Սակայն գիտության ու կրթության ոլորտների անհամաչափ զարգացման ներկայիս պայմաններում մտավոր աշխատանքի խթանումը, այդ աշխատանքի արդյունքների միջոցով մտավոր սեփականության ստեղծումը, գիտելիքահենք տնտեսության զարգացումը պահանջում են գիտելիքի ստեղծման ու փոխանցման առավել արդյունավետ մեխանիզմներ և ոլորտում առկա խնդիրների լուծման նոր մոտեցումներ:

Այս մարտահրավերները գիտելիքահենք հասարակության և բարձրագույն կրթության ոլորտի զարգացման գործընթացներում ներգրավված հիմնական դերակատարներին առաջադրում են հիմնարար փոփոխությունների կատարման պահանջ: Բուհերն այդ մարտահրավերների հաղթահարման հանձնառությունը կրող առանցքային դերակատարներից են, քանի որ նրանց ներկայիս գործառույթների ընդլայնված շրջանակն ընդգրկում է նաև ակադեմիական հանրությունից ժամանակակից գիտելիքահենք հասարակության փոխակերպմանն ուղղված գործընթացների խթանումը: Մարտահրավերները դրական միտումների վերածելու նկատառումով բուհերը պետք է մշակեն և ներդնեն այնպիսի ինստիտուցիոնալ մեխանիզմներ, որոնք կխթանեն իրենց առանցքային շահակիցների մտավոր ստեղծագործական գործունեությունը, այդ գործունեության արդյունքների արդյունավետ օգտագործումն ու մտավոր սեփականության պահպանումը: Արդյունքում բուհերը ոչ միայն պատրաստում են ոլորտի մասնագետներ, այլ նաև խթանում են իրավագիտակցության բարձր մակարդակ ունեցող գիտելիքահենք ակադեմիական հասարակության զարգացումը:

Գիտելիքահենք տնտեսության և հասարակության զարգացման վերոնշյալ համընդհանուր հիմնախնդիրներն օրակարգային են նաև Հայաստանի

Հանրապետությունում գիտակրթական բարեփոխումներ իրականացնող առանցքային դերակատարների ու շահագրգիռ կողմերի համար: Տնտեսության, գիտության ու կրթության ոլորտների անհամաչափ զարգացումը խոչընդոտում է ՀՀ գիտելիքահենք տնտեսության երկարաժամկետ զարգացումը: Մինչդեռ վերջինս ենթադրում է գիտական հիմնարար հետազոտությունների ոլորտի խթանում, որի հիմքում մտավոր կապիտալի գնահատումն է, մտավոր սեփականության պահպանումը և ոլորտային բարեփոխումների մասնակիցների, այդ թվում՝ բուհերի դերի բարձրացումը:

Մտավոր սեփականության իրավունքների, ներառյալ հեղինակային իրավունքի և ակադեմիական ազնվության պահպանման (որպես մտավոր սեփականության պահպանման ակադեմիական դրսևորում) հիմնախնդիրներին նվիրված մեծածավալ աշխատանքներ են կատարվել մտավոր սեփականության, տնտեսագիտության, իրավաբանության և կրթության ոլորտների մասնագետների, տեսաբանների, փորձագետների, մանկավարժների, գիտաուսումնական ու գիտահետազոտական կենտրոնների և անհատ հետազոտողների կողմից (*Ա. Խաչիկյան, Ս. Ներսիսյան, Ս. Վարդանյան, Հ. Գալստյան, Յ.Սմիթ, Ա. Բարոու, Զ. Չիմա, Ք. Փիթեր, Դ. Մքքաբե, Լ. Տրևինո, Մ. Անտոնովա, Ն. Դանիլովա, Ն. Կորշունովա, Ե. Սամոխվալովա, Ք. Քրուզ, Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպություն, Բարձրագույն կրթության հավատարմագրման խորհուրդ (ԱՄՆ), ՀՀ մտավոր սեփականության գործակալություն, ՀՀ «Հայհեղինակ» հասարակական կազմակերպություն, Գրադարանների ասոցիացիայի և ինստիտուտների միջազգային ֆեդերացիա (IFLA), «Էլեկտրոնային տեղեկատվություն գրադարանների համար» (EIFL) հասարակական կազմակերպություն և այլն),* որոնց գիտահետազոտական և գիտամեթոդական աշխատանքների համապարփակ ուսումնասիրումը սույն հետազոտության մեթոդաբանության հիմքն են հանդիսացել:

Այդուհանդերձ, մասնավորապես ՀՀ բուհերում մտավոր սեփականության պահպանման և մտավոր սեփականության կրթության կազմակերպման հիմնախնդիրները մինչ այժմ և՛ բուհերի ռազմավարական կառավարման, և՛ մանկավարժագիտության տեսանկյուններից համակարգային ու համապարփակ հետազոտության չեն ենթարկվել: ՀՀ բուհերում դեռևս առկա են մտավոր ներուժի

իրաչափ ու արդյունավետ կիրառումը սահմանափակող ազգային, մշակութային և ինստիտուցիոնալ մի շարք խնդիրներ, որոնք ոչ միշտ են հստակ արտացոլվում բուհերի գործունեության բարելավմանն ուղղված գործընթացներում: Այս խնդիրների արդյունավետ լուծումը բուհերին առաջադրում է ինստիտուցիոնալ կառավարման համակարգերի և մանկավարժագիտական մոտեցումների արդիականացում՝ միտված բուհերի մտավոր կապիտալի, մարդկային ռեսուրսների և ուսումնառողների ուսումնական ու գիտահետազոտական արդյունավետ գործունեության խթանմանը:

Հետազոտության նպատակն է բացահայտել և հիմնավորել մտավոր սեփականության կրթության առանցքային դերը բարձրագույն կրթության բարեփոխումների ու գիտելիքահենք տնտեսության զարգացման գործընթացներում:

Հետազոտության խնդիրները: Սույն հետազոտության նպատակի իրականացման համար առաջադրվել են հետևյալ խնդիրները՝

- հանգամանորեն ուսումնասիրել մտավոր սեփականության ոլորտի առանձնահատկությունները և մտավոր սեփականության պահպանման ազգային ու միջազգային փորձը գիտելիքահենք տնտեսության զարգացման համատեքստում,
- բացահայտել մտավոր սեփականության ու բարձրագույն կրթության ոլորտների փոխկապակցվածությունը և բուհերում մտավոր սեփականության պահպանման առկա հիմնախնդիրները,
- հիմնավորել ՀՀ բուհերում մտավոր սեփականության կրթության կազմակերպման անհրաժեշտությունը և ՀՀ բուհերի կարևոր դերը գիտելիքահենք հասարակության զարգացման խնդրում,
- ուսումնասիրել մտավոր սեփականության կրթության կազմակերպման ռազմավարական և մանկավարժագիտական մոտեցումները ՀՀ բուհերում,
- բացահայտել ակադեմիական ազնվության պահպանման արդի հիմնախնդիրները ՀՀ բարձրագույն կրթության բարեփոխումների համատեքստում,
- մշակել մտավոր սեփականության կրթության կազմակերպման մոդել ՀՀ բուհերի համար և այդ մոդելի առանցքային բաղադրիչ հանդիսացող՝ մտավոր

սեփականության պահպանմանն առնչվող առանցքային թեմաները բովանդակող ուսումնական դասընթաց:

Հետազոտության գիտական նորույթը:

- Համակողմանի ուսումնասիրմամբ բացահայտվել են մտավոր սեփականության և բարձրագույն կրթության ոլորտների փոխկապակցվածությունն ու ընդհանուր առանձնահատկությունները գիտելիքահենք տնտեսության զարգացման համատեքստում:
- Նորովի լուսաբանվել են բարձրագույն կրթության ոլորտում մտավոր սեփականության պահպանման հիմնախնդիրներն ու մարտահրավերները:
- Հիմնավորվել է մտավոր սեփականության կրթության կարևորությունը և բուհերում դրա կազմակերպման անհրաժեշտությունը:
- Բացահայտվել են ակադեմիական ազնվության պահպանման հիմնախնդիրները, և դիտարկվել են դրանց լուծման ռազմավարական ու մանկավարժագիտական ժամանակակից մոտեցումները:
- Մշակվել է ՀՀ բուհերում մտավոր սեփականության կրթության կազմակերպման մոդել:

Պաշտպանությանը ներկայացվող հիմնական դրույթները:

1. Գիտելիքահենք տնտեսությունը զարգանում է մտավոր սեփականության պահպանման ոլորտի համապատասխան գիտելիքներ և իրավագիտակցության բարձր մակարդակ ունեցող հասարակության մտավոր ստեղծագործական գործունեության խթանման միջոցով:
2. Բուհերում մտավոր սեփականության պահպանման հստակ մշակված քաղաքականությունների ու ռազմավարությունների բացակայությունը կամ դրանց մասնակի կիրառումը խոչընդոտում է մտավոր սեփականության կրթության արդյունավետ կազմակերպումը:
3. Միայն որոշ ոլորտների (իրավաբանություն, տնտեսագիտություն) և դրանց համապատասխան մասնագիտությունների կրթական ծրագրերի կամ դասընթացների շրջանակներում իրականացվող մտավոր սեփականության կրթությունը սահմանափակում է այլ մասնագիտական ոլորտներում ընդգրկված

ուսումնառողների՝ մտավոր սեփականության պահպանման ոլորտի հիմնարար գիտելիքներին տիրապետելու հնարավորությունները:

4. Բուհերում մտավոր սեփականության պահպանման խնդրի նկատմամբ կրթության կառավարման և մանկավարժագիտական ժամանակակից մոտեցումների համալիր կիրառումն էապես խթանում է ուսումնառողների ստեղծագործական ու գիտահետազոտական աշխատանքների արդյունավետ կատարումը և նպաստում է բուհերում ակադեմիական ազնվության պահպանման մշակույթի ամրապնդմանը:
5. ՀՀ բուհերում մտավոր սեփականության կրթության արդյունավետ կազմակերպման համար անհրաժեշտ է այնպիսի մոդել, որը կհիմնվի միջազգային լավագույն փորձի վրա, կարտացոլի բարձրագույն կրթության ազգային համակարգի առանձնահատկությունները և կհամակցի ռազմավարական կառավարման և մանկավարժագիտական արդի մոտեցումները:

Հետազոտության տեսական նշանակությունը: Սույն հետազոտության շրջանակում մասնագիտական գրականության և գիտամեթոդական աղբյուրների համապարփակ ուսումնասիրության արդյունքներով հստակեցված են ազգային և միջազգային մակարդակներում մտավոր սեփականության պահպանման ոլորտի առանձնահատկություններն ու հիմնախնդիրները, համակարգված ու ամփոփված են գիտելիքահենք տնտեսության զարգացման և մտավոր սեփականության կրթության փոխկապակցված խնդիրները, վեր են հանված ՀՀ բուհերում մտավոր սեփականության կրթության կազմակերպման ընդհանուր նախադրյալները, տեսականորեն վերլուծության են ենթարկված ակադեմիական ազնվության պահպանման հիմնախնդիրները, և հիմնավորված են բացահայտված հիմնախնդիրների արդյունավետ լուծման ռազմավարական ու մանկավարժագիտական արդի մոտեցումները:

Հետազոտության գործնական նշանակությունը: Հետազոտության արդյունքները կարող են ներդրվել բարձրագույն կրթության ոլորտի բարեփոխման գործընթացներում և խթանել մտավոր սեփականության պահպանման մշակույթի ամրապնդումը կրթության տարբեր մակարդակներում և ուսումնառության տարբեր փուլերում: Սույն հետազոտության գործնական նշանակությունը հատկապես

արտացոլվում է ուսումնասիրությունների արդյունքների հիման վրա մշակված մոդելի և ուսումնական դասընթացի միջոցով: Մշակված մոդելն ու դասընթացը՝ որպես մտավոր սեփականության կրթության կազմակերպման ընդհանուր և մասնավոր կարևոր բաղադրիչներ, կարող են օգտակար լինել բարձրագույն կրթության ու մտավոր սեփականության ոլորտների հիմնախնդիրներով զբաղվող մասնագետների, կրթության քաղաքականություն մշակողների, բուհերի վարչական կազմերի, կրթության կառավարիչների, կրթական ծրագրեր մշակողների, պրոֆեսորադասախոսական կազմի, մանկավարժների, վերապատրաստողների, ուսանողների, հետազոտողների և այլ շահագրգիռ կողմերի համար:

Հետազոտության արդյունքները կարող են օգտագործվել կրթական ծրագրերի մշակման գործընթացներում, վերապատրաստման և որակավորման բարձրացման դասընթացներում, ուսումնամեթոդական ձեռնարկներում, դասագրքերում, գիտահետազոտական աշխատանքներում, բուհերի ռազմավարություններում, բարձրագույն կրթության բարեփոխման նախագծերում և ուսումնական ու գիտահետազոտական բնույթի այլ աշխատանքներում:

Ատենախոսության կառուցվածքը և ծավալը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացություններից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածներից: Ատենախոսության ընդհանուր ծավալը կազմում է 175 էջ:

ԳԼՈՒԽ I. ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԷՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԳԻՏԵԼԻՔԱՀԵՆՔ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

1.1. Մտավոր սեփականության պատմական զարգացումը, տեսակները և առանձնահատկությունները

Ժամանակակից հասարակության շարունակական զարգացումը դարձել է գլոբալ հիմնախնդիր, որը պահանջում է մտավոր ներուժի բացահայտման, մտավոր կապիտալի գնահատման ու նպատակային օգտագործման խթանում, մտավոր ստեղծագործական գործունեության և գիտելիքի արժևորում, նոր գիտելիքի ստեղծման ու առկա գիտելիքի գործնականացում և մարդկային կապիտալը որպես հասարակության բարեկեցության առանցքային նախապայմանի ընդունում: Այս հիմնարար պահանջների բավարարման պարագայում հասարակության զարգացումը պետական աջակցությամբ կարող է ստեղծել գիտելիքահենք տնտեսության այնպիսի նախադրյալներ, որոնք հիմք կծառայեն պետության սոցիալ-տնտեսական պայմանների երկարաժամկետ բարելավման համար: Մինչդեռ, ներկայիս մի շարք զարգացող երկրներում մտավոր կապիտալի օգտագործման, ստեղծարարության ու նորարարության խթանման և նոր գիտելիքի շարունակական վերարտադրման խնդիրներին դեռևս առաջնահերթ լուծում չի տրվում՝ պայմանավորված մարդկային կապիտալի զարգացման ոչ արդյունավետ պետական ու ինստիտուցիոնալ քաղաքականություններով և ռեսուրսների սակավությամբ:

Գիտելիքահենք տնտեսության զարգացման հիմքը գիտելիքի կառավարումն է, որը պահանջում է գիտելիքի և մտավոր կապիտալի կառավարման ավանդական մոտեցումներից էապես տարբերվող մոտեցումների կիրառում, այդ թվում՝ կառավարման ավելի ճկուն համակարգերի գործադրում և ավելի շատ շեշտադրում մտավոր ստեղծագործական գործունեության խթանման վրա: Սոցիալ-տնտեսական զարգացման անցումային փուլում գտնվող զարգացող մի շարք երկրներում, ներառյալ Հայաստանի Հանրապետությունում, այն կազմակերպությունները կամ հաստատությունները, որոնք կրթության միջոցով ստեղծում, փոխանցում և տարածում են գիտելիքներ, դեռևս գիտելիքի կառավարման ավանդական և ժամանակակից մոտեցումների արդյունավետ համադրման ու կիրառման խնդիր ունեն: Ուրեմն,

ազգային մակարդակում գիտելիքահենք տնտեսության ու գիտելիքահենք հասարակության զարգացմանը հիմնականում խոչընդոտում են այն տարբերությունները, որոնք առկա են մտավոր կապիտալի զարգացման ազգային և միջազգային համակարգերի միջև:

Տեղեկատվական տեխնոլոգիաների արագընթաց զարգացումը նույնպես առաջ է բերում գիտելիքի և տեղեկույթի բովանդակության ու դրանց օգտագործման ձևերի էական փոփոխություններ: Ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների տիրապետումը նեղ մասնագիտական ոլորտի սահմաններից դուրս է եկել և բազմաթիվ ճյուղավորումներով ներթափանցել է նաև գիտության, կրթության և աշխատանքի շուկաներ՝ աշխատուժին առաջադրելով գիտելիքների ու կարողությունների տիրապետման ավելի բարձր շեմի ապահովման և զարգացմանը տրվող ավելի կարճ ժամանակահատվածի մարտահրավերը: Այս պայմաններում ազգային պետական քաղաքականությունները պետք է ավելի շատ շեշտադրեն մարդկային կապիտալի զարգացումը՝ խրախուսելով հատկապես նոր գիտելիքի ստեղծումն ու դրա արդյունավետ օգտագործումը, շարունակական ուսումնառությունը, համագործակցային մոտեցումների կիրառմամբ գիտելիքի ու տեխնոլոգիաների արդյունավետ կիրառումը [OECD 1996: 7]:

Գիտելիքը և մտավոր ստեղծագործական աշխատանքի արդյունքը գնահատելու և այն որպես գիտական արժեք հանրությանը փոխանցելու համար կարևոր նախապայման է այդ արդյունքի կամ գիտելիքի ճիշտ պահպանումը: Վերջինս ենթադրում է տվյալ արդյունքի կամ գիտելիքի օգտագործման օրինական ձևերի կիրառում հանրության և այլ բոլոր շահակիցների կողմից: Այս պարագայում մտավոր արդյունքի օգտագործման ձևերի կիրառումը ենթադրում է, որ առկա է առնվազն իրավական շրջանակ, որով սահմանվում, կարգավորվում և վերահսկվում է արդյունքների ստեղծումն ու օգտագործումը, և իրավագիտակցության համապատասխան մակարդակ ունեցող հանրություն, որը տիրապետում է սեփական և այլոց մտավոր ստեղծագործական գործունեության արդյունքների օգտագործման կանոններին, ձևերին ու մտավոր սեփականության իրավունքներին:

Մտավոր սեփականություն (ՄՍ) հասկացությունը ծագել է դեռևս հնագույն ժամանակներից՝ սկսած Հին Հռոմից և Հունաստանից, և այդ ժամանակներից ի վեր գոյություն է ունեցել ստեղծագործության և ստեղծագործողի միջև ուղղակի կապ, իսկ ուրիշի աշխատանքի անօրինական յուրացումը դատապարտվել է հասարակության կողմից: Մտավոր սեփականության հասկացությունը լայն կիրառություն է ստացել հատկապես վերջին 150-200 տարիների ընթացքում՝ ընդգրկելով ՄՍ պահպանվող բոլոր օբյեկտները, որոնք, սակայն, միայն 18-րդ դարի վերջերին համարվեցին սեփականության առանձին օբյեկտներ [Խաչիկյան և Ներսիսյան 2008: 204, Бентли и Шерман 2004: 23]: Մտավոր սեփականությամբ պահպանվող օբյեկտներին առնչվող ազգային օրենսդրական դաշտերը ժամանակի ընթացքում զգալի փոփոխություններ կրեցին՝ ընդգրկելով մի շարք բարեփոխումներ և հստակեցումներ, այդ թվում՝ սահմանափակումներ ու բացառություններ, որոնք ընդհանուր առմամբ ուղղված են մտավոր սեփականության բարեխիղճ օգտագործման ապահովմանը և հեղինակների ու օգտատերերի միջև իրավահարաբերությունների կարգավորմանը: Ընդ որում, ՄՍ պահպանությանն ու պաշտպանությանն առնչվող օրենսդրական դաշտերի կատարելագործման ներկայիս գործընթացներում կարևորվում է նաև մտավոր ստեղծագործական աշխատանքի արդյունքում ստեղծված արժեքները հանրօգուտ ու մատչելի դարձնելու հիմնախնդիրը:

Ուրիշի ստեղծագործություններն անօրինական կերպով տիրապետողների կամ օգտագործողների գործունեությունը կանխելու նպատակով գիտելիքահենք տնտեսության զարգացման քաղաքականություն որդեգրած ցանկացած պետություն սահմանում և գործադրում է պաշտպանական և կարգավորող մեխանիզմներ իրավական շրջանակի միջոցով: Պետության համար մտավոր սեփականությունը մտավոր գործունեության արդյունքների ամբողջությունն է, որոնց ստեղծողները, իրավատերերը (պետությունը նույնպես իրավատեր է) և ժառանգներն իրենց ստեղծած ստեղծագործության նկատմամբ իրավունքների պաշտպանության կարիք ունեն:

Սկզբնական արտադրողների ու ստեղծագործողների շահերը և իրենց ստեղծագործությունների նկատմամբ բացառիկ իրավունքները պաշտպանելու նպատակով զարգացած մի շարք պետություններ ընդունել են ՄՍ իրավունքների

պաշտպանության մասին օրենքներ հետևյալ հիմնական պատճառներով [Մտավոր սեփականության գործակալություն և ՄՍՀԿ 2009, «Հայհեղինակ» ՀԿ և ՄՍՀԿ 2009].

- ՄՍ իրավունքի պաշտպանութան օրենքները բարեխիղճ առևտրի, ստեղծագործական գործընթացի խթան են և օրինական ձևով տարածում ու պաշտպանում են ստեղծագործական աշխատանքները: Սա ապահովում է հասարակության իրատեսական զարգացումը և նպաստում է տնտեսական ներդրումների ծավալների աճին:
- ՄՍ իրավունքի պաշտպանութան օրենքներն ապահովում են անձնական գույքային և ոչ գույքային իրավունքների իրավական պահպանությունը հեղինակների ստեղծագործությունների նկատմամբ, ինչպես նաև այդ ստեղծագործությունների հասանելիությունը հանրությանը:

Ամբողջ աշխարհում ՄՍ իրավունքները պաշտպանելու, ստեղծագործողներին ու նորարարներին իրենց տաղանդի և ստեղծագործական աշխատանքի դիմաց վարձատրելու խնդրով ներկայումս զբաղվում է **Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպությունը (ՄՍՀԿ)**: Այն մասնագիտացված կազմակերպություն է, որի գործունեության սկիզբը դրվել է Արդյունաբերական սեփականության պահպանության մասին Փարիզյան կոնվենցիայով (1883 թ.) և Գրական ու գեղարվեստական ստեղծագործությունների պահպանության մասին Բեռնի կոնվենցիայով (1886 թ.): ՄՍՀԿ-ի գործունեությունն ուղղված է ՄՍ պահպանությանն ամբողջ աշխարհում, ինչպես նաև Փարիզի և Բեռնի կոնվենցիաների կողմից կնքված պայմանագրերի, համաձայնագրերի շրջանակներում ՄՍ պահպանության բնագավառի միությունների միջև վարչական համագործակցության ապահովմանը [Խաչիկյան և Ներսիսյան 2008: 185, World Intellectual Property Organization 2008]:

Ըստ ՄՍՀԿ 1967 թ. հիմնադիր կոնվենցիան սահմանել է մի շարք օբյեկտներ, որոնք ենթակա են ՄՍ իրավունքների պահպանման [Մտավոր սեփականության գործակալություն և ՄՍՀԿ 2009: 4].

ՍԽԵՄԱ 1. ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՈՎ ՊԱՀՊԱՆՎՈՂ ՕԲՅԵԿՏՆԵՐ


1.	գիտության, գրականության և արվեստի բնագավառի ստեղծագործություններ
2.	ցանկացած բնագավառի գյուտեր
3.	գիտական հայտնագործություններ
4.	կատարողների կատարումները, հնչյունագրերը, ռադիոհեռուստատեսային հաղորդումներ
5.	արդյունաբերական նմուշներ
6.	ապրանքային, սպասարկման նշաններն ու առևտրային անվանումներ
7.	վերոնշյալ արդյունքներին առնչվող բոլոր այլ իրավունքներ

Ընդհանուր առմամբ, ՄՍ-ն այն տեղեկություններն ու գիտելիքներն են, որոնք արտահայտված են տվյալ ստեղծագործության կամ աշխատության մեջ, և դրանք պարունակող կրկնօրինակները անսահմանափակ են ու կարող են տարածվել առանց տարածքային սահմանափակման: Հետևաբար ՄՍ իրավունքները չեն պատկանում տվյալ ստեղծագործությունը կրկնօրինակողներին, և ՄՍ իրավունքների պաշտպանումը վերաբերում է տվյալ ստեղծագործության կամ աշխատության բովանդակությանը՝ հաշվի առնելով նաև այն փաստը, որ գաղափարն առանց որևէ նյութական կրիչի վրա պահպանման չի համարվում մտավոր սեփականության իրավունքով պաշտպանվող օբյեկտ:

ՄՍ համակարգն ապահովում է **նյութական** և **ոչ նյութական ակտիվների** օգտագործումը: Նյութական ակտիվներ են սարքավորումները, մեքենաները, շենքերը և այլն, իսկ ոչ նյութական ակտիվները ներառում են մարդկային կապիտալը, գաղափարները, դիզայնը, բրենդները, ոչ նյութական այլ արդյունքներ [Վարդանյան և Մտավոր սեփականության գործակալություն 2010: 5]:

ՄՍ իրավունքներով պահպանման ենթակա բնագավառները հետևյալն են [World Intellectual Property Organization 2008]՝

ՍԽԵՄԱ 2. ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐԸ



Հեղինակային իրավունքը մարդու մտավոր գործունեության արդյունքում ստեղծված ստեղծագործությունների նկատմամբ բացառիկ իրավունքների ձեռքբերումն է, այդ ստեղծագործությունների տնօրինումն ու օգտագործումը ցանկացած եղանակով՝ անկախ արդյունքի որակից: Ստեղծագործություններ են համարվում գրքերը, ֆիլմերը, երաժշտության, արվեստի այլ ճյուղերին պատկանող ստեղծագործությունները, համակարգչային ծրագրերը և այլն, որոնք կարող են արտահայտված լինել գրավոր և բանավոր տարբեր ձևերով (տպագիր, ձեռագիր, ասմունք, հրապարակային կատարում, տեսաձայնագրություն, թվային և այլն) [Վարդանյան և Մտավոր սեփականության գործակալություն 2010: 55]: «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» ՀՀ գործող օրենքի համաձայն՝ *«Հեղինակային իրավունքի օբյեկտ է համարվում գրականության, գիտության և արվեստի բնագավառներում հեղինակի ինքնուրույն կամ այլ հեղինակների հետ իրականացրած ստեղծագործական աշխատանքի յուրօրինակ արդյունքը, որն արտահայտված է բանավոր, գրավոր կամ այլ օբյեկտիվ ձևով, ներառյալ՝ մշտապես կամ ժամանակավոր պահպանվող էլեկտրոնային ձևը, անկախ ստեղծագործության ծավալից, նշանակությունից, արժանիքներից ու ստեղծման նպատակից»* [Գլուխ 2, հոդված 3, մաս 1]: Հարկ է նշել,

որ սույն հետազոտության շրջանակն ընդգրկում է ՄՍ պահպանման հիմնախնդիրների դիտարկումը կրթության կազմակերպման և գիտելիքահենք տնտեսության զարգացման համատեքստում ՄՍ կրթության կազմակերպման խնդիրների տեսանկյունից: Հետևապես սույն հետազոտությունում ուսումնասիրություններ և վերլուծություններ իրականացնելիս քննվել են մասնավորապես հեղինակային իրավունքի բնագավառը՝ հաշվի առնելով վերջինիս առանձնահատկություններն ու դրա ուղղակի կապը բարձրագույն կրթության ոլորտի հետ:

Հեղինակային իրավունքների պաշտպանության մասին դրույթն առաջին անգամ ամրագրվել է 1709-1710 թթ., և այն հայտնի է որպես «Աննայի անգլիական օրենք» կամ «Աննա թագուհու կանոնադրություն» [Бентли и Шерман 2004: 105]: Այս օրենքում ամրագրված էական դրույթն այն է, որ ստեղծագործողներին տրվող բացարձակ իրավունքները պետք է ժամանակի առումով լինեն սահմանափակ, որից հետո ստեղծագործությունները դառնում են հանրության սեփականություն: Հետագայում հեղինակային իրավունքի ամրագրման անգլիական օրինակին հետևեցին ԱՄՆ-ն, Ռուսաստանը, Ֆրանսիան, Գերմանիան և եվրոպական մի շարք այլ երկրներ [Խաչիկյան և Ներսիսյան 2008: 205]:

Հեղինակ համարվելու համար պարտադիր է ինքնատիպ ստեղծագործության առկայությունը և դրա վրա հեղինակի անվան նշումը [Վարդանյան Ս. 2010: 2]: Բացի այդ, ©[1] նշանը, որը տեղադրվում է ստեղծագործության յուրաքանչյուր օրինակի վրա՝ որպես ծանուցում տվյալ ստեղծագործության նկատմամբ հեղինակային իրավունքների մասին, տեղեկատվական նշանակություն ունի: Հեղինակային իրավունքի պահպանումը կախված չէ ստեղծագործության ձևից, ծավալից, ստեղծման բուն նպատակից, այլ բովանդակությունից: Հեղինակային իրավունքը ծագում է հենց ստեղծագործության ստեղծման պահից. այն ինքնաբերաբար է, և պետական

[1] Հեղինակային իրավունքի նշանը՝ © (շրջանակի մեջ առնված c տառը անգլերեն «Copyright» բառի առաջին տառն է), որը համաշխարհային կիրառում ունի, օգտագործվում է որպես հիշեցում այն բանի, որ տվյալ ստեղծագործությունը պահպանվում է հեղինակային իրավունքով: «Copyright» եզրույթն անգլերենից թարգմանաբար նշանակում է արտատպման իրավունք: Որպես կանոն՝ նշանին հետևում է հեղինակի անունը, ազգանունը և տվյալ ստեղծագործության ստեղծման տարեթիվը, իսկ այն ստեղծագործությունները, որոնք պարբերաբար թարմացվում են, օրինակ՝ ինտերնետային կայքերում զետեղվածները, ապա հեղինակի անուն-ազգանունից հետո գրվում է երկու տարեթիվ, որի առաջինը լույսընծայման տարեթիվն է, երկրորդը՝ ընթացիկ կամ վերջին թարմացման տարեթիվը:

գրանցման առկայությունը պարտադիր չէ: Պետք է նշել նաև, որ թեև © նշանի բացակայությունը չի նշանակում, որ տվյալ ստեղծագործությունը չի պահպանվում հեղինակային իրավունքով, սակայն նշանն իրավական ուժ չունի և դատաքննության ժամանակ չի կարող իրավունքների խախտումներն ապացուցելու համար հիմք ծառայել [Մտավոր սեփականության գործակալություն և ՄՍՀԿ 2009: 20-21, Խաչիկյան և Ներսիսյան 2008: 223]:

Քանի որ հեղինակային իրավունքը պահպանում է գաղափարի արտահայտման ձևը, ոչ թե բուն միտքը կամ գաղափարը, պետք է նկատի առնել, որ նույն գաղափարի շուրջ կարող են ստեղծվել բազմաթիվ ստեղծագործություններ, սակայն այդ գաղափարի արտահայտման ձևն է, որ ստեղծագործությունը դարձնում է յուրօրինակ: Սա ենթադրում է, որ որպեսզի տվյալ ստեղծագործությունը պահպանվի հեղինակային իրավունքով, պարտադիր նախապայման է ինքնատիպությունը, որ թույլ չի տալիս տվյալ ստեղծագործությանը լինել մեկ այլ ստեղծագործության կրկնօրինակ [Մտավոր սեփականության գործակալություն և ՄՍՀԿ 2009: 17-20]: Ուրեմն, ինքնատիպ կարող է լինել ոչ թե գաղափարը, այլ գաղափարն արտահայտելու ձևը կամ ձևակերպումը, արտահայտչամիջոցը և այլն: Ինքնատիպությունն ակներև դարձնելու նպատակով հղացած գաղափարները նյութականացնում են, գրի առնում, ստեղծում լոգոներ և այլն:

Բեռնի կոնվենցիայում թվարկված է այն ստեղծագործությունների ցանկը, որոնք պահպանվում են հեղինակային իրավունքով (Սխեմա 3): Այս ստեղծագործությունները վերաբերում են կենսագործունեության բոլոր հիմնական ոլորտներին, և դրանց նկատմամբ հեղինակային իրավունքի վերաբերյալ տեղեկացվածությունը կարևոր է ոչ միայն ստեղծագործողի, այլև բոլոր նրանց համար, ովքեր իրենց գործունեության համար օգտագործում են ուրիշներին պատկանող ստեղծագործությունները: Ստորև ներկայացվում է վերոնշյալ կոնվենցիայով ամրագրված ստեղծագործությունների ցանկը [Մտավոր սեփականության գործակալություն և ՄՍՀԿ 2009: 6, 17, «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» ՀՀ օրենք, Հոդված 3].

ՍԽԵՄԱ 3. ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՀՊԱՆՎՈՂ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1.	**Գրավոր ստեղծագործություններ՝**
	գրքեր, դասագրքեր, հանրագիտարաններ, ժողովածուներ, հոդվածներ, վեպեր, պատմվածքներ, ելույթներ, բանաստեղծություններ, դասախոսություններ, թարգմանություններ (որպես ածանցյալ ստեղծագործություններ), ադապտացիաներ, քարոզներ, ակնարկներ, պիեսներ, կայքեր, գովազդներ, պարային շարժումների գրառումներ:
2.	**Երաժշտական ստեղծագործություններ՝**
	երաժշտական կոմպոզիցիաներ ու փոխադրումներ, լիրիկական գործեր, երգեր և հեռախոսազանգեր ցանկացած ձևաչափերով՝ նոտագրված, խտասկավառակի, MP3 ֆայլերի տեսքով և այլն:
3.	**Արվեստի ստեղծագործություններ՝**
	նկարներ, լուսանկարներ, գեղանկարներ, կոմիքսներ, կերպարվեստի, քանդակագործության, ճարտարապետական ստեղծագործություններ, քարտեզներ:
4.	**Պարարվեստի և դրամատիկական ստեղծագործություններ՝**
	պիեսներ, օպերաներ, պարեր, բեմականացումներ, մնջախաղի ստեղծագործություններ:
5.	**Ֆիլմեր, մուլտիմեդիա՝**
	կինոֆիլմեր, մուլտֆիլմեր, հեռուստահաղորդումներ, տեսախաղեր:
6.	**Համակարգչային ծրագրեր՝**
	մարդկային (ելքային տեքստ) և մեքենայական (օբյեկտային կոդ) համակարգչային ծրագրավորման լեզու:
7.	**«Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» ՀՀ օրենքի առաջին մասի դրույթներին համապատասխանող այլ ստեղծագործություններ**

«Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի համաձայն՝ հեղինակային իրավունքի օբյեկտ չեն համարվում՝

- ժողովրդական բանահյուսության և արվեստի ստեղծագործությունները.
- օրվա նորությունների կամ ընթացիկ իրադարձությունների և փաստերի մասին տեղեկատվությունը.
- պաշտոնական փաստաթղթերը՝ իրավական ակտերը, պայմանագրերը և դրանց պաշտոնական թարգմանությունները.
- պաշտոնական խորհրդանիշերն ու նշանները (դրոշներ, զինանշաններ, շքանշաններ, դրամանիշներ).
- քաղաքական ելույթները, դատավարության ընթացքում արտասանված ճառերը.
- առանց մարդու ստեղծագործական գործունեության՝ տեխնիկական միջոցների օգնությամբ ստացված արդյունքները:

Ցանկացած սեփականության օգտագործման, այդ թվում՝ մտավոր գործունեության արդյունքի օգտագործման հիմքում ընկած է այն սկզբունքը, որի համաձայն՝ սեփականատերն իր ստեղծագործությունը կարող է օգտագործել ըստ իր ցանկության, իսկ ուրիշներն առանց իր թույլտվության չեն կարող այն օգտագործել: Սակայն սեփականատիրոջ կողմից սեփական ստեղծագործության օգտագործումը պետք է չհակասի հասարակության այլ անդամների համար օրենքով սահմանված իրավունքներին ու շահերին: Ավելին, դրանց միջոցով է, որ հեղինակը կամ սեփականատերը կարող է օգտագործել իր ստեղծագործությունը ցանկացած ձևով և արգելել դրա օգտագործումն այլոց կողմից առանց իր թույլտվության [Մտավոր սեփականության գործակալություն և ՄՍՀԿ 2009: 7]: Այն իրավունքները, որոնք հեղինակային իրավունքի միջոցով տրվում են հեղինակներին, սահմանվում են տվյալ երկրի օրենսդրությամբ և պայմանավորված են ՄՍ իրավունքների տարածքային բնույթով: Վերջինս ենթադրում է այն իրավունքները, որոնք ձևավորվում և գործում են տվյալ պետության տարածքում՝ սահմանափակվելով այդ պետության իրավական մշակույթի առկայությամբ և իրավունքների պաշտպանությամբ [Коршунова 2006: 45]: Այս առումով հարկ է նշել, որ ՄՍ իրավունքի պաշտպանության ոլորտի կարգավորման ուղղությամբ գործող ՀՀ օրենսդրական դաշտը հիմնված է Մտավոր սեփականության

համաշխարհային կազմակերպությանն անդամակցության[2] և դրանից բխող մի շարք միջազգային համաձայնագրերով թելադրվող պահանջների բավարարման վրա: Այսպիսով, ՄՍ և մասնավորապես հեղինակային իրավունքի պաշտպանությունը տարբեր երկրներում կարող է տարբեր լինել, բայց բոլոր դեպքերում հեղինակային իրավունքների ոլորտը մի կողմից պաշտպանում է հեղինակների իրավունքները և մյուս կողմից հավասարակշռում հանրության հետ նրանց իրավահարաբերությունները:

Օրենքների և իրավունքների միջև առկա տարբերությունները կրճատելու նպատակով երկրները ստորագրում են միջազգային փաստաթղթեր, որոնք ստեղծագործությունների օգտագործումը հնարավորին չափ դյուրին են դարձնում ողջ աշխարհում: Ընդհանուր առմամբ, ՄՍ իրավունքների պաշտպանության վերաբերյալ ազգային օրենսդրությունների միջև կտրուկ տարբերություններ չկան, քանի որ նպատակը համընդհանուր է՝ մի կողմից պաշտպանել հեղինակների իրավունքները, մյուս կողմից ապահովել ստեղծագործությունների օրինական կիրառությունն ու հեղինակների արդարացի վարձատրությունը (հոնորար կամ հեղինակային պարտավճար): Բացի այդ, ստեղծագործությունները պետք է հասանելի լինեն հանրությանը, որի ապահովման համար անհրաժեշտ են ֆինանսական միջոցներ, այդ պատճառով ստեղծագործողները վճարող կողմին՝ անհատներին կամ ընկերություններին, վաճառում են իրենց ստեղծագործության նկատմամբ իրավունքները: Արդյունքում, օրինակ, այդ իրավունքները ձեռք բերած անհատ անձինք կամ ընկերություններն ունեն տվյալ ստեղծագործական արդյունքը տարածելու իրավասությունը: Բացի այդ, հեղինակները, որպես կանոն, չեն կարող հսկել իրենց ստեղծագործությունների ամենանգամյա օգտագործումը, քանի որ ստեղծագործությունն օգտագործող ֆիզիկական և իրավաբանական անձանց թիվը կարող է շատ մեծ լինել և, մյուս կողմից, օգտագործվող ստեղծագործությունները նույնպես կարող են բազմաթիվ լինել, հետևապես հեղինակները դիմում են կոլեկտիվ հիմունքներով կառավարող կազմակերպություններին, որոնք կարևոր օղակ են հեղինակների և նրանց ստեղծագործություններն օգտագործողների միջև և ապահովում են ստեղծագործությունների իրավատերերի հոնորարների ստացումը

[2] Հայաստանի Հանրապետությունը Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպությանն անդամակցել է 1993 թ., http://www.wipo.int/directory/en/details.jsp?country_code=AM:

[Վարդանյան 2010: 1]: ՀՀ-ում հեղինակային իրավունքների կոլեկտիվ կառավարման գործառույթը կատարում է Հայհեղինակ» հասարակական կազմակերպությունը:

Կարևոր է անդրադառնալ նաև հեղինակների համար նախատեսվող **բացառիկ** իրավունքներին, որոնցով միայն հեղինակներն են իրավասու կատարել որոշակի գործողություններ իրենց ստեղծագործության կամ ստեղծագործությունների նկատմամբ: Որոշ դեպքերում հեղինակի բացառիկ իրավունքները կարող են փոխարինվել հեղինակի վարձատրությամբ: Երկու դեպքերն միտված են հեղինակի և իր ստեղծագործական մտքի, աշխատանքի դիմաց արդարացի վարձատրությանն ու ստեղծագործական նոր աշխատանքներ ստեղծելու խրախուսմանը: Վարձատրությունը, սակայն, չի ենթադրում նաև անձնական ոչ գույքային իրավունքների փոխանցում, և այն չի փոխում իրական ստեղծագործողի, գաղափարակրի կամ այդ գաղափարն ինքնատիպ ձևակերպողի ինքնությունը, թեև վարձատրության դիմաց տվյալ ստեղծագործությունը տնօրինելու իրավունք (գույքային իրավունք) հեղինակն այլևս չի ունենում [Մտավոր սեփականության գործակալություն և ՄՍՀԿ 2009: 25]:

Հեղինակի բացառիկ իրավունքի վերաբերյալ «Հեղինակային և հարակից իրավունքների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածը սահմանում է հետևյալը. *«Հեղինակը բացառիկ իրավունք ունի օգտագործելու իր ստեղծագործությունը ցանկացած ձևով և եղանակով, ինչպես նաև երրորդ անձանց թույլատրելու կամ արգելելու դրա օգտագործումը, մասնավորապես՝*

- *ստեղծագործության վերարտադրումը (վերարտադրման իրավունք).*
- *ստեղծագործության տարածումը (տարածման իրավունք).*
- *ստեղծագործության բնօրինակը կամ օրինակները վարձույթով տալը (վարձույթով տալու իրավունք).*
- *ստեղծագործության բնօրինակի կամ օրինակների փոխատվությունը (փոխատվության իրավունք).*
- *ստեղծագործության թարգմանումը (թարգմանության իրավունք).*
- *ստեղծագործության վերամշակումը, վերադաշնակումը, նկարազարդումը, հարմարեցումը և այլ ձևերով վերափոխումը (վերափոխման իրավունք).*

- *ստեղծագործության հաղորդումը հանրությանը (հանրությանը հաղորդման իրավունք).*
- *ստեղծագործության հրապարակային կատարումը (հրապարակային կատարման իրավունք).*
- *ստեղծագործության հրապարակային ցուցադրումը (հրապարակային ցուցադրման իրավունք).*
- *ստեղծագործության հեռարձակումը (հեռարձակման իրավունք).*
- *ստեղծագործության հեռարձակման միաժամանակյա կամ հետագա վերահեռարձակումը (վերահեռարձակման իրավունք).*
- *ստեղծագործության հաղորդումը մալուխով կամ համանման միջոցներով (մալուխով հաղորդման իրավունք).*
- *ՀՀ օրենսդրությանը չհակասող այլ ձևերով ու եղանակներով օգտագործում»:*

Ինչպես արդեն նշվել է, բացառիկ իրավունքների հետ միասին օրենքը նախատեսել է նաև հեղինակի իրավունքների սահմանափակումներ, այսինքն՝ ստեղծագործությունների ազատ օգտագործման դեպքեր, երբ իրավատերերի թույլտվությունը պետք չէ հարցնել և առավել ևս՝ նրան վճարել, սակայն պետք է պարտադիր նշել նրա անունն ու ձեռքբերման սկզբնաղբյուրը [«Հեղինակային և հարակից իրավունքների մասին» ՀՀ օրենք, Գլուխ 2, Հոդված 22], օրինակ՝ ուսուցողական, տեղեկատվական, ոչ առևտրային, այսինքն՝ շահույթ չհետապնդելու նպատակով գրական գործերից մեջբերումներ, հատվածներ, քաղվածքներ օգտագործելը: Ընդ որում, սկզբնաղբյուրի նշմամբ և ճիշտ հղում կատարելով հեղինակային իրավունքի խախտումը՝ գրագողությունը, ինքնըստինքյան կանխարգելվում է: Միևնույն ժամանակ ստեղծագործությունների ազատ օգտագործումը նախևառաջ միտված է արժեքավոր գիտելիքի հասանելիությանը, որը հիմնականում ապահովվում է ուսումնական հաստատությունների, գրադարանների և համացանցի միջոցով:

Հեղինակային իրավունքը ներառում է **գույքային** և **անձնական ոչ գույքային իրավունքներ**: **Գույքային իրավունքները** հեղինակին՝ իրավատիրոջը հնարավորություն են տալիս իր ստեղծագործությունից ստանալու ֆինանսական օգուտ

այն օգտագործելու դեպքում: Հեղինակի գույքային իրավունքներ են ստեղծագործությունը վերարտադրելու, թարգմանելու, տարածելու, վարձույթով տալու, հեռարձակելու, հանրությանը հաղորդելու, հրապարակային ցուցադրության և այլ իրավունքներ: Հեղինակային իրավունքի պահպանության նվազագույն ժամկետ է սահմանվել հեղինակի կյանքի ընթացքը և 50-70 տարի՝ նրա մահից հետո: Հեղինակային իրավունքի պահպանման ժամկետի տևողությունը տարբեր է ըստ երկրների և ստեղծագործության տեսակի: Մի շարք երկրներում հեղինակային իրավունքի պահպանության ժամկետը գերազանցում է 50 տարին: Օրինակ՝ ԱՄՆ-ում և Եվրամիության երկրներում հեղինակային իրավունքը գործում է հեղինակի կյանքի ընթացքում և նրա մահից հետո՝ 70 տարի: Վերջինս գործում է նաև ՀՀ օրենքով [«Հեղինակային և հարակից իրավունքների մասին» ՀՀ օրենք, Հոդված 37] և հիմնավորում է Հայաստանի՝ Եվրամիությանն ինտեգրվելու և անդամագրվելու, հետևապես ՀՀ օրենսդրությունը համապատասխանեցնելու միտումը [Մտավոր սեփականության գործակալություն և ՄՍՀԿ 2009, 27, Վարդանյան 2010: 4]: Հեղինակային իրավունքի ժամկետը թույլ է տալիս հեղինակին, ինչպես նաև նրա ժառանգներին ֆինանսական օգուտ ունենալ նշված ժամանակահատվածում: Հարկ է նշել նաև, որ ստեղծագործության նկատմամբ գույքային իրավունքները տիրապետողը կարող է պաշտպանել իր իրավունքները վարչական կամ դատական կարգով և տարածքում ստուգում անցկացնելու միջոցով ձեռք բերել ապացույցներ իր ստեղծագործությունների արտադրության, դրա օրինակների անօրինական տարածման և պահպանելու վերաբերյալ: Բավարար ապացույցներ ունենալու դեպքում իրավատերը միանգամայն իրավունք ունի պահանջել փոխհատուցում կրած վնասների և իրավունքների խախտման համար [Մտավոր սեփականության գործակալություն և ՄՍՀԿ 2010: 58]:

Նախատեսվում է նոր մոտեցում հետմահու 70-ամյա ժամկետում հեղինակի չհրապարակված ստեղծագործությունների օգտագործման խնդրի նկատմամբ: Այն անձը, ով հեղինակի գույքային իրավունքների գործողության 70-ամյա ժամկետից հետո առաջին անգամ հանրությանը մատչելի է դարձնում կամ հրատարակում է հեղինակի անտիպ, մինչ այդ չհրատարակած ստեղծագործությունը, ապա նա 25 տարի

ժամկետով օգտվում է հեղինակի գույքային իրավունքներին համարժեք իրավունքներից [Վարդանյան 2010: 4]: Պահպանման ժամկետի խնդիրը որոշ երկրներում դեռևս փոքր-ինչ խնդրահարույց է, քանի որ ողջ աշխարհում տեղեկության մատչելիությունը կիզակետային խնդիրներից է, և այն, որ հեղինակային իրավունքի տևողության ժամկետը 20 տարով երկարաձգվում է՝ 50-ից դառնալով 70 տարի, հասարակությանը 20 տարով զրկում է տվյալ ստեղծագործական արժեքից օգտվելու հնարավորությունից: Սրանից շահում են իրավատերերն ու նրանց ժառանգները՝ ձեռք բերելով տվյալ ստեղծագործության նկատմամբ որոշակի իրավունքներ, որի ժամանակ դանդաղեցնում է գիտելիքահենք տնտեսության զարգացումը: Այսուհանդերձ, հեղինակային իրավունքի նպատակներից մեկը ստեղծագործողների, իրավատերերի և ստեղծագործությունից օգտվողների միջև հավասարակշռության պահպանումն է, որը պետք է ապահովի մի կողմից ստեղծագործողների շահն ու արդար վարձատրությունը, մյուս կողմից՝ հանրության կողմից գիտական պաշարներից օգտվելը [Գալստյան 2012: 22]:

Պահպանության ժամկետի ավարտից հետո ստեղծագործությունը դառնում է հանրության սեփականություն: Սա նշանակում է, որ յուրաքանչյուր ոք կարող է առանց իրավատիրոջ թույլտվության օգտագործել այդ ստեղծագործությունը, բայց միաժամանակ պահպանել ստեղծագործության ամբողջությունը և այն չխեղաթյուրել:

Այսպիսով, հեղինակային իրավունքի պահպանման ժամկետով նախատեսված սահմանափակումը միաժամանակ և՛ հեղինակին է հնարավորություն ընձեռում սահմանափակ ժամանակահատվածում օգտվելու իր ստեղծագործության նկատմամբ ունեցած բացառիկ իրավունքներից, և՛ հանրությանն է թույլ տալիս օգտվել տվյալ ստեղծագործությունից՝ արդյունավետ և խելամիտ օգտագործելու դեպքում տարածել գիտելիքը, բարձրացնել ընդհանուր սոցիալ-տնտեսական, գիտական, կրթական մակարդակը, խրախուսել ստեղծագործական միտքն ու նպաստել գիտելիքահենք հասարակության զարգացմանը:

Անձնական ոչ գույքային իրավունքները հեղինակին հնարավորություն են տալիս ձեռնարկելու որոշակի գործողություններ իր և իր ստեղծագործության նկատմամբ անձնական կապերը պաշտպանելու նպատակով: Այս իրավունքները փոխանցելի չեն

այլ անձանց, դրանք չեն փոխանցվում անգամ հեղինակի ժառանգներին, բայց խախտման դեպքերում ժառանգները կարող են միջամտել և պաշտպանել իրավունքները: Հեղինակային անձնական ոչ գույքային իրավունքները պահպանվում են անժամկետ՝ բացառությամբ հետկանչի իրավունքի, որը գործում է միայն հեղինակի կյանքի ընթացքում [Մտավոր սեփականության գործակալություն և ՄՍՀԿ 2009: 10-11, 27, Վարդանյան 2010: 3-5]: Անձնական ոչ գույքային իրավունքներն ապահովում են հեղինակների և իրենց ստեղծագործությունների միջև անձնական կապը:

Հեղինակային անձնական ոչ գույքային իրավունքների պահպանման վերաբերյալ Բեռնի կոնվենցիան (1886 թ.) սահմանում է, որ անձնական ոչ գույքային իրավունքները գործում են գույքային իրավունքներից անկախ այն առումով, որ դրանք գույքային իրավունքները զիջելուց հետո շարունակում են պատկանել հեղինակին (այն սահմանված է միայն անհատ հեղինակների համար): Սովորաբար անձնական իրավունքները գործում են նվազագույնն այնքան, որքան գործում են գույքային իրավունքները, չնայած կան երկրներ, որտեղ դրանք անժամկետ են: Կախված տվյալ երկրի օրենսդրությունից՝ անձնական ոչ գույքային իրավունքները նույնպես կարող են փոխանցվել ժառանգներին, ովքեր պահպանում են մահացած հեղինակի՝ տվյալ ստեղծագործության նկատմամբ հեղինակ ճանաչվելու իրավունքը, ինչպես այն իրավունքը, որը պաշտպանում է ստեղծագործությունը հեղինակի համբավին կամ արժանապատվությանը վնաս հասցնելու փոփոխություններից [Մտավոր սեփականության գործակալություն և ՄՍՀԿ 2009: 10-27]:

Հաշվի առնելով այն, որ գիտահետազոտական գործունեության ժամանակ ստեղծվող մի շարք աշխատանքներ մշակվում են մեկից ավելի հեղինակների կողմից, հարկ է անդրադարձ կատարել նաև համահեղինակությանը: Մասնավորապես, նույն ստեղծագործությունը կարող է ստեղծվել երկու և ավելի անձանց կողմից՝ համահեղինակությամբ՝ ունենալով մեկից ավելի հեղինակներ: **Համահեղինակությունը** ստեղծագործության ստեղծումն է երկու կամ ավելի հեղինակների կողմից համատեղ ստեղծագործական աշխատանքի արդյունքում, սակայն սա տարբերվում է համագործակցությունից. վերջինս առանձին հեղինակների մասնակցությունն է այնպիսի ստեղծագործություններում, ինչպիսիք են հանրագիտարանները,

ժողովածուները, ամսագրերը և այլն: Համահեղինակությունը կարող է լինել **բաժանելի** և **անբաժանելի**: **Բաժանելի համահեղինակության** դեպքում հեղինակները համատեղ, ընդհանուր ուժերով, առանց ստեղծագործության ստեղծման աշխատանքի բաշխման ստեղծում են ամբողջական ստեղծագործություն (օրինակ՝ Գրիմ Եղբայրների հեքիաթները): **Անբաժանելի համահեղինակության** դեպքում հեղինակներից յուրաքանչյուրը համարվում է տվյալ ամբողջական ստեղծագործության այն մասի հեղինակը, որը նա ինքնուրույն ստեղծել է, որն ինքնուրույն նշանակություն ունի (օրինակ՝ դասագրքերը): Հարկավոր է նշել նաև, որ համահեղինակության կարգով ստեղծված ստեղծագործության նկատմամբ հեղինակային իրավունքը հավասարապես պատկանում է ստեղծագործության բոլոր հեղինակներին՝ անկախ ստեղծագործության կառուցվածքից: Հեղինակներից յուրաքանչյուրն ազատ է ցանկացած ձևով օգտագործել ստեղծագործության իր ստեղծած այն հատվածը, որն ունի ինքնուրույն նշանակություն (եթե նրանց միջև համաձայնությամբ այլ բան նախատեսված չէ), սակայն ստեղծագործությունն ամբողջությամբ օգտագործելու իրավունքը համահեղինակներին պատկանում է համատեղ: Եթե համահեղինակներից որևէ մեկը դեմ է ստեղծագործության օգտագործմանը, ապա այն չի կարող օգտագործվել, և նման դեպքերում նրանք կարող են օգտագործել ստեղծագործության իրենց ստեղծած մասն առանձին: Այսուհանդերձ, համահեղինակը ստեղծագործության այս կամ այն օգտագործումն առարկելու դեպքում պետք է ծանրակշիռ հիմնավորում ունենա [Խաչիկյան և Ներսիսյան 2008: 209]: Հեղինակային իրավունքի վերաբերյալ վերոգրյալ կարևոր դրույթներին քաջատեղյակ լինելն ավելի դյուրին է դարձնում հեղինակների ստեղծագործական, այդ թվում՝ գիտակրթական, գիտահետազոտական և ուսումնամեթոդական աշխատանքների տնօրինումը:

Այսպիսով, մտավոր սեփականության պահպանման պատմական զարգացումը ցույց է տալիս, որ գիտելիքահենք տնտեսության հիմքում ընկած գիտելիքի ստեղծման, օգտագործման ու փոխանցման գաղափարը կենսական նշանակություն է ունեցել ցանկացած ոլորտի զարգացման համար: Ներկայիս շուկայական տնտեսություններում գիտական և հանրային արժեք ունեցող արդյունքների օգտագործումը նոր, ավելի ժամանակակից ու արդյունավետ մոտեցումների կիրառում է պահանջում, քանի որ

գիտելիքահենք տնտեսության զարգացմանը զուգահեռ ընդլայնվում է նաև շուկայական մրցակցային դաշտը: Կրթության ոլորտը՝ որպես մտավոր գործունեության իրականացման ու խթանման հարթակ և մտավոր ներուժի բացահայտման ու զարգացման գլխավոր աղբյուր, անմիջականորեն կրում է շուկայական անբարեխիղճ մրցակցության ազդեցությունը, որը դրսևորվում է նաև բարձրագույն կրթության ոլորտում ստեղծվող գիտելիքի որակական ու քանակական բացասական փոփոխություններով: Այդ փոփոխությունները դրական միտումների վերածելու նկատառումով գիտելիք ստեղծողները՝ ստեղծարարներն ու նորարարները, առկա գիտելիքները փոխանցողներն ու օգտագործողները պետք է պաշտպանական մեխանիզմներ և իրենց մտավոր գործունեության արդյունքների տնօրինման լիակատար իրավունքներ ունենան՝ մի կողմից արդարացիորեն վարձատրվելու ու գնահատվելու համար, մյուս կողմից՝ խթանելու ազգային մակարդակում գիտելիքահենք հասարակության ու տնտեսության կայունացման հիմքերի ամրապնդումը: Այս հիմնախնդիրները կարող են արդյունավետ լուծումներ գտնել մտավոր սեփականության կրթության կազմակերպման, իրականացման ու վերաարժևորման միջոցով, որն էլ համակողմանի ուսումնասիրության է ենթարկվում այս հետազոտական աշխատանքի շրջանակում: Մտավոր սեփականության և մասնավորապես հեղինակային իրավունքի ոլորտի վերոգրյալ առանձնահատկությունների դիտարկումն ու վերլուծությունն անհրաժեշտ տեսական հենք և տրամաբանական փոխկապակացվածություն են ստեղծում սույն ատենախոսության մեջ քննարկվելիք խնդիրների և հատկապես մտավոր սեփականության կրթության կազմակերպմանն առնչվող հիմնախնդիրների ուսումնասիրության համար:

1.2. Մտավոր սեփականության պահպանման ոլորտի կարգավորման և բարեփոխման ազգային ու միջազգային փորձը

Սկսած 19-րդ դարից՝ գիտության և տեխնիկայի արագընթաց զարգացումը տրամաբանորեն առաջադրեց նոր պահանջներ՝ պայմանավորված ազգային և միջազգային շուկաների միջև համապատասխանության ապահովման,

ստեղծարարության խթանման և մտավոր կապիտալի՝ որպես ամենամեծ արժեքի գնահատման անհրաժեշտությամբ: Այսպես կոչված գիտատեխնիկական հեղափոխության և մասնավորապես տպագրության հայտնագործության արդյունքում հեղինակային իրավունքի ոլորտը մի շարք փոփոխություններ կրեց. տպագրության ու թարգմանությունների լայն տարածումը հանգեցրեց ստեղծագործությունների օգտագործման սահմանների ընդլայնմանը: Արդյունքում հեղինակային իրավունքով պահպանվող ստեղծագործությունների համար ընդլայնվեցին նաև ազգային ու միջազգային շուկաները՝ դժվարեցնելով հեղինակային իրավունքի պահպանումն ինչպես ազգային մակարդակում, այնպես էլ այն երկրի սահմաններում, որտեղ օգտագործվել է տվյալ ստեղծագործությունը: Խնդիրն այն էր, որ ոլորտի կարգավորման դեռևս սկզբնական փուլում մի շարք երկրներ կարող էին պահպանել միայն իրենց տարածքում ստեղծված և օգտագործվող ստեղծագործությունների նկատմամբ հեղինակային իրավունքը: Այս խնդրի լուծման ուղղությամբ ձեռնարկվելիք քայլերն ուղղվեցին դեպի մտավոր սեփականության ոլորտին վերաբերող ազգային օրենսդրական դաշտերի վերանայումը՝ հանգեցնելով մտավոր սեփականության և մասնավորապես հեղինակային իրավունքի պահպանության միասնական համակարգի ստեղծման անհրաժեշտությանը: Այսպիսի միջոցառումների ձեռնարկումը նպատակաուղղված էր տնտեսության զարգացման խթանմանն ու միաժամանակ միջազգային կապերի ամրապնդման միջոցով մտավոր սեփականության ոլորտի բարելավմանը [Վարդանյան 2012: 59-60]:

Պայմանավորված վերոգրյալ ոլորտային խնդիրների կարգավորման անհրաժեշտությամբ՝ 1886 թ. ստորագրվեց Բեռնի միջազգային կոնվենցիան, որն ուժի մեջ մտավ մեկ տարի անց՝ 1887 թ.: Բեռնի կոնվենցիան վերաբերում էր «Գրական և գեղարվեստական ստեղծագործությունների պահպանմանը» և նպատակաուղղված էր միավորված անդամ պետություններում հեղինակային իրավունքների պահպանման համակարգերի միասնականացմանն ու դրանց գործադրման արդյունավետության բարձրացմանը: Կարևորելով Բեռնի կոնվենցիայի կարգավորող և որոշիչ դերը հեղինակային իրավունքների պահպանման էական խնդրում՝ անհրաժեշտ է նշել

կոնվենցիայով նախատեսվող պահպանության նվազագույն ժամկետի և իրավունքների վերաբերյալ հետևյալ երեք հիմնադրույթները [Վարդանյան 2012: 59-60].

- պահպանությունը նախատեսվում է առանց որևէ ձևականության պահպանման՝ ինքնաբերաբար (այսինքն՝ պետական կամ նոտարական կամ այլ գրանցում կամ հեղինակության հաստատագրում չի պահանջվում),
- կոնվենցիայի մի անդամ-պետության տարածքում ստեղծված ստեղծագործությունները (այսինքն՝ այն ստեղծագործությունները, որոնց հեղինակն այդ անդամ երկրի քաղաքացի է, կամ դրանք առաջին անգամ լույս են տեսել տվյալ երկրում), ենթակա են նույնպիսի պահպանության, ինչպիսին նախատեսվում է այդ անդամ երկրում իր քաղաքացիների համար (ազգային մոտեցում),
- պահպանությունն ապահովվում է անկախ տվյալ երկրում պահպանության առկայությունից, սակայն եթե անդամակցող երկրում նախատեսվում է պահպանության 19 ավելի երկար ժամկետ, քան նախատեսված է կոնվենցիայով, և մայր երկրում ստեղծագործությունը դադարում է պահպանվելուց, ապա անդամ երկրներում նույնպես այդ հիմքով կարող է պահպանություն չնախատեսվել:

Միջազգային մակարդակում մտավոր սեփականության օբյեկտների պաշտպանության առավել լայն սահմանումները տրվում են նաև Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրում, որի 27-րդ հոդվածի[3] համաձայն՝

1. յուրաքանչյուր ոք ունի հասարակության մշակութային կյանքին ազատորեն մասնակցելու, արվեստից բավականություն ստանալու, գիտական առաջընթացին մասնակցելու և նրա բարիքներից օգտվելու իրավունք.
2. յուրաքանչյուր ոք ունի հեղինակած գիտական, գրական կամ գեղարվեստական աշխատանքի արդյունքն հանդիսացող իր բարոյական և նյութական շահերի պաշտպանության իրավունք:

ՀՀ-ում մտավոր սեփականության բնագավառի իրավական դաշտը կարգավորվում է օրենքներով, ենթաօրենսդրական ակտերով և ՀՀ միջազգային պայմանագրերով: ՀՀ-ում մասնավորապես հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների օրենսդրական դաշտը կարգավորվում է [Վարդանյան 2012: 7].

[3] Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրն ընդունվել և հռչակվել է ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 1948 թ. դեկտեմբերի 10-ի 217Ա (III) բանաձևով:

- ՀՀ Սահմանադրությամբ,
- ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 10-րդ բաժնով,
- ՀՀ քրեական օրենսգրքի 158-րդ հոդվածով,
- ՀՀ մաքսային օրենսգրքի 14-րդ բաժնով,
- ՀՀ «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» 2006 թ. ՀՀ օրենքով,
- ՀՀ կառավարության 11.01.2007 հեղինակային վարձատրության նվազագույն դրույքաչափերի մասին N 506-Ն որոշմամբ (որոշ իրավունքների մասով):

ՀՀ գործող Սահմանադրության 60-րդ հոդվածի համաձայն՝ *«յուրաքանչյուր ոք ունի օրինական հիմքով ձեռքբերած սեփականությունն իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու իրավունք»:* Սեփականության իրավունքի իրականացումը չպետք է վնաս պատճառի շրջակա միջավայրին, խախտի այլ անձանց, հանրության և պետության իրավունքներն ու օրինական շահերը:

Խորհրդային Միության 70 տարիների ընթացքում ՀՀ-ում հեղինակային իրավունքները կանոնակարգվում էին միայն համամիութենական հանրահայտ գործակալության (ВААП) հայկական մասնաճյուղի միջոցով: ԽՍՀՄ-ի փլուզումից հետո անկախություն ստացած Հայաստանի մտավոր սեփականության, այդ թվում նաև հեղինակային իրավունքների պահպանման, պաշտպանության և իրավակիրարկման ասպարեզում ի հայտ եկան մի շարք խոչընդոտներ, որոնց հաղթահարման ֆորմալ ձևերից մեկը եղավ 1996 թ. առաջին անգամ ընդունված «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» օրենքը: Սակայն աշխարհով մեկ տարածվող ստեղծագործությունների վերահսկումը հնարավոր չէր միայն այդ օրենքի գործադրմամբ, քանի որ հեղինակային իրավունքները կարող էին ՀՀ օրենքներով պահպանել միայն այդ երկրի սահմաններում: Հետևապես միջազգային չափանիշներին համապատասխանելու խնդիրը դարձավ օրակարգային, և ոլորտի պահպանումն ու իրավական հենքի ապահովումը հնարավոր դարձավ ՄՍ ոլորտի միջազգային համաձայնագրերի անդամակցության շնորհիվ [Վարդանյան 2012: 5]:

ՀՀ-ում ՄՍ ոլորտի կարգավորման հիմնախնդիրը սկիզբ է առել ՄՍ պահպանության ազգային համակարգի ձևավորմամբ՝ 1992 թ. հունվարին ՀՀ

կառավարությանն առընթեր արտոնագրային վարչության և 1993 թ. դեկտեմբերին Հեղինակային իրավունքի ազգային գործակալության ստեղծմամբ: 2002 թ. մարտին այս երկու մարմինների միաձուլմամբ ստեղծվեց Մտավոր սեփականության գործակալությունը, որն ունի ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության (նախկինում՝ էկոնոմիկայի նախարարության) կազմում գործող առանձնացված ստորաբաժանման կարգավիճակ: Ներկայումս ՀՀ-ում ՄՍ բնագավառի իրավական դաշտը կարգավորվում է օրենքներով, ենթաօրենսդրական ակտերով, ինչպես նաև ՀՀ միջազգային պայմանագրերով: 1993 թ. ի վեր Հայաստանի Հանրապետությունը հանդիսանում է Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպության (WIPO) և 1995 թվականից՝ Եվրասիական արտոնագրային կազմակերպության (ԵԱՊՕ) անդամ [Մտավոր սեփականության գործակալություն, https://www.aipa.am/hy/about-us/]:

Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների ՀՀ օրենսդրական դաշտը համապատասխանեցված է միջազգային չափանիշներին. հաշվի են առնված ոլորտում առկա Բեռնի, Հռոմի, Ժնևի Հնչյունագրերի, Բրյուսելյան կոնվենցիաների, TRIPS[4] Համաձայնագրի, ինչպես նաև Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպության (ՄՍՀԿ) Ինտերնետային պայմանագրերի (WIPO WCT, WPPT) և Եվրամիության դիրեկտիվների հիմնական դրույթները [Վարդանյան 2012: 7]:

Ի լրումն ՀՀ-ում ՄՍ բնագավառի իրավական դաշտը կարգավորող նշված օրենքների ու միջազգային պայմանագրերի, ինչպես նաև հաշվի առնելով բարձրագույն կրթության և ՄՍ պահպանման ոլորտային հիմնախնդիրների փոխկապակցվածությունը՝ կարևոր է նշել նաև «Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին» ՀՀ գործող օրենքի մասին, որն արտացոլում է պետական քաղաքականությունը գիտական և գիտատեխնիկական գործունեության, ներգրավված

[4] TRIPS համաձայնագիրը պարտադիր է Առևտրի համաշխարհային կազմակերպության անդամ 157 պետությունների համար: Այն սահմանել է ընդհանուր միջազգային կանոններ, որոնք հայտնի են որպես մտավոր սեփականության պահպանության «նվազագույն նորմեր և չափորոշիչներ»: Քանի որ TRIPS համաձայնագիրը պահանջում է համապատասխանություն այդ նորմերին և չափորոշիչներին, անդամ-երկրները պետք է ըստ դրանց հաստատեն կամ փոփոխության ենթարկեն իրենց օրենքները, ՄՍ իրավունքների գրանցման, տրամադրման, կիրարկման և պաշտպանության կանոնակարգերն ու ընթացակարգերը:

կառույցների, այդ թվում՝ բուհերի կողմից ստեղծված գիտական ու գիտատեխնիկական արդյունքների տնօրինման նկատմամբ: ՄՍ պահպանման խնդիրն արտացոլված է նաև «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ գործող օրենքում (Հոդված 23) և «Բարձրագույն կրթության մասին» ՀՀ օրենքի նախագծում (Հոդված 25), որտեղ մասնավորապես նշվում է, որ բուհն իրավունք ունի իր գործունեության արդյունք համարվող մտավոր և ստեղծագործական աշխատանքի արդյունքների, օրենքով չարգելված այլ աղբյուրների, ինչպես նաև սեփական գործունեությունից ստացված եկամուտների և այդ եկամուտների հաշվին ձեռք բերված գույքի նկատմամբ: Ազգային օրենսդրական շրջանակում հստակ ձևակերպված նշյալ դրույթների առկայությունը պարտադիր և կարևոր է հենք է ՀՀ բուհերի համար, սակայն այդ դրույթների պահպանման գործնական դրսևորումները շարունակում են մնալ ՀՀ բուհերում դեռևս լիարժեք լուծում չստացած խնդիրներ:

Մտավոր սեփականության ազգային փորձի ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ՀՀ բուհերը նույնպես անմասն չեն մնում ՄՍ պահպանմանն առնչվող խնդիրներից և հաճախ իրենց պասիվ դիրքորոշմամբ դանդաղեցնում են ինչպես բարձրագույն կրթության ոլորտի բարեփոխման, այնպես էլ ՄՍ ոլորտի կարգավորման գործընթացները: Մինչդեռ ենթադրելի է, որ բուհերը, ծառայելով որպես նպաստավոր դաշտ նոր գիտելիքի ստեղծման, գիտելիքների փոխանցման, դրանց նպատակային կիրառման և առհասարակ գիտելիքահենք տնտեսությունը խթանող գիտական արդյունքների ստեղծման համար, պետք է ՄՍ պահպանման խնդիրներն իրենց կանոնադրական գործունեության և դրանից բխող գործառույթների շրջանակում հետևողական լինեն ՄՍ պահպանման խնդիրների լուծման գործընթացներում: ՀՀ բարձրագույն կրթության ու ՄՍ ոլորտների փոխկապակցվածության, ինչպես նաև բուհերի դերի անհստակությունը ՄՍ ոլորտի բարեփոխման գործընթացներում պայմանավորված է մի շարք խոչընդոտներով, որոնցից են՝

- ՀՀ բարձրագույն կրթության առանցքային շահակիցների իրազեկության ցածր մակարդակը ՄՍ ոլորտի, ներառյալ հեղինակային իրավունքին առնչվող օրենսդրական հիմնադրույթների, դրա պահպանման և իրավախախտման դրսևորումների վերաբերյալ,

- ակադեմիական հանրույթի համար նպատակային և թեմատիկ վերապատրաստումների իրականացման ոչ շարունակական ու ոչ հետևողական բնույթը,
- ՀՀ բուհերի մեծամասնության դեպքում ՄՄ իրավունքների պահպանման ռազմավարական համակարգային մոտեցումների բացակայությունը կամ թերի կիրառումը և այլն):

ՀՀ-ում գործող մի շարք կազմակերպություններ առանցքային դեր են կատարում ՀՀ-ում ՄՄ ոլորտի բարելավման, համապատասխան օրենսդրական դաշտի արդյունավետ կիրարկման և ՀՀ-ում միջազգային լավագույն փորձի տարածման խնդիրների լուծման ուղղությամբ: Մասնավորապես, ՀՀ-ում կարևորվում է պետական լիազորված մարմինների ու ազգային կազմակերպությունների դերը, որոնք կատարում են իրավական պաշտպանության ենթակա ՄՄ որոշ օբյեկտների նկատմամբ օրենքներով նախատեսված գործառույթներ (ՀՀ էկոնոմիկայի նախարարության Մտավոր սեփականության գործակալություն, ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողով, «Հայհեղինակ» հասարակական կազմակերպություն, Մտավոր սեփականության իրավունքի կենտրոն, «Մենք» իրավաբանական խորհրդատվական կենտրոն» և այլն):

Մտավոր սեփականության պահպանման միջազգային լավագույն փորձը մշտապես շեշտադրում է ՄՄ կրթության, պետական աջակցության և կարգավորման կենսական դերը: ՀՀ համատեքստում ՄՄ ոլորտի կարգավորմանն ուղղված աշխատանքները հիմնվում են արդեն նշված միջազգային համաձայնագրերի և պետական ռազմավարության վրա: Մասնավորաբար, *Հայաստանի Հանրապետության մտավոր սեփականության իրավունքների պաշտպանության ռազմավարությամբ* (2011 թ.) նախատեսված միջոցառումները նպատակաուղղված են ՀՀ տնտեսական, ստեղծագործական և նորարար միջավայրի բարելավմանն ու միջազգային չափանիշներին համապատասխան ՄՄ իրավունքների պահպանման արդյունավետ համակարգի ներդրմանը: Ըստ նշված ռազմավարության՝ ՄՄ իրավունքների համակարգի առաքելությունն է ՀՀ-ում պաշտպանել և խթանել գիտությունն ու նորարարությունը՝ ապահովելով կայուն նախադրյալներ հեղինակների և նորարարների

մտավոր արժեքներ ստեղծելու համար, ինչպես նաև խթանել ներդրումները, տեխնոլոգիաների փոխանցումը, ավանդույթների և որակի պահպանությունը, բարեխիղճ մրցակցությունը, ինչպես նաև պաշտպանել քաղաքացիներին կեղծ և հենական արտադրանքից: Ռազմավարության մեջ շեշտադրված են նաև օրենսադրական դաշտի բարեփոխումներն ինստիտուցիոնալ և պետական իրավապահ մարմինների և բարձրաստիճան պաշտոնյաների մակարդակով: Դրանց հետ մեկտեղ նշվում են նաև հանրային իրազեկմանն ուղղված այնպիսի աշխատանքների շարունակական իրականացումը, ինչպիսիք են թեմատիկ սեմինարների ու վերապատրաստման դասընթացների իրականացումը (ՄՍ իրավակիրարկման ոլորտի համար պատասխանատու պետական պաշտոնյաների, այնպես էլ ՄՍ ոլորտի մասնագետների և շահագրգիռ այլ կողմերի համար): Ռազմավարությունը նույնպես փաստում է այն, որ ՀՀ-ում ՄՍ իրավունքներին մասին իրազեկման մակարդակը ցածր է, ընդ որում, ոչ միայն իրավակիրարկման մարմինների աշխատակիցների, այլ նաև իրավատերերի և ընդհանրապես հանրության շրջանում մասնավորապես հենության և կեղծարարության բնագավառներում: Հարկ է նշել, որ ՄՍ ոլորտի բարեփոխման խնդրում պետական վերահսկողության հանձնառությունը հիմնականում տրված է ՀՀ էկոնոմիկայի նախարարությանը, Հայաստանում կեղծարարության և հենության դեմ պայքարին օժանդակող միջգերատեսչական հանձնաժողովին և ԽՀԱՀ («Խորը և համապարփակ ազատ առևտրի համաձայնագիր») բանակցային աշխատանքային խմբին [Հայաստանի Հանրապետության մտավոր սեփականության իրավունքների պաշտպանության ռազմավարություն 2011]:

ՀՀ ՄՍ իրավունքների պաշտպանության ռազմավարությունը՝ որպես պետական ռազմավարական ծրագիր, ընդգրկել է պետական մակարդակով իրականացվող և պլանավորվող միջոցառումները և չի ենթադրում, օրինակ, բուհերին վերաբերող մասնավորեցված դրույթներ: Սակայն բուհերը, հիմք ընդունելով այդ ռազմավարությունը և ելնելով դրա հիմնադրույթներից ու համապատասխան օրենսդրական դաշտով ամրագրված դրույթներից, կարող են մշակել սեփական արդյունավետ ռազմավարությունը: Արդյունքում բուհերը կարող են ոչ միայն բացահայտել իրենց գործունեության շրջանակում ՄՍ իրավունքների պահպանմանն

առնչվող խնդիրները, որոնք կարող են ունենալ ինչպես մասնավոր, այնպես էլ համազգային առանձնահատկություններ, այլ նաև այդ խնդիրներին տալ թիրախավորված, գործնական և իրատեսական լուծումներ: Բացի այդ, բուհերի կողմից ՄՍ ոլորտի (մասնավորապես հեղինակային իրավունքի պահպանմանն առնչվող) խնդիրները կարգավորող ռազմավարության մշակումը թույլ կտա բուհերին առաջադրել երկարաժամկետ լուծումներ: Բուհերում ՄՍ ոլորտի և մասնավորապես հեղինակային իրավունքի պահպանմանն ուղղակիորեն առնչվող ռազմավարական առաջնահերթությունների սահմանումը որոշ չափով լուծում է մտավոր սեփականության կրթության կազմակերպման խնդիրը բուհերում, քանի որ այդպիսով բուհերը փաստաթղթային, ֆորմալ և տեսանելի հենք են ստեղծում բուհի առանցքային շահակիցների համար՝ ուղենշելով այն բոլոր առանցքային հիմնադրույթներն ու պահանջները, որոնց պահպանման միջոցով ուսումնառողները, աշխատակազմը և բուհերի այլ առանցքային շահակիցներ հանձնառություն են ստանում պահպանելու ակադեմիական ազնվությունը, կանխելու գրագողության և հեղինակային իրավունքի իրավախախտման այլ դրսևորումները, հարգելու և գնահատելու այլ հեղինակների գիտաուսումնական ու գիտահետազոտական գործունեության արդյունքները և այդպիսով մասնակից դառնալով ՄՍ ոլորտի համազգային բարեփոխումներին:

Այսուհանդերձ, ելնելով ՀՀ բարձրագույն կրթության կայացման դեռևս անցումային փուլում գտնվելու հանգամանքից, Բոլոնիայի գործընթացին լիիրավ ինտեգրվելուն ուղղված աշխատանքների իրականացման ժամանակ ծառացած և դեռևս լուծման ընթացքի մեջ գտնվող խնդիրներից՝ ՀՀ բուհերի կողմից ՄՍ իրավունքների պահպանման ռազմավարության մշակումն ու կիրառումը ժամանակի պահանջ է և չի ենթադրում կարճ ժամանակահատվածում շոշափելի ձեռքբերումներ: ՄՍ իրավունքների պահպանման միջազգային կառույցների հետ համագործակցությունն ու ՀՀ անդամակցությունը, ՄՍ առնչվող միջազգային պայմանագրերից բխող ազգային պարտավորությունները և ՄՍ ոլորտին առնչվող պետական ռազմավարությունների մշակումը ենթադրում են, որ ՄՍ ոլորտի բարեփոխման խնդիրը գլոբալ է, սակայն ազգային մակարդակում այդ խնդրի լուծումներն իրենց առանձնահատուկ պահանջներն են թելադրում՝ պայմանավորված ազգային պետական

քաղաքականությամբ, ազգային օրենսդրական դաշտով ու իրավական կարգավորիչ մեխանիզմների գործադրմամբ, ՄՍ ոլորտին առնչվող օրենքների կիրարկմամբ, ոլորտային ՀՀ փորձով, շահագրգիռ կառույցների նախաձեռնողականությամբ և հանրության ընդհանուր ընկալումներով:

Այսպիսով, ազգային և միջազգային մակարդակներում ՄՍ ոլորտի կարգավորման երկարատև գործընթացները և ոլորտի բարեփոխման ներկայիս գործընթացները մատնանշում են, որ ՄՍ ոլորտի բարելավման ամենաարդյունավետ միջոցն այն բոլոր առանցքային դերակատարների սերտ համագործակցությունն է, որոնց գործունեության առաքելությունն ուղղված է նորարարության ու ստեղծարարության խթանմանը և դրա միջոցով ազգային մակարդակում գիտելիքահենք տնտեսության զարգացմանը:

1.3. Մտավոր սեփականության ոլորտի հիմնախնդիրները ՀՀ գիտելիքահենք տնտեսության զարգացման համատեքստում

ՀՀ-ում գիտելիքահենք տնտեսության հեռանկարային զարգացումը ենթադրում է ՀՀ տնտեսական գործունեության արդյունավետության բարձրացում և միջազգային մակարդակում կատարվող տնտեսական բարեփոխումների գործընթացներին ինտեգրում: Գիտելիքահենք տնտեսության զարգացումը խթանող գործողություններ իրականացնելիս բարեփոխման հանձնառությունը կրող բոլոր դերակատարներն անխուսափելիորեն առերեսվում են մի շարք մարտահրավերների, որոնցից են ժամանակակից տեղեկատվական ու հաղորդակցման տեխնոլոգիաների (ՏՀՏ) կիրառման ու գիտելիքի կառավարման արդյունավետության ապահովումը, նորարարության խթանումն ու ստեղծագործական ներուժի արդյունավետ օգտագործումը, ստեղծագործական աշխատանքի կիրառական բաղադրիչի գնահատումը, գիտական ու հետազոտական արդյունքների առևտրայնացմանն ու շուկայում դրանց իրացման ռազմավարության արդյունավետ իրականացումը, գիտելիքահենք հասարակության կայացման ու զարգացման ապահովումը: Զարգացող երկրներում, այդ թվում՝ ՀՀ-ում, այս մարտահրավերներին համարժեք արձագանքելու խնդիրը հատկապես ռազմավարական նշանակություն և հետևողական

ուսումնասիրության կարիք ունի՝ հաշվի առնելով տնտեսության զարգացումը խոչընդոտող մի շարք այնպիսի գործոններ, ինչպիսիք են՝

- երկրի բնական պաշարների սահմանափակ լինելը, արտադրական ոչ լիարժեք զարգացած մշակույթը,
- արտագաղթի բարձր ցուցանիշները,
- ինովացիոն համակարգերի կիրառման արդյունավետության ցածր մակարդակը,
- գիտելիքահենք տնտեսության վերաբերյալ հանրության իրազեկվածության ցածր աստիճանը,
- մտավոր կապիտալի զարգացման ու մտավոր սեփականության ոլորտի բարեփոխմանն ուղղված գործնական աշխատանքներում պետական կառույցների և հանրության պասիվությունը կամ ոչ արդյունավետ ներգրավվածությունը և այլն:

ՀՀ գիտելիքահենք տնտեսության զարգացման համատեքստում վերոնշյալ գործոնների և դրանց կապակցված ՄՍ ոլորտի հիմնախնդիրների դիտարկումը հիմք է ստեղծում գիտելիքահենք տնտեսության, մտավոր սեփականության և բարձրագույն կրթության ոլորտների սերտ փոխկապակցվածության հիմնավորման համար: Այս փոխկապակցվածության արդյունավետության ապահովումն էապես պայմանավորված է նրանով, թե մտավոր արժեքների ստեղծման, գնահատման և պահպանման ուղղությամբ ինչպիսի ուսումնական, կրթական, գիտական ու դաստիարակչական աշխատանքներ են տարվում ուսումնական հաստատություններում, ինչ մեխանիզմներ ու մեթոդներ են կիրառվում ակադեմիական հանրության գիտակցական մակարդակը բարձրացնելու համար, և ինչպիսի գործնական քայլեր են ձեռնարկվում մտավոր ստեղծագործական գործունեության արդյունքների նկատմամբ իրավունքների խախտումն առնվազն ինստիտուցիոնալ մակարդակում կանխելու ուղղությամբ:

ՄՍ ոլորտի զարգացման հիմքում նորարարության ու ստեղծարարության խթանումն է, որն ըստ էության գիտելիքահենք տնտեսության խթանումն է, քանի որ նորարարությունը կարող է տնտեսության նոր ճյուղեր ու նոր արտադրանքներ ստեղծել՝ ամրապնդելով գիտական արտադրանքի առևտրայնացման և շուկայում դրա իրացման մշակույթը: Այսուհանդերձ, գիտահետազոտական գործունեության արդյունքները սովորաբար միանգամից չեն վերածվում տնտեսության զարգացման

գլխավոր գործոնի հավակնող ստեղծագործ արտադրողական ուժի: Բացի այդ, արդյունաբերական-շուկայական համակարգում հիմնարար և կիրառական գիտության արդյունքների արտադրության ծախքերը հաճախ գերազանցում են դրանց իրացումից ստացված եկամուտը [Մարզպանյան 2012: 99]: Ուրեմն, գիտահետազոտական գործունեության արդյունքը (որպես գիտական արտադրանք) նյութականացման ու առևտրայնացման միջոցով ազգային ու միջազգային շուկաներում հանրային ապրանք դարձնելու համար պետությունը պետք է ճկուն և արդյունավետ քաղաքականություն իրականացնի՝ հաշվի առնելով այդ արդյունքի ոչ միայն տնտեսական, այլ նաև գիտակրթական ոլորտում դրա կիրառական արժեքը:

Մտավոր սեփականության իրավունքների պահպանության հստակ համակարգը համաշխարհային շուկայում գիտելիքների ու ստեղծագործությունների ազատ շարժի գլխավոր նախապայմաններից են: ՄՍ իրավունքների պահպանությունը խթանում է հետազոտությունների և զարգացումների ինստիտուտի ներդրումը և առավել սահուն է դարձնում գիտելիքի տեղափոխումը դեպի արտադրություն, այնուհետև՝ արտադրությունից շուկա [Մտավոր սեփականության հուսալի և արդյունավետ պահպանության իրականացման հայեցակարգ 2009]: Մտավոր ստեղծագործական աշխատանքների նպատակային օգտագործումը, արդյունավետ կառավարումն ու ներդրումը մտավոր սեփականության ոլորտի բարեփոխման հիմնական խթանիչներից են: Մտավոր սեփականության պահպանության և գիտելիքահենք տնտեսության ոլորտների զարգացման փոխկապակցվածությունն առավել տեսանելի դարձնելու համար անհրաժեշտ է նաև հստակեցնել գիտելիքահենք տնտեսության էությունը, բնութագրիչներն ու դրա հիմնարար բաղադրիչ հանդիսացող գիտելիքի փոխակերպման գործընթացը, ինչպես նաև գիտելիքահենք հանրության ընկալումները:

Գիտելիքահենք տնտեսության էությունը տնտեսության զարգացման հիմքում ընկած ամենակարևոր ռեսուրսի՝ գիտելիքի արժևորումն է և դրա արդյունավետ օգտագործումը: Գիտելիքահենք տնտեսության արդյունքը գիտելիքի կառավարման վրա հիմնված արտադրանքն է կամ ծառայությունը, որը խթանում է գիտության ու տեխնիկայի առաջընթացը, թեև միաժամանակ նպաստում է գիտելիքի և տեղեկույթի

ձեռքբերման ձևերի հնացմանը: Գիտելիքահենք տնտեսության առանցքային բաղադրիչը մտավոր կապիտալն է, որն ավելի մեծ արժեք ունի, քան մնացած ռեսուրսները [Powell & Snellman 2004]:

Ժամանակակից մասնագիտական գրականության մեջ տեսաբաններն ու գործնական տնտեսագետներն առաջարկում են գիտելիքահենք տնտեսության բազմաթիվ սահմանումներ ու բնութագրիչներ՝ նոր կամ նորագույն, ժամանակակից, գիտելիքային, տեղեկատվական, թվային տնտեսություն և այլն, սակայն դրանց հիմքում ընդհանուր առմամբ գիտելիքն է՝ որպես կրթության, գիտության և տնտեսության առաջընթացի շարժիչ ուժ: Գիտելիքահենք տնտեսության նշված սահմանումներից ամենակիրառելին նոր տնտեսությունն է, որն առնչվում է տեխնոլոգիաների, մասնավորապես ՏՀՏ ոլորտում զբաղվածության աճի հետ [Abramovitz & David 2001]: Միքլթուեյթը և Ուլդրիջը [Micklethwait and Wooldridge 2003] նոր տնտեսության հասկացության հիմքում նույնպես շեշտադրում են տեխնոլոգիաների, մասնավորապես համացանցի գործոնի գերակայությունը և հավելում, որ նոր տեխնոլոգիաների զարգացման տեսանկյունից անհրաժեշտ է վերանայել մակրոտնտեսության վերաբերյալ օրենսդրական դրույթները՝ գլոբալացման զարգացող միտումներով թելադրվող պահանջները բավարարելու նպատակով:

Առանձնացվում են նոր տնտեսության մի քանի հիմնական բաղադրիչներ՝ տեղեկատվական տեխնոլոգիաներ, որոնք ներառում են համակարգչային և հաղորդակցման տեխնոլոգիաները, տեղեկատվական կապեր ու նոր արտադրական գործընթացներ, որոնք ներառում են նորարարությունը, հետազոտությունն ու զարգացումը և տեխնոլոգիաների տարածումը, մարդկային կապիտալ և գիտելիքի առևտրայնացման միջոցով կապիտալի կուտակում [Munro 2000: 5]: Ոլորտի որոշ մասնագետներ [Kling, Lamb *et al*. 2000] կողմնակից են տեղեկության տնտեսություն եզրույթի կիրառմանը՝ նշելով, որ այն ներառում է տեղեկատվական բոլոր տեսակների արտադրանքներն ու ծառայությունները: Նոր տնտեսությունը ներկայումս այն գաղափարահենք և գիտելիքահենք տնտեսությունն է, որտեղ ստեղծագործական աշխատանքի իրականացման բարձր չափանիշների նախադրյալներն ու խթանիչ ուժերը նորարարական գաղափարներն են ու զարգացած տեղեկատվական

տեխնոլոգիաները [Abramovitz & David 2001: 677-679]: Ընդհանուր առմամբ, գիտելիքահենք տնտեսությունը լայն հասկացություն է, և դրա բնութագրիչները բազմաբնույթ են, սակայն վերջիններս ընդհանուր առմամբ արտացոլում են 21-րդ դարի տեղեկատվական և տեխնոլոգիական արագընթաց զարգացումը, ինչպես նաև նոր գիտելիքի ստեղծման, կիրառման և այդ գիտելիքը հանրային ապրանք դարձնելու ձևերի բազմազանեցման միտումները:

Գիտելիքահենք տնտեսության զարգացման հիմքում շարունակական ինքնակատարելագործումն է, որի միջոցով են կազմակերպությունները և դրանց մարդկային ռեսուրսները դառնում մրցունակ: Ներկայումս մրցունակության ապահովման ամենաարդյունավետ միջոցներ են դարձել նորարարությունը, «նոու-հաու» (know-how) տեխնոլոգիաները, որոնք մրցակիցները դժվարանում են կրկնօրինակել, կամ որոնց կրկնօրինակումն առհասարակ հնարավոր չէ: «Նոու-հաու» տեխնոլոգիաները՝ որպես տվյալ կազմակերպության գործունեությանը յուրահատուկ գիտելիքի կարևոր տեսակ, զարգանում են արդիական գիտելիքներ ու առանձնահատուկ հմտություններ ունեցող աշխատուժի շնորհիվ, որի՝ տեղեկույթից նոր գիտելիք ստեղծելու և արդյունքները նոր մոտեցումներով կիրառելու կարողությունների շնորհիվ կազմակերպությունները դառնում են մրցունակ՝ խթանելով տնտեսության զարգացումը [Carlaw *et al*. 2006: 670]:

Հաշվի առնելով նաև այն, որ գիտելիքահենք տնտեսության զարգացման խնդրում առավել քան կարևորվում են մասնագիտական բարձր որակներով և կիրառական ու փոխանցելի հմտություններ ունեցող աշխատուժը, միջազգային մակարդակում ուղեղների շրջանառությունը, գիտելիքի արդյունավետ կառավարումը և նման այլ խթաններ, հանրության՝ որպես շահակցի իրազեկվածության մակարդակն ու ընկալումները նույնպես պետք է համապատասխանեցվեն ոլորտում առկա հիմնախնդիրներին: Գիտելիքահենք հանրությունը կարող է նոր հարաբերություններ հաստատել պետության, տնտեսության և բարձրագույն կրթության շահակիցների միջև [Carlaw *et al*. 2006: 670]: Հետևապես, գիտելիքահենք տնտեսության հիմքերը և ազգային մակարդակում առկա տնտեսական հարաբերություններն ամրապնդելու գործընթացներում պետք է հաշվի առնել նաև դերակատարների տարանջատ

գործունեությանը, դերային արժեզրկմանը կամ թերարժևորմանը, ինչպես նաև գիտելիքահենք տնտեսության տարաբնույթ ընկալումներին առնչվող խնդիրները:

ՀՀ-ում գիտելիքահենք տնտեսության զարգացման տեսանկյունից կազմակերպությունների և հատկապես բուհերի խթանիչ դերը որոշակիացվում է նաև ենթակառուցվածքային մակարդակում համապատասխան քաղաքականությունների, ռազմավարությունների ու ընթացակարգերի մշակմամբ ու գործադրմամբ՝ հաշվի առնելով տնտեսության զարգացման ազգային քաղաքականությունն ու ռազմավարական գերակայությունները (բուհերում ՄՍ ոլորտի պահպանման ռազմավարացման հիմնախնդիրները մանրամասն քննարկվում են սույն ատենախոսության 3-րդ գլխում): Զարգացած տնտեսություն ունեցող երկրներն արդեն հաջողությամբ կատարել են պետության և ենթակառուցվածքների մակարդակներում ՄՍ իրավունքների պաշտպանության և դրա միջոցով ստեղծագործ մտքերի խթանման հրամայականը՝ փաստելով ՄՍ պահպանման խնդրի կենսական նշանակությունը գիտելիքահենք հասարակության և տնտեսության զարգացման խնդրում:

Գիտելիքահենք հանրության կողմից գիտելիքի արժեքավորումն ու բնութագրումը միակողմանի չէ և բազմաբովանդակ ընկալում ունի. այն չի դիտվում զուտ տեխնիկական բնույթ ունեցող ու կազմակերպությունների բնականոն գործունեությունն ապահովող գործիք: Գիտելիքը՝ որպես գիտելիքահենք տնտեսության առանցքային բաղադրիչ, ունի նաև կառավարչական, սոցիալական, մշակութային և այլ բնութագրիչներ [Carlaw *et al.* 2006: 673]: Գիտելիքի սոցիալ-մշակութային նշանակությունը դրսևորվում է մշակութային արժեքների և այն սոցիալական միջավայրի առանձնահատկությունների արտացոլմամբ, որի շրջանակում ստեղծվում, կիրառվում և փոխանցվում է տվյալ գիտելիքը: Սոցիալ-մշակութային գործոններն անխուսափելիորեն ազդում են նոր գիտելիքի ստեղծման կամ առկա գիտելիքի վերակառուցման գործընթացների վրա՝ ներառելով անհատների զարգացման ու սոցիալական գործընթացների փոխազդեցությունը:

Գիտելիքահենք տնտեսության առավել լայն ըմբռնումը ենթադրում է, որ շուկայի բոլոր հատույթներում գործունեություն ծավալող կազմակերպությունների մարդկային ռեսուրսները պետք է տիրապետեն ՏՀՏ և «բարձր» տեխնոլոգիաներին, սակայն

դրանից զատ գիտելիքահենք տնտեսության կարևոր բաղադրիչներ են նաև գաղափարների նյութականացման և առևտրայնացման բաց ուղիները, մակրոտնտեսական արդյունավետ քաղաքականությունը, ՏՀՏ-ների կիրառումն ու դրա ձևերի բազմազանեցումը՝ մարդկային ռեսուրսների կատարողականն ու կազմակերպության ընդհանուր գործունեությունը որակական ավելի բարձր շեմին հասցնելու նկատառումով [Carlaw *et al*. 2006: 673]: Ավելին, գիտելիքը տնտեսական արժեք է դառնում այն ժամանակ, երբ նյութականանում է ու առևտրայնացվում՝ դառնալով շուկայում իրացման ենթակա արտադրանք կամ պահանջարկ ունեցող ծառայություն: Ուրեմն, առևտրայնացումը ենթադրում է մտավոր և ստեղծագործական գործունեության արդյունքի իրացումը շուկայում [Park 2010: 59]: Գիտելիքի՝ որպես տնտեսական արժեքավոր արտադրանքի իրացման, պահպանման և վերահսկման համար ապահով միջավայրի առկայությունը պարտադիր հարթակ է նորարարական հետազոտությունների իրականացման համար: Սակայն մյուս կողմից այդ արտադրանքի կամ ծառայության պահպանումը դանդաղեցնում կամ դժվարեցնում է դրա տարածման գործընթացը, քանի որ այդ արտադրանքի կամ ծառայության օգտագործումը կառավարելու և հատկապես վերահսկելու համար սովորաբար որոշակի սահմանափակումներ են սահմանվում: Սահմանափակումները գլխավորապես վերաբերում են գիտահետազոտական արդյունքների օգտագործմանը, դրանց տարածմանն ու տնօրինմանն առնչվող գործողություններին, որոնց ֆորմալացումը ենթակառուցվածքային մակարդակում ավելի արդյունավետ է դարձնում նշված արդյունքների օգտագործումն ու կառավարումը:

Անդրադառնալով մտավոր գործունեության արդյունքում ստեղծված ստեղծագործության կամ արդյունքի պահպանման խնդրին՝ հարկավոր է նշել, որ համացանցը և ժամանակակից տեխնոլոգիաների ազդեցությունը ստեղծված արդյունքի կիրառության ու դրա նկատմամբ սեփականության իրավունքի պաշտպանության վրա բավականին մեծ է: Այսպես, համացանցի և տեխնոլոգիաների զարգացման շարունակական արագընթաց տեմպն ու ազդեցիկ ուժը մտավոր սեփականության պահպանման ու վերահսկման, ինչպես նաև շրջանառվող գիտելիքի հավաստիության առումով կարող են ռիսկային լինել, քանի որ գիտելիքը կարող է

ստեղծվել «վիրտուալ» հետազոտությամբ զբաղվող համայնքների կողմից համակարգչային տեխնոլոգիաների ակտիվ կիրառման միջոցով [Carlaw *et al*. 2006: 657]: Այս դեպքում, երբ ծագում է այդ արտադրանքը ստեղծողի կամ սեփականատիրոջ որոշման կամ փոխհատուցման խնդիրը, մտավոր սեփականության իրավունքը դառնում է որոշիչ գործոն, որով հնարավոր է լինում կառավարել սեփական ստեղծագործական աշխատանքի վերարտադրումը կամ կանխել դրա անօրինական օգտագործումը, կրկնօրինակողների կողմից դրա վաճառքը և այլ խախտումներ:

Այսուհանդերձ, տեղեկատվական հսկայածավալ հոսքերի ներկայիս պայմաններում տեղեկության բովանդակության արժանահավատության ապահովման խնդիրը դեռևս համընդհանուր լուծում չի ստացել [Carlaw *et al*. 2006: 661]: Ոչ արժանահավատ գիտելիքի օգտագործումն ու տարածումն իր հերթին պայմանավորված է նաև ՄՍ իրավունքների խախտման մեծաթիվ դեպքերով, որոնք ոչ բոլոր ոլորտներում և ոչ միշտ է հնարավոր վերահսկել ու կանխել: Դա կարող է մարտահրավեր դառնալ հատկապես այն կազմակերպությունների, ներառյալ բուհերի համար, որոնց գործունեության հետագա զարգացումը պայմանավորված է գլխավորապես հավաստի գիտելիքի ստեղծմամբ, փոխանցմամբ ու կիրառմամբ, ինչպես նաև ազգային ու միջազգային շուկաներում այդ գիտելիքի հիման վրա ստեղծված արդյունքների իրացման հնարավորություններով:

Ոլորտային գիտելիքների, հմտությունների ու կարողությունների պաշարը որպես աշխատաշուկայում օգտագործման ենթակա արտադրանք դիտարկելու դեպքում կարելի է ենթադրել, որ զարգացող երկրների դեպքում գիտելիքահենք տնտեսությունում գործող հանրության այն հատվածը, որը կրթվածության և ֆունկցիոնալ գրագիտության բարձր ցուցանիշներ ունի, հակված է «ուղեղների արտահոսքի»՝ երկրից դուրս փնտրելով մտավոր ուժի զարգացման ավելի նպաստավոր պայմաններ ու ցանկալի աշխատանք գտնելու հեռանկարներ: Սակայն հատկանշական է այն, որ, օրինակ, Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (ՏՀԶԿ) անդամ հանդիսացող մի շարք երկրներում (Գերմանիա, Ֆրանսիա, Արևմտյան Եվրոպայի այլ երկրներ), ի տարբերություն Սկանդինավիայի ու Ասիակա ներկրների, գործազրկության ցուցանիշները բավականին բարձր են՝ չնայած

նրան, որ այդ երկրներն ունեն զարգացած տնտեսություն [OECD 2009]: Սա որոշ չափով կարող է պատճառաբանվել այն փաստով, որ տնտեսության շարունակական, սակայն ոչ հստակ և ոչ միշտ նպատակային բարեփոխումների արդյունքում աշխատաշուկաները հաճախակի են կառուցվածքային փոփոխությունների ենթարկվում՝ ապակայունացնելով դեռևս ոչ լիովին լուծված խնդիրներ ունեցող տնտեսության իրաչափ զարգացման հիմքերը:

ՀՀ-ում նույնպես «ուղեղների» արտահոսքի նախադրյալները ձևավորվում են դեռևս անհատի՝ բարձրագույն կրթություն ստանալու տարիներին, երբ, օրինակ, բուհերը պատրաստում են ոլորտային մասնագետներ, սակայն գիտահետազոտական աշխատանքների արդյունքներն առևտրայնացման ենթակա արտադրանք չեն դարձնում, չեն ամրանդում աշխատաշուկայի հետ իրենց կապը՝ աշխատաշուկայի պահանջներին համապատասխան գիտահետազոտական արդյունքներ արտադրելու միջոցով, չեն հետևում շրջանավարտների հետագա մասնագիտական գործունեության հետագծին՝ իրենց (բուհերի) դիրքն ազգային ու միջազգային դաշտերում հստակեցնելու նպատակով: Սա հանգեցնում է երկրում մտավոր կապիտալի անհամաչափ բաշխման կամ նվազման՝ դանդաղեցնելով գիտելիքահենք տնտեսության զարգացման ընթացքը: ՀՀ բուհերում կրթության զարգացման խոչընդոտները պայմանավորված են ոչ միայն կրթության և ժամանակակից տեխնոլոգիաների զարգացման ընթացքի անհամաչափությամբ, այլ նաև գիտահետազոտական աշխատանքների ուղղությամբ պետական թերֆինանսավորմամբ, միջազգային փորձի անհիմն կամ ոչ լիարժեք հիմնավորված տեղայնացմամբ, «ուղեղների» արտահոսքի բարձր ցուցանիշներով, ակադեմիական ազատությունների ոչ լիարժեք տրամադրմամբ, գիտության ներուժի ծերացմամբ և այլն:

Նշված խոչընդոտների հաղթահարումը, ինչպես նաև գիտության առաջընթացն ու գիտատեխնիկական զարգացումը պահանջում են, որ բուհերը վերանայեն գիտելիքի կառավարման ավանդական համակարգերը, որդեգրեն զարգացման ռազմավարություն ու ճկուն քաղաքականություն և գերակա խնդիրների լուծումը փոխկապակցեն նախևառաջ մարդկային կապիտալում կատարվող ներդրումների հետ՝

շեշտադրելով մտավոր ներուժի զարգացման անհրաժեշտությունը: Հետևաբար, բուհերի ռազմավարական նպատակներից է մարդկային կապիտալի արդյունավետ ձևավորումն ու զարգացումը: Դա իր հերթին առաջ է բերում ներքին խնդիրներ, որոնք բուհերի մարդկային ներուժի զարգացման և կառավարման մեխանիզմների մշակման ու գործադրման անհրաժեշտություն են առաջացնում: Այդ խնդիրը լուծելու և արդյունավետ կառավարման համակարգ գործարկելու համար հարկավոր է մշակել ներդրումների արդյունավետ ռազմավարություն և համապատասխան մարտավարություններ, որոնք ուղղված կլինեն մտավոր կապիտալի զարգացմանը [Данилова 2013: 109], և դրանք ծառայեցնել երկրի սոցիալ-տնտեսական զարգացմանը: Սոցիալ-տնտեսական զարգացումը և գիտատեխնիկական առաջընթացն ապահովող առաջնային շահակիցները, ի վերջո, տարբեր ոլորտներում ստեղծագործող հեղինակներն են ու մտավոր ստեղծագործական ակտիվ գործունեություն ծավալող հասարակության անդամները, որոնց գործունեության հիման վրա և պետական աջակցությամբ են կառուցվում գիտելիքահենք տնտեսության կայուն զարգացման նախադրյալները:

Ամփոփելով՝ կարելի է եզրակացնել, որ ՄՍ ոլորտի խնդիրների կարգավորումն ազգային և միջազգային մակարդակներում երկկողմանի բնույթ ունի. մի կողմից պետական քաղաքական դիրքորոշումն ուղղված է ՄՍ իրավունքի պաշտպանությանը, մյուս կողմից՝ հասարակության լայն շերտերին արժանահավատ գիտելիքների և մշակութային արժեքների հասանելիության ապահովմանը: Ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների ու մտավոր կապիտալի օգտագործումը պետք է դիտել որպես հնարավորություն՝ խթանելու մտավոր ստեղծագործական աշխատանքն ու նորարարությունը, ինչպես նաև գիտահետազոտական և գիտակրթական գործունեության շարունակական բարելավումը:

ԳԼՈՒԽ II. ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀՀ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

2.1. ՀՀ բուհերի դերը մտավոր սեփականության ոլորտի բարեփոխման գործընթացներում

Ազգային մակարդակում կրթության զարգացման ու գիտության առաջընթացի վրա մտավոր սեփականության (ՄՍ) ոլորտի բարեփոխմանն ուղղված գործընթացների և արդյունքների ուղղակի ազդեցությունը բուհերին դարձնում է առանցքային դերակատարներից մեկը, քանի որ բուհերը գիտելիքահենք հանրության ձևավորման զարգացմաննախահարթակն են: Հետևապես ՄՍ ոլորտի բարեփոխման առանցքային բաղադրիչ է դառնում ՄՍ կրթության կազմակերպումը, որը նախևառաջ վերապահված է ուսումնական հաստատություններին, ներառյալ բուհերին: Այս նկատառումով բուհերի դերի ու գիտելիքահենք հանրության զարգացման խնդրում առանցքային նշանակության բացահայտումը կարող է նորովի գնահատել մասնավորապես ՀՀ բուհերի գործունեությունը՝ առանձնակի շեշտադրելով մի կողմից ՄՍ ոլորտի և բուհերի փոխազդեցությունն ու փոխկապակցվածությունը, մյուս կողմից՝ բուհերի ռազմավարական կառավարման համակարգերի և մանկավարժական մոտեցումների վերանայման անհրաժեշտությունը:


ՀՀ բարձրագույն կրթության ոլորտի արդի բարեփոխումների գործընթացում բուհերի դերակատարության շրջանակը շարունակաբար ընդլայնվում է և կապակցում ոլորտային նոր ուղղություններ՝ առերեսվելով գիտելիքահենք տնտեսության զարգացմամբ պայմանավորված ազգային ու միջազգային նորանոր մարտահրավերների: Վերջիններիս դիմագրավելու համար հարկավոր է հաշվի առնել մի շարք այնպիսի գործընթացների իրականացման անհրաժեշտությունը, ինչպիսիք են բուհերում տեղեկատվական ու կրթական ժամանակակից տեխնոլոգիաների և նոր մոտեցումների կիրառումը, արդյունավետ ռազմավարության, քաղաքականության ու ընթացակարգերի գործարկումը, գիտահետազոտական աշխատանքների որակական ու քանակական բարձր ցուցանիշների ապահովումն ազգային և միջազգային մակարդակներում և առհասարակ մտավոր ու ստեղծագործական մտքի զարգացումը խթանող արդյունավետ մեխանիզմների արդյունավետ գործադրումը: Այս

գործընթացների իրականացման արդյունավետությունը կարելի է բարձրացնել, եթե բուհերը բավականաչափ կարողունակ լինեն տեղայնացնելու միջազգային մակարդակում իրենց արդյունավետությունը փաստած մոդելները՝ խթանելով բարձրագույն կրթության ազգային համակարգի բարելավումն ու բարձրագույն կրթության որակի բարձրացումը: Նշված խնդիրների արդյունավետ լուծումները տեսանելի են դառնում բուհերի գործունեության առանցքային բարելավված ցուցանիշների տեսքով, օրինակ՝ գիտահետազոտական աշխատանքներում ներգրավված դասախոսների և բարձրագույն կրթության բոլոր մակարդակներում ուսանողների թվի աճ, այլ հաստատությունների հետ համատեղ հետազոտական նախագծերի և կրթական ծրագրերի թվի աճ, ազդեցության բարձր գործակցով և առաջատար հանդեսներում հրատարակված գիտական աշխատանքների թվի աճ, ազգային մակարդակում գիտահետազոտական արտադրանքի առևտրայնացման ցուցանիշների բարձրացում (պատենտներ), գիտահետազոտական արտադրանքի (հոդվածներ, մենագրություններ և գիտական այլ աշխատություններ) ազդեցության գործակցի բարձրացում [Խաչատրյան Ռ. 2016: 136-148] և թեմայի նորարարական բաղադրիչի ապահովում, պատենտների թվի ավելացում, բուհի գիտահետազոտական գործունեության մեջ գիտական և պրոֆեսորադասախոսական կազմի ներգրավվածությանբարձր ցուցանիշներ, կրթական ծառայությունների որակի բարձրացումն ու բազմազանեցումը, բուհի մտավոր ներուժի բացահայտման և զարգացման հնարավորությունների ընդլայնումն ու օգտագործումը, աշխատաշուկայում այդ ներուժի բարձր պահանջարկը և այլն [Самохвалова 2007, 74-77]:

Հաշվի առնելով այն, որ ՄՍ ոլորտի բարեփոխման գործընթացներում բուհերի դերը նախևառաջ դրսևորվում է ՄՍ կրթության արդյունավետ կազմակերպմամբ ու իրականացմամբ, հարկավոր է սահմանել ու բնորոշել ՄՍ կրթությունը: Վերջինիս սահմանումը դուրս է բերվել ԵՄ և ոչ ԵՄ անդամ պետություններում գործող ուսումնական հաստատությունների գործունեության շրջանում կատարված ուսումնասիրությունների արդյունքում, և ներկայումս այն մասնագիտական գրականության մեջ լայն գործածություն ունի:

Մտավոր սեփականության կրթության կազմակերպման ֆորմալացված ձևերը կարգավորվում են բուհերի որդերգրած քաղաքականությամբ, ռազմավարություններով, մարտավարություններով, ներքին կանոնակարգերով ու ընթացակարգերով, դրանց հիման վրա մշակված կրթական ծրագրերով և առնչվող ուսումնական գործընթացներով: Մանկավարժագիտության տեսանկյունից **մտավոր սեփականության կրթությունը** բնորոշվում է որպես ՄՍ ոլորտի վերաբերյալ գիտելիքների ու հմտությունների այնպիսի ամբողջություն, որոնք փոխանցելի են և միջգիտակարգային տեսանկյունից կիրառելի են ուսումնառության տարբեր ոլորտներում: ՄՍ կրթությունը ենթադրում է, որ ուսումնառողները պետք է ձեռք բերեն ՄՍ ոլորտի վերաբերյալ այնպիսի գիտելիքներ, որոնք ոչ միայն կսովորեցնեն հարգել այլոց ՄՍ իրավունքները, այլ նաև կօժանդակեն նրանց բացահայտելու իրենց ստեղծագործական ներուժն ու զարգացնելու նորարարական հմտությունները: Այս նպատակադրումները միտված են սեփական եկամտի աղբյուրի ձեռքբերմանը և ավելի լայն առումով՝ երկրի տնտեսական աճի խթանմանը [Office for Harmonization in the Internal Market (Trade Marks and Designs) 2015]: Ըստ Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպության՝ ՄՍ կրթությունն այն գործընթացն է, որը պետք է օժանդակի ուսումնառողներին ապագայում դառնալու ՄՍ ստեղծողներ: Ուսումնառողների ստեղծագործական հմտությունները պետք է զարգացնել, և նրանց պետք է կրթել այնպես, որ նրանք հարգեն այլոց ՄՍ իրավունքները [Inoue 2010]:

Եվրոպական երկրներում ՄՍ կրթության առանցքային ուղղությունները վերաբերում են և՛ արդյունաբերական բնագավառին, և՛ հեղինակային իրավունքին: ՄՍ կրթությունը կարելի է բաժանել ուսումնառության հետևյալ հինգ հիմնական բնագավառների (Սխեմա 4).



ՄՍ կրթության վերոնշյալ բնագավառների շրջանակում գործունեություն ծավալելու իրավունքն ու հնարավորությունները կախված են տվյալ ուսումնական հաստատության (ոչ միայն բարձրագույն ուսումնական հաստատությունների) կանոնադրությամբ սահմանված գործունեության ուղղվածությունից, իրավակազմակերպական ձևից և այլ առանձնահատկություններից: Բացի այդ, կարևոր է նշել, որմտավոր սեփականության կրթության կազմակերպումը և իրականացումը չպետք է սահմանափակվիմիայն հումանիտար գիտության ոլորտի և որոշակի մասնագիտությունների կրթական ծրագրերի կամ դասընթացների ապահովմամբ (մտավոր սեփականությունը՝ որպես առարկա, սովորաբար դասավանդվում է իրավաբանության և տնտեսագիտության ոլորտներում մասնագետներ պատրաստելու համար): Մտավոր սեփականության պահպանումն առնչվում է գիտության բոլոր ոլորտներին ու ճյուղերին՝ և՛ ճշգրիտ, և՛ հումանիտար ոլորտներին:

Միջազգային փորձը ցույց է տալիս, որ ՄՍ պահպանման հիմնախնդիրների վերաբերյալ կարճաժամկետ դասընթացներով նախատեսվող ժամանակային ծանրաբեռնվածությունը սովորաբար բավարար չի լինում ուսումնառողներին մտավոր սեփականության պահպանման ոլորտի մասին համապարփակ գիտելիքներ ձեռք բերելու համար: Օրինակ՝ նորարարական և ստեղծագործական որևէ աշխատանքի հեղինակ մտավոր սեփականության իրավունքների պահպանման, ներառյալ արտոնագրերի (պատենտների) վերաբերյալ գիտելիքներինչտիրապետելու պատճառով կարող է իր աշխատանքը հանրությանն անժամանակ հասանելի դարձնել՝ այդպիսով

զրկվելով պատենտների նկատմամբ իր իրավունքներից: Մեկ այլ խնդիր է *բաց մատչելիությամբ* աշխատանքների օգտագործումն ու դասընթացների կազմակերպումը (MOOCs - Massive Open Online Courses), որոնք նույնպես ենթակա են որոշակի կանոնների պահպանման՝ ըստ տվյալ ուսումնական հաստատության պահանջների և ազգային իրավական դաշտով կարգավորվող որոշակի օրենսդրական դրույթների [Rockman 2004]: Այս պարագայում, օրինակ, բաց մատչելիությամբ ստեղծագործությունների օգտագործման կանոններին պետք է իրազեկ լինեն և՛ այդ դասընթացները մշակողները, և՛ դրանց օգտատերերը:

Գիտելիքահենք տնտեսության զարգացման խթանման գործում բուհերի դերակատարությունը հատկապես դրսևորվում է գիտական ու հետազոտական արդյունքների ստեղծմամբ, բուհերին և քոլեջներին ֆինանսական զգալի ներհոսք ապահովող դրամաշնորհային ծրագրերի արդյունքների (ներառյալ գյուտերի, նորարարությունների, հայտնագործությունների) [Weisburd 2003], ռազմավարական նպատակների սահմանմամբ և իրականացմամբ, որոնք մշակվում են բուհերի գիտահետազոտական գործունեության շրջանակներում՝ մտավոր կապիտալի զարգացման և արդյունավետ օգտագործման միջոցով: Գիտահետազոտական արդյունքների կառավարման և առևտրայնացման մեխանիզմների, ինչպես նաև ազգային ու միջազգային շուկաներում դրանց պահանջարկի ապահովման համար առաջնահերթ նախապայման է այդ արդյունքները ստեղծողների (հեղինակների) մտավոր սեփականության պահպանումը: Այս նպատակով գործադրվող իրավական կառուցակարգերը երկկողմանի ազդեցություն են ունենում երկրի տնտեսության զարգացման վրա՝ խթանելով մի կողմից հեղինակների ստեղծագործական գործունեությունը, մյուս կողմից՝ ազգային շուկայում այդ ստեղծագործական աշխատանքի արդյունքների իրացումը: Սակայն իրացման գործընթացին պետք է տրամաբանորեն նախորդի ստեղծագործական արդյունքների ստեղծման հարթակի և մասնավորապես գիտահետազոտական աշխատանքների կատարման համար նպաստավոր պայմանների ապահովման փուլը, որը ենթադրում է հատկապես բուհերի՝ որպես կրթական, գիտահետազոտական և հանրային ծառայություններ իրականացնող հիմնական դերակատարների մասնակությունն ու հանձնառությունը:

Ուստի, հաշվի առնելով բուհերի գիտահետազոտական գործունեության միջոցով մտավոր ու ստեղծագործական աշխատանքների ստեղծման, տարածման ու կիրառման կարևորությունը՝ անհրաժեշտ է շեշտադրել ու արժևորել բուհերի դերը մտավոր սեփականության ոլորտի բարեփոխման և դրա միջոցով նաև գիտելիքահենք տնտեսության զարգացման գործում: Փաստորեն, բուհերում գիտելիքի կառավարման ժամանակակից ձևերի, ցանկացած մտավոր աշխատանքի արդյունքների ճիշտ կիրառման ձևերի ուսուցման միջոցովև ՄՍ պահպանման ոլորտի հիմնարար գիտելիքների տրամադրմամբ բուհերը ոչ միայն պատրաստում են որոշակի ոլորտների մասնագետներ, այլ նաև սեփական իրավունքներն իմացող և դրանք պաշտպանելուն ունակ, այլոց ստեղծագործական աշխատանքի նկատմամբ հարգանք ունեցող, պատասխանատու և գրագետ օգտատերեր:

Գիտելիքահենք տնտեսության ու նորարարության զարգացման և տեղեկատվական աճող հոսքերի պայմաններում ՀՀ բուհերի ազդեցությունը մտավոր սեփականության ոլորտի բարեփոխման վրա դեռևս հստակեցման կարիք ունի: Ակադեմիական միջավայրում իրականացվող գիտահետազոտական գործունեության շարունակական բարելավման գործընթացներում անհրաժեշտ է վերանայել ու վերաիմաստավորել ՀՀ բուհերի դերը՝ հաշվի առնելով ոչ միայն կրթական ծառայությունների, այլ նաև գիտահետազոտական գործունեություն իրականացնելու և նոր գիտելիք ստեղծելու համար համապատասխան հարթակ ապահովելու հանձնառությունը: Գիտահետազոտական գործունեության արդյունքը՝ որպես գիտական արտադրանք, կարող է նյութականացման ու առևտրայնացման միջոցով կրթության և այլ շուկաներում դառնալ հանրային ապրանք՝ սերտորեն փոխկապակցելով գիտահետազոտական աշխատանքներն ու գիտելիքահենք տնտեսության խթանման գործընթացները: Այդ փոխկապակցվածության ապահովման և գիտությունն ու հետազոտությունը տնտեսության զարգացման կենսական բաղադրիչ դարձնելու անհրաժեշտությունից բխում է գիտահետազոտական համալսարանների ստեղծման անհրաժեշտությունը, որը միտված կլինի կրթության, գիտության ու արտադրության շղթայի կենսունակությանը [Խաչատրյան Ռ. 2012: 42-43]՝

ապահովելով հետազոտական գործունեության միջոցով գործունեության գիտականացման բարձր մակարդակը:

Մրցակցային առավելության ձեռքբերման տեսանկյունից բուհերը պետք է հետամուտ լինեն ոչ միայն գիտելիքի որոնման ու տարածման աշխատանքների իրականացմանը, այլև հասարակական խնդիրները լուծելու համար նոր գիտելիքի ստեղծմանն ու գործադրմանը [Խաչատրյան Ռ. 2012: 44]: Փաստորեն, մրցակցային առավելության ձեռքբերումն էապես կախված է նոր գիտելիքի ստեղծման ու դրա արդյունավետ կիրառության, նորարարական գաղափարների իրականացման, ինչպես նաև դրանք նյութականացնելու կարողությունից: Այս առումով բուհերն իրենց առանձնահատուկ դերն ու նշանակությունն ունեն՝ հաշվի առնելով դրանց գործունեության շրջանակներում ստեղծագործական և գիտահետազոտական աշխատանքների ստեղծման լայն հնարավորությունների առկայությունը: Միաժամանակ հարկ է նշել, որ գիտելիքահենք տնտեսության զարգացման և բարձրագույն կրթության բարեփոխման գործընթացների փոխկապակցվածության տեսանկյունից այդ հնարավորությունների օգտագործումը պայմանավորված է օրենսդրությամբ կարգավորվող հիմնադրույթներով և դրանց կիրառմամբ, որոնք թեև սահմանափակում են արդյունքների օգտագործման, առևտրայնացման և այդ արդյունքների նկատմամբ այլ տիպի գործունեություն ծավալելու իրավասությունները, սակայն հնարավորինս կանխում են այդ աշխատանքների անօրինական օգտագործման հնարավոր ձևերը:

ՄՍ ոլորտը կարգավորող օրենսդրական դաշտի բարեփոխման գործընթացներն անխուսափելիորեն ներառում են նշված ոլորտի բարելավմանն ուղղված տարատեսակ գործընթացներում բուհերի մասնակցությունը և նրանց կուտակած փորձն ու գիտահետազոտական ներդրումները կրթության և գիտության ոլորտներում: Բուհերի խթանիչ դերը նախևառաջ որոշակիացվում է ենթակառուցվածքային մակարդակում ՄՍ իրավունքի պահպանմանն առնչվող քաղաքականության, ռազմավարության, համապատասխան ընթացակարգերի և կառուցակարգերի մշակմամբ ու գործադրմամբ, որոնք պետք է ինստիտուցիոնալ մակարդակում կարգավորեն ՄՍ պահպանման հիմնախնդիրները և համահունչ լինեն ազգային օրենսդրական դաշտին:

ՄՄ ոլորտը կարգավորող ներքին քաղաքականություն և փաստաթղթային հենք մշակելիս բուհերը պետք է առաջնահերթ խնդիր համարեն ոչթե այդ քաղաքականության ու համապատասխան գործընթացների իրականացման միջոցով եկամտի ձեռքբերումը, այլ գիտահետազոտության ոլորտի զարգացման ռազմավարության իրականացումը՝ ներդնելով ու շարունակաբար բարելավելով գիտական արտադրանքի ապրանքայնացման մշակույթը: ՄՄ քաղաքականությունը պետք է նաև ճկուն լինի և նպաստի բուհում գիտական արտադրանքի ուղղությամբ կատարվող դրական փոփոխություններին՝ որպես հիմք ընդունելով ստեղծագործ մտքի խրախուսումն ու նորարարական մտքի զարգացումը: Կարևոր է, որ այդպիսի քաղաքականությունն արտացոլի բուհերի ներքին ու արտաքին շահակիցների ակադեմիական կարիքները: Այսուհանդերձ, բուհերի դերը կարևորվում է ոչ թե պարզապես ենթակառուցվածքային փոփոխություններ կատարելու պատրաստակամությամբ, այլ ուսուցման և հետազոտության ոլորտներում արձանագրած հաջողություններով [Shattock 2003]:

Ընդհանուր առմամբ բուհերը, հանդիսանալով մտավոր սեփականության ոլորտի բարեփոխման դերակատարներ, կրում են ոչ միայն ներքին, այլև առավել լայն՝ ազգային մակարդակում բարեփոխումներ իրականացնելու և իրենց կանոնադրական գործունեության շրջանակում այդ բարեփոխումներին մասնակից դառնալու պատրաստականությունը:

Հատկանշական է այն, որ ժամանակակից բուհերը դուրս են եկել ավանդական կրթություն և հետազոտություն իրականացնող ուսումնական հաստատության ընկալման շրջանակից՝ տրամաբանորեն ընդլայնելով իրենց գործառութային շրջանակը: Ներկայումս ժամանակակից բուհերը համարվում են *երրորդ առաքելություն* [Etzkowitz & Leydesdorff 1997] իրականացնող ուսումնական հաստատություններ, որոնցից ակնկալվում է հիմնական առաքելությունից (կրթական ծառայություններ տրամադրելու միջոցով ապագա մասնագետների պատրաստում) զատ իրականացնել նաև գործառույթներ սեփական ակադեմիական միջավայրից դուրս (օրինակ՝ սոցիալ-մշակութային կյանքում ակտիվ դերակատարություն, հանրային և արտադրական ոլորտները կապող ձեռնարկատիրական բնույթի գործառույթների իրականացում,

ոլորտային խնդիրների նորարարական լուծումների առաջադրում նախագծերի, ծրագրերի և ՏՀՏ-ների ակտիվ կիրառման միջոցով և այլն): Բուհում ուսուցման ու հետազոտության գործառույթները, անշուշտ, սերտորեն փոխկապակցված են, սակայն *երրորդ առաքելությունը* նաև տվյալ բուհի համատեքստով պայմանավորված ռազմավարություն է [Curaj *et al*. 2015]: *Երրորդ առաքելությունը* սահմանվում է որպես «բուհի՝ գիտելիք ստեղծելու և ավելի լայն համատեքստում այն կիրառելու կարողություն» [Molas-Gallart *et al*. 2002]: *Երրորդ առաքելության* իրականացումն ապահովող մի շարք գործոնների շարքում հատկապես առանձնացվում են մարդկային ռեսուրսները՝ որպես մտավոր կապիտալի ձևավորման ու զարգացման հիմք, մտավոր սեփականությունը՝ որպես մտավոր և ստեղծագործական գործունեության արդյունքում ստեղծված արտադրանք, այդ արտադրանքի և շուկայի կապը, որի միջոցով առևտրայնացվում են գիտահետազոտական աշխատանքները, քաղաքականության մշակման գործընթացներում և՛ բուհի, և՛ հանրության մասնակցությունը, սոցիալ-մշակութային կյանքում բուհի ներգրավվածությունը, գիտության ընկալումը հասարակության կողմից և այլն: Այդ գործոնների ազդեցության հաշվառումը նույնպես կարող է օժանդակել բուհերին ինստիտուցիոնալ մակարդակում բացահայտելու ոլորտային առկա խնդիրներն ու առաջադրելու ավելի արդյունավետ և գործնական լուծումներ ու կառուցակարգեր:

ՀՀ համատեքստում մտավոր սեփականության ոլորտի բարեփոխումները միշտ չէ, որ արդյունավետ կերպով և կարճ ժամանակահատվածում լուծում են ոլորտում առկա խնդիրները, որի հիմնական պատճառներից են հասարակության կողմից գիտելիքահենք տնտեսության տարաբևեռ ընկալումները, ՄՍ պահպանման վերաբերյալ իրազեկության ցածր մակարդակը, ուսումնական հաստատությունների կողմից մտավոր սեփականության, մասնավորապես հեղինակային իրավունքի պաշտպանության վերաբերյալ քաղաքականության, ներքին կանոնակարգերի ու մեխանիզմների բացակայությունը կամ անկատարությունը, բուհերում մտավոր սեփականության իրավունքի խախտումը և ակադեմիական անազնվությունը կանխող ու վերահսկող մեխանիզմների բացակայությունը կամ դրանց անարդյունավետ կիրառումը, ինչպես նաև կրթության բովանդակությունում այդ բաղադրիչի

բացակայությունը: Բացի այդ, ներկայումս բարձրագույն կրթության ոլորտի ոչ բոլոր շահակիցների համար են տեսանելի բարձրագույն կրթության ոլորտում շարունակաբար իրականացվող բարեփոխումների դրդապատճառները հատկապես այն դեպքում, երբ այդ բարեփոխումները դիտվում են որպես հերթական փոփոխություններ և որոշակի ժամանակահատված անց դեռևս շոշափելի արդյունքներ չեն արձանագրում:

Միջազգային փորձը ցույց է տալիս, որ այն բուհերը, որոնք ակնկալում են տեխնոլոգիական տեղափոխելի ներդրումների միջոցով ֆինանսական աճ արձանագրել, զիջում են այն բուհերին, որոնք առաջնահերթություն են սահմանում պատենտավորման ու արտոնագրման միջոցով ֆինանսական ներհոսքի ապահովմանը: Վերջիններս համարվում են միջազգային մակարդակով ամենաբարձր վարկանիշ ունեցող հետազոտական ուսումնական հաստատությունները: Ընդհանուր առմամբ, պատենտներն ու արտոնագրերը համեմատաբար արդյունաբերության ոչ բարձր մակարդակ ունեցող երկրներում մեծ ազդեցություն ունեն տեխնիկական բնույթի նորարարությունների զարգացման վրա [Musselin and Teixeira 2014: 26]: Պետք է նշել, որ բուհերի կողմից տեխնոլոգիաների տեղափոխմանը, արտոնագրմանը ու պատենտավորմանն առնչվող գործունեությունը ենթադրում է, որ բուհերն ունեն ՄՍ իրավունքների վերաբերյալ արդեն մշակված և սահմանված համապատասխան քաղաքականություն, ռազմավարություն, ընթացակարգեր ու մեխանիզմներ: Գիտահետազոտական գործունեություն իրականացնող մի շարք միջազգային բուհերի համար պատենտավորումն ու արտոնագրումը դարձել են եկամտի շեմի բարձրացման հիմնական միջոցներ:

ՀՀ բարձրագույն կրթության գործող համակարգն ու դրա բովանդակությունը հիմնականում չեն նպաստում գիտական արտադրանքի ապրանքայնացմանը. ՀՀ բուհերի գիտահետազոտական կարողությունները հիմնականում թույլ են, ընդ որում, դասավանդումն ու գիտական հետազոտությունն արհեստականորեն տարանջատված են [Խաչատրյան Ռ. 2012: 2-3]: Սրա հիմքում ընկած են մի շարք համակարգային խնդիրներ, որոնցից են ՀՀ բուհերի ոչ բավարար պետական ֆինանսավորումն ու ոչ նպատակային ֆինանսական կառավարումը, գիտահետազոտական ուղղությունների

ֆինանսական մեթոդների վերանայման անհրաժեշտությունը, գիտական արտադրանքի ապրանքայնացումը, գիտահետազոտական աշխատանքներ իրականացնող մասնագետների համար ոչ բավարար հաստիքների հատկացումը, փորձարարական և գիտահետազոտական լաբորատորիաների սակավությունը [Խաչատրյան Ռ. 2012: 5-7], բակալավրական և մագիստրոսական կրթական ծրագրերով պահանջվող գիտահետազոտական աշխատանքներին առաջադրվող պահանջների ոչ հստակ տարբերակվածությունը, բուհերում գիտահետազոտական աշխատանքների արդյունքները ուսումնական ծրագրերում ներդնելու փորձի սակավությունը, դրամաշնորհային ծրագրերում (որպես նոր գիտահետազոտական աշխատանքների կատարման հնարավորություն) հատվածական ներգրավվածությունը և այլն:

Վերոնշյալ և համանման խնդիրներին համապատասխան լուծումներ գտնելու նպատակով ՀՀ բուհերը պետք է հետազոտական բաղադրիչն ընդգրկեն ուսումնառողների ակադեմիական գործունեության բոլոր փուլերում և գործընթացներում՝ խթանելով հետազոտության նկատմամբ նրանց հետաքրքրությունը, հետազոտական մեթոդների կիրառման հմտությունների զարգացումը, ինչպես նաև ապահովելով գիտելիքի փոխանցելիությունը գործնական հարթակ: Այդ բարեփոխումը միտված է ուսումնառողներին միջազգային չափանիշներին համապատասխան այնպիսի ոլորտային մասնագետներ պատրաստելուն, որոնք ունակ կլինեն արագ ու արդյունավետ կերպով արձագանքել աշխատաշուկայի մշտափոփոխ պահանջներին և դրսևորել համապատասխան կարողություններ հետագա աշխատանքային գործունեության մեջ: Մասնավորապես գիտական արտադրանքի ապրանքայնացման ուղղությամբ բուհերը կարող են, օրինակ, մրցունակ հետազոտական աշխատանքները դարձնել գիտատար ապրանք՝ ապահովելով դրանց կիրառելիությունն ու շրջանառությունը: Հետազոտությունների արդյունքները պետք է կիրառելի լինեն, անպայման նորարարություն պարունակեն, իրականացվեն հետազոտական ժամանակակից ու արդյունավետ մեթոդներով և բխեն բուհերի գիտահետազոտական ուղղությունների ընդհանուր տրամաբանությունից:

ՄՍ իրավունքի պաշտպանության ու կիրարկման մեխանիզմների և համակարգերի ուսումնասիրությունները հաճախ կենտրոնացված են լինում առևտրային բնույթի գործընթացների վրա [Park 2010: 66]՝ դիտարկվելով ավելի շատ նյութական (ֆինանսական), քան ոչ նյութական (սոցիալ-մշակութային ու գիտակրթական) գործոնների ազդեցության տեսանկյունից: ՀՀ-ում ՄՍ իրավունքի պաշտպանության խնդրի քննարկումը ոչ առևտրային ոլորտներում, մասնավորապես կրթության ոլորտում, հաճախ փակուղու է հանգեցնում, քանի որ մի կողմից քննարկվում է տնտեսական զարգացումը խթանելու նպատակով հեղինակային իրավունքով պաշտպանվող ստեղծագործությունների հանրային հասանելիության կարևորության հարցը, մյուս կողմից՝ հեղինակային իրավունքի խախտումը հնարավորինս կանխելու նպատակով ստեղծագործության հասանելիության և օգտագործման սահմանափակումների անհրաժեշտությունը: Միջազգային փորձը ցույց է տալիս, որ չնայած միջազգայնորեն մեծ համբավ ունեցող բուհերն ապահովում են նոր գիտելիքներով ստեղծված տեխնոլոգիաների տեղափոխումն ու տարածումը ողջ աշխարհով, սակայն գիտելիքի տեղափոխումը բուհերի գործունեության միջոցով հիմնականում տեղի է ունենում տեղական կամ ազգային մակարդակով՝ նպաստելով հիմնականում ազգային տնտեսության աճին [Cohen, Nelson & Walsh 2002]:

Բուհերն ընդհանուր առմամբ կարող են խթանել նոր ենթակառուցվածքների կամ կրթական շուկայի նոր հատույթների ստեղծումը, սակայն դրանք ավելի շատ նպաստում են արտադրության առկա ճյուղերի զարգացմանն ու հասունացմանը և տարբեր ոլորտների ընդլայնմանը: Այսուհանդերձ, բուհերն այս խնդրում իրենց ուրույն դերն ունեն, քանի որ դրանք հետազոտողների միջոցով ակադեմիական գիտելիքն ու գիտահետազոտական արդյունքները շուկայական ոլորտ տեղափոխելու հնարավորություններ են ստեղծում և առհասարակ տնտեսության զարգացման նոր լուծումներ ու նոր գաղափարներ առաջադրելու համար նպաստավոր հարթակ են համարվում:

Գիտելիքի կառավարման խնդիրների շարքում բուհերը պետք է դիտարկեն նաև գիտելիքի փոխակերպման ձևերը՝ կարևորելով ենթադրելի գիտելիքից հավաստի գիտելիքի փոխակերպման գործընթացները: Վերջիններս կարող են վերաբերել

ինչպես բուհի ուսումնական և գիտահետազոտական գործունեության փորձի հիման վրա դուրս բերվող տեղեկությանն ու ստեղծվող գիտելիքին, այնպես էլ ներբուհական հաղորդակցական կապերով փոխանցվող գիտելիքին, որի որոշակիացման արդյունքում գիտելիքը դառնում է հավաստի: Մտավոր կապիտալի արդյունավետ օգտագործման ու հավաստի գիտելիքի պահպանման գործընթացների արդյունավետ կառավարումն այս դեպքում ռազմավարական նշանակություն է ձեռք բերում բուհերի համար՝ ենթադրելով, որ աշխատակազմի մտավոր կապիտալը գնահատվում է և նպատակաուղղված է բուհի գործունեության բարելավմանն ու անհատական մասնագիտական զարգացմանը: Հատկանշական է նաև այն, զարգացած երկրները գիտելիքի ու գաղափարների փոխանցման խնդիրն արդյունավետորեն լուծել են, և այդ երկրներում գիտելիքահենք տնտեսությունը ներկայիս գերմրցակցային պայմաններում ենթադրում է նոր գաղափարների ու գիտելիքների շարունակական հոսքի ապահովում ու դրանց նյութականացման արդյունավետ մեխանիզմների կիրառում ինչպես ենթակառուցվածքային, այնպես էլ պետական մակարդակներում:

Թեև միջազգային փորձը ցույց է տալիս, որ բարձրագույն կրթության ոլորտում մտավոր ներուժի կիրառման ու ներդրման արժեքը սովորաբար գերագնահատվում է, այդուամենայնիվ, այդ կամ նմանատիպ ներուժի առկայությունը չափազանց կարևորվում է [Auril/Universities UK 2002: 20]: Գիտելիքը համարելով գերարժեք և արտադրողականության հիմնական աղբյուր՝ բարձրագույն կրթության ոլորտում կրթական և գիտահետազոտական ծառայությունների իրականացումը պետք է առանձնահատուկ կերպով ապահովի բարձրորակ մասնագիտական պատրաստվածություն և գիտելիքի արդյունավետ կիրառման մեխանիզմների համապարփակ համակարգ՝ հիմնված նորարարության խթանման վրա: Այս առումով առանձնահատուկ կարևորություն ունեն կրթության և մասնավորաբար բարձրագույն կրթության համակարգում գործող բոլոր դերակատարները, շահակիցներն ու իրականացվող համալիր միջոցառումները, որոնք որոշիչ դեր են ունենում բարձր որակավորում ունեցող մասնագետների պատրաստման ու համալրման և բուհերի կողմից տրվող որակավորումների միջազգային ճանաչման խթանման խնդրում [Վարդանյան 2008: 33-34, 67]: ՀՀ բուհերը, հետամուտ լինելով կրթական նոր

պահանջների բավարարման, մրցակցային առավելության ձեռքբերման ու դրա պահպանման, ինչպես նաև գիտության և հետազոտության կարևոր բաղադրիչներ համարվող գիտահետազոտական աշխատանքների տարածման ու միջազգային ճանաչման խնդիրների լուծմանը, ձգտում են փոփոխությունների արագ արձագանքման և ռեսուրսների նպատակային կիրառման մեխանիզմներ գործադրել՝ հաճախ խնդիրը տեսնելով ոչ այնքան բուն ուսումնական գործընթացում և ուսուցման կազմակերպման ձևերի արդյունավետության տեսանկյունից, որքան բուհի կառավարման գործընթացներում: Այս միտումը կարող է որակական փոփոխությունների հանգեցնել՝ առաջացնելով ճեղքվածք բարձրագույն կրթության բովանդակության բարեփոխմանն ուղղված գործնական աշխատանքների և սահմանված ռազմավարական գաղափարային ու փաստաթղթային հենքի ապահովման միջև:

ՄՍ պահպանման, ներառյալ հեղինակային իրավունքի պաշտպանության տեսանկյունից գործնական ու ռազմավարական քայլերի միջև վերոնշյալ ճեղքվածքը հնարավորինս նվազեցնելու նկատառումով անհրաժեշտ է, որ բուհերն իրենց իրավասությունների շրջանակում վերանայեն գիտելիքի կառավարման, այդ թվում նաև ՄՍ պահպանման քաղաքականությունը: Այսինքն, ՍՄ իրավունքի պաշտպանության համակարգային կառավարման արդյունավետությունն ապահովելու համար բուհերը կարող են նախևառաջ մշակել ՄՍ առնչվող քաղաքականություն, ռազմավարություն, համապատասխան ընթացակարգեր ու մեխանիզմներ և դրանց հիման վրա գործնական աշխատանքներ իրականացնել: Ռազմավարական հենքը, ֆորմալ մշակված ընթացակարգերն ու ներքին կանոնակարգերը նաև հնարավորինս կանխում են ՄՍ իրավունքի խախտման դեպքերն ակադեմիական միջավայրում և ակադեմիական անազնվության հնարավոր դրսևորումները դարձնում են ավելի վերահսկելի՝ ըստ անհրաժեշտության ընդգրկելով նաև պատժամիջոցներ կամ ներքին կարգապահական տույժեր:

Այսպիսով, ՀՀ բարձրագույն կրթության բարեփոխման և զարգացման համատեքստում մտավոր սեփականությունն առաջնային դեր ու նշանակություն ունի, քանի որ ՀՀ ներկայիս գիտելիքահենք տնտեսության զարգացման միտումներն ուղղված են նորարարական ու ստեղծագործական մտքի խթանմանը: ՀՀ բուհերը,

որոնց գործունեությունը միտված է բարձրորակ և մրցունակ մասնագետներ պատրաստելու միջոցով երկրի գիտելիքահենք տնտեսության զարգացմանն ու բարեկեցիկ ապագայի ապահովմանը, պարտավորված են դասավանդողների և ուսումնառողների համար ապահովել ինչպես ֆիզիկական, այնպես էլ բարոյահոգեբանական համապատասխան կրթական միջավայր՝ վերջինս ծառայեցնելով ստեղծագործ մտքի ներուժի բացահայտմանը, զարգացմանն ու գիտելիքի արժևորմանը և այդպիսով բարձրացնելով կրթության ու մտավոր սեփականության ոլորտների բարելավման գործընթացներում նրանց պատասխանատվությունն ու դերակատարությունը: Կրթության բովանդակության որակի ապահովման տեսանկյունից ՀՀ բուհերի առջև ծառացած մեկ այլ հիմնախնդիր է ուսումնառողներին գիտելիքներ, կարողություններ ու հմտություններ հաղորդելուց բացի ստեղծագործական գործունեության արդյունքում ստեղծված աշխատանքի նկատմամբ մտավոր սեփականության իրավունքի պաշտպանության կարևորությունը ցույց տալը: Բարեփոխումները, լինելով առկա խնդիրներին արդյունավետ լուծումներ տալու և նոր մարտահրավերներին արդյունավետորեն դիմակայելուն ուղղված գործընթացներ, պարտադիր ներառում են օրենսդրության բարելավման գործընթացները, սակայն զարգացող տնտեսություն ունեցող մի շարք երկրներում, այդ թվում՝ ՀՀ-ում, ներկայումս խնդրահարույց է ոչ թե ոլորտը կարգավորող ազգային օրենքի բացակայությունը, այլ ինստիտուցիոնալ մակարդակում դրանց կիրառելիությունն ապահովող մեխանիզմների և համապատասխան ընթացակարգերի անկատարությունը:

2.2. ՀՀ բուհերում հեղինակային իրավունքի պահպանման օրենսդրական հիմքերը

Գիտելիքահենք տնտեսության զարգացման միտումները և բարձրագույն կրթության ներկայիս բարեփոխումները ցույց են տալիս, որ գիտելիքահենք հասարակության զարգացումը պայմանավորված է իրավագիտակցության բարձր մակարդակ ունեցող աշխատուժի գործունեության և պետական ու ինստիտուցիոնալ մակարդակներում ՄՍ իրավապահպանման համակարգերի արդյունավետ և համակցված գործարկմամբ: Պետական մակարդակում ՄՍ պահպանության ոլորտը

կարգավորվում է օրենսդրական դաշտով և համապատասխան իրավական մեխանիզմների գործադրմամբ: ՄՍ պահպանման ինստիտուցիոնալ հիմնախնդիրները հիմնականում դրսևորվում են բարձրագույն ուսումնական հաստատությունների համապատասխան քաղաքականություններով, ռազմավարություններով, գիտելիքի կառավարման ու կրթության կազմակերպման ինստիտուցիոնալ համակարգերով ու մանկավարժագիտական մոտեցումներով, ինչպես նաև տվյալ ակադեմիական միջավայրին հատուկ մշակույթով:

Ե՛վ պետական, և՛ ինստիտուցիոնալ իրավապահպանման համակարգերն ու մեխանիզմները պետք է բխեն ազգային տնտեսության ու կրթության համակարգի առանձնահատկություններից՝ ՄՍ պահպանության ոլորտի խնդիրների լուծումը գործնական դաշտում հնարավոր դարձնելու համար: Հայաստանի Հանրապետության բարձրագույն կրթության համատեքստում գիտելիքահենք տնտեսության, ՄՍ պահպանության և բարձրագույն կրթության ոլորտների միջև որոշակի մասնատում է նկատվում, որը սահմանափակում է ՀՀ բուհերում ՄՍ ոլորտի (հատկապես հեղինակային իրավունքի բնագավառի) պահպանության առկա խնդիրներին ինստիտուցիոնալ մակարդակում արդյունավետ լուծում տալու հնարավորությունները: Ուստի, սույն հետազոտության շրջանակում քննարկվում են մտավոր սեփականության կրթության կազմակերպման օրենսդրական հիմքերը բուհերում հեղինակային իրավունքի իրավապահպանման տեսանկյունից՝ հաշվի առնելով բարձրագույն կրթության և մտավոր սեփականության պահպանության ոլորտների սերտ փոխկապակցվածությունը:

Գիտելիքահենք տնտեսության զարգացման ներկայիս խնդիրների շարքում առանձնահատուկ տեղ ունեն գիտատեխնոլոգիական և գիտահետազոտական գործունեության արդյունքների կառավարման խնդիրները: Մասնավորապես, այդ արդյունքներն անհամաչափ են բաշխված տնտեսության զարգացվածության տարբեր մակարդակներ ունեցող երկրներում՝ պայմանավորված նորարարության ու ստեղծարարության վրա հիմնված գիտելիքների ստեղծման և կարողությունների ձևավորման ու զարգացման հնարավորություններով: Որպես կանոն՝ զարգացած երկրներին բնորոշ է նորարարության և ստեղծարարության վրա հիմնված

գիտելիքահենք տնտեսությունը: Այս երկրներում բարձրագույն կրթությունը նոր գիտելիք արտադրող առանցքային համակարգերից է, հետևապես տնտեսական շուկայի, բարձրագույն կրթության ոլորտի և գիտության միջև առկա է սերտ կապ, և այդ ոլորտների զարգացումը համաչափ է ընթանում: Մինչդեռ զարգացող երկրներում գիտահետազոտական և գիտատեխնոլոգիական գործունեության արդյունքները հիմնականում սպառվում են, յուրացվում և կրկնօրինակվում, իսկ բարձրագույն կրթությունը գիտելիքի փոխանցման ու տարածման հիմնական մեխանիզմներից է: Այս առումով ՀՀ-ն մտավոր գործունեության արդյունքների սպառման, յուրացման ու կրկնօրինակման և մասամբ՝ նաև նորամուծության մակարդակներում է գտնվում: Սա պայմանավորված է նաև նրանով, որ ՀՀ-ն որոշակի չափով հաղթահարել է ՄՍ պաշտպանության խնդիրների իրավական կարգավորման հիմնական խոչընդոտները, որոնցից առաջնայինը թերևս ՄՍ իրավունքների պաշտպանությունն օրենսդրությամբ ամրագրելն է և միջազգային օրենսդրական պահանջները բավարարելը: Միևնույն ժամանակ ՄՍ իրավունքների պաշտպանության ազգային (ՀՀ) դաշտը շարունակաբար փոփոխությունների է ենթարկվում՝ գիտության ու տեխնիկայի ժամանակակից պահանջները բավարարելու և մտավոր գործունեության արդյունքների իրավական պաշտպանության ապահովմամբ ստեղծարարությունը խթանելու նպատակով:

ՀՀ բուհերում ՄՍ կրթության կազմակերպման իրավական հենքը նախևառաջ ՄՍ ոլորտը կարգավորող օրենսդրական դաշտն է, որի բաղկացուցիչներից են հեղինակային իրավունքին առնչվող օրենքները: Հաշվի առնելով հեղինակային իրավունքի և բարձրագույն կրթության սերտ փոխկապակցվածությունը՝ այս հետազոտության շրջանակում քննարկվում և շեշտադրվում են հեղինակային իրավունքին առնչվող ազգային օրենսդրական այն դրույթները, որոնք սերտ առնչություն ունեն բուհերի գործունեությանը: Մասնավորապես, «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» ՀՀ գործող օրենքում (2006 թ.) (այսուհետ՝ գործող ՀՀ օրենք) և «Հեղինակային իրավունքի մասին» ՀՀ օրենքի նախագծում (այսուհետ՝ ՀՀ օրենքի նախագիծ) առկա են մի շարք առանցքային դրույթներ, որոնք առնչվում են բուհերի (ներառյալ բուհերի գրադարանների) կողմից ՄՍ իրավունքով պաշտպանվող ստեղծագործությունների օգտագործման, տարածման

ու տնօրինման ձևերին, ուսումնական հաստատությունների և գրադարանների համար սահմանված բացառություններին (որպես արտոնություններ) ու սահմանափակումներին:

Ե՛վ գործող ՀՀ օրենքում, և՛ ՀՀ օրենքի նախագծում պարտադիր նշվում է անձնական, ուսումնական և գիտահետազոտական նպատակներով և ոչ առևտրային նպատակն արդարացնող ծավալով ստեղծագործության օգտագործման մասին, որը համապատասխանում է բարեխիղճ օգտագործման կանոններին և միևնույն ժամանակ ապահովում է նաև բուհերում ուսումնական գործընթացի արդյունավետ իրականացումը և լսարանային պարապմունքների համար անհրաժեշտ ուսումնական նյութերի (գիտական հոդվածներ, դասագրքեր, գիտական, կրթական և այլ բնույթի զեկույցներ, դասախոսություններ և այլն) հասանելիությունը: Բարեխիղճ օգտագործումն այս համատեքստում ենթադրում է ուսումնական նպատակն արդարացնող ծավալով ստեղծագործության օրինական օգտագործումն ու վերարտադրումը (օրինակ՝ նյութերի բազմացումը), որը, սակայն, միշտ չէ, որ վերահսկելի է: Բուհերի կողմից ստեղծագործությունների օգտագործման և վերարտադրման անվերահսկելիությունը հիմնականում պայմանավորված է այն հանգամանքով, որ բուհերն իրենց գործունեության շրջանակից դուրս ուսումնական նյութերի օգտագործումն ու վերարտադրումը վերահսկելու գործառույթ չունեն:

Հեղինակային իրավունքով պահպանվող ստեղծագործությունների օգտագործման օրինական ձևերին և ստեղծագործությունների նկատմամբ հեղինակային իրավունքի պահպանմանը, ինչպես նաև բուհերի համար նախատեսված սահմանափակումներին և բացառություններին առնչվող պահանջներն ու խնդիրները վերաբերում են նաև բուհական, հանրային և հետազոտական գրադարաններին՝ հաշվի առնելով վերջիններիս կարևոր դերակատարությունը գիտելիքի, գիտական արժեքների և գրական ժառանգության պահպանման, տարածման ու փոխանցման գործում: Գրադարանների գործառութային շրջանակը ներկայիս թվային միջավայրում և բազմաձավալ տեղեկատվական հոսքերի պայմաններում էապես ընդլայնվել է՝ տեղեկատվական-հաղորդակցական, իրազեկման, լուսավորչական ու սպասարկման հիմնական գործառույթներից բացի ընդգրկելով նաև տեխնոլոգիական,

հետազոտական, մշակութային, մանկավարժական, գիտակրթական և այլ գործառույթներ: Արդյունքում մեծացել է նաև գրադարանների պատասխանատվությունն ու ճանաչողական դերը, որը թելադրում է բուհերի գործունեության շրջանակում առկա ռեսուրսների կառավարման արդյունավետ ու ճկուն համակարգերի գործադրում, ներառյալ էլեկտրոնային և ոչ էլեկտրոնային գրական ու գիտական ռեսուրսների տնօրինման ժամանակակից և օրինական ձևերի կիրառում և ուղղորդում: Հետևապես, գրադարանները (ներառյալ բուհերի գրադարանները), հանդիսանալով միջնորդ օղակ հեղինակային իրավունքով պահպանվող օբյեկտների և օգտատերերի միջև, անխուսափելիորեն բախվում են հեղինակային իրավունքի պահպանման ներկայիս խնդիրներին: Այդ խնդիրներին արդյունավետ լուծումներ տալու հիմնական նպատակով է ՀՀ օրենսդրական դաշտը նախատեսում որոշակի բացառություններ ու սահմանափակումներ ուսումնական հաստատությունների և գրադարանների համար:

Մտավոր սեփականությանն առնչվող օրենսդրության շրջանակում նախատեսվող բացառություններն ու սահմանափակումները նույնքան կարևոր են, որքան իրավունքները, քանի որ վերջիններս հավասարակշռվում և կարգավորվում են նաև բացառությունների ու սահմանափակումների միջոցով [Yu 2012: 323]: Այսինքն, հեղինակային իրավունքով պահպանվող ստեղծագործությունների օգտագործման սահմանափակումներն ու բացառությունները լայն իմաստով խրախուսում են գիտելիքի հասանելիության ապահովումն ու տեղեկության տարածումը՝ որոշ արտոնություններ նախատեսելով գրադարանների և ուսումնական հաստատությունների համար: Ուսումնական հաստատության կամ գրադարանի կողմից օրինական ճանապարհով ձեռք բերված ստեղծագործությունները պետք է մատչելի լինեն լսարանային պարապմունքների համար՝ առանց վնասելու ստեղծագործության իրավատիրոջ շահերը: Սա ենթադրում է նաև, որ բուհերն ու գրադարանները պետք է կարողանան պատճենահանումներ կատարել (վերարտադրել)՝ ստեղծագործությունը լսարանային պարապմունքների համար մատչելի դարձնելու [Գալստյան 2012: 25-26] և ուսումնական գործընթացներն արդյունավետ կազմակերպելու նպատակով: Ստեղծագործությունների վերարտադրման վերաբերյալ ՀՀ գործող օրենքի 14-րդ հոդվածում նշվում է հետևյալը.

«*Վերարտադրում է համարվում ստեղծագործության ուղղակի կամ անուղղակի, ժամանակավոր կամ մշտական ամրագրումը ցանկացած կրիչի վրա, ցանկացած միջոցներով և ձևով, ամբողջությամբ կամ մասնակի»: ՀՀ* օրենքի նախագծի 21-րդ հոդվածի (ստեղծագործության վերարտադրության վերաբերյալ) համաձայն՝ *«հեղինակը (կամ այլ իրավատերը) բացառիկ իրավունք ունի թույլատրելու կամ արգելելու նյութական կրիչի վրա իր ստեղծագործության ուղղակի կամ անուղղակի, ժամանակավոր կամ մշտական ամրագրումը ցանկացած միջոցներով և ձևով, ամբողջությամբ կամ մասնակի»*: Նույն հոդվածի 2-րդ դրույթի համաձայն՝ *վերարտադրություն* հասկացությունը ներառում է նաև թվային վերարտադրությունը: Ի տարբերություն գործող օրենքի՝ օրենքի նախագիծը որևէ սահմանափակում չի առաջադրում կրթական և գիտական նպատակներով ստեղծագործությունների վերարտադրման ձևաչափի վերաբերյալ (սահմանափակման բացակայությունը չի վերաբերում ստեղծագործությունների օրինակների քանակին, այսինքն՝ ստեղծագործությունների օրինակները կարելի է վերարտադրել սահմանափակ՝ նպատակն արդարացնող թվով): Ուրեմն, ստեղծագործությունների վերարտադրումը վերաբերում է նաև թվային միջավայրում ստեղծագործությունների վերարտադրմանը, որը «Հեղինակային իրավունքի մասին» ՀՀ օրենքի նախագծի առանցքային փոփոխություններից է և նպատակաուղղված է ժամանակակից թվային կամ էլեկտրոնային տիրույթի՝ որպես արժեքավոր գիտելիքի հասանելիությունն ապահովող և դրա տարածումը խթանող հարթակի արդյունավետ օգտագործմանը:

ՀՀ օրենքի նախագծի համաձայն՝ ստեղծագործության նկատմամբ սահմանափակումներըկարող են կիրառվել կոնկրետ սահմանափակման նպատակն ապահովող ծավալով և այն պայմանով, որ չեն հակասում ստեղծագործության բնականոն օգտագործման պահանջներին ու չեն վնասում ստեղծագործության նկատմամբ հեղինակի օրինական շահերը: Նախագծում բացառությունների մասին նշվող դրույթները բուհերին ու գրադարաններին հնարավորություն են ընձեռում ավելի դյուրին դարձնելու ուսումնական նպատակին ծառայող ստեղծագործությունների հասանելիությունը դասավանդողներին և ուսումնառողներին: ՀՀ օրենքի նախագծի համաձայն [Հոդված 41, 2-րդ դրույթ]՝ ուսումնական հաստատությունը կամ

գրադարանն իրավունք ունի օրենքով թույլատրված թարգմանություններն ու վերարտադրություններն էլեկտրոնային ձևով հասանելի դարձնելու իր ուսանողներին կամ կրթական նպատակով այդ հաստատությանն անդամակցող կազմակերպություններին (ներառյալ բուհերին) և անձանց բացառապես կրթական կամ ուսումնական, գիտական, գիտահետազոտական նպատակներով, եթե դա իրականացվում է ապահով, ներքին ցանցի (այլ անձանց համար մատչելիությունը բացառող ցանցի) միջոցով՝ բացառելով պատճենելու հնարավորությունը (ոչ էլեկտրոնային՝ թղթային տարբերակի դեպքում ուսումնական նյութի վերարտադրման ծավալը սովորաբար որոշվում է ըստ տվյալ լսարանում ընդգրկվածների թվաքանակի): Միևնույն ժամանակ հաշվի առնելով թվային միջավայրում ստեղծագործությունների օգտագործման առանձնահատկությունները, ներառյալ էլեկտրոնային տեխնիկական պաշտպանիչ միջոցները՝ ՀՀ օրենքի նախագիծը հնարավորություն է ընձեռում կրթական, գիտական, գիտահետազոտական հաստատություններին, գրադարաններին և արխիվներին շրջանցելու տեխնիկական պաշտպանական միջոցները, եթե ստեղծագործության նկատմամբ օգտագործված են այդպիսի միջոցներ, և հնարավոր չէ լիարժեք կամ ժամանակավոր օգտվել օրենքով նախատեսված սահմանափակումներից ու բացառություններից [Հոդված 41]: Սա նույնպես կարելի է բուհերին տրվող արտոնություն համարել, որը, սակայն, չի բացառում տեխնիկական պաշտպանական միջոցները շրջանցող բուհի կողմից տրամադրվող ստեղծագործության (հատկապես բուհի ներքին ապահով ցանցից դուրս գալու դեպքում) անօրինական օգտագործումը բուհի շահակիցների կողմից: Այդուհանդերձ, ինչպես արդեն նշվել, է, բուհը պատասխանատու է միայն իր գործունեության ու գործառույթների շրջանակում իրականացվող գործողությունների (օրինակ՝ գրքերի, էլեկտրոնային ռեսուրսների) համար: Այս պարագայում հատկապես որոշիչ են բուհի շահակիցների բարձր իրավագիտակցության և ակադեմիական օրինակելի վարքի գործոնները:

ՄՍ իրավունքների խստացումն ու սահմանափակումների ընդլայնումը լայն իմաստով կարող են դիտվել որպես տնտեսական աճի զարգացման պայմաններից մեկը: Սակայն միջազգային փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այդ

սահմանափակումների հետ մեկտեղ առաջանում են նաև հանրությանը ստեղծագործական նոր արժեքների փոխանցմանը և դրանց օրինական օգտագործմանն առնչվող խնդիրներ: Մինչդեռ մի շարք գիտահետազոտական կազմակերպություններին, ուսումնական հաստատություններին, գրադարաններին և այլ շահակիցներին անհրաժեշտ է ապահովել ստեղծագործությունների հասանելիությունը գիտահետազոտական աշխատանքների, կրթության և գիտության զարգացման համար: Խելամիտ ծավալով ստեղծագործության օգտագործման հնարավորության պակասը կարող է խոչընդոտել երկրի տնտեսական աճին [Treaty Proposal on Limitations and Exceptions for Libraries and Archives 2012]:

Ուսումնական, կրթական ու գիտահետազոտական գործունեության արդյունավետության ապահովման և ստեղծագործության օրինական օգտագործման համար առաջադրված օրենսդրական մեկ այլ առանցքային դրույթ է առանց հեղինակի (այլ իրավատիրոջ) համաձայնության և վարձատրության, սակայն հեղինակի անվան և ստեղծագործության սկզբնաղբյուրի պարտադիր նշումով ստեղծագործության օգտագործման պահանջը [«Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդված, «Հեղինակային իրավունքի մասին» ՀՀ օրենքի նախագծի 36-րդ և 46-րդ հոդվածներ]: Այս պարագայում ստեղծագործության օգտագործումը համարվում է օրինական, եթե դա իրականացվում է բացառապես ուսումնական կամ գիտական հետազոտությունների լուսաբանման նպատակով, ոչ առևտրային նպատակն արդարացնող ծավալով և համապատասխանում է բարեխիղճ գործելակերպին: Սա ուղղակիորեն առնչվում է մի կողմից ստեղծագործության ազատ օգտագործման բնույթին, որը, սակայն, չպետք է որևէ կերպ հակասի ստեղծագործության բնականոն օգտագործման պահանջներին և չպետք է վնասի հեղինակի շահերը [ՀՀ օրենք, Հոդված 22], մյուս կողմից ստեղծագործության բարեխիղճ օգտագործմանը, որը հիմնվում է հետևյալ չորս հիմնական պայմանների վրա [Crews 2017]՝

1) ստեղծագործության օգտագործման նպատակի հիմնավորում,

2) ստեղծագործության տեսակ կամ բնույթ,

3) ստեղծագործության օգտագործման ծավալ,

4) շուկայի վրա ստեղծագործության օգտագործման ազդեցություն:

Բուհերը պետք է շահագրգռված լինեն իրենց առանցքային շահակիցներին, հատկապես ուսումնառողներին և գիտական ու պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչներին հասանելի դարձնելու առկա գիտաուսումնական արժեքավոր նյութերն ու օժանդակելու ստեղծագործությունների հանրային օգտագործումն այնպես, որ այդ ռեսուրսներից օգտվող շահակիցները հնարավորինս պահպանեն ստեղծագործության ազատ և բարեխիղճ օգտագործման վերոնշյալ առանցքային պայմանները:

Բուհերի գործունեության շրջանակում հեղինակային իրավունքով պահպանվող ստեղծագործությունների պահպանմանն առնչվող մեկ այլ խնդիր է ծառայողական ստեղծագործությունների (աշխատողի կողմից աշխատանքի ընթացքում, գործատուի ծառայողական հանձնարարությունների կամ ծառայողական պարտականությունների կատարման կարգով ստեղծված ստեղծագործություններ) օգտագործումը: Հեղինակային իրավունքը (գույքային իրավունքներ) կարող է պատկանել ոչ թե ստեղծագործության հեղինակին, այլ գործատուին, եթե ստեղծագործությունը ստեղծվել է աշխատանքային փոխհամաձայնության պայմաններում, և գործատուին հեղինակային իրավունքների պատկանելությունն ամրագրվել է համապատասխան պայմանագրով: Ելնելով բուհերին տրված որոշակի ինքնավարությունից՝ ստեղծագործության նկատմամբ հեղինակային իրավունքի ձեռքբերումն հիմնականում շատ կախված է նրանից, թե ինչպիսի դիրքորոշում ունի տվյալ բուհը (որպես գործատու) [Farrington 2001: 78]: Սակայն բուհը պետք է հաշվի առնի ծառայողական ստեղծագործության նկատմամբ գույքային և ոչ գույքային իրավունքների պատկանելությանն առնչվող դրույթները: Մասնավորապես, ՀՀ օրենքի նախագծի 89-րդ հոդվածի 1-ին դրույթի համաձայն՝ *«աշխատողի կողմից ծառայողական պարտականությունների կամ գործատուի ծառայողական հանձնարարությունների կատարման կարգով ստեղծված ստեղծագործության* (այսինքն՝ ծառայողական ստեղծագործություն) *նկատմամբ անձնական ոչ գույքային իրավունքները պատկանում են տվյալ աշխատողին»:* Բացի այդ, հոդվածի 2-րդ դրույթում նշվում է, որ «*...ծառայողական ստեղծագործության հեղինակն իրավունք չունի արգելելու իր*

գործատուին ծառայողական ստեղծագործությունը հրատարակելու կամ այլ ձևով հանրությանը մատչելի դարձնելու»: Նույն հոդվածի 5-րդ դրույթում նշվում է նաև, որ *«գործատուն իրավունք ունի նշելու իր անունը կամ անվանումը ծառայողական ստեղծագործության ցանկացած օգտագործման ժամանակ»*: Ծառայողական ստեղծագործության նկատմամբ գույքային իրավունքների վերաբերյալ հեղինակային իրավունքի մասին և՛ ՀՀ գործող օրենքում [Հոդված 33, 1-ին դրույթ], և՛ ՀՀ օրենքի նախագծում [Հոդված 89, 3-րդ դրույթ] նշվում է, որ *«…աշխատողի կողմից ստեղծված ստեղծագործության նկատմամբ <u>գույքային իրավունքները</u> պատկանում են գործատուին, եթե հեղինակի և գործատուի միջև կնքված պայմանագրով այլ բան նախատեսված չէ»*: Պետք է նշել, որ ՀՀ գործող օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ դրույթի համաձայն՝ այդ դրույթը (այսինքն՝ ծառայողական ստեղծագործության գույքային իրավունքները գործատուին պատկանելու վերաբերյալ դրույթը) չի տարածվում *«ծառայողական հանձնարարականների կամ պարտականությունների կարգով ստեղծված հանրագիտարանների, հանրագիտարանային բառարանների, գիտական աշխատությունների, պարբերական ու շարունակական ժողովածուների, թերթերի, ամսագրերի և այլ պարբերական հրատարակությունների վրա»:* Այս պարագայում բուհի՝ որպես գործատուի, և հեղինակի՝ որպես աշխատողի միջև կնքվող պայմանագրում երկու կողմերի բոլոր իրավունքների և պարտավորությունների հստակ և ամբողջական սահմանումը կարևոր նախապայման է ստեղծագործության հրատարակման, օգտագործման ու տարածման գործընթացներում կամ դրանցից հետո հնարավոր իրավախախտումներից խուսափելու և դրանց բացասական հետևանքները կանխելու համար: Ծառայողական ստեղծագործությունների նկատմամբ հեղինակային իրավունքի պատկանելության խնդիրը բուհական համակարգում դիտարկելու դեպքում կարելի է հստակ եզրակացնել, որ մշակվող ուսումնական նյութերի ու գիտական աշխատությունների (հոդվածներ, դասագրքեր, ուսումնամեթոդական ձեռնարկներ և այլն) հեղինակային իրավունքների պատկանելության խնդիրը պետք է կարգավորվի ինստիտուցիոնալ քաղաքականությամբ (ներքին իրավական ակտեր, բուհի և հեղինակի միջև կնքվող պայմանագրեր, կանոնակարգեր) և հեղինակային իրավունքին առնչվող ազգային

օրենսդրական դաշտին համապատասխան՝ բուհի և հեղինակի միջև իրավահարաբերության ու շահերի հավասարակշռումն ապահովելու և տվյալ ստեղծագործությունը բուհի առանցքային շահակիցների ակադեմիական կարիքներին ծառայեցնելու համար:

Ստեղծագործությունների՝ որպես գիտական արդյունքների հասանելիության խնդիրն առնչվում է նաև հանրային օգտագործմանը: ՀՀ օրենքի նախագծի 39-րդ հոդվածը վերաբերում է ստեղծագործությունների հանրային օգտագործմանը, որը հստակեցնում և պարզաբանում է նաև բուհերի և գրադարանների ռեսուրսներից օգտվելու օրինական ձևերը: Նույն հոդվածի համաձայն՝ ուսումնական հաստատությունները, ներառյալ բուհերը՝ որպես հանրային օգտագործողներ, կարող են վերարտադրել ստեղծագործությունների բնօրինակները կամ օրինակները՝ պահպանելով բարեխիղճ գործելակերպի կանոնները, և ազատ կարող են վերարտադրել ստեղծագործությունը ցանկացած կրիչի վրա երեք օրինակից ոչ ավելի՝ պահուստային օրինակի կամ ներքին օգտագործման այլ հատուկ գործողությունների համար, եթե դա չի իրականացվում ուղղակի կամ անուղղակի առևտրային օգուտ ստանալու համար [«Հեղինակային իրավունքի մասին» ՀՀ օրենքի նախագծի 6-րդ գլուխ, Հոդված 39, 2-րդ դրույթի 1-ին ենթադրույթ], ինչպես նաև կարող են հետազոտության կամ մասնավոր ուսումնասիրության նպատակով մատչելի դարձնել իրենց հավաքածուներում պարունակվող այն ստեղծագործությունները, որոնք հաստատությունները չեն կարող գնել, կամ որոնց համար վերջիններս չեն կարող ստանալ օգտագործման թույլտվություն [«Հեղինակային իրավունքի մասին» ՀՀ օրենքի նախագծի 6-րդ գլուխ, Հոդված 39, 2-րդ դրույթի 3-րդ ենթադրույթ]:

Հարկ է հավելել, որ ՀՀ օրենքի նախագծում վերանայվել են նաև ընթերցանության կամ տեսողական խնդիրներ ունեցող անձանց կողմից ստեղծագործության օգտագործման մասին դրույթները: Մասնավորապես նշվում է, որ թույլատրվում է առանց հեղինակի համաձայնության փոխել ստեղծագործության ձևաչափը, մատչելի ձևաչափը կամ դրա օրինակները հաշմանդամներին տրամադրել ցանկացած միջոցներով (ներառյալ՝ էլեկտրոնային հաղորդումը), այլ երկրներում բնակվող հաշմանդամներին հասանելի դարձնելու նպատակով արտահանել կամ

ներմուծել ստեղծագործության մատչելի ձևաչափով օրինակները: ՀՀ օրենքի նախագծում տեղ գտած այս դրույթը ևս շեշտադրում է ժամանակակից թվային միջավայրի՝ որպես արժեքավոր գիտելիքի փոխանցումն առավել դյուրին դարձնող և խթանող միջավայրի օգտակարությունը և օրենսդրական դաշտի բարեփոխման միջոցով հատուկ կարիքներ ունեցող անձանց կարիքների բավարարումը: Ավելին, այս դրույթը կարող է նաև խթան կհանդիսանա ՀՀ-ում ներառական կրթության զարգացման համար՝ ընդլայնելով բարձրագույն կրթության ոլորտում առանձնահատուկ պայմաններ ու հատուկ կարիքներ ունեցող ուսումնառողների ներգրավվածության շրջանակը:

Անհրաժեշտ է նշել նաև, որ ՀՀ օրենքի նախագծում տեղ գտած փոփոխությունները ՀՀ հանրային և բուհական գրադարանների, բուհերի ներկայացուցիչների, ՄՍ ոլորտի մասնագետների, ազգային և միջազգային փորձագետների ու ՄՍ ոլորտի բարեփոխմամբ շահագրգռված այլ կողմերի համագործակցության և բազմաթիվ քննարկումների արդյունք են: Քենեթ Քրուզի[5] կողմից Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպության (WIPO) անդամ երկրներից 191-ում կատարված հետազոտական աշխատանքները, որոնք սկիզբ են առել դեռևս 2008 թ. (արդյունքները հրապարակվել են 2017 թ.), ներառում են նաև ՀՀ-ում հեղինակային իրավունքին առնչվող օրենսդրական դաշտում իրականացվող փոփոխությունները: Այդ փոփոխությունները, որոնք որպես բարեփոխում ներառված են «Հեղինակային իրավունքի մասին» ՀՀ օրենքի նախագծում, ըստ էության որոշակի արտոնություններ կամ իրավունքներ են սահմանում գրադարանների, արխիվների և ուսումնական հաստատությունների

[5] Քենեթ Քրուզը հեղինակային իրավունքի պահպանման հարցերով առաջատար ամերիկացի փորձագետ է, ով տարիներ շարունակ զբաղվում է գրադարաններում և ուսումնական հաստատություններում հեղինակային իրավունքի պահպանման, օգտագործման ձևերի և ազգային ու միջազգային մակարդակներում համապատասխան օրենսդրական փոփոխությունների ուսումնասիրությամբ: Նա առաջարկել է նաև մի շարք փոփոխություններ հեղինակային իրավունքին առնչվող ՀՀ օրենսդրական դաշտի բարեփոխման համար, և դրանք ներառվել են Հեղինակային իրավունքի մասին ՀՀ օրենքի նախագծում: Այդ նախագծում տեղ են գտել նաև փոփոխություններ, որոնք կատարվել են ՀՀ-ում շահագրգիռ կողմերի մասնակցությամբ իրականացված բազմաթիվ քննարկումների արդյունքում վերհանված խնդիրների, հիմնավորումների և առաջարկությունների հիման վրա (Հավելված 2):

համար և վերաբերում են ստեղծագործությունների թվայնացման թույլտվությանը (որոշակի պայմանների բավարարման պարագայում), ստեղծագործության պահպանմանը, հավաքածուների համալրմանն ու ամբողջականացմանը, ստեղծագործությունների ծավալին, չհրապարակված ստեղծագործությունների ձեռքբերմանն ու օգտագործմանը, ստեղծագործությունների բարեխիղճ օգտագործման կանոններին և այլն [Crews 2017]:

Այսպիսով, ուսումնասիրելով ՀՀ բուհերում ՄՍ կրթության կազմակերպման համար անհրաժեշտ օրենսդրական հիմքերը և դիտարկելով հեղինակային իրավունքի իրավապահպանման խնդիրները բուհերի գործունեության շրջանակում՝ կարելի է եզրակացնել, որ ՄՍ և մասնավորապես հեղինակային իրավունքի բնագավառը ոլորտը կարգավորող օրենսդրական դաշտն ապահովում է ՀՀ բուհերում ՄՍ կրթության կազմակերպման անհրաժեշտ հիմքերը: Այդուհանդերձ, օրենսդրական ընթացիկ փոփոխություններով պայմանավորված խնդիրների և ՀՀ բուհերում դրանց ոչ հստակ արտացոլումն ու լուծման ուղիների չհամակարգված ինստիտուցիոնալ մոտեցումները խոչընդոտում են և՛ ՄՍ, և՛ բարձրագույն կրթության ոլորտի համաչափ զարգացումը՝ դանդաղեցնելով նաև ազգային մակարդակում գիտելիքահենք տնտեսության զարգացման գործընթացները: Հաշվի առնելով ՄՍ ոլորտը իրավապահպանման վերոնշյալ հիմնախնդիրները և մասնավորապես հեղինակային իրավունքի պահպանման նպատակը, այն է՝ հավասարակշռել ու կարգավորել հեղինակի և հանրության շահերն ու դրանց պահպանումը՝ բուհերը պետք է առավել համապարփակ կերպով ուսումնասիրեն հեղինակային իրավունքով պահպանվող ստեղծագործությունների օգտագործման ժամանակակից ձևերը և հետևողական լինեն իրենց գործունեության շրջանակում ստեղծագործությունների օգտագործման ու ազգային ոլորտային օրենսդրական դաշտի համապատասխանության ապահովմանը: Միևնույն ժամանակ թեև մտավոր սեփականության ոլորտի օրենսդրական դաշտի բարեփոխման գործընթացները մի կողմից նոր խնդիրներ են առաջ բերում ու նոր մարտահրավերներ են առաջադրում ՀՀ բուհերին, սակայն մյուս կողմից դրանք օժանդակում են բուհերին ստեղծելու մտավոր սեփականության կրթության համար անհրաժեշտ հիմքեր ու պայմաններ, խթանելու գիտելիքահենք և

իրավագիտակցության բարձր մակարդակ ունեցող ակադեմիական հանրության զարգացումը, ինչպես նաև ստեղծարարությունն ու նոր գիտական արժեքներ ստեղծելու մշակույթը:

2.3. Մտավոր սեփականության կրթության կազմակերպման և իրականացման նախադրյալները ՀՀ բուհական համակարգում

Հետխորհրդային երկրների բարձրագույն կրթության համակարգերում ՄՍ պահպանման առանցքային հիմնախնդիրները մի շարք ընդհանրություններ ունեն՝ պայմանավորված քաղաքական, սոցիալ-տնտեսական, տեխնոլոգիական և գիտակրթական ոլորտներում տեղի ունեցած արմատական փոփոխություններով ու աշխատաշուկաների փոփոխվող պահանջներով: Բարձրագույն կրթության ոլորտում մտավոր սեփականության պահպանմանն առնչվող հիմնախնդիրները հիմնականում արտացոլվում են ազգային օրենսդրական դաշտից բխող պետական զարգացման ծրագրերում և շահագրգիռ կառույցների, ներառյալ բուհերի ռազմավարություններում, ներքին կանոնակարգերում ու կրթական ծրագրերում՝ որպես գիտահետազոտական գերակա ուղղության զարգացման կարևոր բաղադրիչ:

Հաշվի առնելով բարձրագույն կրթության համակարգում ՄՍ պահպանմանն առնչվող արդի հիմնախնդիրները՝ այս հետազոտության շրջանակում փորձ է արվում բացահայտելու բարձրագույն կրթության համակարգում ՄՍ կրթության կազմակերպման և իրականացման նախադրյալները՝ ոլորտային հիմնախնդիրները դիտարկելով բուհերի ռազմավարական կառավարման և ՄՍ ոլորտի բարեփոխումները խթանող առանցքային այլ կառույցների տեսանկյունից:

2.3.1. Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարանի և Կենտրոնական Ասիայի ամերիկյան համալսարանի գործունեության համեմատական վերլուծություն

Այս ենթագլխում ներկայացված ուսումնասիրության գիտահետազոտական բաղադրիչները Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարանի (Հայաստան) և Կենտրոնական Ասիայի ամերիկյան համալսարանի

(Ղրղզստան) գործունեության համեմատական վերլուծության արդյունքներն են[6]: Նշված բուհերի գործունեությունը սույն հետազոտական աշխատանքում դիտարկվել է ՄՄ կրթության կազմակերպման և իրականացման նախադրյալների, ՄՄ պահպանմանն առնչվող առկա հիմնախնդիրների և դրանց լուծման ինստիտուցիոնալ դիրքորոշումների ուսումնասիրության շրջանակում: Սույն ատենախոսության շրջանակում ուսումնասիրվել են նաև Հայաստանում և Ղրղզստանում ՄՄ պահպանման ոլորտի խնդիրներով զբաղվող առաջատար կառույցների գործունեությունը՝ ՄՄ ոլորտի բարեփոխման գործընթացներում նրանց դերակատարությունը վեր հանելու նպատակով (վերլուծության արդյունքները ներկայացված են Հավելված 3-ում):

Հայաստանում և Ղրղզստանում ՄՄ ոլորտի կարգավորման հիմքում ընկած են մի շարք համանման սոցիալ-տնտեսական խնդիրներ, որոնք իրենց հերթին առաջացնում են կրթության ոլորտում մտավոր սեփականության բարեփոխումները խոչընդոտող մարտահրավերներ: Նշված երկու երկրներում բարձրագույն կրթության ոլորտային խնդիրները խորհրդային տարիներին համակարգային և ընդհանուր բնույթ են ունեցել, մասնավորապես.

- բարձրագույն կրթությունը չափազանց կենտրոնացված էր և խստագույնս գտնվում էր պետական վերահսկողության ներքո, որի արդյունքում բուհերի ինքնավարությունը չափազանց սահմանափակ էր ոչ միայն վարչակազմակերպական, այլև ողջ ուսումնական գործընթացի կառավարման առումներով.
- կիրառվում էր «վերևից-ներքև» կառավարման համակարգն ինչպես բուհերի ներքին, այնպես էլ արտաքին կառավարման գործընթացներում.

[6] Հետազոտության համար ընտրված երկու բուհերը սույն ատենախոսության շրջանակում դիտարկվում են ոչ թե որպես ՄՄ կրթության արդյունավետ կազմակերպումն ապահովող լավագույն օրինակներ, այլ որպես ՄՄ կրթության կազմակերպման և իրականացման միանման նախադրյալներ ու հիմնախնդիրներ ունեցող ուսումնական հաստատություններ: Վերջիններիս փորձի ու գործունեության համադրական վերլուծությունը ծառայում է որպես մասնավոր օրինակ, իսկ ՄՄ պահպանման ազգային ու միջազգային փորձը, ինչպես նաև ՄՄ կրթության առանցքային դրույթները ներկայացված են սույն ատենախոսության 1-ին գլխում:

- գործում էր խորհրդային իշխանության կողմից հաստատված պլանային և միասնական կրթական համակարգ, որն ապահովում էր բուհերի և աշխատաշուկայի միջև սերտ կապը.
- կառավարման խիստ կենտրոնացման արդյունքում բարձրագույն կրթության ոլորտում տեղի ունեցող փոփոխությունները չափազանց դանդաղ էին ընթանում, որի հիմնական պատճառներից էին նաև կրթության բովանդակության կարծրացած վիճակն ու գաղափարայնությունը.
- ուսանողները չունեին շարժունության լայն հնարավորություններ խորհրդային կրթական տարածքից դուրս՝ բուհերի միջև ոչ լայն համագործակցային շրջանակի և սահմանափակ հնարավորությունների պատճառով.
- խիստ սահմանափակ և ոչ մատչելի էր մայրենի լեզվով ուսումնական գրականությունը. Հայաստանում ուսանողների համար հիմնականում հասանելի էին ռուսաց լեզվով ուսումնական դասագրքերը, իսկ Ղրղզստանի բուհերիուսանողների համար՝ ղազախերեն, ուզբեկերեն և թաթարերեն լեզուներով նյութերը) [Открытый Кыргызстан 2014].
- ՊԴ կազմի մասնագիտական զարգացումն ընթանում էր միայն մեկ ոլորտային ուղղությամբ.
- դասավանդման մեթոդները դասախոսակենտրոն էին, և ուսուցման գործընթացում շեշտադրվում ու գերիշխում էր դասավանդվող առարկաների տեսական բաղադրիչը:

Վերոնշյալ հիմնախնդիրներն ընդհանուր առմամբ սահմանափակում էին Հայաստանում և Ղրղզստանում առկա մտավոր ներուժի բացահայտման և կիրառման արդյունավետությունը, այդ երկրների «ուղեղների»՝ միջազգային գիտական հանրությանն ինտեգրվելու և միջազգային փորձի ուսումնասիրության հնարավորությունները, զբաղվածության այլընտրանքային հեռանկարներն ու բուհերի կառավարման և ռազմավարական մոտեցումների ինքնակատարելագործումը: Հետևաբար, մտավոր կապիտալի զարգացման պետական դիրքորոշումը և կրթության պլանային ու միասնական կրթական համակարգը խորհրդային տարիներին նշված երկու երկրներում խոչընդոտում էին բարձրագույն կրթության ոլորտում նորարարական

և ստեղծագործական գործունեության արդյունքների մրցունակության ապահովումը, գիտահետազոտական աշխատանքների որակի շարունակական բարելավումը, գիտական արտադրանք ստեղծողների աշխատանքի խթանումն ու նրանց գիտական արտադրանքի շրջանառությունը, որոնք ըստ էության գիտելիքահենք տնտեսության և ցանկացած երկրի սոցիալ-տնտեսական զարգացման հիմնարար շարժիչ ուժերից են:

Ինչպես արդեն նշվել է, Հայաստանում և Ղրղզստանում ՄՍ կրթության կազմակերպման և իրականացման նախադրյալներն ու հիմնախնդիրները վեր հանելու նպատակով կատարվել են ուսումնասիրություններ Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարանում (ԵՊԼՀ) և Կենտրոնական Ասիայի ամերիկյան համալսարանում (ԿԱԱՀ): Հետազոտությունն ընդգրկուն դարձնելու և ազգային մակարդակում նշված երկրներում ՄՍ ոլորտի հիմնախնդիրների սկզբնաղբյուրները վերհանելու նպատակով կատարվել են նաև այցեր պետական և ոչ պետական կառույցներ[7], որոնք ՀՀ-ում և Ղրղզստանում ՄՍ ոլորտի կարգավորման, կառավարման և բարեփոխման առանցքային դերակատարներն են: Կազմակերպվել են հանդիպում-քննարկումներ և՛ այդ կառույցների, և՛ ԵՊԼՀ-ի ու ԿԱԱՀ-ի այն ստորաբաժանումների հետ, որոնք իրենց գործունեության և գործառույթների շրջանակում պարբերաբար առնչվում են ՄՍ ոլորտի կարգավորման և մասնավորապես հեղինակային իրավունքի պահպանման խնդիրներին: Հետազոտությունն իրականացվել է փաստաթղթային վերլուծությամբ (փաստաթղթերի ցանկը ներառված է սույն ատենախոսությունում օգտագործված գրականության ցանկում) և որակական մեթոդի կիրառմամբ՝ նշված կառույցների ներկայացուցիչների հետ խորքային հարցազրույցների անցկացման միջոցով:

Ուսումնասիրելով ԿԱԱՀ-ի գործունեությունը՝ հարկ է նշել, որ բուհը վերջին քսանհինգ տարիների ընթացքում կարողացել է նախկին կրթական համակարգից տարբերվող և ավելի ճկուն համակարգ ստեղծել ինչպես Ղրղզստանի տարածքում, այնպես էլ տարածաշրջանային ու միջազգային մակարդակներում գործունեություն

[7] Ղրղզստանում՝ Մտավոր սեփականության ու ինովացիաների պետական ծառայության ներքո գտնվող մտավոր սեփականության պետական ֆոնդ, Հեղինակային և հարակից իրավունքների պետական գործակալություն, Ղրղզստանի պատենտային պետական գրադարան, Հայաստանում՝ Մտավոր սեփականության գործակալության հեղինակային և հարակից իրավունքների բաժին, «Հայհեղինակ» ՀԿ, Մտավոր սեփականության իրավունքի կենտրոն

ծավալող շահակիցների համար՝ առաջարկելով շահակիցների պահանջները բավարարող կրթական ծառայություններ: Հատկանշական է այս բուհի շրջանակներում բարձրագույն կրթության զարգացման ազգային, տարածաշրջանային և միջազգային մոտեցումների համալիրկիրառումը և դրանց ազդեցությունը մտավոր սեփականության կրթության վրա, այսինքն՝ բուհը գործում է ամերիկյան կրթության և միևնույն ժամանակ Ղրղզստանի օրենսդրությանն ու պետական կրթական չափորոշիչներին համապատասխան, ինչպես նաև մտավոր սեփականության ոլորտի շրջանակում Եվրոպական կոնվենցիաներին միանալու ազգային քաղաքականությանը համահունչ:

Հետազոտության իրականացման նպատակով ԿԱԱՀ-ում կազմակերպվել են հանդիպումներ մասնավորապես Դասավանդման, ուսումնառության և տեխնոլոգիայի կենտրոնի ղեկավարի, իրավաբանական բաժնի ու գրադարանի վարիչների և ՊԴ կազմի ներկայացուցիչների հետ, որոնց հետ քննարկումների հիմնական արդյունքներն ընդհանրացված կերպով ներկայացվում են ստորև:

- ԿԱԱՀ-ը կիրառում է մտավոր սեփականության պահպանման քաղաքականություն, որը նախևառաջ արտացոլված է ԿԱԱՀ-ի ուսումնառողների ակադեմիական ազնվությունն ու դրա մշակույթի զարգացմանն առնչվող ներքին կանոնակարգում: Վերջինս բխում է բուհում կրթության և գիտության փոխկապակցվածությունը սերտացնելու, ինչպես նաև մտավոր ներուժը շարունակաբար զարգացանելու առաքելությունից ու քաղաքականությունից (ԵՊԼՀ-ում ակադեմիական ազնվության մշակույթի ամրապնդման ինստիտուցիոնալ քաղաքականությունը մանրամասնեցված է ստորև):
- ԿԱԱՀ-ը մշակել է ուսանողի ուղեցույց, որը բովանդակում է ակադեմիական անազնվությանն առնչվող դրույթներ ու սահմանումներ: Ուղեցույցի միջոցով ուսանողները համապատասխան տեղեկություն են ստանում և ընդհանուր պատկերացում են կազմում ԿԱԱՀ-ի՝ ակադեմիական ազնվության դիրքորոշման և մտավոր սեփականության պահպանման քաղաքականության վերաբերյալ: Համեմատության կարգով հարկ է նշել, որ ԵՊԼՀ-ն նույնպես մշակել է ուսանողի ուղեցույց, որն ընդգրկում է համապարփակ և կարևոր տեղեկություն ԵՊԼՀ

գործունեության մասին, սակայն ուղեցույցում առկա չէ ակադեմիական ազնվության վերաբերյալ տեղեկություն:

- ԿԱԱՀ-ը կիրառում է նաև TURNITIN[8] էլեկտրոնային համակարգը, որի միջոցով բացահայտվում են գրագողության դեպքերը: ԿԱԱՀ-ում իրականացված հետազոտության ժամանակահատվածում բուհի կողմից TURNITIN ծրագրի կիրառումը դեռևս նախնական փուլում էր գտնվում, սակայն բուհի դասախոսներն արդեն մասնակցում էին վերապատրաստման դասընթացների՝ TURNITIN ծրագրի տեխնիկականական ու բովանդակային խնդիրների վերաբերյալ առավել մանրամասն տեղեկություն ստանալու և այդ համակարգից օգտվելու հմտությունները զարգացնելու նպատակով: TURNITIN ծրագիրը հնարավորություն է տալիս նաև բացահայտելու գրագողության դեպքերը նույնիսկ այն դեպքում, երբ մի ուսումնառողի գիտահետազոտական աշխատանքը պարունակում է մեկ այլ ուսումնառողի աշխատանքի բովանդակությունն ամբողջությամբ կամ մասնակիորեն (եթե վերջինս երբևէ ներբեռնված է եղել համակարգում): ՀՀ-ում TURNITIN գործիքը կիրառվում է, օրինակ, Հայաստանի ամերիկյան համալսարանի կողմից, որը շուրջ երեք տարի գործում է բուհում և հասանելի է բուհի ՊԴ կազմին: Այսուհանդերձ, TURNITIN ծրագրի կիրառումն ընդամենը գրագողության բացահայտման գործիք է, և դրա կիրառումը բուհերում ՄՍ իրավունքի պահպանման քաղաքականության մեխանիզմներից մեկն է, որը կարող է դրսևորվել որպես ակադեմիական ազնվության ու մտավոր սեփականության ոլորտի կարգավորման խնդրի նկատմամբ բուհերի ռազմավարական մոտեցում կամ դիրքորոշում: ԵՊԼՀ-ում գրագողության բացահայտման ու կանխարգելման համընդհանուր էլեկտրոնային գործիք դեռևս ներդրված չէ:

[8] TURNITIN էլեկտրոնային վճարովի համակարգից օգտվելու համար ուսումնական հաստատությունները գնում են արտոնագրեր և ուսումնառողների գրավոր աշխատանքների էլեկտրոնային տարբերակներն այդ համակարգում տեղադրելով՝ կարողանում են աշխատանքները վերահսկելի ու կառավարելի դարձնել՝ դրանց բովանդակությունը համեմատելով իրական աղբյուրներում առկա բովանդակության հետ: Գրագողության բացահայտման այս էլեկտրոնային գործիքը հնարավորություն է տալիս ստուգելու ծրագրում զետեղվող գիտահետազոտական աշխատանքների բովանդակությունում առկա գրագողության տոկոսը, եթե այն առկա է: Դասավանդողները կարող են նաև գնահատել այդ համակարգում տեղադրված աշխատանքները և ուղղորդել ուսանողներին՝ խրախուսելով վերլուծական ու քննադատական մտածողության զարգացումը:

- ԿԱԱՀ-ի գրադարանը բուհում գրագողության դեմ պայքարի խնդրում նույնպես իր դերակատարությունն ունի: Բուհի գրադարանավարները պարբերաբար կազմակերպում և իրականացնում են դասընթացներ բուհի ՊԴ կազմի և ուսումնառողների համար՝ տրամադրելով օգտակար տեղեկություն տարբեր աղբյուրներից ճիշտ օգտվելու, համապատասխան հղումներ կատարելու և առհասարակ թվային միջավայրում իրենց ուսումնական ու գիտահետազոտական գործունեությունը ճիշտ կառավարելու վերաբերյալ: Ինչպես նշել է ԿԱԱՀ-ի գրադարանի վարիչը, ելնելով բուհերում գրադարանի՝ հեղինակային իրավունքի պահպանման գործում կարևոր դերակատարությունից՝ ԿԱԱՀ-ի գրադարանի դիտանկյունից բուհում գրադարանավարներն այս ուղղությամբ շարունակական վերապատրաստումների կարիք ունեն: Հաշվի առնելով այդ կարիքը՝ բուհը նախատեսել է առաջիկա ուսումնական տարիներին ոչ միայն կազմակերպել վերապատրաստման դասընթացներ ԿԱԱՀ-ի գրադարանավարների և այլ գրադարանների համար, այլ նաև մշակել ՄՍ պահպանմանն առնչվող հստակ քաղաքականություն, որը ֆորմալ կերպով կկարգավորի բուհում հեղինակային իրավունքի պահպանման ոլորտում ծառացող խնդիրները գրադարանի գործունեության շրջանակում: Հարցազրույցների արդյունքների համաձայն՝ բուհը նախատեսում է նաև ընդլայնել ազգային ու միջազգային գործընկեր համալսարանների և այդ համալսարանների գրադարանների հետ համագործակցության շրջանակը՝ այս ոլորտի բարեփոխումները բուհական միջավայրում առավել շոշափելի և արդյունավետ դարձնելու նկատառումով: Համեմատության կարգով պետք է նշել, որ սկսած 2016 թվականից, ԵՊԼՀ գրադարանը նույնպես ձեռնամուխ է եղել ԵՊԼՀ գրադարանավարների և այլ շահագրգիռ կողմերի (հանրային գրադարաններ, ուսումնական հաստատություններ, գիտահետազոտական կենտրոններ) համար վերապատրաստումների իրականացմանը, որոնցում շարքում ընդգրկվել է նաև հեղինակային իրավունքին առնչվող իրավական հիմնախնդիրների քննարկումը[9]:

[9] Սույն ատենախոսության շրջանակում ընդգրկված օրենսդրական դաշտի համեմատական վերլուծության (Գլուխ 2, 2-րդ ենթագլուխ) հիմնական արդյունքները 2017 թ. ներկայացվել և քննարկվել են ԵՊԼՀ և ՀՀ այլ շահագրգիռ կողմերի հետ «Գրադարանային ցանցի աջակցման ծառայություններ. Հայաստանի, Մոլդովայի և Բելառուսի գրադարանների արդիականացում գրադարանի աշխատակազմի

- ԿԱԱՀ-ում դասավանդվում են «Մտավոր սեփականության իրավունք» և «Թվային գրագրություն» առարկաները: «Մտավոր սեփականության իրավունք» առարկան նախատեսված է իրավաբանության մասնագիտությամբ ուսանողների համար և, ինչպես կարելի է եզրակացնել այդ դասընթացի առարկայական նկարագրի բովանդակությունից, այդ դասընթացի շրջանակում ուսանողներին տրամադրվում են համապարփակ գիտելիքներ մտավոր սեփականության իրավունքի պահպանման, ոլորտին առնչվող ազգային և միջազգային օրենսդրական դաշտերի և մտավոր սեփականությանն առնչվող այլ առանցքային դրույթների մասին: Դասավանդվող առարկայի շրջանակում նախատեսվող տեսական բաղադրիչից բացի նախատեսված են նաև գործնական առաջադրանքներ, սեմինարներ և հանդիպում-քննարկումներ մտավոր սեփականության ոլորտի մասնագետների հետ՝ ուսանողների մասնագիտական գիտելիքները, կարողություններն ու հմտությունները զարգացնելու նպատակով: «Թվային գրագրություն» առարկայի շրջանակում ուսանողները ձեռք են բերում գիտելիքներ տեղեկության արդյունավետ կառավարման ու գնահատման, տեղեկատվական գործիքների տիրապետման, էլեկտրոնային նյութերի ստեղծման ու դրանք համապատասխան ակադեմիական միջավայրում կիրառելու վերաբերյալ, ինչպես նաև հստակ պատկերացում են կազմում տեղեկության օգտագործման դեպքում հեղինակային իրավունքի պահպանմանն առնչվող առանցքային խնդիրների և դրանց արդյունավետ լուծման եղանակների վերաբերյալ: Հարկ է նշել նաև, որ երկու դասընթացների առարկայական նկարագրերում պարտադիր նշվում է գրագողության և դասավանդողի կողմից գրագողության բացահայտման դեպքում համապատասխան պատժամիջոց(ներ)ի կիրառման կամ կանխարգելման միջոցների ձեռնարկման իրավունքի և պարտավորությունների մասին: ԵՊԼՀ-ում ՄՍ առնչվող դասընթաց չի դասավանդվում, որը թերևս կարող է պայմանավորված լինել բուհի հումանիտար ուղղվածությամբ և իրավագիտության ու տնտեսագիտության ոլորտների ավելի քիչ շեշտադրմամբ:

Միևնույն ժամանակ բուհի գործունեության մասնագիտական ուղղվածությունը չպետք է դիտարկվի որպես խոչընդոտ ակադեմիական միջավայրում ՄՍ իրավունքի

մասնագիտական զարգացման և գրադարանների բարեփոխման միջոցով» ERASMUS+ LNSS ծրագրի շրջանակներում (http://www.lnss-projects.eu/amb/aims):

պաշտպանության և ուսումնական գործընթացներում դրա արտացոլման համար (օրինակ՝ առարկայական նկարագրերում գրագողության պատժելիության մասին տեղեկատվություն, գրագողության բացահայտման դեպքում նախազգուշացումների, նկատողությունների և ակադեմիական տույժերի կիրառում, բուհի գրադարանի կողմից տեղեկատվական գրագիտության, հեղինակային իրավունքի պահպանման վերաբերյալ վերապատրաստումների իրականացում և այլն): Ընդ որում, ՄՍ իրավունքի պաշտպանությանն առնչվող առարկայի դասընթացը ՄՍ կրթության կազմակերպման և իրականացման առանցքային նախադրյալներից միայն մեկն է:

Այսպիսով, զուգահեռներ անցկացնելով ԿԱԱՀ-ի ու ԵՊԼՀ-ի որդեգրած քաղաքականությունների (նշված բուհերի կանոնադրություններ, ռազմավարական ծրագրեր, ԵՊԼՀ ենթակառուցվածքային հավատարմագրման համար մշակված ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծական զեկույց և այլն) և ինստիտուցիոնալ մոտեցումների միջև՝ պետք է նշել, որ թեև ԵՊԼՀ ռազմավարական գերակայություններից մեկը կրթության, գիտության ու հետազոտության միջոցով բուհի գիտական և հետազոտական գործունեության բարելավումն է, այն դեռևս չունի ՄՍ և հեղինակային իրավունքին առնչվող հիմնահարցերը կարգավորող միասնական և հստակ մշակված ռազմավարություն կամ կանոնակարգ: Ուսումնասիրելով նաև ԵՊԼՀ-ում ՄՍ իրավունքի պահպանմանը, ակադեմիական ազատությունների խոչընդոտների կանխարգելմանը և առհասարակ ՄՍ իրավունքի վերաբերյալ ՊԴ կազմի և ուսանողների կրթվածության մակարդակի բարձրացմանն ուղղված ռազմավարական մոտեցումները՝ կարելի է եզրակացնել, որ ԵՊԼՀ-ն նշված խնդրի արդյունավետ լուծման անհրաժեշտությունը չի սահմանափակվում բուհի հայեցողական գործողությունների իրականացմամբ, սակայն ակադեմիական ազնվության ապահովման դիրքորոշումը ռազմավարական կամ ինստիտուցիոնալ բնույթ չունի: Բացի այդ, դեռևս փաստաթղթի տեսքով մշակված՝ ՄՍ իրավունքի պահպանումն ապահովող ֆորմալ համակարգ ներդրված չէ, ակադեմիական ազնվության պահպանման մոտեցումները հատվածական բնույթ ունեն, և առարկայական նկարագրերում ու այլ կանոնակարգերում ակադեմիական ազնվությանն առնչվող դրույթները հստակ չեն սահմանված: ԵՊԼՀ-ն դեռևս ՄՍ պաշտպանության

արդյունավետ մեխանիզմների մշակման ու ամբիոնների մակարդակում դրանց ներդրման ու փորձարկման կարիք ունի:

2.3.2. Մտավոր սեփականության կրթության կազմակերպման ինստիտուցիոնալ մոտեցումները (Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարանի օրինակով)

ՀՀ բուհական համակարգում ՄՍ կրթության կազմակերպման նախադրյալների ուսումնասիրման և մասնավոր օրինակի քննարկման տեսանկյունից այս հետազոտության շրջանակում վերլուծության են ենթարկվել Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարանի (ԵՊԼՀ) ինստիտուցիոնալ մոտեցումները ՄՍ կրթության կազմակերպման նկատմամբ՝ անհրաժեշտ է նաև ներկայացնել ՄՍ պահպանմանն առնչվող ԵՊԼՀ քաղաքականությունն ու ինստիտուցիոնալ մոտեցումները, որոնք արտացոլված են ԵՊԼՀ կանոնադրությունում, ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծական զեկույցում և որոշ ներքին փաստաթղթերում (օրինակ՝ բուհի ռազմավարական ծրագրում, առարկայական նկարագրերում և այլն):

Հիմք ընդունելով ԵՊԼՀ կանոնադրությունը և ինստիտուցիոնալ հավատարմագրման համար ԵՊԼՀ-ի կողմից ներկայացված ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծական զեկույցում (այսուհետ՝ ինքնավերլուծական զեկույց) վերլուծության ենթարկված 3 մասնագիտության կրթական ծրագրերի (այսուհետ՝ ՄԿԾ-ներ) («Հանրային կառավարում», «Մանկավարժություն» և «Թարգմանչական գործ») իմացական, հետազոտական և կիրառական բաղադրիչների կարևորությունը՝ ԵՊԼՀ-ն ուսումնական գործընթացներում ապահովում է ՊԴ կազմի և ուսումնառողների ակադեմիական ազատությունը: Վերջինիս ապահովման նպատակով բուհը ստեղծում է նպաստավոր պայմաններ գիտահետազոտական աշխատանքների և ձեռք բերված գիտելիքների կիրառման համար՝ վերահսկելով ակադեմիական հավասար պայմանների առկայությունն ու ազնվության ապահովումը:

Ինչպես նշված է ԵՊԼՀ ինքնավերլուծական զեկույցում, ԵՊԼՀ կանոնադրության (VII բաժին, կետ ե)[10] համաձայն՝ բուհը կրում է պատասխանատվություն և տնօրինման իրավունք ուսումնական գործունեության արդյունք համարող մտավոր և ստեղծագործական աշխատանքի արդյունքում ստացած եկամուտների նկատմամբ: Հարկ է նշել, որ ներկայումս գործող ԵՊԼՀ կանոնադրությունը փոփոխության է ենթարկվել և հաստատվել է ԵՊԼՀ հավատարմագրում ստանալուց հետո: ԵՊԼՀ-ն մտավոր սեփականության պահպանմանը և ակադեմիական ազնվությանը (որպես մտավոր սեփականության պահպանման ակադեմիական դրսևորման) միտված գործընթացների իրականացման ժամանակ նախևառաջ առաջնորդվում է իր ներկայիս կանոնադրությամբ[11], որը ներառում է նաև ակադեմիական ազատության վերաբերյալ որոշ դրույթներ, մասնավորապես՝ ԵՊԼՀ կանոնադրության 6-րդ հոդվածի 78-րդ դրույթի 2-րդ կետի համաձայն՝ ՊԴ կազմն ունի գիտական հետազոտությունների իրականացման ակադեմիական ազատության իրավունք, և նույն հոդվածի 79-րդ դրույթի համաձայն՝ համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմին, գիտաշխատողներին և սովորողներին տրվում են ակադեմիական ազատություններ: Այս դրույթները դրսևորվում են ՊԴ և գիտական կազմերի, ինչպես նաև հետազոտողների գիտահետազոտական ու գիտամեթոդական գործունեությունում և դասավանդման գործընթացում: Այսուհանդերձ, այս համատեքստում ակադեմիական անազնվության դրսևորման դեպքերն ինստիտուցիոնալ մակարդակում հետևողականորեն չեն դիտարկվել կամ մշտադիտարկվել, ինչը կարող է նշանակել, որ ԵՊԼՀ-ն դեռևս ակադեմիական ազնվության պահպանման գործընթացների մշտադիտարկման կամ գնահատման, ինչպես նաև ակադեմիական անազնվության դեպքերի բացահայտման արդյունավետ մեխանիզմների մշակման և կիրարկման կարիք ունի: ԵՊԼՀ-ում իրականացվող գիտաուսումնական գործընթացներում, օրինակ, գրագողության բացահայտման պատասխանատվությունը նախևառաջ կրում է դասավանդողը կամ հետազոտական աշխատանքի ղեկավարն ու գրախոսը, որը,

[10] Նշված կանոնադրությունը գործել է ԵՊԼՀ հավատարմագրման ժամանակահատվածում: 2014 թ. ի վեր գործում է ԵՊԼՀ վերանայված կանոնադրությունը (ՀՀկառավարության 2014 թ. ապրիլի 30-ի N 456-Ն որոշում):

[11] ՀՀ կառավարության 2014 թվականի ապրիլի 30-ի N 456-Ն որոշում:

սակայն, համակարգային վերահսկողություն չի համարվում, քանի որ խնդիրն ինստիտուցիոնալ համակարգում լուծելու մշակույթը բուհում դեռևս լիարժեք ձևավորված չէ՝ գլխավորապես պայմանավորված վերահսկման, ակադեմիական անազնվության դեպքերի կանխարգելման համընդհանուր մեխանիզմների բացակայությամբ: Խնդրի համակարգային լուծումը ենթադրում է, որ բուհը գործում է ելնելով հստակ մշակված քաղաքականությունից և դրանից բխող կանոնակարգերից ու ընթացակարգերից, որոնք ԵՊԼՀ-ում դեռևս մշակման փուլում են գտնվում:

Հեղինակային իրավունքի պահպանման և ակադեմիական ազնվության ապահովման անհրաժեշտությունն արտացոլված է նաև ԵՊԼՀ ՊԴ կազմի վարքականոնում (ՊԴ վարքականոնը գործել է ԵՊԼՀ հավատարմագրման ժամանակահատվածում), որտեղ հստակ նշվում է, որ դասախոսն իր աշխատանքային գործունեության ընթացքում բացառում է ակադեմիական անազնվության բոլոր դրսևորումները և փորձում է հնարավորինս կանխարգելել դրանք: Նույն փաստաթղթում (ԵՊԼՀ ՊԴ կազմի պատվո վարքականոնը կցվում է ԵՊԼՀ դասախոսի պայմանագրին՝ որպես պարտադիր ծանուցում) նշվում է նաև, որ դասախոսը պարտավոր է անաչառ լինել ուսանողների ակադեմիական առաջադիմության ստուգման և գնահատման հարցերում՝ բացառելով ցանկացած տեսակի կողմնակի միջամտություն և կանխելով կոռուպցիոն վտանգները: ԵՊԼՀ ՄԿԾ-ների իրականացման շրջանակում ակադեմիական ազնվությունն արտացոլված է համապատասխան մասնագիտության համար մշակված առարկայական նկարագրերում, ինչպես նաև ՊԴ կազմի կողմից անհրաժեշտ մասնագիտական գրականության ու խորհրդատվությունների տրամադրման և վերահսկման գործընթացներում:

Բացի այդ, ինստիտուցիոնալ մակարդակում ՄՍ ոլորտի բարելավմանն ուղղված գործընթացները հիմնականում ընդգրկում են ԵՊԼՀ ռազմավարությամբ սահմանված՝ գիտության ոլորտին առնչվող ռազմավարական նպատակների իրականացման ու որակի ապահովման համակարգային զարգացմանն ուղղված մի շարք միջոցառումներ, ինչպիսիք են մտավոր սեփականության ոլորտին և հատկապես ակադեմիական ազնվության հայեցակարգերի մշակմանն ու գործադրմանն առնչվող հանդիպում-

քննարկումների կազմակերպումը, բուհերի առանցքային շահակիցների իրազեկվածության բարձրացմանն ուղղված միջոցառումների իրականացումը, ՄՍ ոլորտի առաջատար մասնագետների կողմից բուհերի շահակիցներին փորձի փոխանցումը և ՄՍ ոլորտի խնդիրները կարգավորող կառույցների հետ համագործակցության ակտիվացումը: Արդյունքում ՄՍ ոլորտի բարեփոխումները բուհի համատեքստում առավել տեսանելի կդառնան՝ դրսևորվելով ԵՊԼՀ-ում ՄՍ իրավունքի պահպանման վերաբերյալ քաղաքականության և ներքին կանոնակարգ(եր)ի մշակման, գրագողության դեպքերի նվազեցման և առհասարակ ակադեմիական ազնվության մակարդակի բարձրացման տեսքով:

Ըստ ԵՊԼՀ ենթակառուցվածքային հավատարմագրումից հետո մշակված գործողությունների պլանի (2016 թ.)՝ ԵՊԼՀ-ն նախատեսում է մշակել ակադեմիական ազնվության հիմնահարցերը կանոնակարգող փաստաթուղթ (հայեցակարգ), որը կհիմնվի մտավոր սեփականության (մասնավորապես հեղինակային իրավունքի) ազգային և միջազգային փորձի ուսումնասիրության արդյունքների և ազգային ու ինստիտուցիոնալ (բուհական) համատեքստերի առանձնահատկությունների, ինչպես նաև բարձրագույն կրթության ոլորտի առանցքային շահակիցների կարիքների վրա: ԵՊԼՀ ենթակառուցվածքային հավատարմագրումից հետո մշակված գործողությունների պլանում նախանշվում է նաև ՄՍ ոլորտի բարելավման ուղղությամբ ԵՊԼՀ-ի գրադարանի կողմից համապատասխան միջոցառումների իրականացումը, օրինակ՝ նախատեսվում է մշակել գրադարանային ռեսուրսներից օգտվելու կանոնակարգ (պատճենահանման, տպման, տեսածրման, էլեկտրոնային տարբերակների կրկնօրինակման և առնչվող այլ դրույթների ընդգրկմամբ), որը կամրապնդի գրադարանի դերը ակադեմիական միջավայրում հեղինակային իրավունքի պահպանման հարցում: Նշյալ միջոցառումների իրականացման արդյունքում կարելի է կանխատեսել բուհի գրադարանային համակարգի աշխատանքների արդյունավետության բարձրացում և գրադարանային ռեսուրսների առավել արդյունավետ օգտագործում, ինչպես նաև ակադեմիական ազնվության ամրապնդում և՛ ուսանողների, և՛ ՊԴ կազմի շրջանում:

Ակադեմիական ազատությունների և ազնվության պահպանման խնդրում հավասարաչափ դերակատարություն ունեն ուսանողները և ՊԴ կազմը, որոնց կողմից ակադեմիական ազնվության պահպանումը նախևառաջ գալիս է ՄՍ ոլորտի վերաբերյալ իրազեկության աստիճանից: Ըստ ԵՊԼՀ ինքնավերլուծական զեկույցի՝ հաշվետու ժամանակաշրջանում ԵՊԼՀ ուսանողների, ինչպես նաև ՄՍ ոլորտի մասնագետների և ԵՊԼՀ ՊԴ կազմի շրջանում անցկացված որակական և քանակական հարցումները փաստում են, որ գրագողության և առհասարակ ՄՍ իրավունքի խախտման դեպքերի սկզբնաղբյուրն իրազեկվածության ցածր աստիճանն է, և հետևապես գրագողության խախտման դեպքերի ցուցանիշներն անհանգստության տեղիք են տալիս:

Ինչպես ցույց են տալիս այս հետազոտության արդյունքները, ակադեմիական ազնվության բաղադրիչը ԵՊԼՀ-ում հիմնականում դրսևորվում է գրագողության կանխարգելիչ միջոցների (օրինակ՝ ակադեմիական տույժերի) կիրառմամբ, գիտահետազոտական աշխատանքներ կատարելու համար ՊԴ կազմի կողմից տրվող անհրաժեշտ մասնագիտական գրականության ու խորհրդատվության տրամադրմամբ, ՊԴ կազմի ամբիոնների և դեկանատների կողմից մոդուլային գրավոր աշխատանքների պատշաճ կազմակերպմամբ, իրականացմամբ և վերահսկողությամբ: Ընդհանուր առմամբ, ԵՊԼՀ-ում ակադեմիական ազնվության բաղադրիչի ապահովումն իրականանում է ԵՊԼՀ կանոնադրությամբ և որոշ կարգապահական կանոնակարգերի միջոցով (ԵՊԼՀ ՊԴ կազմի պատվո վարքականոն, առարկայական նկարագրեր, ուսանողների գնահատման կարգ): Ինքնավերլուծության իրականացման ժամանակահատվածում ԵՊԼՀ-ում գործել է նաև ԵՊԼՀ ուսանողների պատվո վարքականոնը, որը ներկայումս չի գործում: Ուսանողների պատվո վարքականոնի որոշ դրույթներ համակցվել են և ներկայացվել ԵՊԼՀ ուսանողների ուղեցույցում, որտեղ, սակայն, անդրադարձ չի կատարվում ՄՍ իրավունքների պահպանման խնդիրներին: Իսկ ՄԿԾ-ներում ակադեմիական ազնվության վերաբերյալ որոշ դրույթներ, ինչպես արդեն նշվել է, զետեղված են մշակված առարկայական նկարագրերում: Գրագողության բացահայտման դեպքում ՄԿԾ-ների իրականացման գործընթացն ուղեկցվում է նախազգուշացումների, նկատողությունների և

ակադեմիական տույժերի կիրառմամբ՝ ըստ ՄԿԾ-ներում մշակված առանձնահատկությունների և սկզբունքների: ԵՊԼՀ-ն ակադեմիական ազնվության պահպանումը դիտում է որպես ուսումնակրթական գործընթացի անխափան կատարման միջոցներից մեկը և կարևորում է ՄԿԾ-ների գիտահետազոտական աշխատանքների կատարելագործման և մասնագիտական հմտությունների ամրապնդումը:

Կանոնադրական գործունեության ուսումնասիրության տեսանկյունից պետք է նշել, որ ԵՊԼՀ կանոնադրության մեջ գիտահետազոտական աշխատանքների առևտրայնացմանն ուղղակիորեն վերաբերող դրույթ սահմանված չէ, սակայն կանոնադրության մեջ նշվում է, որ.

- համալսարանի իրավասություններից է *«համալսարանի պահպանմանն ու զարգացմանը և գիտահետազոտական գործունեությանը նպատակաուղղված ծախսերի կատարումը»* [2-րդ հոդվածի 11-րդ դրույթի 11-րդ կետ].
- համալսարանին վերապահված՝ ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու իրավունքներից են՝
  - *«գիտահետազոտական աշխատանքների իրականացումն ու դրանց արդյունքների առևտրայնացումը»* [2-րդ հոդվածի 12-րդ դրույթի 4-րդ կետ],
  - *«հրատարակչական և տպագրական գործունեության ծավալում և արդյունքների իրացումը* [2-րդ հոդվածի 12-րդ դրույթի 5-րդ կետ], *համալսարանի տարբերանշաններով իրերի արտադրություն և դրանց իրացումը»* [2-րդ հոդվածի 12-րդ դրույթի 11-րդ կետ]:

Այսուհանդերձ, ԵՊԼՀ կանոնադրության մեջ ՄՍ ոլորտին առնչվող հիմնախնդիրները, այդ թվում՝ ակադեմիական ազնվությունը, մտավոր սեփականության ու մասնավորապես հեղինակային իրավունքի պահպանումը և առնչվող այլ հիմնախնդիրներն ընդհանրացված են, և նշված խնդիրների վերաբերյալ առանձին դրույթների կամ նշումների հստակեցման կամ զետեղման անհրաժեշտություն է նկատվում տվյալ փաստաթղթում կամ ներքին կանոնակարգերում: Օրինակ՝ ԵՊԼՀ կանոնադրության մեջ նշվում է համալսարանի պահպանմանն ու զարգացմանը և գիտահետազոտական գործունեությանը

նպատակաուղղված ծախսերի կատարման մասին, գիտահետազոտական աշխատանքների իրականացման ու դրանց արդյունքների առևտրայնացման մասին, սակայն հստակ չէ, թե ով է մտավոր գործունեության արդյունքում ստեղծված արտադրանքի իրավատերը՝ բուհը, այդ արտադրանքի ստեղծողը, թե երկու կողմերը: Այս պարագայում տվյալ արտադրանքի (որպես մտավոր աշխատանքի արդյունքի) նկատմամբ մտավոր սեփականության իրավունքի պատկանելության հարցը սովորաբար կարգավորվում է գործատուի և աշխատողի միջև կնքվող պայմանագրով: Ընդհանուր առմամբ, բուհերի գործունեության շրջանակում ՄՍ ոլորտի կարգավորման ուղղությամբ ռազմավարական հստակ դիրքորոշումը, համապատասխան կանոնակարգային հենքի ստեղծումը, ինչպես նաև ստորաբաժանումների (ամբիոններ, գիտաուսումնական և գիտահետազոտական կենտրոններ, գրադարաններ և այլն) ինքնավերլուծությունների արդյունքում դուրս բերված բարելավման ուղիների փաստացի իրականացումը թույլ կտան արձանագրել ակադեմիական անազնվության դեպքերի նվազեցման ցուցանիշներ:

Ակադեմիական ազնվության և առհասարակ մտավոր սեփականության իրավունքի պահպանման խնդրում ԵՊԼՀ-ն կարևորում է նաև ուսումնառողների ակտիվ դերակատարությունը: Ելնելով բուհի գիտահետազոտական գործունեության բարելավման և ուսանողների մասնագիտական հմտությունների ամրապնդման անհրաժեշտությունից՝ ԵՊԼՀ ուսումնառողները համապատասխան ամբիոնների և ստորաբաժանումների օժանդակությամբ կամ անձնական նախաձեռնությամբ հնարավորություն են ունենում ներգրավվելու ազգային ու միջազգային գիտաուսումնական միջոցառումներում, տպագրելու գիտահետազոտական աշխատանքներ իրենց կողմից կատարված հետազոտությունների շրջանակում: Միևնույն ժամանակ հստակ չէ, թե մանկավարժական և մեթոդական տեսանկյուններից այդ դրույթները որքանով են ներդրվել ուսումնական գործընթացներում:

Բոլոր դեպքերում գիտահետազոտական աշխատանքների և առհասարակ հեղինակային իրավունքի օբյեկտ համարվող ստեղծագործությունների հեղինակները պետք է նախևառաջ քաղաքացիական և իրավական գիտակցության ու

իրազեկվածության որոշակի մակարդակ ունենան և հեղինակային իրավունքին առնչվող ազգային օրենսդրական դաշտին քաջատեղյակ լինեն, որպեսզի կարողանան պաշտպանել իրենց հեղինակային իրավունքը, իրավախախտումներ թույլ չտան և իրենց հեղինակային իրավունքի խախտման դեպքում կամ խախտված իրավունքի վերականգնման ուղղությամբ քայլեր ձեռնարկեն: Ոլորտային գիտելիքի և թիրախավորված տեղեկատվության տիրապետումը բուհերի հիմնական շահակիցների համար նույնպես կենսական նշանակություն ունի՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ հեղինակային իրավունքի խախտման առավել տարածված, թեև ոչ միշտ բացահայտ դեպքերն ու ձևերը հիմնականում դրսևորվում են ակադեմիական միջավայրում:

Այսպիսով, այս հետազոտության շրջանակում ՄՍ կրթության կազմակերպման հիմնախնդրի ազգային դիրքորոշումների և մասնավոր դեպքի ուսումնասիրության շրջանակում ՄՍ իրավունքի պահպանման բուհական կամ ինստիտուցիոնալ դիրքորոշման ուսումնասիրության անհրաժեշտությունը հավաստվում է նաև ՄՍ ոլորտի մասնագետների կողմից, քանի որ վերջիններս նույնպես կարծում են, որ բուհերն առաջնային դերակատարներն են այս խնդրում. նրանք են պատրաստում իրավաբաններ, դատավորներ, փաստաբաններ և հարակից ոլորտների մասնագետներ, որոնք պետք է ճիշտ վերլուծեն օրենքները, հիմնավորեն պահանջները, ճիշտ և տեղին խորհրդատվություն տրամադրեն, հարգեն այլոց իրավունքները, գիտական արժեքներից օգտվելու կանոններին տիրապետեն և չխոչընդոտեն ստեղծագործողների բարեխիղճ գործունեությանը: Ի վերջո, ստեղծագործական աշխատանքն ամենաբարձր գնահատվող աշխատանքն է, և բուհն այն գնահատողներից առաջինը պետք է լինի:

Ամփոփելով սույն գլխի ուսումնասիրության ու վերլուծության արդյունքները և հաշվի առնելով ՀՀ-ում և Ղրղզստանում մտավոր սեփականության ոլորտի համընդհանուր խնդիրները՝ կարելի է եզրակացնել, որ Հայաստանում և Ղրղզստանում առկա են ՄՍ կրթության կազմակերպման և իրականացման արդյունավետ նախադրյալներ, սակայն այդ հիմքերի ամրապնդմանն ուղղված միջոցառումները հաճախ բազմակողմ և սերտ համագործակցային բնույթ չունեն: Դա կարող է հիմնականում բպայմանավորված լինել նշված երկրների սոցիալ-տնտեսական

զարգացման անցումային փուլով, ակադեմիական հանրության շրջանում մտավոր սեփականության պահպանման մշակույթի ոչ լիարժեք զարգացմամբ և բուհական համակարգում մտավոր սեփականության պահպանման խնդրի հանդեպ հաճախ ոչ արդիական ռազմավարական մոտեցումների կիրառմամբ: Սակայն նկատելի է նաև, որ ՄՍ ոլորտին ուղղակի և անուղղակի կերպով առնչվող և ոլորտային հիմնախնդիրներով զբաղվող մասնագետներն ու շահագրգիռ կառույցները (ներառյալ՝ բուհերը) գործում են ազգային մակարդակում մտավոր սեփականության կրթության նախադրյալների ամրապնդման և ոլորտի բարելավման ու զարգացման հեռանկարների ուղղությամբ՝ առավելապես կարևորելով՝

- ավագ դպրոցներում ՄՍ իրավունքի պահպանմանը նվիրված դասընթացների ներմուծումը (օրինակ՝ մարդու իրավունքների, հասարակագիտության, բարոյագիտության և հարակից այլ առարկաների շրջանակներում),
- բարձրագույն կրթության ոլորտի բոլոր առանցքային շահակիցների, այդ թվում՝ ՄՍ կրթության կազմակերպմանն ու իրականացմանն աջակցող կառույցների կողմից համալիր միջոցառումների, վերապատրաստումների շարունակական իրականացումն ու դրանց արդյունքների կիրառման ու գնահատման նկատմամբ հետևողականության ցուցաբերումը,
- սերտ համագործակցությունը (օրինակ՝ բուհ/միջին մասնագիտական ուսումնական հաստատություն-դպրոց, բուհ-բուհ, բուհ-ՄՍ գործակալություն կամ ոլորտի կարգավորման խնդիրներով զբաղվող ազգային ու միջազգային այլ կազմակերպություններ ու մասնագետներ և այլն),
- ինստիտուցիոնալ մակարդակում բուհերի կողմից մտավոր սեփականության և մասնավորապես հեղինակային իրավունքի պահպանմանն առնչվող հստակ որդեգրված քաղաքականությունը, դրանից բխող ռազմավարության ու մարտավորությունների մշակումն ու իրականացումը,
- գիտական արտադրանքի տարածումն ու փոխակերպումը տնտեսական արժեքի,
- ակադեմիական և ոչ ակադեմիական հանրությունների գիտակցության բարձրացումը ոլորտի արդի հիմնախնդիրների շուրջ,

- բուհական և հանրային գրադարաններում էլեկտրոնային և ոչ էլեկտրոնային ռեսուրսների ու մասնագիտական գրականության հարստացումը,
- ՄՍ ոլորտի վերաբերյալ համապատասխան գրականության՝ մայրենի լեզվով թարգմանությունների կատարումն ու տարածումը,
- ազգային և միջազգային ՄՍ փորձագետների հետ փորձի փոխանակման միջոցով փորձի հարստացումը,
- բուհերի և հեղինակների/հրատարակչությունների համագործակցության ակտիվացումը (օրինակ՝ նշված կողմերի միջև պայմանագրի կնքում, որի համաձայն՝ բուհը մասամբ կամ ամբողջովին ֆինանսավորում է դասագրքերի ձեռքբերումը):

ԳԼՈՒԽ III. ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԵՎ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԳԻՏԱԿԱՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ ՀՀ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

3.1. Մտավոր սեփականության պահպանման ռազմավարական մոտեցումները ՀՀ բուհերում

Վերջին երկու տասնամյակում գիտելիքի կառավարման արդյունավետ համակարգերի, ժամանակակից տեղեկատվական և հաղորդակցման տեխնոլոգիաների պատշաճ տիրապետման, նորարարության ու ստեղծարարության խթանման և գիտելիքահենք տնտեսության զարգացմանն առնչվող այլ հիմնախնդիրներն օրակարգային են դարձել Հայաստանի Հանրապետության ազգային գիտակրթական բարեփոխումներին ուղղված գործընթացներում: Գիտելիքահենք տնտեսության զարգացման առանցքային խթան հանդիսացող մարդկային կապիտալը, մտավոր ներուժը և վերջինիս բացահայտման ու զարգացման առաջնային դերակատար հանդիսացող ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատությունները նույնպես անմասն չեն մնում այդ օրակարգային խնդիրներից՝ հաշվի առնելով իրենց գլխավոր հանձնառությունն ու դերակատարությունը գիտության, կրթության, նորարության և տնտեսության հիմնարար ոլորտների զարգացման գործում: Այս պարագայում ՀՀ բուհերի ռազմավարական զարգացման շեշտադրումներից մեկն ավելի քան երբևէ պետք է հստակ նպատակաուղղված լինի մտավոր ներուժի արդյունավետ օգտագործմանը և մարդկային կապիտալի զարգացմանը՝ ի շահ կրթական ու գիտական արժեքների ստեղծմանը, պահպանմանը, փոխանցմանն ու արդյունավետ կիրառմանը: Հետևապես, այս նպատակների իրագործումը՝ ուղղված գիտելիքահենք տնտեսության զարգացմանն ու կայացմանը, պահանջում է մտավոր սեփականության (ՄՍ) պահպանման խնդիրների լուծման հստակ ռազմավարություններ ինչպես ազգային, այնպես էլ ինստիտուցիոնալ (բուհական) մակարդակներում: Հաշվի առնելով այն, որ ՀՀ բուհերում ՄՍ պահպանման ռազմավարությունները մինչ այժմ կամ համապարփակ կերպով չեն մշակվել, կամ առկա ռազմավարությունների ու ռազմավարական մոտեցումների կիրառումը մասնավոր բնույթ է կրում, սույն հետազոտության շրջանակում վեր են հանել նաև ՀՀ

բուհերի ՄՍ պահպանման առկա ռազմավարական մոտեցումները, որոնք կարող են մտավոր սեփականության կրթության կազմակերպման հիմք հանդիսանալ:

ՀՀ բուհերում ՄՍ կրթության կազմակերպման ռազմավարությունների բացակայությունը կամ նմանատիպ ռազմավարական նպատակների անհստակությունը, առկա ռազմավարական մոտեցումների մասնավոր, ոչ ամբողջական կամ ոչ ինստիտուցիոնալ կիրառումը պայմանավորված են մի շարք ազգային սոցիալ-տնտեսական ու մշակութային խնդիրներով, ՄՍ իրավունքի պաշտպանության խնդիրների լուծման ազգային քաղաքականության ոչ արդյունավետ կիրառմամբ և դրանցից բխող ինստիտուցիոնալ դիրքորոշումներով, դեռևս բարեփոխման փուլում գտնվող համապատասխան օրենսդրական շրջանակի (օրինակ՝ «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» ՀՀ օրենք) ոչ ամբողջական կամ անարդյունավետ կիրարկմամբ, ՄՍ ոլորտի կարգավորման ու բարեփոխման շահագրգիռ կողմերի, այդ թվում՝ բուհերի և հանրության պասիվությամբ և այլ խոչընդոտող գործոններով: Սակայն հարկ է նշել, որ ՄՍ պահպանման արդյունավետ ռազմավարությունների մշակման և դրանցից բխող ակադեմիական խնդիրները (օրինակ՝ ակադեմիական ազնվությունը) մի շարք զարգացած և զարգացող երկրների բարձրագույն ուսումնական հաստատություններում նույնպես դեռևս հստակ ու լիարժեք լուծում չեն ստացել, իսկ արդյունքների կարևորությունը միայն տասնյակ տարիներ անց է տեսանելի դառնում:

Բուհերի կողմից ՄՍ պահպանմանն առնչվող խնդիրների վերաբերյալ հստակ քաղաքականությունների որդեգրման, դրանցից բխող ճկուն ռազմավարությունների և կանոնակարգված գործընթացների առկայությունը կարևոր է ՄՍ կրթության կազմակերպման և ակադեմիական ու գիտահետազոտական հանրության զարգացման համար, քանի որ, ինչպես ցույց է տալիս միջազգային փորձը, խնդրի նման կանոնակարգված մոտեցումը փոխում է բուհերի շահակիցների մտածելակերպն ու մասնավորապես ակադեմիական ազնվության նկատմամբ դիրքորոշումը թե՛ անհատական և թե՛ ինստիտուցիոնալ մակարդակներում [Hendershott, Drinan & Cross 2000]: Բուհերը ՄՍ պահպանման ռազմավարությունների մշակման ժամանակ բախվում են այնպիսի խնդիրների, որոնք ոչ միայն գիտակրթական, այլ նաև

սոցիալական, տնտեսական և տեխնոլոգիական բնույթ ունեն՝ պայմանավորված տվյալ երկրի տնտեսության գերակա խնդիրների լուծման ու դրանցով թելադրվող ոլորտային շուկայական պահանջների բավարարման հրամայականով: ՄՍ առնչվող քաղաքականություն մշակելիս բուհերն այդ քաղաքականությամբ կարգավորվող ՄՍ օբյեկտների օգտագործումը պետք է նախևառաջ դիտեն ոչ թե եկամտի աղբյուր, այլ գիտահետազոտության գործառույթի իրականացման և զարգացման ռազմավարություն՝ միաժամանակ չանտեսելով նաև գիտական արդյունքների առևտրայնացման մշակույթի ներդրման կարևորությունը [Intellectual Property Office 2011: 17-25]: Այլ դիրքորոշման համաձայն՝ բուհերը ՄՍ քաղաքականության և համապատասխան ռազմավարությունների մշակման գործընթացներն իրականացնելիս պետք է հաշվի առնեն ՄՍ պահպանման բաղադրիչ համարվող ձեռնարկատիրական կրթության հիմնախնդիրները, քանի որ վերջինիս միջոցով ՄՍ պահպանման օբյեկտները կարող են առևտրայնացվել ու հանրության լայն շերտերին հասանելի դառնալ [Salem 2014: 289]: Մտավոր գործունեության արդյունքների առևտրայնացումը կարգավորվում է ՄՍ իրավունքների պաշտպանությամբ ու ամրապնդմամբ ինչպես ազգային, այնպես էլ ինստիտուցիոնալ մակարդակներում [Самохвалова 2007: 75]: Բոլոր դեպքերում բուհերը ՄՍ առնչվող ռազմավարություններ մշակելիս պետք է նախևառաջ հաշվի առնեն ներքին առկա խնդիրները և այն ռազմավարական ուղղություններն ու առանձնահատկությունները, որոնք որոշիչ են իրենց գործունեության երկարաժամկետ զարգացման համար՝ վերջինս ուղղակիորեն կապակցելով տնտեսության առաջնահերթ համարվող բնագառավների հեռանկարային զարգացման հետ:

Հաշվի առնելով այն, որ բուհերում իրականացվող ուսումնական և գիտահետազոտական գործընթացներում մասնակցություն ունեցող բոլոր հիմնական դերակատարներն այս կամ այն չափով ներգրավված են մտավոր գործունեության մեջ, այդպիսի գործունեության արդյունքները կարելի է համարել որպես բուհերի ռազմավարական զարգացումը խթանող ռեսուրսներ: Այդ դերակատարների համար մտավոր գործունեության արդյունքների ստեղծման նպատակով անհրաժեշտ պայմանների ապահովումը, ինչպես նաև ինստիտուցիոնալ մակարդակում ՄՍ

իրավունքների ամրագրումն ու պահպանումը բուհի ղեկավար կազմի պատասխանատվությունն է [Самохвалова 2007: 72-73], իսկ ուսումնառողների ստեղծագործական մտքի խթանման և դրա համար անհրաժեշտ ակադեմիական բարենպաստ միջավայրի ապահովումը՝ ՊԴ կազմի և կրթության բովանդակության մշակման այլ պատասխանատուների հանձնառությունը:

Միջազգային լավագույն փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ՄՍ պահպանման ռազմավարության արդյունավետությունն ապահովելու նպատակով բուհերի ՄՍ պահպանման ռազմավարություններ մշակողները պետք է հաշվի առնեն հետևյալ հիմնարար դրույթները [Intellectual Property Office 2011: 17-25]՝

- ՄՍ պահպանման ռազմավարության և ազգային օրենսդրական դաշտի լիակատար համապատասխանեցումն ու ներդաշնակեցումը.
- ՄՍ պահպանման ռազմավարությունում բուհի առաքելության, արժեքների, կազմակերպական մշակույթի, մրցակցային առավելության և հատկապես գիտահետազոտական ուղղությունների ու դրանցից բխող առանձնահատկությունների առավելագույն արտացոլումը և խնդիրների թիրախավորումը.
- բուհի ՊԴ ու գիտահետազոտական կազմերի և ուսումնառողների ակադեմիական ինքնավարության և ազատությունների ապահովումը, ինչպես նաև դրանց ուղղությամբ ռազմավարական քայլերի նախաձեռնումը.
- բուհի ՊԴ ու գիտահետազոտական կազմերի և ուսումնառողների գիտահետազոտական գործունեության արդյունքների՝ որպես գիտական արժեքի արժևորման և օգտագործման (ներառյալ առևտրայնացման) հնարավորությունների ապահովումը՝ միտված այդ արդյունքների միջոցով գիտակրթական դրական ազդեցության խթանմանը.
- ՄՍ պահպանման ճկուն ռազմավարության հիման վրա բուհի առանցքային շահակիցների համար թիրախային և շարունակական վերապատրաստումների ու դասընթացների իրականացումը [Yu 2012].
- ՄՍ պահպանման ռազմավարության ճկունության և հստակության ապահովումը՝ միտված բուհի ուսումնառողների կողմից կատարված նորարարությունների կամ

նրանց կողմից ստեղծված՝ ՄՍ իրավունքով պահպանման ենթակա օբյեկտների արդարացի օգտագործմանը [Barrow *et. al* 2014].

- ՄՍ պահպանման ռազմավարությունը՝ որպես ձեռնարկատիրական կրթության և հետազոտությունների միջոցով կրթության զարգացման խթան [Salem 2014]:

Վերոնշյալ խնդիրները նաև բարձրագույն կրթության որակի ապահովման նախապայմաններից են՝ հաշվի առնելով այն, որ որակի կառավարումը բուհերի ժամանակակից ռազմավարական կառավարման անբաժանալի մասն է կազմում: ՄՍ օբյեկտների պահպանման և ՄՍ իրավունքների պաշտպանության խնդիրների ռազմավարացումն ավելի տեսանելի ու վերահսկելի է դարձնում ակադեմիական միջավայրի մտավոր ներուժի զարգացումը խոչընդոտող խնդիրները, կրթության բովանդակության որակական փոփոխությունները, գիտահետազոտական ոլորտի զարգացման միտումներն ու խոչընդոտները և առավել լայն իմաստով՝ բուհերի ռազմավարական խնդիրների արդյունավետ լուծման ներքին ու արտաքին հնարավորությունները:

ՀՀ բուհական համակարգում որակի կառավարման խնդիրները սերտաճել են բուհերի ռազմավարական խնդիրներին՝ շեշտադրելով բուհի կառավարման ավանդական ու ժամանակակից մոտեցումների արդյունավետ համադրման պահանջի բավարարումը, կրթության որակի վրա ազդող գործընթացների գնահատման և դրանց արդյունավետության բարձրացման, պրոֆեսորադասախոսական և ուսանողական կազմերի գիտահետազոտական, գիտամանկավարժական և ուսումնամեթոդական աշխատանքների բարելավման անհրաժեշտությունը [Պետրոսյան 2010: 27-28]: Նմանատիպ ռազմավարական կարևոր խնդիրների արդյունավետ լուծումը պահանջում է ինչպես համալիր մոտեցումների կիրառում, այնպես էլ համապատասխան կայուն քաղաքականությունների, ռազմավարական ուղղությունների և խնդիրների հստակ սահմանում՝ բուհերի որոշակի շահակիցների խմբերի կամ որոշակի գործառույթներ իրականացնող ստորաբաժանումների (օրինակ՝ ամբիոններ, գիտաուսումնական կենտրոններ, ռազմավարական կառավարման և որակի ապահովման գործառույթներն իրականացնող հիմնական դերակատարներ և այլն) անմիջական գործունեության միջոցով:

Հաշվի առնելով ինստիտուցիոնալ մակարդակում ՄՍ օբյեկտների արդյունավետ կառավարման անհրաժեշտությունը, ՄՍ օբյեկտների տեսակներն ու առանձնահատկությունները, ինչպես նաև մրցակցային դաշտում բուհի տեղի ու դիրքի ամրապնդման ձգտումը՝ կարևոր է, որ բուհի կողմից մշակվող ՄՍ պահպանման ինստիտուցիոնալ ռազմավարությունը հստակ արտացոլի բուհի քաղաքականության հետևյալ հիմնական ուղղությունները [Самохвалова 2007: 77]՝

- գիտամեթոդական, գիտահետազոտական և ուսումնամեթոդական ապահովվածությանն ուղղված քաղաքականություն,
- բաց կրթության քաղաքականություն,
- բուհի գովազդին և գրավչության բարձրացմանն ուղղված քաղաքականություն,
- գաղտնի տեղեկատվության պահպանմանն ուղղված քաղաքականություն,
- պատենտային-արտոնագրային քաղաքականություն (ըստ բուհի գործունեության ոլորտային ուղղվածության):

Այսուհանդերձ, ակնհայտ է, որ բուհի ՄՍ պահպանման ռազմավարությունների իրականացման լիարժեք արդյունավետությունը չի կարող սահմանափակվել մշակված քաղաքականության, դրանից բխող գործողությունների և ներքին կանոնակարգերի մշակմամբ ու հաստատմամբ. բուհի գիտական ու պրոֆեսորադասախոսական կազմերի և ուսումնառողների մտավոր գործունեության արդյունքները՝ անհատական և ավարտական հետազոտական աշխատանքները, մագիստրոսական թեզերը, թեկնածուական և դոկտորական ատենախոսությունները, հոդվածները պետք է բխեն տվյալ երկրի կամ տարածաշրջանի սոցիալ-տնտեսական պահանջներից [Самохвалова 2007: 74]: Այս պարագայում հստակեցվում է բուհի գիտահետազոտական գործունեության շրջանակներում ստեղծված մտավոր գործունեության արդյունքների փոխկապակցվածությունը տնտեսական, կրթական և աշխատանքի շուկաների պահանջների հետ, որն էլ նպատակային և թիրախավորված է դարձնում գիտական արդյունքների ստեղծումը: Հետևաբար, բուհերը կարող են ավելի արդյունավետ սահմանազատել և դասակարգել ՄՍ օբյեկտների տեսակները՝ հաշվի առնելով իրենց գործունեության ուղղվածությունը, շուկայի սպասարկվող ոլորտներն ու իրենց ռազմավարական գերակա ուղղությունները: ՄՍ կրթության կազմակերպման

տեսանկյունից ցանկալի է, որ բուհերը սահմանազատեն ՄՍ օբյեկտների տեսակները՝ ըստ վերջիններիս գիտական, մշակութային-կրթական և հարակից այլ ուղղությունների [Антонова 2006: 2]՝

1) կրթական ծառայությունների իրականացման արդյունքում ստեղծված արդյունքներ (կրթական և ուսումնական ծրագրեր ու դասընթացներ, որակավորման բարձրացման դասընթացներ ու վերապատրաստումներ) և դրանց մեթոդական հենքի ապահովվածություն (դասագրքեր, ձեռնարկներ, մեթոդական նյութեր, դասախոսություններ և այլն),
2) բուհի նորարարական գործունեության արդյունքներ (գիտական մշակումներ, «նոու-հաու»-ներ),
3) տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման միջոցով ստեղծված օբյեկտներ (էլեկտրոնային դասագրքեր և հրատարակումներ, էլեկտրոնային կայքեր և այլն),
4) բուհի առանձնահատկությունները մատնանշող միջոցներ (բուհի անվանում, գովազդային տեխնոլոգիաներ և այլն),
5) բուհին վերաբերող գաղտնի տեղեկություն (գիտական մշակումներին վերաբերող տեղեկություններ, գյուտերի պատրաստման եղանակներ և այլն),
6) բուհի կողմից տրամադրվող լրացուցիչ ծառայություններ (օրինակ՝ թարգմանչական ծառայություններ):

ՀՀ բուհերի գործունեության շրջանակում ՄՍ կրթության արդյունավետ կազմակերպման համար անհրաժեշտ պայմանների առկայությունը և գիտելիքահենք տնտեսության խթանման շոշափելի արդյունքներ արձանագրելու իրաչափ հնարավորությունները մատնանշելու համար անհրաժեշտ է նշել, որ ազգային մակարդակում մշակված և ընդունված են ՀՀ գիտելիքահենք տնտեսության զարգացումը խթանող քաղաքականություններ և ռազմավարություններ, որոնք արտացոլում են ազգային գերակայությունները: Վերջիններս ամրագրված են *Հայաստանի Հանրապետության 2014-2025 թթ. հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագրում* (այսուհետ՝ ՀՀ 2014-2025 թթ. ռազմավարական ծրագիր): Այդ ծրագիրն արտացոլում է գիտելիքահենք տնտեսության զարգացման կարևորությունը, այն է՝ զարգացնել գիտության ոլորտը՝ երկիրը գիտելիքահենք

տնտեսություն ունեցող, հիմնարար և կիրառական գիտական հետազոտությունների ու մշակումների մակարդակով Եվրոպական գիտատեխնիկական տարածքում մրցունակ դարձնելու նպատակով: Ըստ նշված ռազմավարական ծրագրի [Դրույթ 23.2]՝ այս տեսլականի իրականացումը հնարավոր է դառնում՝

- ✓ գիտության և առաջատար տեխնոլոգիաների ոլորտի կայուն զարգացումն ապահովող համակարգի ձևավորմամբ,
- ✓ գիտության և տեխնիկայի բնագավառի բարձր որակավորում ունեցող կադրերի ու գիտության ոլորտում երիտասարդ կադրերի ներհոսքի աճի ապահովմամբ, գիտական ներուժի արդյունավետ կառավարմամբ, հիմնարար գիտական հետազոտությունների արդյունավետ պետական հովանավորութամբ,
- ✓ տնտեսության մեջ օգտագործվող գիտելիքի ձեռքբերմանն ուղղված հետազոտությունների իրականացմամբ,
- ✓ գիտական կազմակերպություններում նորամուծությունների և արտոնագրերի ավելացմամբ,
- ✓ գիտության, տեխնոլոգիաների և նորամուծական գիտելիքների զարգացումն ապահովող ներդաշնակ համակարգի ստեղծմամբ՝ միտված գիտության ոլորտում մասնավոր բիզնեսի ներգրավմանն ու այդ գիտելիքների նպատակաուղղված ներդրմանը կրթության և տնտեսության տարբեր ճյուղերում,
- ✓ գիտության և տեխնոլոգիաների բնագավառում միջազգային համագործակցության շրջանակի ընդլայնմամբ,
- ✓ գիտաարտադրական կենտրոնների ստեղծմամբ և բուհերում տեխնոպարկերի հիմնմամբ,
- ✓ գիտական արդյունքների առևտրայնացման կենտրոնների[12] ձևավորմամբ,
- ✓ ըստ տնտեսության ճյուղերի՝ գյուտարարական ակտիվության պարբերական հետազոտությունների իրականացմամբ,

[12] Գիտական արդյունքների առևտրայնացման կենտրոնները, ըստ ՀՀ 2014-2025 թթ. ռազմավարական ծրագրի, պետք է լուծեն երկու մասնագիտական խնդիր՝ հստակեցնել արտադրողների պահանջները և այդ չափանիշները ներկայացնել գիտնականներին, այնուհետև հանդես գալ որպես միջնորդական ծառայություն՝ ապահովելու ստեղծված արդյունքների առևտրայնացումը:

- ✓ ՄՍ վերաբերյալ տեղեկատվության համակարգչային համակարգի և համարժեք ենթակառուցվածքների ստեղծմամբ:

Հիմնվելով վերոնշյալ ռազմավարական ծրագրում սահմանված գերակա ոլորտների զարգացման խնդիրների և դրանցից բխող ՀՀ բուհերի՝ ազգային մակարդակում գիտելիքահենք տնտեսության զարգացումը խթանող համընդհանուր հեռանկարների վրա՝ սույն ատենախոսության տվյալ հետազոտական մասում ներկայացվում են հետևյալ ՀՀ բուհերում ՄՍ պահպանման ռազմավարական մոտեցումները.

ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԲՈՒՀԵՐ

1. Երևանի պետական համալսարան (ԵՊՀ)
2. Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարան (ԵՊԼՀ)
3. Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան (ՀՊՏՀ)
4. Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան (ՀՊՄՀ)
5. Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան (ՀԱՊՀ)
6. Երևանի Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարան (ԵՊԲՀ)
7. Հայաստանի ազգային ագրարային համալսարան (ՀԱԱՀ)
8. Գավառի պետական համալսարան (ԳՊՀ)
9. Հայաստանի ամերիկյան համալսարան (ՀԱՀ)[13]

[13] Հայաստանի ամերիկյան համալսարանը (ՀԱՀ) առաջին անգամ հավատարմագրվել է 2006 թ. ԱՄՆ հանրային և մասնավոր համալսարաններին հավատարմագրում շնորհող գործակալության (Senior College and University Commission (WSCUC)) կողմից և 2015 թ. վերահավատարմագրվել է մինչև 2024 թ. (http://aua.am/accreditation-affiliations): Սույն գիտահետազոտական աշխատանքում այս բուհի գործունեության շրջանակում իրականացվող ՄՍ առնչվող քաղաքականության ուսումնասիրությունը պայմանավորված է նրանով, որ ՀԱՀ-ը ՀՀ այն բուհերից է, որն ունի հստակ մշակվածև կիրառվող ՄՍ քաղաքականություն, մասնավորապես՝ 1) բուհը մշակել է էթիկայի կանոնների և ակադեմիական ազատության/ազնվության պահպանման ուղեցույցներ ուսանողների և ՊԴ կազմի համար, 2) բուհում կիրառվում է գրագողությունը բացահայտող TURNITIN էլեկտրոնային համակարգը, 3) բուհի գրադարանի նախաձեռնությամբ մշակվել են գրադարանների համար հեղինակային իրավունքի պահպանման հիմնախնդիրների վերաբերյալ ուղեցույցներ, 4) բուհի գրադարանի նախաձեռնությամբ և միջազգային փորձագետների աջակցությամբ մշտապես անցկացվում են հանդիպում-քննարկումներ ոլորտի միջազգային փորձագետների, ՀՀ մտավոր սեփականության գործակալության հեղինակային և հարակից իրավունքների բաժնի, հրատարակիչների, ուսումնական հաստատությունների ներկայացուցիչների և այլ շահառուների հետ՝ նվիրված հեղինակային իրավունքի պահպանման և համապատասխան օրենսդրական դաշտի բարեփոխումներին առնչվող արդի հիմնախնդիրներին:

ՀՀ ՈՉ ՊԵՏԱԿԱՆ ԲՈՒՀԵՐ

10. Երևանի Մովսես Խորենացու անվան համալսարան (ԵՄԽՀ)

11. «Մխիթար Գոշ» հայ-ռուսական միջազգային համալսարան

Վերոնշյալ բուհերի գործունեության հետազոտության նպատակն է պարզել ՀՀ բուհական համակարգում ՄՍ պահպանման ինստիտուցիոնալ ռազմավարական դիրքորոշումները և ուսումնասիրել այդ դիրքորոշմամբ թելադրվող քաղաքականությունն ու համապատասխան կանոնակարգերը:

Վերոնշյալ ՀՀ բուհերի ընտրությունը և ՄՍ պահպանման ռազմավարական տեսանկյունից դրանց գործունեության թիրախային ուսումնասիրությունը հիմնվում են հետևյալ առանցքային դրույթների վրա.

- ✓ նշված ՀՀ բուհերը պատրաստում և վերապատրաստում են երկրի տնտեսական գերակա ճյուղերի և ռազմավարական առաջնահերթություն ունեցող ոլորտների (տնտեսագիտություն, բժշկություն, մանկավարժություն, տեղեկատվական տեխնոլոգիաներ, գյուղատնտեսություն, իրավագիտություն, կառավարում և այլն) մասնագետներ.
- ✓ նշված բուհերն ապահովում են ազգային մակարդակում ՊԴ կազմի և ուսումնառողների թվի մեծամասնությունը՝ առաջնորդվելով շուկայի մի շարք գերակա ոլորտների ուղղությամբ մասնագետների պատրաստման սեփական կանոնադրական գործունեությամբ ու առաքելությամբ և համապատասխանաբար գերակա ոլորտներում մասնագիտության կրթական ծրագրերի իրականացմամբ:
- ✓ նշված ՀՀ բուհերն անցել են ազգային ինստիտուցիոնալ հավատարմագրում վերջին 6 տարվա ընթացքում [ՀՀ բուհերի հավատարմագրման մասին ՀՀ կառավարության 30 հունիսի 2011 թվականի N 978-Ն որոշում]՝ այդպիսով հավաստելով իրենց ընդհանուր գործունեության համապատասխանեցումը (բավարար, մասնակի կամ լիարժեք չափով) Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն հիմնադրամի (ՈԱԱԿ) կողմից առաջադրված չափանիշներին ու չափորոշիչներին.
- ✓ ուսումնասիրվող բուհերի շրջանակում ընդգրկվել են և՛ պետական (ներառյալ մարզային), և՛ ոչ պետական բուհեր՝ ազգային բուհական մակարդակում քննարկվող խնդիրները համակողմանի դիտարկելու նկատառումով:

Վերոնշյալ ՀՀ բուհերի ՄՍ պահպանման քաղաքականություններն ու ռազմավարական մոտեցումները համալիր և համապարփակ դիտարկելու նկատառումով մանրամասն ուսումնասիրության են ենթարկվել նշված բուհերի ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծական զեկույցները (այսուհետ՝ ինքնավերլուծական զեկույց), որոնք բուհերը մշակել են ենթակառուցվածքային հավատարմագրման ընթացքում: Ինքնավերլուծական զեկույցների ձևաչափը մշակվել է ՈԱԱԿ-ի կողմից և ներառում է 10 չափանիշ համապատասխան չափորոշիչներով (բացառությամբ ՀԱՀ-ի, որը՝ որպես միջպետական բուհ, հավատարմագրվել է ԱՄՆ հանրային և մասնավոր համալսարաններին հավատարմագրում շնորհող գործակալության (WSCUC) կողմից առաջադրված պահանջներով ու չափանիշներով): ՈԱԱԿ-ի կողմից ներկայացված չափանիշներից 3-րդը, որը նախատեսված է ՄԿԾ-ների վերլուծության համար, ներառում է նաև բուհերի քաղաքականության մաս կազմող ակադեմիական ազնվությանն առնչվող չափորոշիչ: Ըստ այդ չափորոշչի պահանջի՝ *«բուհը պետք է փաստի, որ ունի ուսանողների գնահատման քաղաքականություն՝ ըստ ուսումնառության արդյունքների, և ապահովում է ակադեմիական ազնվությունը»*: Նշված չափորոշչի համաձայն՝ բուհից ակնկալվում է նաև վերլուծել ՄԿԾ-ների շրջանակում ուսանողների գնահատման և գրագողության դեմ պայքարի համար նախատեսված մոտեցումների արդյունավետությունը: Գրագողության դեմ պայքարն ըստ էության ակադեմիական ազնվության պահպանման և ավելի լայն առումով ՄՍ պահպանման ոլորտի առանցքային բաղադրիչներից է ու ՄՍ կրթության կազմակերպման կարևոր նախադրյալներից մեկը:

Այսպիսով, հաշվի առնելով նշված ՀՀ բուհերի ինքնավերլուծական զեկույցների 3-րդ չափանիշի շրջանակում երեք ՄԿԾ-ների վերլուծության պարտադիր պահանջը՝ ակադեմիական ազնվության և գրագողության դեմ պայքարին ուղղված դիրքորոշումները ներկայացվում են ՀՀ բուհերի կողմից նշված 3 ՄԿԾ-ների իրականացման շրջանակում, որոնք բխում են բուհերի ռազմավարություններից: Ստորև ներկայացվում են վերոհիշյալ 11 բուհերի ինքնավերլուծական զեկույցների և առնչվող գործընթացների ուսումնասիրության և վերլուծության առանցքային ընդհանրացված արդյունքները:

➢ **<u>ՄՍ իրավունքի պահպանման քաղաքականությունն արտացոլող ներքին կանոնակարգեր (հայեցակարգեր, ուսումնամեթոդական փաթեթներ, ուղեցույցներ, առարկայական նկարագրեր/ծրագրեր)</u>:** Ուսումնամեթոդական փաթեթներում, ուսանողների և ՊԴ կազմերի համար նախատեսված ուղեցույցներում, առարկայական նկարագրերում կամ ծրագրերում ակադեմիական ազնվության պահպանման վերաբերյալ դրույթների ներառումը կարևոր է ոչ միայն ՄՍ պահպանման նկատմամբ բուհի որդեգրած քաղաքականությունն իրականացնելու, ամբողջական և հիմնովին դարձնելու, այլ նաև ուսանողների և ՊԴ կազմի իրազեկվածության համապատասխան մակարդակի ապահովման, մտավոր գործունեության արդյունքների ստեղծման խթանման ու դրանց պաշտպանվածության, ուսանողների ինքնակազմակերպման ու ակադեմիական օրինակելի կայուն վարքագիծ ձևավորելու համար ֆորմալ հիմքեր ստեղծելու տեսանկյուններից: Հետազոտության ենթարկված որոշ բուհերում (ԳՊՀ, ՀԱՀ) վերոնշյալ փաստաթղթերից բացի առկա են ակադեմիական ազնվությանն առնչվող հայեցակարգեր, էթիկայի կանոնների պահպանման կոդեքսներ ուսանողների համար, ՊԴ կազմի վարքագծի կանոնակարգ և այլն, իսկ քննական գործընթացների մշտադիտարկումն ու վերահսկողությունը բուհերն ապահովում են տեսաձայնագրության, քննությունների արդյունքների բողոքարկման ֆորմալ ձևերով ու ընթացակարգերով: Նշված ՀՀ բուհերից 6-ի[14] կանոնադրություններում առկա են ՄՍ պահպանման վերաբերյալ դրույթներ, իսկ ՄՍ իրավունքի վերաբերյալ հստակ ձևակերպված դրույթ չունեցող մյուս բուհերի կանոնադրություններում[15] առկա են ՄՍ պահպանման այլ տարրեր, որոնցից են ՊԴ կազմի, գիտաշխատողների և ուսումնառողների ակադեմիական ազատությունները, ուսումնական, կրթական և գիտահետազոտական գործունեության խրախուսումը, գիտաարտադրական և գիտահետազոտական աշխատանքների իրականացումը, գիտական հետազոտության ակադեմիական ազատության իրավունքը, բուհի գործունեության արդյունք համարվող մտավոր և ստեղծագործական աշխատանքների պատկանելը բուհին, բուհի՝

[14] ՀՊՄՀ, ԵՊԲՀ, ԵՊՀ, ԵՊԼՀ, ԳՊՀ, ՀԱՀ

[15] «Մխիթար Գոշ» հայ-ռուսական միջազգային համալսարանի կանոնադրության համապատասխան դրույթներն ու տվյալները հասանելի են եղել միայն համալսարանի ինքնավերլուծական զեկույցի միջոցով:

անձնական ոչ գույքային իրավունքների ձեռքբերման իրավունքը և արդյունքների առևտրայնացումը:

Թեև ուսումնասիրության ենթարկված ոչ բոլոր բուհերն են ՄՍ պահպանման ինստիտուցիոնալ մոտեցումները «ռազմավարացրել», հստակեցրել կամ ընթացակարգային գործընթացների մաս դարձրել, այնուամենայնիվ, ՄԿԾ-ների առարկայական նկարագրերում դրանք մեծմասամբ արտացոլված են:

Հաշվի առնելով ՄՍ իրավունքի և ակադեմիական ազատությունների՝ ներառյալ ակադեմիական ազնվության պահպանման հիմնախնդրի համընդհանուր բնույթը՝ բուհերի ինստիտուցիոնալ մոտեցումները վերաբերում են ոչ միայն ուսումնառողներին. ՊԴ կազմին առաջադրվող պահանջները հիմնականում արտացոլվում են ՄԿԾ-ների կազմակերպման և իրականացման շրջանակում, որտեղ դասավանդողի կողմից անհրաժեշտ մասնագիտական գրականության ու խորհրդատվության տրամադրումը և ուսումնառողների ակադեմիական գործունեության վերահսկողությունն ակադեմիական ազնվության պահպանման բաղադրիչ են կազմում, իսկ ՊԴ կազմի ակադեմիական ազատության վերաբերյալ դրույթները ներկայացվում են բուհերի կանոնադրություններում, դասախոսի և բուհի միջև կնքվող պայմանագրերում, ՊԴ կազմի վարքագծի կանոնակարգերում և նրանց դասավանդման և գիտահետազոտական գործունեության շրջանակներում տրվող ակադեմիական ազատություններին առնչվող ներքին այլ կանոնակարգերում: Ընդհանուր առմամբ, կարելի է փաստել, որ ՄՍ պահպանման և առնչվող խնդիրների լուծման ինստիտուցիոնալ մոտեցումները հիմնականում սահմանափակվում են բուհերի կանոնադրություններում նշված հակիրճ ձևակերպումներով և խնդրի ռազմավարացման տեսանկյունից հատվածական բնույթ են կրում:

- **<u>Ուսանողների գիտելիքների գնահատումը՝ որպես ակադեմիական ազնվության պահպանումն արտացոլող ռազմավարություն</u>:** Նշված բուհերում ուսանողների գնահատումն իրականացվում է բուհերի ներքին քաղաքականությունների հիման վրա, որոնք արտացոլվում են կրեդիտային համակարգի հիման վրա ուսանողների գիտելիքների ստուգման, գնահատման ու բողոքարկման ներքին կարգերում, գնահատման մշակված չափանիշներում ու չափորոշիչներում, ուսանողների

գիտելիքների ընթացիկ, միջանկյալ և ամփոփիչ ստուգումներում կամ քննություններում, դասալսումներում և դրանց անցկացմանն առնչվող կարգերում, պետական քննական հանձնաժողովների նախագահների հաշվետվություններում, գիտելիքների ստուգման և գնահատման էլեկտրոնային համակարգերի միջոցով անցկացվող թեստավորումներում (օրինակ՝ ԳՊՀ-ում կիրառվող «Examination GSU» համակարգը), ամբիոնների և ֆակուլտետների նիստերի քննարկումներում, ՄԿԾ-ների գնահատումն իրականացնող ստուգարքներում և մոդուլային աշխատանքներում, ուսանողների անհատական աշխատանքների (ռեֆերատներ, կուրսային աշխատանքներ, մագիստրոսական թեզեր, ատենախոսություններ), պրակտիկայի, պրակտիկումների գնահատման չափանիշներում, կրթական ծրագրերի մասնագրերում, առարկայական ծրագրերի կամ նկարագրերի համապատասխան բաղադրիչներում, բուհերի շրջանավարտների ամփոփիչ պետական որակավորման մասին դրույթներում, ընթացիկ և եզրափակիչ քննությունների ժամանակացույցերում և իրականացման ընթացակարգերում, քննությունների վերահանձնման ընթացակարգերում և համապատասխան ժամանակացույցերում, ավարտական ատեստավորման կարգերում ու գնահատման չափանիշներում, ՄԿԾ-ների վերջնարդյունքների գնահատման մեթոդական ուղեցույցներում և ուսանողների գիտելիքների հսկման և գնահատման ռեյթինգային համակարգում (օրինակ՝ ՀԱՊՀ-ում), ուսանողների գիտելիքների գնահատման սկզբունքներին և անհատական աշխատանքների պատրաստմանն ու պաշտպանությանը և քննությունների բողոքարկման կարգին առնչվող մեթոդական ձեռնարկներում: Ինչպես բուհերը նշել են ինքնավերլուծական զեկույցներում, նշված բոլոր հիմնական կարգերն ու գործընթացները գործում և իրականանում են Բոլոնիայի սկզբունքների հիման վրա, թեև այդ գործընթացների իրականացման արդյունավետությունը ոչ բոլոր դեպքերում է գնահատված: Բուհերը հավաստում են, որ նման բաղադրիչների՝ որպես ուսումնական գործընթացի կազմակերպման, վերահսկման և որակի կառավարման պարտադիր հենքային բաղադրիչների կիրառումը նպաստում է ուսանողների գիտելիքների գնահատման անաչառության ու ակադեմիական ազնվության պահպանմանը և հաշվետվողականության ապահովմանը:

Այս պահանջների բավարարման շարունակականությունն ապահովելու և ուսանողների գնահատման համակարգում առկա խնդիրներին արդյունավետ լուծում տալու համար բուհերում պարբերաբար կազմակերպվում են քննարկումներ, ֆոկուս խմբեր, ուսանողների գնահատականների մակարդակով առաջադիմության վիճակագրություններ (ԵՄԽՀ), իրականացվում են հարցումներ հիմնական շահակիցների շրջանում՝ բացահայտելու առկա թերությունները և ուսանողների գնահատման գործող կարգերի արդյունավետության մակարդակը: Քննարկումների և հարցումների արդյունքները, ինչպես նաև ինստիտուցիոնալ հավատարմագրման փորձագիտական խմբի կողմից ներկայացված խորհրդատվությունները նույնպես հիմք են հանդիսացել բուհերի գնահատման ներքին համակարգերի վերանայման և բարելավման համար, թեպետ համակարգերի բարեփոխման գործընթացներում բուհերի մեծամասնության կողմից հատուկ շեշտադրում չի կատարվում ակադեմիական ազնվության պահպանման հիմնախնդրի լուծման առավել արդյունավետ ձևերի մշակման ու կիրառման վրա:

Սույն հետազոտության շրջանակում կատարված հետազոտության արդյունքների համաձայն՝ ուսումնասիրված բուհերը մշակել և կիրառում են ուսանողների գիտելիքների գնահատման բազմագործոնային համակարգ, որը ներառում է գնահատման մի քանի բաղադրիչներ (մասնակցություն, ակտիվություն, գործնական աշխատանքներ, արտալսարանային առաջադրանքների կատարում, առաջադրանքների կատարման ընթացիկ, միջանկյալ և ամփոփիչ ստուգումներ ու գնահատումներ և այլն): Ընդհանուր առմամբ, հետազոտության ենթարկված բուհերում ուսանողների գիտելիքների ստուգման կառուցակարգերի բովանդակությունը բուհից բուհ էապես չի տարբերվում, և այդ կառուցակարգերի շարունակական բարելավումը միտված է նաև ակադեմիական ազնվության պահպանման բաղադրիչի և ուսանողակենտրոն ուսուցման ամրապնդմանը: Տվյալ բուհերի ինքնավերլուծական զեկույցների համաձայն՝ ուսանողների գիտելիքների ստուգման ձևերի ընտրության հարցում ամբիոններին տրված է ինքնավարություն, որը ենթադրում է ելքային արդյունքների վրա հիմնված գնահատում՝ ըստ դասավանդվող առարկաների կամ մոդուլների առանձնահատկությունների և ուսանողների գիտելիքների ստուգման

եղանակների ընտրություն: Գիտելիքների ստուգման եղանակների ընտրությունը հիմնավորվում է դասավանդողների կողմից և քննարկվում ամբիոնի նիստերում: Բացի այդ, ստուգումների և քննությունների իրականացման աշխատանքներին մասնակցություն է ունենում որակի վերահսկման հանձնախումբը քննական արդյունքների անաչառությունն ու օբյեկտիվությունն ապահովելու նպատակով: Սակայն այս պարագայում նշված խնդրին կարելի է դիտարկել երկու ընդհանուր հակասական դիտանկյունից. մի կողմից բուհերը քննական արդյունքների անաչառության ապահովումը հնարավոր են դարձնում վերահսկողության միջոցով, իսկ մյուս կողմից՝ վերահսկողության գործառույթը վերապահված է բուհերի որակի ապահովման պատասխանատուներին, որն ավելի շատ որակի կառավարման ավանդական մոտեցմանն է համապատասխանում, քան որակի բարելավման մշակույթի մոտեցմանը: Սա նաև ենթադրում է, որ ակադեմիական ազնվության պահպանումը, ինչպես և գիտելիքների ձեռքբերման ու գիտահետազոտական աշխատանքների իրականացման անաչառ մոտեցման կիրառումը, դեռևս բավարար չափով չի մշակութայնացվել և որպես ակադեմիական մշակույթի անբաժանելի տարր՝ չի արմատավորվել ՀՀ բուհերում: Այդ իսկ պատճառով ակադեմիական ազնվության պահպանումը, որը ՄՍ կրթության արդյունավետ կազմակերպման ու իրականցման տարրերից մեկն է միայն, դեռևս ուսումնառողների լայն շերտերում վերահսկման կարիք ունի:

Այսպիսով, նշված բուհերի ինքնավերլուծական զեկույցների և առանձնապես 3-րդ չափանիշի պահանջին ներկայացված բովանդակության վերլուծությունը ցույց է տալիս, որ ուսումնասիրված 11 բուհերում ուսանողների գնահատման բուհական մոտեցումներն ու քաղաքականությունները խթանում են բուհերում ակադեմիական ազնվության պահպանման խնդրի կարգավորմանը, սակայն ուսումնական գործընթացներում խնդրի կարգավորման գործնական լուծումները լիովին ապահովված չեն: Ըստ ուսումնասիրված բոլոր ինքնավերլուծական զեկույցների՝ բուհերն ընդունում են այն փաստը, որ ուսանողների գնահատման ներքին համակարգերում առկա են որոշակի բացթողումներ ու խնդիրներ, որոնցից են ուսումնառության վերջնարդյունքների վրա հիմնված գնահատման

արդյունավետության ոչ բարձր մակարդակը, գիտելիքների ստուգման ու գնահատման չափանիշների ոչ լիարժեք փոխկապակցվածությունը ուսումնառության վերջնարդյունքների հետ, գրագողության կանխարգելման ոչ հստակ, հատվածական կամ առհասարակ չմշակված մեխանիզմները, դասավանդում-ուսումնառություն-գնահատում հիմնաբաղադրիչների միջև թույլ կապը, եվրոպական առաջավոր կրթափորձի հետ ոչ միշտ համադրելի գործիքների ու մեխանիզմների կիրառումը, ՊԴ կազմի և ուսումնառողների ոչ լիարժեք ակադեմիական ազատությունը և այլն: Այս համընդհանուր բուհական հիմնախնդիրների թեև ոչ համակարգային, սակայն փաստացիորեն կատարվող ռազմավարական բարելավման քայլերից են ՀՀ բուհերի կողմից ուսումնամեթոդական փաթեթների, ուղեցույցների ու առարկայական նկարագրերի կամ ծրագրերի վերամշակումներն ու պարբերական վերանայումները:

- **<u>Գրագողության կանխարգելման խոչընդոտներ և հաղթահարման մարտավարություններ</u>:** Գրագողությունը կանխարգելող մարտավարությունները կամ մեխանիզմներն ուսումնասիրված ինքնավերլուծական զեկույցներում հիմնականում համընդհանուր բնույթ ունեն, որը ենթադրում է նաև, որ ոչ բոլոր բուհերում է խնդիրն ինստիտուցիոնալացվում և դիտվում որպես հրատապ խնդիր: Հետազոտության արդյունքները ցույց են տալիս, որ կան գրագողության դեմ պայքարի մի շարք համընդհանուր մեխանիզմներ, որոնք նշված 11 բուհերը կիրառում են, ինչպես նաև միանման բացթողումներ, որոնք խոչընդոտում են գրագողությունը կանխարգելող մեխանիզմների արդյունավետ կիրառումը և բուհերում ակադեմիական ազնվության բաղադրիչի լիարժեք պահպանումը: Գրագողության կանխարգելման հիմնական խոչընդոտներն ու գրագողությունը կանխարգելող բուհական մեխանիզմները, որոնք դուրս են բերվել սույն հետազոտության իրականացման համար ընտրված 11 բուհերի գործունեության և նրանց ինքնավերլուծական զեկույցների ուսումնասիրման արդյունքում, ներկայացվում են ստորև:

ԳՐԱԳՈՂՈՒԹՅԱՆ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ԽՈՉԸՆԴՈՏՆԵՐ

- Ոչ բոլոր բուհերի ռազմավարություններն են պարտադիր կերպով ենթադրում ակադեմիական ազնվության պահպանման ինստիտուցիոնալ ու համակարգային մոտեցման կիրառում, որի արդյունքում թերի են կամ բացակայում են

գրագողության դեպքերը կանխող արդյունավետ մեխանիզմները:

- Ոչ բոլոր բուհերի կամ բուհերի ոչ բոլոր առարկայական ծրագրերում (նաև ոչ միասնական ձևաչափով) են ներկայացված ակադեմիական ազնվության պահպանման պահանջները:
- Ակադեմիական ազնվության պահպանման խնդրի վերաբերյալ ուսումնառողների իրազեկվածության մակարդակն ընդհանուր առմամբ բավարար չէ գրագողության դեպքերը լիարժեք կանխելու կամ բացառելու համար:
- Բուհերի ՄԿԾ-ներում բացակայում են ՄՍ իրավունքի (հատկապես հեղինակային իրավունքի) պահպանմանն առնչվող ուսումնական և վերապատրաստական դասընթացները, եթե տվյալ կրթական ծրագրերի մասնագիտական ուղղվածությունը չի ընդգրկում իրավաբանական կամ տնտեսագիտական ոլորտը:
- Բուհերի հիմնական շահակիցների (գլխավորապես ուսումնառողների) մեծ մասը կամ հետաքրքրվածություն չի ցուցաբերում ուսանողների ձեռնարկներում, պատվո վարքականոններում, ներքին կարգուկանոններում և էթիկայի կանոններին առնչվող կանոնակարգերում առկա ակադեմիական ազնվության պահպանմանն առնչվող տեղեկատվության ձեռքբերման նկատմամբ, կամ առհասարակ տեղյակ չէ այդպիսի ներքին կանոնակարգերի առկայությունից:
- Բուհերում ՄՍ պահպանման քաղաքականությունները հատվածական կամ մասնավոր բնույթ են կրում. ՄՍ պահպանման և մասնավորապես ակադեմիական ազնվության պահպանման խնդիրը ոչ միշտ է կարգավորվում որևէ միասնական կանոնակարգի կամ ընթացակարգի միջոցով, ոչ բոլոր առարկայական ծրագրերում է արտացոլված նշված խնդիրը, բուհերը ոչ միշտ են շահագրգռված ինստիտուցիոնալ լուծում տալու ՄՍ պահպանման խնդրին:
- Ավարտական աշխատանքներին, մագիստրոսական թեզերին և այլ գիտահետազոտական բաղադրիչ պարունակող աշխատանքներին առաջադրվող պահանջները ոչ միշտ են հստակ, որի արդյունքում որոշ բուհեր չունեն խնդրի միասնական և արդյունավետ լուծում, և ձեռք բերված ուսումնառության վերջնարդյունքների գնահատումը ոչ միշտ է օբյեկտիվ իրականացվում:
- Բուհերում գործող բողոքարկման համակարգերը սակավ արդյունավետ են և

վերանայման կարիք ունեն:

- ՊԴ կազմի կողմից ՄՍ իրավունքի (մասնավորապես հեղինակային իրավունքի) պահպանմանը, գրական աղբյուրների հղման ճիշտ ձևերին և առհասարակ ակադեմիական գրագրության մաս հանդիսացող ակադեմիական ազնվության պահպանմանը վերաբերող տեղեկատվությունը հաճախ սահմանափակ է կամ ոչ լիարժեք, իսկ նշված խնդիրների լուծմանը միտված ուղղորդման տրամադրումը՝ ոչ միշտ արդյունավետ: Այս խնդիրը պայմանավորված է նաև այնպիսի գործոններով, ինչպիսիք են ուսումնառողների՝ ակադեմիական ազնվության պահպանմանն առնչվող գիտելիքների պակասը կամ ոչ բավարար մակարդակը, ՊԴ կազմի աշխատանքային ծանրաբեռնվածությունը, դասավանդման և ուսումնառության ավանդական, սակայն ոչ միշտ արդյունավետ մեթոդների կիրառումը, ՄՍ ոլորտը կարգավորող օրենսդրական դաշտին համատարած անտեղյակությունը կամ գիտելիքների ոչ բավարար մակարդակը, ակադեմիական ազնվության և ակադեմիական գրագրության վերաբերյալ դասընթացների ու վերապատրաստումների բացակայությունը կամ դրանց ոչ պարբերական կազմակերպումը, ուսուցման, գնահատման և ուսումնառության վերջնարդյունքների թույլ կապը, վերոնշյալ խոչընդոտների բացահայտմանն ու դրանց հաղթահարմանը միտված վերլուծությունների սակավությունը կամ բացակայությունը, ուսումնառողների վերլուծական-քննադատական մտքի զարգացմանը նպաստող առաջադրանքների սակավությունը և այլն:
- Ուսումնասիրված բուհերից ոչ բոլորի գրադարաններն ունեն ներքին կանոնակարգեր, որոնք հստակ արտացոլում են բուհի կողմից ձեռք բերված էլեկտրոնային և ոչ էլեկտրոնային ռեսուրսների կառավարման ձևերը (ներառյալ ներբուհական գրադարանային համակարգում տեխնիկական այնպիսի խնդիրների կարգավորումը, ինչպիսիք են ստեղծագործությունների մատչելիության ապահովումը, լսարանային պարապմունքների համար դրանց վերարտադրման ու տարածման մշակված կանոնները՝ ոլորտային օրենսդրական դրույթներին համապատասխան, ստեղծագործությունների օգտագործման ձևերի վերահսկողությունը և այլն), օրինական ճանապարհով գրականության

ձեռքբերման պահանջները, ՊԴ կազմի և ուսումնառողների կողմից բուհի միջոցներով ձեռք բերված գրականության օգտագործման պահանջները և այլ կարևոր դրույթներ:

ԳՐԱԳՈՂՈՒԹՅԱՆ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐ

- ✓ Գրագողության բացահայտման դեպքում ՄԿԾ-ների իրականացման գործընթացն ուղեկցվում է նախազգուշացումների, նկատողությունների և ակադեմիական տույժերի կիրառմամբ՝ ըստ ՄԿԾ-ներում մշակված առանձնահատկությունների և սկզբունքների: Այս ուղղությամբ ՄԿԾ-ների որակի բարելավման, գիտաուսումնական գործընթացների արդյունավետ իրականացման ու առաջընթացի ապահովման, ինչպես նաև ակադեմիական ազատությունների ուղղությամբ տարվող աշխատանքները, ըստ բուհերի ինքնավերլուծական զեկույցներից մեծամասնության, արդեն ընթացքի մեջ են:
- ✓ Ուսանողների գնահատման գործընթացում ակադեմիական ազնվությունը պահպանելու և գրագողության դեմ պայքարելու նպատակով բուհերում գրավոր քննություններն անցկացվում են կնքված հատուկ տետրերում, բոլոր լուծարքներն ընդունում են քննական հանձնաժողովները, իսկ ամփոփիչ ավարտական քննությունները տեսաձայնագրվում են: Այս գործընթացները կազմակերպվում և վերահսկվում են համապատասխան ամբիոնների ու դեկանատների կողմից:
- ✓ Գրագողության կանխարգելման գործընթացների համակարգվածությունն ու վերահսկելությունն ապահովելու նպատակով գործում են նաև ակադեմիական ազնվության հարցերով զբաղվող հանձնաժողով (ԳՊՀ), որակի վերահսկման հանձնախումբ (որպես ուսանողների գիտելիքների գնահատման գործընթացների վերահսկողության գործառույթ իրականացնող կառույց) (ՀԱԱՀ) կամ այլ պատասխանատուներ:
- ✓ Հրատարակվող բոլոր հանդեսներում ու ժողովածուներում տպագրվում են գրախոսված և խմբագրական խորհրդի կողմից երաշխավորված հոդվածներ, իսկ այլ հանդեսներում հրատարակմանը ներկայացվող հոդվածներն անցնում են փորձաքննություն (ՀՊՃՀ):
- ✓ Հետազոտությունների կատարման ընթացքը ենթակա է մշտադիտարկման

պլանով սահմանված ժամկետներում: Հետազոտությունների փորձարարական փուլում կատարվող աշխատանքները վերահսկելու նպատակով կազմվում են հանձնախմբեր՝ համապատասխան ստորաբաժանումների (ամբիոններ, գիտաուսումնական կենտրոններ, լաբորատորիաներ, գիտահետազոտական ինստիտուտներ և այլն) աշխատակիցների ներգրավմամբ:

- ✓ Գիտահետազոտական աշխատանքներում (գիտական հոդվածներ, մենագրություններ, ուսումնամեթոդական ձեռնարկներ, դասագրքեր և այլն) գրագողության դեպքերը բացառելու և սահմանված պահանջների ու աշխատանքների բովանդակային համապատասխանությունն ապահովելու նպատակով բուհերում գործում են փորձագիտական հանձնախմբեր, խմբագրական կազմեր և նման այլ մասնագիտական հանձնաժողովներ, որոնց երաշխավորմամբ տպագրվում են գիտահետազոտական աշխատանքները, և երաշխավորվում են պաշտպանությունները:
- ✓ Ակադեմիական ազնվության պահպանումը (ներառյալ գրագողության բացառումը) դիտելով որպես ուսումնակրթական գործընթացի անխափան կատարման միջոցներից մեկը, կարևորելով ՄԿԾ-ների բաղադրիչ կազմող գիտահետազոտական աշխատանքների կատարելագործման և մասնագիտական ու հետազոտական հմտությունների ամրապնդումը, ինչպես նաև նպաստելով գիտահետազոտական աշխատանքներում ուսումնառողներին ներգրավելու միջոցով նրանց պատասխանատվության բարձրացմանը՝ բոլոր բուհերը համապատասխան ամբիոնների օժանդակությամբ ուսումնառողները հնարավորություն են ընձեռում տպագրելու գիտահետազոտական հոդվածներ իրենց կողմից կատարված ուսումնասիրությունների շրջանակում:

Այսպիսով, նշված 11 բուհերի ինքնավերլուծական զեկույցների համապարփակ ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ ՄՍ իրավունքի և մասնավորապես ակադեմիական ազնվության պահպանմանն առնչվող խնդիրները սերտորեն փոխկապակցված են հատկապես բուհերի գիտահետազոտական գործունեության ոլորտի, կազմակերպական մշակույթի ֆորմալ ու ոչ ֆորմալ բաղադրիչների, ուսումնական գործընթացի ու կրթության բովանդակության որակի ապահովման,

ինչպես նաև ուսումնառողների գնահատման ու դասավանդման մեթոդների հետ: Ընդհանուր առմամբ, սույն հետազոտության շրջանակում ընդգրկված բուհերը հավաստում են, որ մասնավորապես ՄՍ ոլորտի բարեփոխման գործընթացներին մասնակից դառնալու և ինստիտուցիոնալ մակարդակում ակադեմիական ազնվության հիմնախնդիրն արդյունավետ լուծելու ուղղությամբ իրականացրել են և շարունակում են իրականացնել բարեփոխման այնպիսի ուղղակի ու անուղղակի միջոցառումներ, ինչպիսիք են՝

- ՄԿԾ-ների շրջանակներում գիտահետազոտական բաղադրիչի կարևորության շեշտադրումը և գիտահետազոտական աշխատանքների կատարելագործումը,
- ուսանողների գնահատման համակարգը որակի ապահովման եվրոպական չափորոշիչների և ուղենիշների պահանջներին համապատասխանեցնելուն ուղղված միջոցառումները,
- ուսանողների գիտելիքների ստուգման, գնահատման համակարգի և ուսումնառության ու դասավանդման մեթոդների արդիականացումն ու կատարելագործումը,
- ուսումնառության վերջնարդյունքների և դասավանդման/ուսումնառության մեթոդների միջև կապի ուժեղացումը,
- ավարտական աշխատանքներին, մագիստրոսական թեզերին և գիտահետազոտական այլ աշխատանքներին ներկայացվող պահանջների միասնականացումը և հստակեցումը,
- ընդհանուր, մասնագիտական և մասնագիտացման կրթական փուլերի համար առանձին ավարտական պահանջների, ինչպես նաև ուսումնառության արդյունքների օբյեկտիվ գնահատման համար չափանիշների և համապատասխան ընթացակարգերի գործադրումն ու շարունակական վերանայումը,
- բողոքարկման համակարգերի վերլուծությունն ու վերանայումը՝ միտված ակադեմիական անազնվության դրսևորումների բացահայտմանը, գրագողության դեպքերի վերհանմանն ու այդ խնդիրների առավել արդյունավետ ու գործնական լուծումների առաջադրմանը,

- ՊԴ կազմի վերապատրաստման և որակավորման բարձրացման ծրագրերի թիրախավորումը և արդյունավետության բարձրացումը,
- գնահատման անաչառությունն ու արդյունավետության ապահովման նպատակով համակարգչային նոր կամ գործող ծրագրերի կիրառման արդյունավետության բարձրացումը,
- ակադեմիական ազնվության պահպանմանը և բուհ-շահակից իրավահարաբերությունների կարգավորմանն ուղղված ինստիտուցիոնալ քաղաքականության ներդրումն ու գործադրումը համապատասխան ներքին կանոնակարգերի, ուղեցույցների ու էթիկայի կոդեքսների մշակմամբ ու կիրառմամբ,
- գիտահետազոտական աշխատանքների իրականացման քաղաքականության բարելավումը՝ ապահովելով ակադեմիական ազնվության պահպանման կանոններին այդ աշխատանքներում ներգրավվածների քաջատեղյակությունը և խրախուսումը,
- մասնագիտական հանձնաժողովների գործունեության վերանայումը կամ դրանց բացակայության դեպքում հանձնաժողովների ստեղծումը՝ միտված ՄՍ իրավունքի պահպանմանն առնչվող խնդիրների կանոնակարգմանն ու համակարգմանը, առնչվող ներքին կանոնակարգերի մշակմանը, վերանայմանն ու հաստատմանը,
- բուհերի առանցքային շահակիցների համար թիրախային և պարբերական դասընթացների ու վերապատրաստումների կազմակերպումը,
- առարկայական ծրագրերի վերանայումը (ներառյալ գրագողության դեմ պայքարի վերաբերյալ համապատասխան դրույթների ու ակադեմիական տույժերի մշակումը, հստակեցումը կամ վերանայումը):

Ի լրումն ազգային մակարդակում բուհերի գործունեության շրջանակում դիտարկվող որոշակի բարեփոխումներին, պետք է նշել, որ ՄՍ ոլորտի բարեփոխման, բուհերում այդ բարեփոխումների հստակ արտացոլման ու գործնական քայլերի կատարման, ինչպես նաև ՄՍ ոլորտին և բուհական կրթությանը սերտորեն փոխկապակցված խնդիրների արդյունավետ լուծման ուղղությամբ կատարվող բարեփոխիչ աշխատանքներին է միացել նաև Եվրամիության և Եվրոպայի խորհրդի՝

2015-2018 թթ. արևելյան գործընկերության երկրներում ծրագրային համագործակցության կառուցակարգի ներքո իրականացվող ծրագիրը՝ «Հայաստանի բարձրագույն կրթության համակարգում բարեվարքության ամրապնդում և կոռուպցիայի դեմ պայքար» խորագրով: Հայաստանը, միանալով նշված ծրագրի շրջանակներում 2015-2018 թթ. ժամանակահատվածում նախատեսվող բարեփոխման աշխատանքներին, դարձել է բուհերում բարեվարքության պահպանման և կոռուպցիայի դեմ պայքարին ուղղված համալիր միջոցառումների մասնակից: Ծրագրի հիմնական վերջնարդյունքներից է բարեվարքության կամ ինտեգրատիվության խթանման ռազմավարությունների մշակումն ու դրա միջոցով բուհերի առանցքային շահակիցների իրազեկության մակարդակի բարձրացումը: ՀՀ մի շարք պետական բուհերի, ինչպես նաև ՀՀ ԿԳՆ-ի համատեղ աջակցությամբ մշակվել են մի կանոնագրքեր ու ձեռնարկներ, որոնք վերամշակման ու վերանայման փուլում են գտնվում, և որոնք հիմք կհանդիսանան մինչև 2018 թ. ՀՀ բուհերի կողմից էթիկայի կանոնակարգերի մշակման համար: Այս նախաձեռնությունը ևս մեկ անգամ շեշտադրում է բուհական համակարգում ՄՍ պահպանման հիմնախնդրի առկայության, խնդրի ինստիտուցիոնալացման, ակադեմիական ազնվության պահպանման ռազմավարական ու մանկավարժագիտական մոտեցումների վերանայման և դուրս բերված խնդիրներին նոր կամ առավել արդյունավետ լուծումներ տալու անհրաժեշտությունը:

Այսպիսով, բուհական համակարգում ՄՍ պահպանման բաղկացուցիչ մաս հանդիսացող ակադեմիական ազնվության պահպանման և դրան առնչվող խնդիրները կարգավորող ինստիտուցիոնալ ռազմավարությունը համակցում է կրթական, ուսումնամեթոդական և գիտահետազոտական գործունեություն ծավալող ստորաբաժանումների (ներառյալ գիտաուսումնական և գիտահետազոտական կենտրոնների ու բուհական գրադարանների) ռազմավարությունները՝ նպաստելով գրագողության և ակադեմիական ազնվությանը սպառնացող երևույթների դեմ պայքարի համահամալսարանական մոտեցման արմատավորմանն ու բուհի արժեքային համակարգի բարելավմանը, իսկ ավելի լայն առումով՝ հեղինակային իրավունքի պահպանմանը: ՄՍ առնչվող ռազմավարությունների մշակման ազգային

(ՀՀ) և միջազգային փորձի ուսումնասիրությունները թույլ են տալիս փաստել, որ ՄՍ քաղաքականությունը պետք նպաստի բուհերում գիտական արժեքավոր արդյունքների ստեղծմանը և դրանց արդյունավետ օգտագործմամբ դրական փոփոխությունների նախաձեռնմանը՝ որպես հիմք ընդունելով ստեղծագործ մտքի խրախուսումն ու նորարարական մտքի զարգացումը, որոնք ըստ էության ՄՍ կրթության արդյունավետ կազմակերպման և իրականացման առանցքային նախադրյալներից են: Կարևոր է նաև, որ ՄՍ քաղաքականության մեջ արտացոլվեն շահառու բոլոր կողմերի պահանջներն ու շահերի համընկնումը: ՄՍ կրթության կազմակերպման և դրան ուղղված ռազմավարական արդյունավետ մոտեցումների կիրառման տեսանկյունից ՄՍ ոլորտի բարեփոխումների գործընթացներին բուհերի ակտիվ ինտեգրումն ու ինստիտուցիոնալ մակարդակում այդ բարեփոխումների նպատակային ու հետևողական տեղայնացումն էապես կխթանեն ՀՀ մասնագիտական աշխատաշուկաներում գիտելիքահենք հանրության լիարժեք ձևավորումը և ՄՍ կրթության արդյունավետ կազմակերպման միջոցով շոշափելի կդարձնեն ազգային մակարդակում մտավոր ներուժի զարգացումը:

3.2. Ակադեմիական ազնվության պահպանման հիմնախնդիրներն ու դրանց լուծման մանկավարժագիտական մոտեցումները ՀՀ բուհերում

Բարձրագույն կրթության որակի և մասնագիտական պատրաստվածության նկատմամբ կրթության ու աշխատանքի շուկաների պահանջների բազմազանեցման և աճի առկա միտումները ՀՀ բուհերին պարտադրում են այնպիսի փոփոխությունների իրականացման անհրաժեշտություն, որոնք ազդում են ոչ միայն կրթության բովանդակության, այլ նաև բուհերում ձևավորված արժեհամակարգի, նրանց շահակիցների վարքի և բարձրագույն կրթության նկատմամբ նրանց վերաբերմունքի վրա: ՀՀ բուհերին առաջադրված պահանջների բավարարումը գլխավորապես պայմանավորված է բուհերի առանցքային շահակիցներով, քանի որ վերջիններիս մասնագիտական գործունեությամբ ու ակադեմիական վարքի դրսևորումներով են ձևավորվում, արմատավորվում և փոփոխվում ինստիտուցիոնալ արժեհամակարգերը: Սակայն որքան էլ բուհական արժեհամակարգերը ձևավորող ու փոփոխող գործոնները

և բարձրագույն կրթության համակարգում առկա խնդիրները պայմանավորված լինեն ազգային ու ինստիտուցիոնալ առանձնահատկություններով, այդուհանդերձ, բարձրագույն կրթության որակի շարունակական բարելավման առկա գլոբալ միտումների համատեքստում ակադեմիական հանրությունը, ոլորտի մասնագետներն ու փորձագետները շարունակաբար մատնանշում են դրանց լուծման հրատապությունը, առաջադրում լուծման ուղիներ, որոնք, սակայն, մի շարք ՀՀ բուհերում դեռևս շարունակում են մնալ չլուծված:

ՀՀ բուհական միջավայրում ակադեմիական օրինակելի վարքի, մասնավորապես ակադեմիական ազնվության պահպանման սկզբունքայնությունն ու դրա մասնավոր օրինակելի դրսևորումների ամրապնդումն ըստ էության հիմք են հանդիսանում ուսումնառողների մտավոր գործունեության զարգացման, նրանց ստեղծագործական աշխատանքի խթանման և գիտելիքի ստեղծման ու տարածման համար, հետևապես ՀՀ բուհերը նույնպես անմասն չեն մնում այդ կրթական և ուսումնադաստիարակչական գործընթացներից: Հաշվի առնելով այն, որ ակադեմիական ազնվության պահպանմանն առնչվող հիմնախնդիրները լայնորեն տարածված են նաև ՀՀ բուհերում, և ակադեմիական ազնվության պահպանումը մտավոր սեփականության կրթության ապահովման առանցքային բաղադրիչներից է, սույն հետազոտության շրջանակում վեր են հանվում ակադեմիական ազնվության պահպանման հիմնախնդիրները, ակադեմիական անազնվության դրսևորումներն ու կանխարգելման մանկավարժագիտական մոտեցումները ՀՀ բուհերի գործունեության շրջանակում:

Մասնագիտական գրականության և կրթության ոլորտի արդի հիմնախնդիրների ուսումնասիրությունների արդյունքները ցույց են տալիս, որ տարբեր երկրների ուսումնական հաստատություններում ակադեմիական ազնվության պահպանումը խոչընդոտող խնդիրները զարգացում են ապրում վերջին քսանամյակում: Մասնավորապես տեղեկատության արագընթաց շարժն ու փոխանցումը նպաստում են ոչ միայն ակադեմիական ազնվության խախտման դրսևորումների ընդլայնմանը, այլ նաև ակադեմիական անազնվության ձևերի բազմազանեցմանը [Անտոնյան 2013: 2]: Միջազգային փորձը փաստում է, որ ակադեմիական ազնվության պահպանման հիմնահարցն արդիական է ինչպես միջազգային առաջատար բուհերում, այնպես էլ

միայն վերջին տարիներին բարձրագույն կրթության համաշխարհային զարգացումներին միայն վերջին տարիներին ինտեգրված բուհերում: Սակայն բուհերում ակադեմիական ազնվության և ավելի լայն առումով ակադեմիական ամբողջականության կամ ինտեգրատիվության պահպանման լայն տարածում ունեցող խնդիրը հատկապես խորքային է և առավել դժվար հաղթահարելի զարգացող երկրների, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության բուհերում: Սա գլխավորապես պայմանավորված է այն փաստով, որ զարգացող երկրների բուհերն ազգային մակարդակում առկա սոցիալ-տնտեսական խնդիրների անմիջական և բացասական ազդեցությունը կրելու տեսանկյունից ավելի խոցելի են: Հատկանշական է նաև, որ կրթական բարեփոխումները զգալիորեն դժվարեցնող սոցիալ-տնտեսական խնդիրները, որոնցից են, օրինակ, արտագաղթի բարձր ցուցանիշներն ու դրանով պայմանավորված դիմորդների և ուսանողների թվի նվազումը, ուղեղների արտահոսքը, բուհերի թերֆինանսավորումը, սոցիալական կտրուկ շերտավորումների արդյունքում դիմորդների և ուսանողների վճարունակության ցածր մակարդակը, ազգային մակարդակում զբաղվածության և մասնագիտական զարգացման սահմանափակ հնարավորությունները, չեն նվազեցնում բարձրագույն կրթության հանդեպ հասարակական պահանջարկը: Այդուհանդերձ, սոցիալ-տնտեսական նման խնդիրների առկայության պայմաններում կրթության և աշխատանքի շուկաների կայուն զարգացման հեռանկարների բացակայությունը կամ սակավությունը բուհերին ստիպում են նախևառաջ լուծել գոյատևմանը և ավելի լավատեսական մոտեցման դեպքում՝ մրցունակության ձեռքբերմանն առնչվող խնդիրները:

ՀՀ ներկայիս բարձրագույն կրթության համատեքստում ակադեմիական ազնվության պահպանման հիմնախնդիրներով զբաղվում են ինչպես բուհերը, այնպես էլ հետազոտական կենտրոններ, կրթության ոլորտի առաջատար մասնագետներ ու փորձագետներ: Ակադեմիական ազնվության խախտման դրսևորումների ուսումնասիրման աշխատանքների արդյունքները հետազոտողների, ոլորտի մասնագետների և առհասարակ ակադեմիական հանրության շրջանում լուրջ մտահոգություններ են առաջացրել, քանի որ ակադեմիական ազնվության պահպանումը որպես կրթության որակի բարելավման կարևոր նախապայման

դիտարկելու և այն որպես առաջնահերթություն սահմանելու հեռանկարը դեռևս մի շարք ՀՀ բուհերում չի հստակեցվել և ներբուհական որակի մշակույթի բաղադրիչ դեռևս չի դարձել: Ակադեմիական ազնվության պահպանման հիմնախնդիրների լուծման ուղղությամբ առաջադրվել են տարբեր առաջարկություններ, սակայն տեսական և գործնական հարթակների էական խզումը դեռևս բուհերի կառավարիչների և մանկավարժագիտական գործունեություն ծավալող մասնագետների համար շարունակում է մնալ որպես արդիական հիմնախնդիր:

Ազգային և արտասահմանյան բուհերի գործունեության ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ակադեմիական ազնվության դրսևորումներն էական իմաստային տարբերություններ չունեն, քանի որ դրանց հիմքում ընկած է էթիկայի համամարդկային այնպիսի սկզբունքների պահպանումը, ինչպիսիք են ազնվությունը, թափանցիկությունը, վստահությունը, հարգանքը, հավասարությունը, ճշմարտացիությունը և այլն [Սմիթ 2016]: Այդ սկզբունքների հիման վրա կենսագործունեության յուրաքանչյուր ոլորտում կամ համատեքստում մշակվում և ավելացվում են ազգային, պետական կամ հասարակության առանձնահատկություններն արտացոլող դրույթներ: Մանկավարժագիտության տեսանկյունից նույնպես այս սկզբունքների վրա են հիմնվում ուսումնական, կրթական ու դաստիարակչական բոլոր գործընթացները, և դրանք հավասարապես վերաբերում են և՛ դասավանդողներին, և՛ ուսումնառողներին: Այդ սկզբունքների վրա են հիմնվում նաև մասնագիտական կրթության որակի ապահովման ժամանակակից մոտեցումները և առաջատար բուհերի կազմակերպական մշակույթի բարելավման ուղենիշներն ու ներքին կանոնակարգերը:

Միջազգային առաջատար փորձի վրա հիմնված ժամանակակից մոտեցումների համաձայն՝ բուհերն ակադեմիական ազնվությանն առնչվող կանոնակարգեր մշակելիս պետք է հիմնվեն հետևյալ հիմնարար սկզբունքների վրա [International Association of Universities 2012]՝

- հավասարություն, արդարություն և խտրականության բացակայություն,
- հաշվետվողականություն, հրապարակայնություն և անկախություն (ինքնավարություն),

- գիտահետազոտական գործունեության էթիկայի և ակադեմիական ազնվության կանոնների պահպանում,
- քննադատական վերլուծություն և այլոց տեսակետների նկատմամբ հարգանք,
- ուսումնական հաստատության արժեքների և ռեսուրսների պահպանման նկատմամբ պատասխանատվություն և հանձնառություն,
- գիտելիքի և տեղեկության ազատ ու բաց օգտագործում,
- միջազգային գործընկերների հետ բարիդրացիական հարաբերություններ և գործընկերների հանդեպ ազնիվ վերաբերմունք:

Բուհերում ակադեմիական ազնվության պահպանման վերաբերյալ քաղաքականության (ինստիտուցիոնալ ռազմավարություն և դրանից բխող մարտավարություններ, էթիկայի մշակված կանոններ, ընթացակարգեր, ուղեցույցներ և այլն) առկայությունը կարևոր նախապայման է ակադեմիական ամբողջականությունն ապահովելու և ակադեմիական անազնվության դեպքերը կանխելու համար: Ակադեմիական ամբողջականության կամ ներառականության ապահովումը ենթադրում է, որ ակադեմիական ազնվության մշակույթը ներառում է այդ մշակույթը ձևավորող բոլոր առանցքային շահակիցներին և ձևավորվում է վերջիններիս համագործակցությամբ [Scanlan 2006: 180-183]: Կարևոր է նշել, որ մանկավարժական բազմաբնույթ գործունեության համատեքստում ակադեմիական ամբողջականությունը նաև բարձրագույն կրթության արդիականացման կարևոր սկզբունքներից է, քանի որ անձի ուսուցման, դաստիարակության և զարգացման գործընթացներն ընթանում են ամբողջական ու միասնական համակարգում՝ թելադրելով ուսումնադաստիարակչական աշխատանքների իրականացման ամբողջական մոտեցման կիրառում [Հարությունյան և Գրիգորյան 2013: 6]: Շեշտադրելով դասավանդող-ուսումնառող ներգործության և համագործակցության կառուցողական բնույթի կարևորությունն ակադեմիական ազնվության ապահովման խնդրում՝ պետք է նշել, որ ուսումնական գործընթացում ակադեմիական բարենպաստ միջավայրի և ակադեմիական ազնվության պահպանումը խրախուսող դասավանդողների դերը որոշիչ է պայմանավորված նաև դասավանդող-ուսումնառող փոխադարձ կապի անմիջականությամբ: Ակադեմիական գործունեության շրջանակում մի կողմից

ուսումնառողի՝ որպես առանցքային շահակցի ակադեմիական ազնվության պահպանման կանոններին հետևելու պարտավորության կատարումը, մյուս կողմից՝ դասավանդողի՝ որպես մանկավարժի և ուղղորդողի հանձնառությունն ակադեմիական ազնվության մշակույթը ներառական են դարձնում:

Դասավանդող-ուսումնառող փոխազդեցության ամրապնդման խնդրին բարձրագույն կրթության ոլորտի մասնագետներն ու մանկավարժներն անդրադառնում են ինչպես ուսումնառողներին, այնպես էլ դասավանդողներին առաջադրվող պահանջների կամ սկզբունքների պահպանման տեսանկյունից, որոնց համաձայն՝ ցանկացած դասավանդող պետք է [Scanlan 2006: 182]՝

- մեծ կարևորություն և նշանակություն տա ակադեմիական ազնվության պահպանման խնդրին.
- քաջալերի ուսումնառողներին, որպեսզի նրանք հանձն առնեն ակադեմիական ազնվության պահպանման պարտավորությունը.
- խրախուսի ուսման նկատմամբ ուսումնառողների հանձնառությունը.
- խթանի լսարանում փոխվստահության մթնոլորտի ստեղծումն ու ամրապնդումը.
- արդարացիորեն և անաչառորեն գնահատի ուսանողների գիտելիքները, ներուժն ու դրա դրսևորման կարողությունը.
- հնարավորինս նվազեցնի ուսանողների կողմից ակադեմիական անազնվության դրսևորման հնարավորությունները.
- ակադեմիական ազնվության խախտման դեպքում անպայման լուծում տա խնդրին:

Այլոց ՄՍ և առհասարակ մտավոր գործունեության արդյունքների նկատմամբ հարգանքի դրսևորումը դիտվում է որպես անձի ինտեգրատիվ բնութագիր, որն արտահայտվում է անձի ճանաչողության (իրավունքի ու էթիկայի նորմերի պահպանման գիտելիքներ և իմացություն) և գործունեության (իրավունքի և էթիկայի նորմերի պահպանմանն ուղղված արարքներ կամ վարք) առանձնահատկություններով [Самохвалова 2007: 77]: Նշված երկու հիմնական փոխկապակցված բաղադրիչների հավասարակշռման արդյունքում բարձրանում է ուսումնառողների՝ անաչառությանը և ակադեմիական ազնվության ապահովմանը նպաստող բարենպաստ միջավայր ստեղծելու պատասխանատվությունը: Ուսումնառողների ակադեմիական

գործունեության տեսանկյունից հարկ է նշել, որ ակադեմիական ազնվության պահպանման վրա միջավայրի ազդեցությունը պայմանավորված է մի շարք հանգամանքներով, մասնավորապես [McCabe & Trevino 1997]՝

- որքանով է ակադեմիական ազնվությանն առնչվող կանոնակարգը կամ ուղեցույցը տվյալ բուհի կազմակերպական մշակույթի մաս կազմում,
- որքան խիստ են ակադեմիական ազնվության պահպանման կանոններն ու դրանց խախտման դեպքում կիրառվող պատժամիջոցները,
- որքանով է բուհի աշխատակազմը խրախուսում և աջակցում ուսումնառողներին,
- ինչպիսի ակադեմիական միջավայրում են ընթանում ուսումնառության գործընթացները (փոխադարձ վստահության, անաչառության, մրցունակության աստիճանը, ուսանողակենտրոն մոտեցման կիրառման արդյունավետությունը և այլն),
- ինչպես են դասավանդողներն արձագանքում ակադեմիական անազնվության դեպքերին,
- ինչպես են համակուրսեցիները վերաբերվում ակադեմիական ազնվության կանոնները խախտող ուսումնառողին (օրինակ՝ գրագողություն կատարող ուսանողին),
- արդյոք ուսումնառողները իրենց համարում են տվյալ բուհի ակադեմիական հանրության լիարժեք անդամ և կրում են արդյոք այդ հանրությանն առաջադրված կանոնների պահպանման պատասխանատվությունը,
- արդյոք դասընթացներն անցկացվում են մեծ լսարանային պայմաններում և համապատասխան վերահսողության ներքո և այլն:

Բուհերում ակադեմիական անազնվության բարձր ցուցանիշների հիմքում ընկած ամենաընդհանուր պատճառներից են ուսումնառողների՝ ցածր գնահատական չստանալու և բարձր առաջադիմություն ցուցաբերելու ձգտումը և ծնողների, դասավանդողների ու համակուրսեցիների կողմից ճնշված լինելու վախը [Crown & Spiller 1998, McCabe & Trevino 2002]: Ի լրումն վերոնշյալ գործոնների, ՀՀ բուհերում առկա են նաև երբեմն ոչ ակնհայտ և խորքային պատճառներ, որոնք ըստ էության դժվարեցնում են բուհերում ակադեմիական անազնվության դեպքերը կանխելուն

ուղղված գործողությունների իրականացումը: Մասնավորապես, հաշվի առնելով այն փաստը, որ ՀՀ բուհերի բյուջեի մեծ մասը գոյանում է ուսման վարձերից, ուսանողների թվի ապահովումը դառնում է բուհերի առաջնային խնդիրներից մեկը: Հետևաբար, ՀՀ բուհերը երբեմն հակված են ուսման վարձ վճարող ուսանողների նկատմամբ ինարավորինս մեղմացնել պատժամիջոցների կիրառումը՝ կանխելով կամ նվազեցնելով ուսանողների բուհից դուրս մնալու հավանականությունը [Միլովանովիչ 2015: 139-141]: Ուրեմն, բուհերի պետական ֆինանսավորման ցածր մակարդակը և առհասարակ ներբուհական ֆինանսական կառավարման մեխանիզմներն ու ոչ կայուն ֆինանսական ներհոսքերը նույնպես էական ազդեցություն ունեն բուհերում ակադեմիական ազնվության պահպանման և դրան առնչվող որոշումների կայացման վրա, թեև այդ գործոնների բացասական ազդեցությունը ոչ միշտ է անմիջապես ակնհայտ դառնում:

Ակադեմիական ազնվության պահպանումը և դրա խախտման դրսևորումները բուհական միջավայրում որոշակիացնելու նպատակով հարկ է առանձնացնել նաև մի քանի հիմնական հասկացություններ, որոնք բնորոշ են բոլոր բուհերի ակադեմիական և գիտահետազոտական գործունեություն ծավալող շահակիցների գործունեությանը: Կրթության համատեքստում *ակադեմիական ազնվությունը* լայն իմաստով կարելի է սահմանել որպես մի շարք այնպիսի սկզբունքների համալիր, որոնցից են էթիկայի համամարդկային արժեքների պահպանումն ու էթիկայի նորմերի կիրառումը, ազնիվ ձևով գիտական գիտելիքի ձեռքբերումը, օգտագործումն ու տարածումը, ակադեմիական բարենպաստ միջավայր ստեղծող և ակադեմիական ազատությունը խթանող վարքի դրսևորումն ու պահպանումն ուսումնական հաստատությունների հիմնական շահակիցների կողմից [Սմիթ 2016]: Ակադեմիական ազնվությունը նեղ իմաստով վարչարարության հիմնարար սկզբունքներից է, որը ենթադրում է կազմակերպությունների գործունեության շրջանակում ընդունված արժեքների, սկզբունքների ու նորմերի պահպանում և շարունակական կիրառում՝ դրանք հանրությանը լավագույնս ծառայեցնելու և հանրային շահերը պաշտպանելու համար: Ակադեմիական ազնվությունը հանրությանը որակյալ ու մատչելի կրթություն ապահովելն է, իսկ անհատի մակարդակով՝ ակադեմիական և էթիկայի նորմերի

պահանջները բավարարելու պատրաստակամությունը [Միլովանովիչ 2015: 26]: Ընդհանուր առմամբ, ակադեմիական ազնվությունը դիտվում է որպես նաև ուսումնական հաստատության առանցքային շահակիցների այնպիսի վարքի դրսևորում, որը դրական է ազդում կրթության համակարգի ու ակադեմիական միջավայրի արդյունավետության վրա և բարձրացնում է կրթության և ուսումնական հաստատության հանդեպ հանրային վստահությունը: Մասնավորապես արևմտյան երկրների բուհերում ակադեմիական ազնվության խախտման և առնչվող երևույթների ուսումնասիրություններից դուրս բերված ամենաշատ կիրառվող հասկացություններից են *խարդախությունը (cheating behavior), ակադեմիական անբարեխիղճ վարքը (academic misconduct), գրագողությունը (plagiarism)* [Անտոնյան 2013: 2-7], *ակադեմիական ամբողջականության կամ ինտեգրատիվության (academic integrity) խախտումը* և այլն: Բարձրագույն կրթության համակարգում անազնվության հիմնական ձևերի կամ դրսևորումների շարքում դասվում են կոռուպցիան, կեղծ դիպլոմներ տալը, կրթության ոլորտի քաղաքականացված լինելը, գրագողությունը և ակադեմիական անազնվության այլ մասնավոր դեպքեր:

Թեև միջազգային համատեքստում ակադեմիական անազնվությունը տարբեր կերպ է սահմանվում, և դրա դրսևորումները՝ պայմանավորված կրթության ազգային համակարգերի ու հանրության ընկալումների առանձնահատկություններով, նույնպես տարբեր են, այդուամենայնիվ, այդ սահմանումներն ու դրսևորումներն ունեն համընդհանուր բնույթ և միևնույն հասկացական հենքը: Հետևապես, ակադեմիական ազնվության պահպանման հիմնախնդիրը կարող է հավասարապես վերագրվել նաև ՀՀ բուհերի ուսումնական, կրթական ու գիտահետազոտական գործունեությանը:

Ակադեմիական ազնվությունը՝ որպես մտավոր սեփականության կրթության կազմակերպման ու կրթության որակի ապահովման կարևոր նախապայման, ինչպես նաև ակադեմիական մշակույթի անքակտելի բաղադրիչ, ներառում է ֆորմալ և ոչ ֆորմալ տարրեր: Ակադեմիական ազնվության ֆորմալ տարրերը բուհական համակարգում դրսևորվում են ՄՍ պահպանմանը (հատկապես հեղինակային իրավունքի պահպանմանը), ակադեմիական ազատությանն ու ազնվությանն առնչվող քաղաքականության որդեգրմամբ, դրանից բխող՝ ինստիտուցիոնալ մակարդակում

կիրառվող կանոնակարգերի, ռազմավարությունների և ընթացակարգերի առկայությամբ [Անտոնյան 2013: 6], ինչպես նաև ակադեմիական անազնվության դեպքերի կանխարգելման մեխանիզմների (ներառյալ պատժամիջոցների) արդյունավետ կիրառմամբ: Ֆորմալ տարրեր պարունակող ակադեմիական մշակույթի ամրապնդման ու բարելավման պարտադիր նախապայման է բարձրագույն կրթության ոլորտի ուղղակի և անուղղակի շահակիցների իրավահարաբերությունների հավասարակշռության ու համագործակցության ապահովումը: Ակադեմիական ազնվության ոչ ֆորմալ տարրեր կամ դրսևորումներ կարող են լինել, օրինակ, բուհերի ներքին շահակիցների, մասնավորապես դասախոսների, գիտաշխատողների և ուսումնառողների պատշաճ պատկերացումներն ակադեմիական ազնվության ու դրա դրսևորումների վերաբերյալ, հեղինակային իրավունքին առնչվող օրենսդրական դաշտի վերաբերյալ նրանց իրազեկվածության բավարար կամ բարձր մակարդակը, ոչ ֆորմալ կամ լրացուցիչ դասընթացներին ու վերապատրաստումներին ուսումնառողների և դասավանդողների շարունակական մասնակցությունը և այլն: Ընդհանուր առմամբ, ակադեմիական ազնվությունն արտացոլում է և՛ ազգային կարգավորման մեխանիզմները (օրինակ՝ օրենսդրությունն ու համապատասխան օրենսդրական դրույթները), և՛ ուսումնական հաստատությունների արժեքներն ու նորմերը, որոնք կիրառվում են բուհերի դասախոսների և ուսումնառողների կողմից այս կամ այն վարքի դրսևորման ժամանակ [Անտոնյան 2013: 6]: Ակադեմիական ազնվության ֆորմալացումն ավելի վերահսկելի է դարձնում բուհական միջավայրում ակադեմիական անազնվության դեպքերի բացահայտումը և էապես նվազեցնում է գրագողության խնդրին կամայական կամ մասնավոր լուծում տալու հավանականությունը: Ֆորմալացումը ենթադրում է բուհի կողմից մշակված ու առանցքային շահակիցների կողմից ընդունված հստակ քաղաքականության և դրանից բխող այնպիսի կանոնակարգերի ու ընթացակարգերի առկայություն, որոնց կիրառումը պարտադիր է բուհի վարչական ու պրոֆեսորադասախոսական կազմի և ուսումնառողների համար [Самохвалова 2007: 72]: Միևնույն ժամանակ սա չի ենթադրում, որ բուհերի կողմից հստակ մշակված քաղաքականությունն ու ռազմավարությունների առկայությունը բոլոր դեպքերում և լիարժեքորեն ապահովում է

նաև դրանց արդյունավետ կիրառումը գործնական դաշտում: Ավելին, չձևակերպված արժեքները, որոնք խորապես ամրապնդվել են տվյալ կազմակերպական մշակույթում, կարող են երբեմն ավելի ուժեղ ազդեցություն ունենալ բուհերի շահակիցների վարքի ու գործունեության վրա, քան հստակ ամրագրված ու հռչակված արժեքները [Խաչատրյան և ուրիշներ 2015: 438]: Այդուհանդերձ, ակադեմիական ազնվության պահպանման մշակույթի ֆորմալացումն էապես կարող է ազդել ակադեմիական ազնվության պահպանման ոչ ֆորմալ տարրերի ձևավորման վրա՝ այդ գործընթացի մշակութայնացման վաղ փուլում նախ պարտադրելով ակադեմիական որոշակի վարքի կանոնների պահպանում բուհի ներքին շահակիցների կողմից, իսկ այնուհետև կայունացնելով և զարգացնելով այդ մշակույթով պայմանավորված արժեհամակարգը:

ՀՀ բուհերի գործունեության շրջանակում ակադեմիական անազնվությանն առնչվող ուսումնասիրություններ կատարած մասնագետների մի խումբ գտնում է, որ ակադեմիական ազնվության պահպանման կանոնների կամ սկզբունքների եզակի խախտումները չպետք է որակել որպես ինստիտուցիոնալ խնդիր, քանի որ ակադեմիական ազնվության խախտումը հատկորոշվում է վերջինիս համակարգային ու պարբերական բնույթով [Միլովանովիչ 2015: 28]: Այս դիրքորոշումը թերևս հիմնավորվում է նաև ակադեմիական ազնվության խախտումների բացասական ազդեցության լայն շրջանակով, այսինքն՝ խախտումը դառնում է էական, եթե այն զգալի ազդեցություն ունի բարձրագույն կրթության համակարգի հիմնական շահակիցների վրա: Սա ևս մեկ անգամ փաստում է ակադեմիական ազնվության՝ ակադեմիական մշակույթի և կրթության որակի համակարգի բաղկացուցիչ տարր հանդիսանալու հանգամանքն ու ներառական բնույթը: Սակայն մյուս կողմից, հատկապես ուսումնառողների շրջանում ակադեմիական անպատշաճ վարքի անհատական դրսևորումների անտեսումը խնդրի զարգացման, այլ ուսումնառողներին այդ շրջանակում ընդգրկելու և ակադեմիական անազնվության դեպքերի մասսայականացման միտում կարող է առաջացնել՝ վտանգելով կրթության որակը և ուսումնառության գործընթացի արդյունավետությունը: Ավելին, մանկավարժական ավանդական և ժամանակակից մոտեցումները պահանջում են անձի մտավոր զարգացման ու դաստիարակության գործընթացներում առաջացող խնդիրներին

անհատական մոտեցման ցուցաբերում, որը մի կողմից կամրապնդի ուսումնառողի մասնագիտական կարողությունները զարգացնելու ներունակությունը, մյուս կողմից կխթանի անձի գիտական աշխարհայացքի և մասնագիտական դիրքորոշումների ձևավորման ու զարգացման ճիշտ ընթացքը:

ՀՀ բուհերում ակադեմիական ազնվության պահպանման հիմնախնդիրները և դրանց վերաբերյալ ակադեմիական հանրության պատշաճ ընկալումների ձևավորումը հաճախ են ուսումնասիրության ենթարկվել ազգային ակադեմիական հանրության ու ոլորտի մասնագետների կողմից: ՀՀ-ում ակադեմիական ազնվության դրսևորումները խոչընդոտող դրդապատճառները տարաբնույթ են և հիմնականում արմատացած: Ակադեմիական ազնվության խախտմանն առնչվող խնդիրների արդյունավետ գործնական քայլերի կիրառման անհրաժեշտությունը հատկապես ակներև դարձավ Բոլոնիայի գործընթացին ՀՀ-ի ինտեգրմամբ (2005 թ.), որով սկիզբ դրվեց ՀՀ-ում բարձրագույն կրթության կառուցվածքային բարեփոխումների շրջադարձային փուլի [արձրագույն կրթության ռազմավարական հետազոտությունների ազգային կենտրոն 2012: 32-33]: Բոլոնիայի գործընթացին ՀՀ անդամակցությամբ պայմանավորված բարեփոխումների շրջադարձային փուլը ՀՀ-ին պարտավորեցրեց ձեռնամուխ լինել բարձրագույն կրթության ոլորտում համակարգային վերափոխումներին, համապատասխանել միջազգային չափանիշներին, առաջնահերթությունը տալ իրականացվող կրթության որակի ու արդյունավետության ապահովմանը և խթանել ակադեմիական ազնվության սկզբունքների արմատավորումն ազգային մակարդակում: Ուստի, բարձրագույն կրթության որակի ապահովման կարևոր բաղադրիչ հանդիսացող ակադեմիական ազնվության ամրապնդման վերաարժևորման խնդիրը ստեղծեց լուծման առավել արդյունավետ ուղիների որոնման անհրաժեշտություն:

Կրթության կառավարման և գիտամանկավարժական տեսանկյուններից ՀՀ բարձրագույն կրթության համակարգում ակադեմիական ազնվության խնդրի և կրթության որակի ապահովման միջև կապի սերտացման անհրաժեշտությունը հիմնավորվում է մի շարք արդի խնդիրներով, որոնցից են [Պետրոսյան 2010: 15-21]՝

– դասավանդողների և ուսումնառողների ստեղծագործական ներուժի իրացման ցածր մակարդակը,

- ուսումնական գործընթացի արդյունքների գնահատման գիտամեթոդական հիմունքների մշակվածութան ոչ բավարար մակարդակը,
- ուսումնական գործընթացի յուրաքանչյուր մասնակցի ստեղծագործական ունակությունների բացահայտման հնարավորությունների ընձեռնման և դրա կառավարման ձևերի ներդրման ոչ բարձր արդյունավետությունը,
- մանկավարժական տեխնոլոգիաների մշակվածության և ներդրման ոչ բավարար մակարդակը,
- ուսումնառողների և շրջանավարտների մասնագիտական իրազեկություններին ուղղված մանկավարժական ու տեղեկատվական տեխնոլոգիաների մշակվածության ոչ բավարար մակարդակը,
- բուհերի մանկավարժական և գիտամանկավարժական կադրերին ներկայացվող պահանջների բարձր մակարդակը և նրանց մասնագիտական ոչ բավարար որակները,
- ուսումնական գործընթացների որակի ապահովման խնդիրներին առնչվող հիմնարար գիտական հետազոտությունների սակավությունը կամ բացակայությունը և ուսանողների գնահատման մանկավարժական մեթոդների մշակվածության ոչ բավարար աստիճանը:

Բուհերում ակադեմիական ազնվության պահպանման կանոնների ձևավորման, պահպանման, տարածման և վերահսկման գործընթացների արդյունավետությունն անմիջականորեն պայմանավորված է որոշակի գործոնների ազդեցությամբ, որոնք հիմնականում լինում են անհատական և համատեքստային կամ միջավայրային: Անհատական գործոններից են ուսումնառողի սեռը, տարիքը, միջին որակական գնահատականը, արտալսարանային աշխատանքներում ներգրավվածությունը և այլն: Միջավայրային գործոններից են ակադեմիական անազնվության վարքի խմբային դրսևորումները, ուսանողների խմբի կողմից ակադեմիական անազնվության դատապարտումը, ակադեմիական անազնվության դեպքերի կանխարգելման միջոցների կամ պատիժների ընդունելի խստությունը և այլն: Մասնագիտական ուսումնասիրության արդյունքները ցույց են տալիս, որ միջավայրային կամ համատեքստային գործոններն ավելի մեծ ազդեցություն ունեն ակադեմիական

անազնվության դրսևորումների վրա, քան անհատական գործոնները [McCabe & Trevino 1993, 1997]: Սա ևս մեկ անգամ շեշտադրում է ակադեմիական ազնվության՝ որպես ակադեմիական մշակույթի ներառական բնույթը, որը ենթադրում է ոչ թե անհատ ուսումնառողների ու դասավանդողների, այլ բուհի շահակիցների զգալի մասի կողմից ազնվության կանոնների պահպանում և հետևողականության ցուցաբերում: Միջավայրային գործոնների մեծ ազդեցությունը պայմանավորված է նաև ակադեմիական ազնվության (որպես ակադեմիական մշակույթի) ֆորմալ տարրերի առկայությամբ, քանի որ բուհի կողմից մշակված ֆորմալ քաղաքականությունը, դրանից բխող ռազմավարությունները, ընթացակարգերը, ներքին կանոնակարգերը և ուղեցույցներն ինստիտուցիոնալ մակարդակով վերահսկելի են դարձնում ակադեմիական անազնվության դեպքերը՝ էապես նվազեցնելով դրանց կամայական և ոչ լիարժեք լուծում տալու հնարավորությունները:

Հարկ է նշել նաև, որ ակադեմիական ազնվությունը սերտորեն փոխկապակցված է բուհերի ինքնավարության և ակադեմիական ազատությունների հետ, որոնց սահմանները տարբեր են ըստ ազգային կրթական առանձնահատկությունների, բարձրագույն կրթության ազգային քաղաքական դիրքորոշումների: Մասնավորապես ՀՀ բարձրագույն կրթության ոլորտը կարգավորող գործող օրենսդրական դաշտի տեսանկյունից պետք է նշել, որ ՀՀ բուհերին տրվում են ինքնավարություն և ակադեմիական ազատություններ, և բուհերի ակադեմիական ազատությունների և ինքնավարության խթանումն ու զարգացումը ՀՀ բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության բնագավառում պետական քաղաքականության սկզբունքներից են («Բարձրագույն և հետբուհական կրթության մասին» ՀՀ օրենք, Հոդվածներ 4, 6): Այդուհանդերձ, ՀՀ բուհերին տրվող ինքնավարության և ակադեմիական ազատությունների մեծացման հիմնախնդիրը դեռևս շարունակում է քննարկվել բարձրագույն կրթության ոլորտի մասնագետների և հանրության լայն շրջանակի կողմից: Ոլորտի մասնագետներն այդ խնդրի արդյունավետ լուծումը կապակցում են նաև «Բարձրագույն կրթության մասին» ՀՀ օրենքի նախագծի հետ, որտեղ, սակայն, ՀՀ բուհերին տրվող ինքնավարության և ազատությունների խնդիրները լիարժեք արտացոլված չեն՝ պայմանավորված օրենքի ուժով պարտադրվող

սահմանափակումներով: ՀՀ բուհերը, ամբողջությամբ լուծված չհամարելով բուհերի ինքնավարությանն ու ակադեմիական ազատություններին առնչվող առկա խնդիրները, ազգային իրավական դաշտի և իրենց գործունեության միջև որոշ անհամապատասխանություններով պայմանավորված վտանգներ են կանխատեսում:

Բուհերի ուսումնառողներին և ՊԴ կազմին տրվող ակադեմիական ազատությունների ընդլայնմանը զուգահեռ մեծանում է նրանց՝ ակադեմիական ազնվության պահպանման պատասխանատվությունը՝ ենթադրելով դասախոս-ուսանող հարաբերությունների որակական բարձր մակարդակ, որը հիմնված կլինի հավաստի գիտելիքի փոխանցման ու յուրացման, փոխվստահության, համագործակցության և անհատական ստեղծագործական աշխատանքների համալիրի վրա [Խաչատրյան Ն. 2013: 124-125]:

Ակադեմիական ազնվության պարբերական խախտման դեպքերը կործանարար ազդեցություն ունեն ոչ միայն այն պատճառով, որ դրանք այլոց իրավունքների, ներառյալ մտավոր սեփականության իրավունքների (ակադեմիական համատեքստում՝ հատկապես հեղինակային իրավունքի) ոտնահարում են համարվում, այլ նաև այն պատճառով, որ դրանց պարբերական բնույթն ակադեմիական անընդունելի վարքի մշակութայնացման միտում է ստեղծում՝ լայն առումով խոչընդոտելով գիտելիքահենք հասարակության առաջընթացն ու միջազգային հարթակում մրցունակ կադրերի պատրաստումը և խաթարելով ինստիտուցիոնալ մակարդակում մտավոր սեփականության կրթության կազմակերպման հիմքերը, իսկ նեղ իմաստով՝ ակադեմիական ոչ պատշաճ վարք դրսևորող անձի մտավոր, ստեղծագործական և մասնագիտական արդյունավետ գործունեության զարգացումը: Բացի այդ, գիտական մոտեցումների կիրառմամբ և ակադեմիական գրագիտության կանոնների պահպանմամբ գիտելիքի ձեռքբերումը, օգտագործումը և նոր գիտելիքի ստեղծումն ուսումնառողների մեջ դաստիարակում են մի շարք այնպիսի կարևոր անձնական ու մասնագիտական որակներ, ինչպիսիք են ազնվությունը, պատասխանատվության զգացումը, այլոց իրավունքների նկատմամբ հարգանքի դրսևորումը, վերլուծական-քննադատական մտքի զարգացումը, գիտելիքի պատշաճ յուրացումը, ուսումնառության ընթացքում տեղեկույթի արդյունավետ օգտագործումը, գիտելիքի ձեռքբերման

պատշաճ ձևերի և ըստ ունակությունների ու կարողությունների՝ ուսումնառության սեփական մեթոդների մշակումը և այլն:

Այսպիսով, ակադեմիական ազնվության պահպանման հիմնահարցը պահանջում է համալիր մոտեցում, որը ներառում է համամարդկային սկզբունքների, ազգային օրենսդրական համապատասխան դրույթների և միջազգային չափանիշների պահպանումը, բուհերի հստակ քաղաքականության ու դիրքորոշման կիրառումն իրենց հիմնական շահակիցների կողմից ակադեմիական ազնվության պահպանման և դրա խախտման դեպքերի կարգավորման նկատմամբ, դասավանդող-ուսումնառող համագործակցության արդյունավետության ապահովումը, ուսուցման այլընտրանքային մոտեցումների և մանկավարժական արդի մեթոդների կիրառումը, կազմակերպության ներքին մշակույթի ֆորմալ և ոչ ֆորմալ տարրերի արդյունավետ համադրումն ու հավասարակշռումը, կրթության բովանդակության և ուսումնառության ձևերի շարունակական բարելավումը, օրինակելի ակադեմիական վարքի արմատավորումն ու արժեհամակարգի ամրապնդումը: Ակնհայտ է դառնում, որ ակադեմիական բարենպաստ միջավայրի ապահովումն ու ակադեմիական ազնվության պահպանումը թելադրում են մի կողմից պետական և ինստիտուցիոնալ (բուհական) մակարդակներում առկա խթանիչ կառուցակարգերի գործադրում, մյուս կողմից՝ բուհի պրոֆեսորադասախոսական կազմի և ուսումնառողների այնպիսի օրինակելի ակադեմիական վարքի դրսևորումներ, որոնք կհավասարակշռեն անձի համակողմանի զարգացումն ու մասնագիտական որակների ձեռքբերումը և ինստիտուցիոնալ զարգացմանն ուղղված գործընթացները:

3.3. ՀՀ բուհերում գրագողության դրսևորումները և դրա կանխարգելման մանկավարժական ուղիները

Կրթության կառավարման և մանկավարժագիտական ժամանակակից մոտեցումների համաձայն՝ բուհերում գիտելիքի փոխանցմանն ու կիրառմանը, նոր գիտելիքի ստեղծմանը և մտավոր կապիտալի զարգացմանն ուղղված գործընթացները պետք է ոչ միայն վերահսկվեն, այլ նաև խրախուսվեն: Այս անհրաժեշտությունը պայմանավորված է բուհերի ակադեմիական բարենպաստ միջավայրերի և

ուսումնառության բնականոն զարգացումը խոչընդոտող տարբեր գործոնների տևական ու բացասական ազդեցությամբ: Այդպիսի ազդեցությունն աստիճանաբար որակական փոփոխության է ենթարկում նաև բուհերի դասավանդողների և ուսումնառողների մասնագիտական գործունեությունն ու նրանց ակադեմիական վարքագիծը: Որակական փոփոխությունները նաև որոշ առանցքային ակադեմիական խնդիրների արմատավորման պատճառ են դառնում՝ նվազեցնելով դրանց լիարժեք և արդյունավետ լուծման հնարավորությունները:

ՀՀ բուհերի գիտահետազոտական գործունեության շրջանակում և կրթության բովանդակային բարեփոխումներին ուղղված գործընթացներում ներկայումս հատկապես շոշափելի են ակադեմիական ազնվության խախտմանն առնչվող խնդիրները, մասնավորապես՝ գրագողությունը, որը շարունակում է դեռևս մնալ ոչ լիարժեք լուծված հիմնախնդիր Հայաստանի բուհերում: Չնայած ակադեմիական ազնվության խախտում համարվող այս դրսևորումը լայն տարածում ունի բոլոր բարձրագույն ուսումնական հաստատություններում, և դրա կանխարգելման նպատակով բազմաթիվ միջոցառումներ են իրականացվում, այդուհանդերձ, գրագողությունը շատ արագ է տարածում գտնում ուսումնառողների շրջանում՝ նպաստավոր պայմաններ ստեղծելով անօրինակելի ակադեմիական վարքի ձևավորման ու ամրապնդման համար: Հաշվի առնելով գրագողության՝ որպես ակադեմիական անազնվության ամենալայն տարածում ունեցող դրսևորման համընդհանուր բնույթը, ազգային համատեքստում դրա դրսևորման առանձնահատկությունների ու դրդապատճառների վերհանման անհրաժեշտությունը, ինչպես նաև գրագողության երևույթի շուրջ ՀՀ ակադեմիական հանրության ու ՀՀ բուհերի մոտեցումները համահավաք դարձնելու նկատառումը՝ սույն հետազոտության շրջանակում քննարկվում են գրագողության էությունը, հիմնական դրսևորումները, տեսակներն ու շարժառիթները, և ՀՀ բուհերի համար առաջարկվում են գրագողության կանխարգելման ժամանակակից մանկավարժական ուղիներ:

ՀՀ բարձրագույն կրթության ոլորտի առաջատար մասնագետները, հետազոտական կենտրոններն ու անկախ փորձագետները բազմիցս անդրադարձել են ՀՀ բուհերի կողմից գրագողության համալիր կանխարգելիչ մոտեցումների կիրառման,

ձեռնարկների և ուղեցույցների մշակման ու կիրառման անհրաժեշտության խնդրին, սակայն դրա գործնական իրագործումը նախևառաջ պայմանավորված է բուհերի՝ ակադեմիական ազնվության պահպանումը որպես առանցքային խնդիր դիտարկելու ինստիտուցիոնալ դիրքորոշմամբ: Գրագողությունը՝ որպես ակադեմիական ազնվության սկզբունքի խախտման ձև և ակադեմիական բարենպաստ միջավայրը խաթարող գործոն, բացասական ազդեցություն ունի գիտելիքահենք հասարակության զարգացման, մասնագիտական և գիտական գիտելիքի ստեղծման ու տարածման և գիտական արժեքավոր արդյունքների օրինական օգտագործման վրա:

Գրագողությունը (անգլերեն համարժեքը՝ *plagiarism*, որն առաջացել է լատիներեն *plagiarius* բառից և նշանակում է գող, հափշտակող, գրագող) [English Oxford Living Dictionaries 2018, Barnhart 1988] ուրիշի ստեղծագործությունն ամբողջությամբ կամ մասամբ կրկնօրինակելու միջոցով գրավոր կամ բանավոր ձևով տվյալ ստեղծագործության հեղինակ ներկայանալն է: Գրագողությունը հեղինակային իրավունքի խախտում է համարվում և հետևապես դատապարտելի է և քրեորեն պատժելի, սակայն գրագողության դեմ պայքարի նախադեպ չունեցող կամ դրա կանխարգելման անարդյունավետ կառուցակարգեր ունեցող բուհերում գիտելիքի նմանօրինակ անօրինական օգտագործումը ոչ միայն չի կանխվում, այլև ավելի մեծ թվով մասնակիցների կարող է ընդգրկել:

Կարևոր է նշել, որ հեղինակային իրավունքը չի տարածվում գաղափարների վրա [Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» ՀՀ օրենք Գլուխ 2, Հոդված 4], քանի որ հեղինակային իրավունքը պահպանում է ոչ թե բուն միտքը կամ գաղափարը, այլ գաղափարի արտահայտման ձևը կամ ձևակերպումը: Սա ենթադրում է, որ որպեսզի տվյալ ստեղծագործությունը պահպանվի հեղինակային իրավունքով, պարտադիր նախապայման է ինքնատիպությունը, որ թույլ չի տալիս տվյալ ստեղծագործությանը լինել մեկ այլ ստեղծագործության կրկնօրինակ [Մտավոր սեփականության գործակալություն 2009: 17, 19]: Մինչդեռ գրագողությամբ կատարված աշխատանքում այս կամ այն չափով կրկնօրինակվում է որևէ գաղափար արտացոլող կամ միտք արտահայտող բնօրինակ ստեղծագործական աշխատանքի բանավոր կամ գրավոր ձևով արտահայտված արդյունքը:

Ուշագրավ են ՀՀ բուհական համակարգում վերջին տարիներին կատարված ուսումնասիրությունները, որոնք փաստում են, որ Հայաստանի բարձրագույն կրթության համակարգում ներգրավված հիմնական դերակատարներն ամբողջությամբ չեն գիտակցում գրագողության հետևանքները, այս երևույթի նկատմամբ համընդհանուր կամ ինստիտուցիոնալ մոտեցում հիմնականում չի կիրառվում, բուհերն ուսումնառողներին բավարար չափով չեն իրազեկում գրագողության բացասական հետևանքների մասին [«Խաչմերուկ բանավիճային ակումբ» ՀԿ և ԵՊՀ քաղաքակրթական և մշակութային հետազոտությունների կենտրոն 2011: 5-6]: Բացի այդ, ուսանողները հաճախ տեղյալ չեն և հստակ պատկերացում չունեն գրավոր շարադրանքի ներկայացման կանոնների մասին [Evans, Craig, & Mietzel 1993, Overbey & Guiling 1999] և, ի տարբերություն դասախոսների, շատ ավելի քիչ նշանակություն են տալիս գրագողության երևույթին ու իրենց կատարած գրագողությունն արդարացնում են անտեղյակությամբ [Անտոնյան 2013: 4]: Ակադեմիական ազնվության խախտմանն առնչվող խնդիրների ոչ խորքային գիտակցումը հանգեցրել է գրագողության արմատացմանը, որն արժեզրկում է նաև բուհի՝ որպես ուսումնառողների մասնագիտական զարգացումն ապահովող առանցքային կառույցի դերն ու նշանակությունը: Գրագողությունը՝ որպես գիտելիքի, տեղեկության և այլոց ստեղծագործական աշխատանքների անբարեխիղճ օգտագործման ձև, վկայում է նաև գրագողություն կատարողների իրավական դաստիարակության և իրավագիտակցության ցածր մակարդակի մասին:

Գրագողության դրդապատճառները ոչ բոլոր դեպքերում են ենթադրում ուսանողների սովորելու շարժառիթների բացակայություն. դրանց հիմքում ընկած են մի կողմից ուսանողի՝ որպես պահանջատերի գիտակցական և իրազեկվածության ցածր մակարդակը, որն արտացոլվում է ակադեմիական ոչ օրինակելի վարքի դրսևորումներով, և մյուս կողմից՝ ուսումնական հաստատությունների ոչ արդյունավետ քաղաքականությունը կամ դրա բացակայությունը և ոչ համակարգային հստակ դիրքորոշումն ակադեմիական ազնվության խախտման դեպքերի վերահսկման, պատժելիության ու կանխարգելման նկատմամբ: Ուսումնասիրությունները ցույց են

տալիս, որ ընդհանուր առմամբ ուսանողների կողմից գրագողության կատարման հիմնական պատճառներն են [Varghese 2017]՝

- ուսումնական գերծանրաբեռնվածությունը և բուհում առկա մրցակցային պայմաններում ձախողվելու վախը,
- ծուլությունը և ֆորմալ ուսումնառությունից դուրս այլ բնույթի աշխատանքներում ներգրավվելու ոչ բավարար ցանկությունը,
- համացանցում առկա բազմաքանակ, հաճախ պատրաստի ներկայացվող նյութերի մատչելիությունը,
- գրավոր շարադրանքում գրական ու գիտական աղբյուրներին հղումներ կատարելու ձևերին անտեղյակությունը և հեղինակային իրավունքի պահպանման մասին ոչ բավարար գիտելիքը կամ իրազեկվածության ցածր մակարդակը,
- գրավոր հմտությունների և ինքնուրույն, վերլուծական ու քննադատական մտածողության զարգացածության ոչ բարձր մակարդակը,
- գրագողությունը որպես էթիկայի կանոնների խախտում չհամարելը և գրագողությունից խուսափելու ռազմավարություններին ու մեթոդներին չտիրապետելը,
- դասավանդողների կողմից թույլ վերահսկողությունն ու գրագողության կանխարգելման միջոցներ չձեռնարկելը,
- ուսանողների ենթադրությունն այն մասին, որ դասախոսի աշխատանքային բեռնվածությունը և ժամանակի սղությունը թույլ չեն տա հիմնովին ստուգել բոլոր ուսանողների աշխատանքները:

Գրագողությունը գիտելիքի ոչ ճիշտ օգտագործման արդյունք է, և դրա հետևանքները ոչ միշտ են գիտակցվում: Գիտելիքի օգտագործման անբարեխիղճ բնույթը որոշվում է ակադեմիական ազնվության խախտում համարվող գործողության կատարման դիտավորության աստիճանով: Այս համատեքստում գրագողությունը պետք է դիտարկել երկու տեսանկյունից՝ *միտումնավոր* և *ոչ միտումնավոր* գրագողություն: *Միտումնավոր* գրագողության դեպքում գրագողը գիտակցաբար օգտագործում է ուրիշի ստեղծագործությունը մասամբ կամ ամբողջությամբ, սակայն նպատակը չարդարացնող ծավալով կամ փոխում է բնօրինակ ստեղծագործության

բովանդակությունը կամ դրա որոշ ձևակերպումներ՝ առանց համապատասխան հղումների, և ներկայանում է որպես ստեղծագործության հեղինակ: *Ոչ միտումնավոր* գրագողության պարագայում գրագողություն կատարողը նույնպես կարող է փոփոխել բնօրինակ ստեղծագործության նախադասության կամ նախադասությունների որոշ ձևակերպումներ կամ, օրինակ, ներկայացնել ոչ ամբողջական տեղեկություն օգտագործված աղբյուրի վերաբերյալ՝ բարդացնելով իրական աղբյուրը գտնելու գործընթացը, սակայն այլոց ստեղծագործությունը նման ձևով օգտագործողը չի գիտակցում կամ տեղյակ չէ, որ հեղինակային իրավունքի խախտում է կատարում, տեղյակ չէ գրագրության համապատասխան պահանջներին ու կանոններին [Cheema 2011: 665-666], օրինակ՝ ինչպես տարբերել տեղեկության գլխավոր և երկրորդական, արժանահավատ և ոչ արժանահավատ աղբյուրները, ինչպես ճիշտ հղումներ կատարել գիտական աղբյուրներին, որն է ստեղծագործության օգտագործման նպատակն արդարացնող ծավալը և այլն: Ուսանողների կողմից կատարվող գրագողության դեպքերի անմիջական փաստողները դասախոսներն են, հետևապես նրանք պետք է պարզեն՝ արդյոք գրագողությունը միտումնավոր է կատարվել, և ինչ ծավալով է այն կատարվել: Այսուհանդերձ, նման խախտումները կանխարգելելու գործում դասավանդողների գործառույթներն ու պարտականությունները ոչ միշտ են բուհերի կողմից հստակ սահմանված լինում [Միլովանովիչ 2015: 112], որն էլ խոչընդոտում է խնդրի արդյունավետ լուծումը: Գրագողության բնույթի պարզումը կարևոր է, քանի որ դրա արդյունքում հիմնավորվում է համապատասխան պատժամիջոցի խստության աստիճանի ու ձևի կիրառումը [Bretag 2013]: Ընդհանուր առմամբ, գրագողության միտումնավոր և ոչ միտումնավոր բնույթը որոշվում է ակադեմիական ազնվության պահպանման կանոններին և ակադեմիական շարադրանքին առաջադրվող պահանջներին տեղեկացվածության աստիճանով ու դրան համապատասխան վարքի դրսևորմամբ: Իսկ ակադեմիական ազնվության պահպանման խնդրի արդյունավետ լուծման համար անհրաժեշտ է համապատասխան ուսումնական և դաստիարակչական աշխատանքներ իրականացնել դեռևս հանրակրթությունից:

Անկախ կատարված գրագողության բնույթից՝ ցանկալի է, որ բուհերը ֆորմալացնեն ակադեմիական անազնվության և մասնավորապես գրագողության դեմ

պայքարին ուղղված գործողությունները՝ պատժամիջոցի կիրառումը դիտարկելով ոչ թե գլխավոր նպատակ, այլ որպես կանխարգելման, վերահսկման և ակադեմիական ազնվության պահպանման մշակույթը խթանող միջոց: Գրագողության դեմ պայքարի ֆորմալացումը ենթադրում է, որ բուհերը պետք է մշակեն ակադեմիական ազնվության պահպանման վերաբերյալ հստակ քաղաքականություն ու ընթացակարգեր, կիրառեն դրանցից բխող համակարգային մոտեցումներ, մշակեն ու գործադրեն ուսանողների օբյեկտիվ գնահատման համակարգեր, ուսանողների ձեռնարկներ և ուղեցույցներ, ինչպես նաև պարբերաբար կազմակերպեն ակադեմիական ազնվության պահպանմանը նվիրված և ուսումնառողների վերլուծական-քննադատական հմտությունների զարգացմանն ուղղված միջոցառումներ:

Ակնհայտ է նաև արագընթաց կերպով զարգացող տեղեկատվական ու հաղորդակցման տեխնոլոգիաների ազդեցությունը գիտելիքի ձեռքբերման ձևերի վրա, որի արդյունքում մեծանում են գիտելիքի ինչպես օրինական, այնպես էլ անօրինական ձևով օգտագործման, տարածման ու բազմազանեցման հնարավորությունները: Բոլոր ակադեմիական միջավայրերում առկա գրագողության տեսակների բազմազանեցումն ու կատարելագործումը գլխավորապես պայմանավորված է ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների և համացանցի միջոցով տեղեկույթի հասանելիությամբ ու մատչելիությամբ: Հատկանշական են կրթության ոլորտի մասնագետների կողմից առանձնացված գրագողության հետևյալ ժամանակակից տեսակները կամ ձևերը [iParadigms 2012].

1. ուրիշի ստեղծագործական աշխատանքը կամ շարադրանքը բառ առ բառ կրկնօրինակելու միջոցով որպես սեփական աշխատանք ներկայացնելը (գրագողության այս տեսակի անգլերեն համարժեք անվանումը՝ *Clone*).
2. մեկ աղբյուրից ուրիշի աշխատանքի կամ շարադրանքի էական ծավալի օգտագործումն առանց որևէ փոփոխության (անգլերեն համարժեքը՝ *CTRL-C*).
3. ուրիշի աշխատանքը կամ շարադրանքը բանալի բառերի և առանցքային բառակապակցությունների փոփոխությամբ, սակայն առանց այդ աշխատանքի ընդհանուր բովանդակության փոփոխությամբ որպես սեփական աշխատանք ներկայացնելը (անգլերեն համարժեքը՝ *Find-Replace*).

4. Տարբեր աղբյուրներում առկա նյութերի բովանդակության վերաձևակերպումը կամ վերամշակումը և դրանց համակցումը սեփական աշխատանքի բովանդակությանը (անգլերեն համարժեքը՝ *Remix*).
5. նախկինում ներկայացված կամ հրատարակված սեփական աշխատանքից էական ծավալով հատվածի կամ ամբողջական աշխատանքի ներկայացումը որպես նոր աշխատանք՝ առանց որևէ հղման (ինքնագրագողություն, անգլերեն համարժեքը՝ *Recycle*).
6. ճիշտ աղբյուրներին հղում կատարած շարադրանքների համակցումը մեկ այլ՝ հղում չունեցող հատվածով կամ հատվածներով (անգլերեն համարժեքը՝ *Hybrid*).
7. առանց պատշաճ հղման բազմաթիվ աղբյուրներից վերցված նյութերի բովանդակության միախառնումը կամ համակցումը (անգլերեն համարժեքը՝ *Mashup*).
8. իրական աղբյուրի մասին սխալ տեղեկություն պարունակող կամ իրականում գոյություն չունեցող հղմամբ շարադրանքի ներկայացում (անգլերեն համարժեքը՝ *404 Error*).
9. ճիշտ հղման աղբյուրներ պարունակող, սակայն այդ աղբյուրներից վերցված նյութերի բովանդակությունից բացի այլ բովանդակություն չպարունակող աշխատանքի ներկայացում (անգլերեն համարժեքը՝ *Aggregator*).
10. ճիշտ հղման աղբյուրներ պարունակող, սակայն այդ աղբյուրներից վերցված նյութերի բովանդակությանը չափազանց նման կամ նույն շարադրանքով և/կամ կառուցվածքով աշխատանքի ներկայացում (անգլերեն համարժեքը՝ *Re-tweet*):

Գրագողության առավել ընդհանրական բնութագրմամբ առանձնացվում է գրագողության երեք հիմնական տեսակ [Klausman 1999]՝

- *ուղղակի գրագողություն (direct plagiarism)*՝ բնօրինակ ստեղծագործության բովանդակության բառ առ բառ վերարտադրումն ու այն որպես սեփական աշխատանք ներկայացնելը,
- *վերաձևակերպում (paraphrase plagiarism)*՝ բնօրինակ ստեղծագործության բովանդակության ընդհանուր ներկայացումն առանց որևէ հղման,

- *ծաղկաքաղ* կամ «*կարկատան*» *(patchwork)*՝ մի քանի աղբյուրներից վերցված բովանդակության համակցման և խմբագրման միջոցով որպես նոր սեփական աշխատանք ներկայացնելը:

Գրագողության նշված ժամանակակից տեսակներն ավելի հաճախ դրսևորվում են առցանց համակարգում մշակվող աշխատանքների տեսքով, հետևապես դասավանդման ժամանակակից մոտեցումները դասախոսների մանկավարժական փորձից ու մասնագիտական հմտություններից բացի պահանջում են նաև տեղեկատվական ժամանակակից տեխնոլոգիաների կիրառման հմտություններ: Այսուհանդերձ, գրագողության և ավելի լայն առումով ակադեմիական անազնվության դրսևորումների ինչպես տեխնիկական, այնպես էլ բովանդակային խնդիրները պետք է նախևառաջ քննարկվեն դասավանդողների և ուսումնառողների համագործակցության շրջանակում: Բացի այդ, ուսումնառողները ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների ակտիվ օգտատերերն են, և նրանք նույնպես պետք է տիրապետեն հեղինակային իրավունքի պահպանման գիտելիքներին ու հետևեն ակադեմիական ազնվության պահպանման կանոններին [Самохвалова 2007: 77]: Ակադեմիական անազնվության դեպքերի կանխմանն ուղղված միջոցառումներում ուսումնառողների անմիջական և ակտիվ ներգրավվածությունը բարձրացնում է նրանց գիտակցական մակարդակը, իրազեկվածության աստիճանն ու պատասխանատվությունը՝ սեփական ակադեմիական օրինակելի վարքով խթանելով բուհական արժեքների ամրապնդումը և ինստիտուցիոնալ մակարդակում կրթության, գիտության ու հետազոտության ոլորտների զարգացումը:

Հատկանշական է, որ Բարձրագույն կրթության հավատարմագրման խորհուրդը [Council for Higher Education Accreditation (CHEA) 2017], որը բարձրագույն կրթության ոլորտում շուրջ 300 միջազգային համալսարանների անդամակցությամբ ԱՄՆ-ում գործող ամենամեծ կազմակերպությունն է, ինստիտուցիոնալ և ծրագրային հավատարմագրման և մասնավորապես որակի ապահովման հիմնախնդիրների շարքում հատուկ անդրադարձ է կատարել նաև գրագողությանն առնչվող խնդիրներին: 2017 թ. տեղի ունեցած միջազգային առցանց քննարկման (վեբինարի) շրջանակներում [“Quality Assurance and Combating Academic Corruption. Quality Assurance and the

Challenge of Addressing Academic Corruption" Webinar N 3, 2017] արծարծված խնդիրներն ու քննարկումների արդյունքները կրկին փաստում են այն մասին, որ ակադեմիական ազնվության խախտման դրդապատճառները և հատկապես գրագողությանն առնչվող հիմնախնդիրները միջազգային կրթական միջավայրերում նույնպես լայն տարածում ունեն, բնորոշ են բոլոր ակադեմիական միջավայրերին, սակայն դրանց լուծման մոտեցումները, ազգային և ինստիտուցիոնալ դիրքորոշումները տարբեր են՝ պայմանավորված նաև ակադեմիական մշակութային առանձնահատկություններով: Բարձրագույն կրթության հավատարմագրման խորհրդի նախաձեռնությամբ կազմակերպված քննարկման արդյունքների համաձայն՝ արևմտյան և արևելյան բարձրագույն կրթության մասնագետներն ու փորձագետները գրագողության կանխարգելումը սերտորեն կապում են բարձրագույն կրթության որակի ապահովման խնդրի հետ և շեշտադրում են այն իրողությունը, որ ուսանողների համար գրագողության կանխարգելմանն ուղղված դասընթացների կազմակերպումն ու դասավանդողների կողմից մասնագիտական ուղղորդման տրամադրումն առաջնային նախապայմաններ են այս խնդրին գործնական և արդյունավետ լուծում տալու համար:

ՀՀ բուհերում գրագողության ամենատարածված ձևերն են արտագրությունները, առանց հղումների հատվածական ծաղկաքաղով աշխատանքների ներկայացումը, առանց համապատասխան հղումների օտարալեզու գրականությունից ամբողջական կամ հատվածական թարգմանություններն ու այլոց շարադրանքների վերաձևակերպված կամ վերամշակված տարբերակները որպես սեփական աշխատանք ներկայացնելը: ՀՀ բուհերում արձանագրված գրագողության դեպքերը ներառում են նաև ոչ միտումնավոր գրագողության դեպքեր, որոնց հիմքում ընկած է ակադեմիական ազնվության պահպանման սկզբունքների ու էթիկայի նորմերի պահպանման վերաբերյալ իրազեկվածության ցածր մակարդակը: ՀՀ բուհերում գրագողության դեպքերն առավել հաճախ առկա են ոչ մասնագիտական առարկաներին վերաբերող գրավոր աշխատանքներում և ռեֆերատներում (ավելի քիչ՝ կուրսային, ավարտական և մագիստրոսական աշխատանքներում), որոնց մշակմանն «օգնության են գալիս» համացանցը, տպագիր նյութերը (գրքեր, հոդվածներ, ամսագրեր և այլն), համակուրսեցիների կամ բարձր կուրսեցիների պատրաստի

աշխատանքները և ռեֆերատների, կուրսային և այլ պատրաստի աշխատանքների պատրաստման վճարովի ծառայություններ մատուցող կենտրոնները [«Խաչմերուկ բանավիճային ակումբ» ՀԿ և ԵՊՀ քաղաքակրթական և մշակութային հետազոտությունների կենտրոն 2011: 10-12]:

ՀՀ գործող պետական և ոչ պետական բուհերում ուսումնառող 420 ուսանողների շրջանում 2013 թ. միջազգային փորձագետների և հետազոտողների կողմից կատարված ուսումնասիրությունները փաստել են, որ ուսումնառողների մոտիվացիան և ակադեմիական ազնվությունը սերտորեն փոխկապակցված են, և հետևապես մոտիվացիայի ցածր մակարդակը պայմանավորում է ակադեմիական ազնվության կանոնների խախտումները [Միլովանովիչ 2015: 113]: Մյուս կողմից, բուհերում մտավոր սեփականության պահպանմանն առնչվող հայեցակարգերի ու ռազմավարական հստակ դիրքորոշումների բացակայությունը, գրագողության կանխարգելման մեխանիզմների և ակադեմիական տույժերի բացակայությունը կամ դրանց անարդյունավետ կիրառումը նպաստում են խնդրի արմատավորմանն ու ճյուղավորմանը՝ արժեզրկելով բուհերի՝ որպես գիտելիքահենք տնտեսության զարգացումը խթանող և բարձրորակ կրթություն տրամադրող կառույցների դերակատարությունը գիտելիքահենք հասարակության պատրաստման խնդրում:

Ուսումնասիրության արդյունքների համաձայն՝ ուսումնառողների մեծամասնության (գրեթե 89%-ը) կարծիքով իրենց բուհերը հնարավորություններ չեն ընձեռում ծանոթանալու գրավոր աշխատանքների պատրաստման և ակադեմիական ազնվության պահպանման կանոններին, կամ նրանք առհասարակ տեղյակ չեն այդպիսի հնարավորությունների մասին [Միլովանովիչ 2015: 109-111]: Գրագողության և ակադեմիական անազնվության այլ դեպքերի անպատժելիությունը պայմանավորված է ինչպես բուհերի ֆակուլտետների և ամբիոնների կողմից ձեռնարկվող միջոցառումների արդյունավետության ցածր մակարդակով, այնպես էլ որոշ բուհերի ղեկավար կազմերի՝ գրագողությունը ոչ հրատապ լուծման ենթակա խնդիր համարելու մոտեցմամբ [«Խաչմերուկ բանավիճային ակումբ» ՀԿ և ԵՊՀ քաղաքակրթական և մշակութային հետազոտությունների կենտրոն 2011: 9]: Գրագողության և ակադեմիական անազնվության այլ դրսևորումների նկատմամբ բուհերի ղեկավարության նման

դիրքորոշումը կարող է պայմանավորված լինել նաև այն հանգամանքով, որ գրագողությունն ի հայտ է գալիս ուսումնական գործընթացում և ուսումնառող-դասախոս անմիջական փոխազդեցության պայմաններում, հետևապես ենթադրվում է, որ այդ խնդրի լուծման ուղղությամբ միջոցառումների ձեռնարկումը նախևառաջ դասավանդողների և ուսումնառողների պատասխանատվությունն է:

Գրագողության բացահայտման, **կանխարգելման** կամ դրա բացառման հիմնախնդիրը ներկայիս գերհագեցած տեղեկատվական դաշտի և մեծածավալ տեղեկույթի առկայության պայմաններում թերևս ավելի է դժավարացել: Գրագողության բացահայտման ու կանխարգելման նպատակով մի շարք արտասահմանյան բուհերում մշակվել ու ներդրվել են տարբեր գործիքներ, մեթոդաբանություններ ու էլեկտրոնային համակարգեր [Kashkur *et al*. 2010][16]: Սակայն անգամ գրագողությունը բացահայտող համակարգերի կամ գործիքների կիրառումը ոչ միշտ է արդյունավետ և լիարժեք կերպով լուծում խնդիրը, քանի որ՝

- այդ համակարգերը կամ գործիքներն օժանդակում են, որպեսզի բացահայտվի գրագողությունը, սակայն դրանք չեն լուծում կամ կանխարգելում գրագողությունը. գրագողության կանխարգելումը լուծվում է բուհերի ղեկավարության, համապատասխան դասավանդողների կամ այլ պատասխանատուների նախաձեռնությամբ ու որոշմամբ.
- գրագողության բացահայտման համարգերում զետեղված բնօրինակ աշխատանքները կարող են սահմանափակ թվով լինել, և որոշ բնօրինակների բացակայության դեպքում համակարգերը չեն կարող համադրել ուսումնառողների կատարած աշխատանքը և որոշել կատարված գրագողության աստիճանը.
- գրագողության բացահայտման համակարգերը և՛ տեխնիկական, և՛ բովանդակային առումով հասանելի չեն մի շարք լեզուներով, ներառյալ հայերենով (դրանք հիմնականում հասանելի են անգլերեն լեզվով), հետևապես, որոշ բուհեր ստիպված են լրացուցիչ աշխատանքներ կատարել և լրացուցիչ ռեսուրսներ

[16] Գրագողության բացահայտման ամենատարածված էլեկտրոնային համակարգերն են՝ TURNITIN, COPS (Copy Protection System), SCAM (Stanford Copy Analysis Mechanism), MOSS (Measure of Software Similarity), YAP (Yet Another Plague), MDR (Match Detect Retrieval), SID (Software Integrity Diagnosis), AdvegoPlagiatus, Double Content Finder և այլն:

տրամադրել (ներառյալ մարդկային ռեսուրսներ, որոնց հարկավոր է վերապատրաստել ներդրված համակարգն արդյունավետ գործադրելու նպատակով) այդ համակարգերն ազգային լեզվով հասանելի և պիտանի դարձնելու համար.

- գրագողության բացահայտման գործիքները կամ համակարգերը հաճախ վճարովի են, և ոչ բոլոր բուհերն են պատրաստ ֆինանսական ռեսուրսներ հատկացնել այդ համակարգերի ներդրման համար:

Գրագողության կանխարգելման համակարգերն ու գործիքները հասանելի են նաև ՀՀ բուհերին (օրինակ՝ Հայաստանի ամերիկյան համալսարանում կիրառվում է TURNITIN էլեկտրոնային համակարգը), սակայն պայմանավորված վերոգրյալ խոչընդոտներով, բուհերի կազմակերպական մշակույթով, կարողություններով և դիրքորոշումներով՝ ՀՀ բուհերի գերակշիռ մասը նախապատվությունը տալիս է գրագողության և առհասարակ ակադեմիական ազնվության պահպանման խնդիրը լուծել ներքին կանոնակարգերի ապահովման միջոցով և/կամ այդ խնդրի կարգավորումը համարել միայն դասավանդողների պատասխանատվությունը: Այդուհանդերձ, գրագողության բացահայտման համակարգերն ու գործիքները պետք է ակադեմիական ազնվության պահպանման և մասնավորապես գրագողության դեմ պայքարի ինստիտուցիոնալ (ներբուհական) քաղաքականության մի մասը կազմեն ու լրացնեն խնդրի լուծման բուհական համալիր մոտեցումները և ոչ թե խնդրի միակ կամ ամենաարդյունավետ միջոցը համարվեն:

Ամեն դեպքում ցանկալի է, որ ՀՀ բուհերում ազնվության պահպանման խնդիրների մշակումն ու դրանց արդյունավետ լուծումները ոչ միայն պայմանավորված լինեն գրագողության բացահայտման գործիքների կիրառմամբ, այլ նաև հիմնվեն միջազգային լավագույն փորձի վրա, քանի որ վերջիններս ավելի հստակ են արտացոլում իրավական կարգավորող մեխանիզմների կիրառման ու գիտելիքի արդյունավետ կառավարման համակարգային մոտեցումները, գիտելիքի բարեխիղճ օգտագործումն ու նոր գիտելիքի ստեղծումը խթանող ինստիտուցիոնալ դիրքորոշումները, ինչպես նաև իրավախախտումների դեմ պայքարի արդյունավետ միջոցները: Միջազգային լավագույն փորձի տեղայնացման գործընթացներում կարևոր

է հաշվի առնել ազգային կրթության համակարգի ու ակադեմիական մշակույթի առանձնահատկությունները:

Ակադեմիական ազնվության խախտման դեպքերի կանխարգելման հաջողված փորձի ուսումնասիրության արդյունքները փաստում են ուսումնառության ամենավաղ փուլում համապատասխան դասընթացների կազմակերպման կարևորությունը, ընդ որում՝ այդ դասընթացները պետք է հիմնական առարկայական ծրագրի մաս կազմեն կամ կցված լինեն բուհի ներքին կարգապահական կանոնների վերաբերյալ տեղեկություն պարունակող ուղեցույցներին [Scanlan 2006: 179-181]: Միջազգային փորձը ցույց է տալիս, որ այն բուհերում, որտեղ առկա են ակադեմիական ազնվության պահպանման հստակ պահանջներ պարունակող ներքին կարգապահական կանոնակարգեր, հայեցակարգեր կամ ուղեցույցներ, գրանցվել են 25-50%-ով ավելի քիչ գրագողության դեպքեր, քան հստակ դիրքորոշում և համապատասխան կանոնակարգեր չունեցող բուհերում [McCabe & Trevino 2002]: Թեև ակադեմիական ազնվության պահպանմանն առնչվող փաստաթղթային հենքի առկայությունը չի երաշխավորում ակադեմիական ազնվության լիարժեք պահպանումն ուսումնական հաստատությունում, սակայն ռազմավարական արդյունավետ կառավարման տեսանկյունից ՀՀ բուհերի պարագայում համապատասխան քաղաքականության, դրանից բխող ընթացակարգերի, հայեցակարգերի կամ ներքին կարգապահական կանոնների առկայությունը, ինչպես նաև բուհերում ուսումնագիտական գործունեություն ծավալող հիմնական շահակիցների հետևողականությունը կարևոր նախապայման է բուհերում ակադեմիական ազնվության պահպանման մշակույթի արմատավորման համար: Վերջինս պահանջում է, որ բուհերն ապահովեն նաև ակադեմիական ազնվության պահպանման կանոնների և պահանջների հստակությունն ու համընկալելի բնույթը, խրախուսեն դասավանդողների և ուսումնառողների միջև բաց քննարկումներն ու փոխվստահության ամրապնդումը՝ այդպիսով ապահովելով ներքին առանցքային շահակիցների պատասխանատվության, հարգանքի, հանձնառության և ակադեմիական պատշաճ վարքի կայուն դրսևորումները:

Բուհերի գիտամանկավարժական կազմի դասավանդման և գիտահետազոտական գործունեության գործառութային շրջանակն ընդլայնվել է, և ակադեմիական ազնվության պահպանման խնդրում նույնպես նրանց դերը դարձել է բազմագործառութային: Դասավանդողներից հատկապես պահանջվում է, որ նրանք իրենց գործունեությամբ օրինակ ծառայեն ուսումնառողներին, ուղղորդեն և խթանեն ուսումնառողների անձնական ու մասնագիտական, հատկապես գիտահետազոտական հմտությունների ու վերլուծական-քննադատական մտածողության զարգացումը, հետևողականություն ցուցաբերեն ակադեմիական ազնվության կանոնների պահպանմանն ու դրան նպաստող միջավայրի ստեղծմանը, ուսումնառողների գիտելիքների գնահատման խնդրում անաչառություն դրսևորելու պատասխանատվություն կրեն, ինչպես նաև ակադեմիական անազնվության դեպքերի կանխարգելմանն ուղղված գործնական և արդյունավետ միջոցառումներ կիրառեն: Բուհերում գրագողության կանխարգելման ռազմավարական քայլերին զուգահեռ դասավանդողները կարող են ձեռնարկել մի շարք այնպիսի միջոցառումներ, ինչպիսիք են [Davis 1993]՝

- ուսումնառողների գիտահետազոտական աշխատանքների կատարման համար դասավանդողի կողմից նախապես ընտրված թեմաների առաջարկումը,
- ուսումնառողների գիտահետազոտական աշխատանքների սևագիր տարբերակի ներկայացման պահանջը,
- քննությունների վերահսկողության ապահովումը,
- քննական այլընտրանքային թեստերի կիրառումը,
- քննությունների ժամանակ ուսումնառողներին կողմից էլեկտրոնային տեխնիկան կիրառելու հնարավորությունների բացառումը,
- քննությունների ավարտին ուսումնառողների կողմից իրենց աշխատանքների հանձնումը հաստատող ստորագրության առկայությունը և այլն:

Ընդհանուր առմամբ, ՀՀ բուհերը պետք է հաշվի առնեն մի քանի որոշիչ գործոններ, որոնց ազդեցության ճիշտ կառավարման դեպքում կկարողանան արդյունավետորեն կարգավորել գրագողության կանխարգելման և ակադեմիական

ազնվության պահպանմանն առնչվող այլ խնդիրները: Այսինքն՝ բուհերը պետք է հաշվի առնեն, որ՝

- առկա է և գործում է մտավոր սեփականության պահպանման ոլորտին, ներառյալ հեղինակային իրավունքին առնչվող ազգային օրենսդրական դաշտ ազգային (ՀՀ) մակարդակում, և անհրաժեշտ է ինստիտուցիոնալ մակարդակում նույնպես ապահովել համապատասխան ներբուհական իրավական հիմնադրույթների կիրառումը.
- գրագողության խնդիրն ակադեմիական բնույթ ունի, այսինքն՝ բուհերի գործունեության շրջանակում ուսումնառողների կողմից հեղինակային իրավունքը խախտվում է ոչ թե, օրինակ, այլոց ստեղծագործություններն առևտրային նպատակով օգտագործելու նկատառումով, այլ զուտ ուսանողական պարտականությունների կատարման միտումով, հետևապես խնդիրը նախևառաջ պետք է լուծվի ուսումնական գործընթացում և ուսումնառող-դասավանդող արդյունավետ համագործակցության միջոցով,
- միջազգային մակարդակում մշակվել ու արդյունավետ կերպով ներդրվել են ակադեմիական ազնվության պահպանմանն առնչվող մի շարք ինստիտուցիոնալ քաղաքականություններ, ռազմավարություններ, համակարգեր ու կառուցակարգեր, հետևապես միջազգային լավագույն փորձի արդյունավետ տեղայնացումը ևս կարող է զգալիորեն օժանդակել ներբուհական մակարդակում վերոգրյալ խնդրի լուծմանը.
- ակադեմիական ազնվության խախտման դեպքերը նախևառաջ անտեղյակության և գիտակցական ոչ բարձր մակարդակի արդյունք են, հետևապես բուհերը պետք է ուսումնառողների և պրոֆեսորադասախոսական ու գիտական կազմերի համար կազմակերպեն շարունակական վերապատրաստումներ և ոլորտի փորձագետների հետ հետևողականորեն համագործակցելու միջոցով խթանեն բուհի առանցքային շահակիցների իրավական դաստիարակության և իրազեկվածության բարձր մակարդակի ապահովումը:

Այսպիսով, ՀՀ բուհերի գործունեության շրջանակում ակադեմիական ազնվության պահպանման խնդիրը խորքային է, և դրա ամենալայն տարածում գտած դրսևորումը՝

գրագողությունը, հաճախ չի դիտարկվում որպես կրթության որակի վրա զգալի և էական ազդեցություն ունեցող գործոն: Մինչդեռ բուհերի կառավարման ռազմավարական ժամանակակից մոտեցումներն ու մանկավարժագիտական սկզբունքները շարունակաբար շեշտադրում են ակադեմիական անազնվության կործանիչ դերն ինչպես բուհերի կողմից իրականացվող կրթության որակի, այնպես էլ ուսումնառողների ակադեմիական վարքի ձևավորման, ուսումնառության ու հետագա մասնագիտական գործունեության և բուհերում իրականացվող ուսումնագիտական, գիտահետազոտական և մանկավարժական գործընթացների վրա: Միջազգային լավագույն փորձի ու ժամանակակից մանկավարժագիտական մոտեցումների ուսումնասիրություններն ցույց են տալիս, որ թեև ակադեմիական ազնվության պահպանման, ներառյալ գրագողության կանխարգելման խնդիրների լուծման հանձնառությունը դուրս է եկել ուսումնառող-դասավանդող փոխազդեցության շրջանակից, այսինքն՝ գիտելիքահենք տնտեսության զարգացման հրամայականին ընդառաջ գնացող բուհերից նույնպես պահանջվում է որակյալ կրթության իրականացման հստակ ինստիտուցիոնալ քաղաքականություն և կրթության որակն ապահովող բոլոր հնարավոր միջոցների կիրառում, սակայն ակադեմիական ազնվության պահպանման խնդիրը, հատկապես գրագողությունը նախևառաջ դրսևորվում է բուն ուսումնական գործընթացում: Ելնելով գրագողության երևույթի ակադեմիական բնույթից ու առանձնահատկություններից՝ ժամանակակից մանկավարժական մոտեցումները թելադրում են գրագողության խնդրի գործնական լուծման ուղիներ բուհերի համար, ինչպիսիք են՝

- դասավանդող-ուսումնառող փոխազդեցության արդյունավետության բարձրացումը՝ ակադեմիական ազնվության պահպանման հիմնախնդիրների վերաբերյալ բաց քննարկումների և գործնական դասընթացների իրականացման միջոցով,
- գիտահետազոտական աշխատանքների գործնական բաղադրիչի ամրապնդումը՝ ուսումնառողների ինքնուրույն մտածողության և վերլուծական, քննադատական ու ստեղծագործական հմտությունների զարգացման շեշտադրմամբ,

- գրագողության դեպքերի բացառումը համապատասխան վերահսկողության, պատժամիջոցների և ակադեմիական տույժերի կիրառման միջոցով՝ միտված ակադեմիական օրինակելի վարքի ամրապնդմանը,
- ուսումնառողների համար այնպիսի պարտադիր և լրացուցիչ դասընթացների իրականացումը, որոնք նվիրված կլինեն տեղեկույթի և գիտելիքի բարեխիղճ օգտագործման կանոնների պահպանմանը, ակադեմիական ազատությանը և ազնվությանը, էլեկտրոնային և ոչ էլեկտրոնային ռեսուրսների ճիշտ օգտագործմանը, հեղինակային իրավունքի պահպանմանը, գիտահետազոտական աշխատանքներում ճիշտ հղումներ կատարելու ձևերին, նոր գիտելիքի ստեղծման գիտական մոտեցումների կիրառմանը և առնչվող այլ ժամանակակից հիմնախնդիրներին,
- դասավանդողների համար ոլորտի փորձագետների ու առաջատար մասնագետների կողմից հեղինակային իրավունքի պահպանման, գիտահետազոտական աշխատանքների կատարելագործման, ակադեմիական ու տեղեկատվական գրագրության և դասավանդման ժամանակակից մեթոդների արդյունավետ կիրառման և առնչվող այլ թեմաների վերաբերյալ վերապատրաստումների իրականացումը,
- ուսումնառողների համար բուհի կողմից տեղեկատվական դասընթացների կազմակերպումը՝ միտված ակադեմիական ազնվության պահպանմանն առնչվող առանցքային դրույթներ (ներառյալ ակադեմիական տույժերի և պատժամիջոցների կիրառման վերաբերյալ դրույթներ) պարունակող քաղաքականության, ներքին կանոնակարգերի, ակադեմիական գրագրության վերաբերյալ համապարփակ տեղեկություն պարունակող ուղեցույցների և ակադեմիական տույժերի վերաբերյալ տեղեկության տրամադրմանը,
- կրթական ծրագրերում մտավոր սեփականության պահպանմանն առնչվող պարտադիր և/կամ կամընտրական դասընթացների ներմուծումը ոչ միայն իրավաբանության և տնտեսագիտության, այլ նաև մանկավարժության, լրագրության և այլ մասնագիտությունների կրթական ծրագրերի համար՝ ապահովելով միջգիտակարգային մոտեցման կիրառումը,

- առարկայական ծրագրերում կամ նկարագրերում գրագողության վերաբերյալ օգտակար և համապարփակ տեղեկության պարտադիր ներմուծումը՝ միտված ուսումնառողների իրազեկվածության համապատասխան մակարդակի ապահովմանը և ակադեմիական պատշաճ վարքագծի ձևավորմանն ու ամրապնդմանը:

Ի վերջո, գրագողության կանխարգելման և առհասարակ ակադեմիական անազնվության դրսևորումների բացառման մանկավարժական ուղիները, որոնք չեն սահմանափակվում վերոնշյալ գործնական լուծումներով, ՀՀ բուհերին թելադրում են այս խնդրի կարգավորման համալիր մոտեցումների կիրառում և առավել վճռորոշ քայլերի ձեռնարկում, որոնք պետք է նպատակաուղղված լինեն դեպի ուսումնառության դեռևս վաղ փուլում գիտական ու ստեղծագործական մտածողության զարգացման և դրա միջոցով գիտելիքահենք հասարակության ձևավորման հեռանկարը:

3.4. Մտավոր սեփականության կրթության կազմակերպման մոդելը ՀՀ բուհերի համար

Սույն հետազոտության շրջանակում կատարված ուսումնասիրությունների արդյունքները, որոնք հիմնվում են մտավոր սեփականության (ՄՍ) պահպանման և բարձրագույն կրթության ոլորտների հիմնախնդիրների, ազգային ու միջազգային փորձի և մասնագիտական գրականության համապարփակ ուսումնասիրության, ՄՍ ոլորտը կարգավորող ազգային օրենսդրական դաշտի (հեղինակային իրավունքի բնագավառ) առանցքային դրույթների քննարկման ու համեմատական վերլուծության, ՀՀ բուհերում ՄՍ կրթության կազմակերպման նախադրյալների բացահայտման, արդի հիմնախնդիրների ու մարտահրավերների և դրանց հաղթահարմանն ուղղված ՀՀ բուհերի ռազմավարական ու մանկավարժագիտական ժամանակակից մոտեցումների համակցված ուսումնասիրման, ինչպես նաև ՄՍ և բարձրագույն կրթության ոլորտների առաջատար մասնագետների հետ ունեցած քննարկումների և հարցազրույցների ընթացքում տրամադրված մասնագիտական խորհրդատվությունների վրա, թույլ են տալիս ՀՀ բուհերի համար առաջադրել ՄՍ կրթության կազմակերպման մոդել: Առաջարկվող մոդելի բովանդակային հենքը կառուցված է սույն հետազոտության

շրջանակում բացահայտված ոլորտային հիմնախնդիրների (մտավոր սեփականության, մասնավորապես հեղինակային իրավունքի պահպանման և բարձրագույն կրթության ոլորտներ), առանձնահատկությունների ու արդի մարտահրավերների ուսումնասիրության վրա և որպես օրինակելի նմուշ՝ կարող է օժանդակել ՀՀ բուհերին վերափոխելու կրթության կազմակերպման ու գիտամանկավարժական հետազոտական գործունեության ավանդական ձևերը՝ հենք նախապատրաստելով ՄՍ կրթության կազմակերպման համար:


Հաշվի առնելով այն, որ ՀՀ բուհերի համար ՄՍ կրթության կազմակերպման հստակ մշակված, ՀՀ բուհերի առանձնահատկությունների հիման վրա կառուցված և համակարգային մոտեցումներն ամփոփող մոդելներ մշակված չեն, սույն մոդելը կարող է կառուցակարգ հանդիսանալ լայն առումով բարձրագույն կրթության և ՄՍ ոլորտի մասնագետների, և նեղ առումով՝ կրթության քաղաքականություն մշակողների, բուհերի վարչական կազմերի, կրթության կառավարիչների, մասնագիտության կրթական ծրագրեր և ուսումնական պլաններ մշակողների, կրթության բովանդակության և ծրագրերի պատասխանատուների, պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչների, մանկավարժների, բարձրագույն կրթության ոլորտի վերապատրաստողների, ուսումնառողների և ակադեմիական հանրության այլ դերակատարների համար:

ՄՍ կրթության կազմակերպման առաջարկվող մոդելին կից մշակվել է նաև ուսումնական դասընթաց (դասընթացի նկարագիրը ներկայացված է Հավելված 2-ում), որը՝ որպես մոդելում առաջարկված ինստիտուցիոնալ մակարդակի առանցքային բաղադրիչ, կարող է ՀՀ բուհերում ներդրվել որպես պարտադիր կամ կամընտրական առարկա և իրականացվել ուսուցման տարբեր ձևերով: Առաջարկվող դասընթացը նախատեսված է տնտեսագիտության, իրավաբանության, կառավարման, մանկավարժության, լրագրության, քաղաքագիտության և այլ մասնագիտությունների կրթական ծրագրերի իրականացման համար: Պետք է նշել նաև, որ այս հետազոտության արդյունքների հիման վրա մշակված ուսումնական դասընթացը նախատեսված է բակալավրի կրթական աստիճանի համար, հետևապես դասընթացի մշակման ժամանակ հաշվի են առնվել այդ կրթական մակարդակի համար

նախատեսված ուսումնառության ակնկալվող վերջնարդյունքների առանձնահատկությունները: Միևնույն ժամանակ հաշվի առնելով դասընթացի ճկուն բովանդակությունը՝ դասընթացը կարելի է որոշակի բովանդակային փոփոխություններով տեղայնացնել նաև ՀՀ բուհերի մագիստրոսական կրթական ծրագրերի համար: Դասընթացը փորձարկվել է ԵՊԼՀ կրթության կառավարման և պլանավորման ամբիոնում՝ մագիստրատուրայի ուսանողների համար դասավանդվող «Կրթության կառավարման էթիկա» առարկայի շրջանակներում:

Ստորև ներկայացվում են տվյալ հետազոտության արդյունքների հիման վրա ՀՀ բուհերի համար մշակված ՄՍ կրթության կազմակերպման մոդելը (Գծապատկեր 1) և դրա ինստիտուցիոնալ ու ստորաբաժանումների մակարդակներում ՄՍ կրթության կազմակերպման առանցքային բաղադրիչները (Գծապատկերներ 2, 3):

ԳԾԱՊԱՏԿԵՐ 1. ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՄՈԴԵԼ ՀՀ ԲՈՒՀԵՐԻ ՀԱՄԱՐ



ԳԾԱՊԱՏԿԵՐ 2. ԲՈՒՀԵՐՈՒՄ ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՄԱԿԱՐԴԱԿ

ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՄԱԿԱՐԴԱԿ
(ԲՈՒՀԻ ՆԵՐՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ)

- Բուհի կանոնադրությունում ՄՍ իրավունքի պահպանումն արտացոլող կանոնադրական դրույթներ
- Բուհի ռազմավարական ծրագրում ՄՍ իրավունքի պահպանմանն առնչվող խնդիրներ և գործողությունների պլանում դրան ուղղված քայլերի ու պատասխանատուների գործառույթների սահմանում
- Ակադեմիական ազնվության պահպանմանն առնչվող ներքին կանոնակարգեր (հայեցակարգեր, պատվո վարքականոններ, ուսումնամեթոդական ձեռնարկներ, ուղեցույցներ, հայեցակարգեր, ընթացակարգեր, էթիկայի կանոնակարգեր կամ կոդեքսներ, գիտական արդյունքների առևտրայնացման գործընթացները կարգավորող ընթացակարգեր և այլ կառուցակարգեր)
- Ուսումնառության վերջնարդյունքների անաչառ գնահատման հստակ սահմանված չափանիշների, բողոքարկման ընթացակարգերի և գնահատման ընդհանուր համակարգի արդյունավետությունն ապահովող բողոքարկման հստակ ընթացակարգեր
- Բուհի գիտահետազոտական աշխատանքների հրապարակման, գնահատման, գրախոսման, վերահսկման և երաշխավորման գործառույթներ իրականացնող մշտական և/կամ ժամանակավոր փորձագիտական, խմբագրական ու մասնագիտական հանձնախմբերի, ակադեմիական ազնվության պահպանման ու գիտահետազոտական աշխատանքների որակի ապահովման հարցերով զբաղվող և ՊԴ կազմին մեթոդաբանական խորհրդատվություն տրամադրող հանձնաժողովների ստեղծում
- Գրագողության բացահայտման ու կանխարգելման ներդրված մեխանիզմների և էլեկտրոնային համակարգերի (օրինակ՝ TURNITIN համակարգը) գործադրում
- Գիտահետազոտական և ավարտական աշխատանքներին ներկայացվող միասնական, համընդունելի և հստակ սահմանված պահանջներ
- Պարբերական վերապատրաստումների կազմակերպում վարչական կազմի (քաղաքականություն մշակողներ, որոշում կայացնողներ) հետ և քննարկումների իրականացում ՄՍ և առնչվող ոլորտների փորձագետների և մասնագետների հետ

ԳԾԱՊԱՏԿԵՐ 3. ԲՈՒՀԵՐՈՒՄ ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄԱՅԻՆ ՄԱԿԱՐԴԱԿ

ԲՈՒՀԻ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ ՄԱԿԱՐԴԱԿ

- Ուսումնամեթոդական ուղեցույցներ ՊԴ կազմի և ուսումնառողների համար
- Բուհի ներքին շահակիցների (հատկապես ՊԴ կազմի և ուսումնառողների) համար պարբերական և հետևողական վերապատրաստումների և լրացուցիչ դասընթացների կազմակերպում՝ ՄՍ և առնչվող ոլորտների փորձագետների և մասնագետների հետ համագործակցության միջոցով
- Ամբիոններին կից գործող խորհրդատուների և/կամ ՊԴ կազմի կողմից խորհրդատվությունների և աջակցության տրամադրում ուսումնառողներին՝ միտված ազգային և միջազգային չափանիշներին համապատասխան գիտահետազոտական աշխատանքներ կատարելու հմտությունների ու կարողությունների զարգացմանը, առաջատար հետազոտական աշխատանքների ու գիտական արդյունքների ստեղծմանը
- Ոսումնառողների ակադեմիական ազնվությանն առնչվող դրույթների պահպանման վերահսկում ՊԴ կազմի կողմից համապատասխան մեխանիզմների (ինստիտուցիոնալ քաղաքականությունից բխող կանոնակարգեր, ընթացակարգեր, գրագողության բացահայտման էլ. համակարգեր և այլն) կիրառմամբ՝ միտված ակադեմիական անազնվության բոլոր հնարավոր դրսևորումների կանխմանը
- ՄՍ ոլորտի հենքային և ընդհանուր գիտելիքների տրամադրմանն ուղղված պարտադիր կամ կամընտրական դասընթացի՝ որպես ՄԿԾ-ի կարևոր բաղադրիչի ներդրում
- Ուսումնառողների պրակտիկաների կազմակերպում SS, նորարարությունների ոլորտներում ստեղծարար և սկսնակ կազմակերպությունների հետ ակտիվ համագործակցությամբ՝ միտված պրակտիկաների ձևերի բազմազանեցմանը, գիտահետազոտական, նորարարական ծրագրերում և նախագծերում ուսումնառողների ակտիվ մասնակցությանը և գիտահետազոտության ոլորտում շուկաների արդի պահանջների բավարարմանը միտված հետազոտական ու գործնական հմտությունների զարգացմանը
- Բուհի ուսումնագիտական կենտրոնների և ուսանողական գիտական ընկերությունների կողմից ներբուհական և միջբուհական գիտաժողովների, սեմինարների և կլոր-սեղանների կազմակերպում՝ միտված բուհի երիտասարդ գիտական ներուժի բացահայտմանը, ուսումնառողների ստեղծած գիտական արդյունքների տարածմանն ու ուսումնառության մեջ դրանց արդյունավետ կիրառմանը
- Բուհի որակի ապահովման պատասխանատուների կողմից բուհի ներքին շահակիցների շրջանում ակադեմիական ազնվության պահպանմանն առնչվող հարցումների իրականացում, արդյունքների վերլուծություն և դրանց հիման վրա բարելավման ուղիների սահմանում
- Բուհի գրադարանի կողմից մշակված հայեցակարգ(եր)ի, կանոնակարգ(եր)ի (էլեկտրոնային և ոչ էլեկտրոնային ռեսուրսների մատչելիության, օգտագործման կանոնների և վերահսկողության վերաբերյալ) առկայություն և գրադարանավարների համար շարունակական վերապատրաստումների կազմակերպում ոլորտի մասնագետների հետ համագործակցությամբ
- Գրադարան-ստորաբաժանում համագործակցային կապի ամրապնդում՝ միտված մասնագիտական գրականության ձեռքբերման հնարավորությունների ընդլայնմանը

Ինչպես ցույց է տրված առաջադրվող մոդելում (Գծապատկերներ 1-3), ՄՍ կրթության կազմակերպումը բազմաշերտ գործընթացների և սերտորեն փոխկապակցված բաղադրիչների համալիր է, որի յուրաքանչյուր մակարդակում առկա բաղադրիչների ապահովումը պայմանավորում է մնացած մակարդակների բաղադրիչների արդյունավետ գործադրումը: Ակնհայտ է, որ ՄՍ կրթությունը պետք է ներառի և՛ պետական, և՛ ինստիտուցիոնալ մակարդակներում իրականացվող այնպիսի գործընթացներ, որոնց ներդաշնակեցումն ու համաչափ բարեփոխումները նպատակաուղղված կլինեն գիտելիքահենք հասարակության զարգացմանն ու ՄՍ պահպանման մշակույթի ամրապնդմանը:

ՄՍ կրթության կազմակերպման ներբուհական գործընթացներն ու միջոցառումները (այսինքն՝ ՄՍ մոդելում ներկայացված ինստիտուցիոնալ մակարդակի բաղադրիչները) ռազմավարական պլանավորման տեսանկյունից պետք է աստիճանակարգային ու տրամաբանական փոխկապակցվածություն ունենան և միտված լինեն ազգային մակարդակում առկա հիմնախնդիրների լուծմանը: Հաշվի առնելով ազգային և ինստիտուցիոնալ առանձնահատկությունները, ինչպես նաև սույն հետազոտական աշխատանքի արդյունքում վեր հանված ոլորտային հիմնախնդիրներն ու մարտահրավերները՝ ցանկալի է, որ ՀՀ բուհերը նախևառաջ վերանայեն իրենց քաղաքականությունները, դրանցից բխող ռազմավարությունները, մարտավարություններն ու ընթացակարգերը, որոնք կարող են հիմք հանդիսանալ ներբուհական միջավայրում ՄՍ պահպանման խնդրի լուծման և ՄՍ կրթության կազմակերպմանն ուղղված գործընթացների իրականացման համար: ՀՀ բուհերը կարող են մշակել, օրինակ, ՄՍ պահպանման հայեցակարգեր, ընթացակարգեր ու կանոնակարգեր՝ այդպիսով համակարգային դարձնելով առկա խնդիրների լուծման մոտեցումները, ինչպես նաև նվազեցնելով բուհերում ՄՍ խախտման դեպքերին ոչ հետևողական, կամայական կամ մասնավոր լուծումներ տալու հավանականությունը: Բուհերի կառավարման մակարդակում նշված խնդիրների ֆորմալացումը միաժամանակ և՛ հիմք կհանդիսանա բուհերի բոլոր ստորաբաժանումների կողմից ապագայում մշակվելիք ներքին մարտավարությունների համար, և՛ կապահովի խնդիրների լուծման համակարգային մոտեցումների կիրառումը:

ՄՄ պահպանմանն առնչվող ռազմավարությունների, կանոնակարգերի և այլ փաստաթղթերի մշակման նախնական փուլում կարևոր է ապահովել ոչ միայն վարչական կազմի, այլ նաև ՄՄ կրթության կազմակերպման մոդելի ինստիտուցիոնալ մակարդակում նախանշված առանցքային ներքին շահակիցների մասնակցությունը՝ կառավարչական, վարչական, ուսումնադաստիարակչական ու գիտահետազոտական ներբուհական խնդիրների լուծումները նպատակային և իրատեսական դարձնելու համար:

ՄՄ պահպանման ինստիտուցիոնալ խնդիրների լուծման նման մոտեցումը կիրառելի է նաև ՄՄ թեմաներով ուսումնական դասընթաց(ներ)ի կամ կրթական ծրագր(եր)ի մշակման համար: Մասնավորապես՝ ցանկալի է, որ բուհի համապատասխան ուսումնական ստորաբաժանումը բուհի կառավարիչներին, ներառյալ որոշում կայացնողներին, ներկայացնի ՄՄ կրթական ծրագրի կամ դասընթացի (վերա)մշակման առաջարկությունը, որը պետք է բխի տվյալ ստորաբաժանման ռազմավարությունից և բարելավման պլանից, վերհանված կարիքներից, վերլուծության արդյունքներից և բուհում ՄՄ պահպանման մշակույթի ամրապնդման անհրաժեշտությունից: Տվյալ կրթական ծրագրի կամ դասընթացի մշակումն ու իրականացումն ապահովում է աշխատանքային խումբը, որտեղ հարկավոր է ներգրավել բուհի ներքին և արտաքին առանցքային շահակիցներին: Աշխատանքային խումբը պետք է առաջնորդվի ՄՄ պահպանման, բարձրագույն կրթության և հարակից այլ ոլորտներին առնչվող համապատասխան օրենսդրական դրույթներով, ՀՀ Որակավորումների ազգային շրջանակով (ՀՀ ՈԱՇ) (տվյալ կրթական ծրագրով կամ դասընթացով նախատեսված ուսումնառության վերջնարդյունքների և ՀՀ ՈԱՇ-ի մակարդակների բնութագրիչների համապատասխանության ապահովման համար), միջազգային բարձրագույն կրթության տարածքներին ինտեգրվելու ձգտմամբ, ՀՀ բարձրագույն կրթության համակարգի առանձնահատկություններից և տվյալ բուհի կանոնադրական գործառույթներից բխող այլ հիմնադրույթներով ու պահանջներով: Մշակված կամ վերանայված ՄՄ կրթական ծրագիրը կամ դասընթացը այնուհետև ներկայացվում, քննարկվում ու երաշխավորվում է հաստատման ֆակուլտետային խորհրդի կողմից և հաստատվում բուհի գիտական խորհրդի կողմից: ՄՄ կրթության

կազմակերպման ռազմավարական քայլերի իրականացման և կրթական ծրագրի կամ դասընթացի մշակման վերոնշյալ օրինակը ցույց է տալիս, որ այս հետազոտության արդյունքների հիման վրա մշակված ՄՍ կրթության կազմակերպման մոդելի բաղադրիչները հնարավոր է տեղայնացնել ՀՀ բուհերի համատեքստում:

Այսպիսով, մտավոր սեփականության կրթությունը հիմք է ստեղծում կրթական, գիտաուսումնական, գիտահետազոտական և մանկավարժագիտական գործընթացներում գիտելիքի ստեղծման, փոխանցման, տարածման, պահպանման ու արդյունավետ օգտագործման համար՝ շեշտադրելով և՛ պետական, և՛ ինստիտուցիոնալ մակարդակներում մտավոր ստեղծագործական գործունեությունը խթանող ճկուն քաղաքականությունների իրականացման անհրաժեշտությունը: ՀՀ բուհերում, սույն հետազոտության շրջանակում կատարված ուսումնասիրությունների արդյունքների համաձայն, առկա են ՄՍ կրթության կազմակերպման համար անհրաժեշտ նախադրյալները և ազգային մակարդակում գիտելիքահենք տնտեսության կայուն զարգացումը խթանող իրավական (պետական մակարդակ) ու ինստիտուցիոնալ (բուհական մակարդակ) մի շարք կառուցակարգեր: Սակայն ՄՍ կրթության արդյունավետ կազմակերպման համար ՀՀ բուհերը պետք է մշակեն ու կիրառեն հստակ քաղաքականություններ ու առավել արդյունավետ ռազմավարություններ, և իրենց գործունեության շրջանակում ՄՍ ոլորտի առանցքային այլ դերակատարների հետ ակտիվ համագործակցությամբ կիրառեն ՄՍ պահպանման ռազմավարական ու մանկավարժագիտական մոտեցումներ՝ ի շահ իրավագիտակցության բարձր մակարդակ ունեցող ակադեմիական հասարակության և գիտելիքահենք տնտեսության կայուն զարգացման:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Գիտամանկավարժական ու մասնագիտական գրականության վերլուծության, տեսական ու հետազոտական աշխատանքների, ինչպես նաև ազգային ու միջազգային փորձի ուսումնասիրության արդյունքները թույլ են տալիս հանգել հետևյալ եզրակացություններին:

1. Գիտելիքահենք տնտեսության զարգացման հիմքում մտավոր սեփականության կրթությունն է, որի միջոցով ձևավորվում և զարգանում է գիտելիքահենք հասարակությունը: Մտավոր սեփականության պահպանման արդի խնդիրների լուծումն ու մարտահրավերների հաղթահարումը հնարավոր է միայն կրթված, իրավագիտակցության բարձր մակարդակ ունեցող և համապարփակ գիտելիքներ ունեցող գիտելիքահենք հասարակության ակտիվ գործունեության միջոցով:
2. Միջազգային լավագույն փորձի ուսումնասիրության արդյունքները ցույց են տալիս, որ բուհերում մտավոր սեփականության, ներառյալ ակադեմիական ազնվության պահպանմանն առնչվող առանցքային խնդիրները լուծելի են ազգային օրենսդրական մեխանիզմների, ինստիտուցիոնալ (բուհերի) մակարդակում հստակ քաղաքականությունների ու ռազմավարությունների և ժամանակակից մանկավարժագիտական մոտեցումների համալիր կիրառման պայմաններում: Սա գլխավորապես պայմանավորված է նրանով, որ մտավոր սեփականության կրթության կազմակերպումը բազմաբաղադրիչ գործընթաց է և պահանջում է ազգային ու ինստիտուցիոնալ քաղաքականությունների, ֆորմալ և ոչ ֆորմալ մեխանիզմների, ավանդական և ժամանակակից մանկավարժագիտական մոտեցումների արդյունավետ համակցում ու կիրառում:
3. Մասնագիտական գրականության, գիտական աղբյուրների, ինչպես նաև բուհերի գործունեության առանցքային բաղադրիչների համակողմանի ուսումնասիրման արդյունքները փաստում են, որ ՀՀ բուհերի ինստիտուցիոնալ մակարդակներում հիմնականում բացակայում են մտավոր սեփականության պահպանման վերաբերյալ հստակ մշակված քաղաքականություններն ու ռազմավարությունները, կամ առանձին դեպքերում առկա են որոշ ներքին կանոնակարգեր, որոնց

մասնակի կամ ոչ հետևողական գործարկումը խոչընդոտում է բուհերում մտավոր սեփականության պահպանմանն առնչվող հիմնախնդիրների համակարգային, լիարժեք և երկարաժամկետ լուծումը:

4. Թեև ՀՀ բուհերում առկա են մտավոր սեփականության կրթության համար անհրաժեշտ նախադրյալները, սակայն մտավոր սեփականության կրթությունը հիմնականում սահմանափակվում է որոշ ոլորտների (իրավաբանություն, տնտեսագիտություն) և համապատասխանաբար այդ ոլորտներում մասնագետներ պատրաստելուն ուղղված կրթական ծրագրերի կամ դասընթացների իրականացմամբ, որը բավարար չափով չի լուծում ազգային մակարդակում գիտելիքահենք հասարակության զարգացման խթանման խնդիրը:
5. ՀՀ բուհերում հեղինակային իրավունքի խախտման, ներառյալ ակադեմիական անազնվության լայնատարած դրսևորումները գլխավորապես պայմանավորված են ՀՀ բուհերում մտավոր սեփականության պահպանմանն առնչվող քաղաքականությունների ու ռազմավարությունների բացակայությամբ կամ դրանց մասնակի և ոչ հետևողական կիրառմամբ, ինչպես նաև ակադեմիական հանրության շրջանում մտավոր սեփականության պահպանման ոլորտի գիտելիքների, իրազեկվածության ու իրավագիտակցության ցածր մակարդակով:
6. Ակադեմիական ազնվության խախտման (մասնավորապես գրագողության) հիմնախնդրի՝ որպես բուհերում հեղինակային իրավունքի խախտման ամենալայն տարածում ունեցող դրսևորման կանխարգելումը պահանջում է մանկավարժագիտական արդյունավետ այնպիսի մոտեցումների կիրառում, որոնք նախևառաջ նպատակուղղված կլինեն ուսումնառող-դասավանդող փոխգործակցության արդյունավետության բարձրացմանը, ուսումնառողների ակադեմիական օրինակելի վարքի ձևավորմանն ու ամրապնդմանը, ուսումնառողների վերլուծական-քննադատական մտքի զարգացմանն ու խրախուսմանը:
7. Համապարփակ ուսումնասիրությունների և վերլուծությունների արդյունքների հիման վրա մշակված մտավոր սեփականության կրթության կազմակերպման մոդելը ներառում է ազգային և ինստիտուցիոնալ մակարդակներում անհրաժեշտ

առանցքային բաղադրիչները, վերջիններիս փոխկապակցվածությունը մտավոր սեփականության պահպանման մշակույթի ձևավորման ու ամրապնդման տեսանկյունից, ինչպես նաև ՀՀ բուհերում մտավոր սեփականության կրթության կազմակերպման հաջորդական քայլերը: Մոդելի հիման վրա մշակված՝ մտավոր սեփականության թեմայով ուսումնական դասընթացն ամփոփում է այս հետազոտական աշխատանքի առանցքային արդյունքները և բովանդակային ու կառուցվածքային առումներով համապատասխանեցված է ՀՀ բուհերում կրթության կազմակերպման ձևերին:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Անտոնյան Ք., *Ակադեմիական անազնվության դրսևորումները ՀՀ բուհական համակարգում:* Բաց հասարակության հիմնադրամներ-Հայաստան, Երևան, 2013:
2. Բարձրագույն կրթության ռազմավարական հետազոտությունների ազգային կենտրոն, *Հայաստանի բարձրագույն կրթության բարեփոխումների առկա վիճակը և հեռանկարները Բոլոնիայի գործընթացի համատեքստում:* Զեկույց, Երևան, «Փրինթինֆո» հրատ., 2012:
3. Գալստյան Հ. (թարգմ.), Վարդանյան Ս. (խմբ.), *eIFL-IP Գիտելիքի հասանելիության խթանում. հեղինակային իրավունքը և գրադարանները:* Ձեռնարկ գրադարանների համար հեղինակային իրավունքի և նրա հետ առնչվող խնդիրների մասին, «Էդիթ Պրինտ» հրատ., Երևան, 2012:
4. Խաչատրյան Ն., *Ակադեմիական ազատությունների և կրթության որակի ապահովման ընդլայնման հնարավորությունները ՀՀ բուհերում*: «Բուհերի ակադեմիական ազատությունների և մրցակցային պայմանների ապահովումը բարձրորակ կրթության գրավական» միջազգային գիտաժողովի նյութեր, Երևանի հյուսիսային համալսարանի հրատարակչություն, 2013:
5. Խաչատրյան Ռ., *Հետազոտական համալսարանների անհրաժեշտությունը ՀՀ կրթական համակարգում:* Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվաբանական համալսարան, Կրթության կառավարում, Բանբեր 2(22), Երևան, 2012:
6. Խաչատրյան Ռ., Կարաբեկյան Ս., Բուդաղյան Ա., Պապոյան Ա., Ասրյան Լ., Վիրաբյան Ա., Մազմանյան Ա., Շահինյան Ա., *Մարդկային ռեսուրսների կառավարումը բարձրագույն ուսումնական հաստատություններում:* Ուսումնամեթոդական ձեռնարկ, Երևան, «Լինգվա» հրատ., 2015:
7. Խաչիկյան Ա., Ներսիսյան Ս., «Հայհեղինակ» հասարակական կազմակերպություն, *Մտավոր սեփականություն: Տեսություն և պրակտիկա:* Երևան, «Անտարես» հրատ., 2008:

8. «Խաչմերուկ բանավիճային ակումբ» հասարակական կազմակերպություն, ԵՊՀ քաղաքակրթական և մշակութային հետազոտությունների կենտրոն, *Գրագողությունը հայաստանյան բուհերում. ինչպե՞ս քանդել թնջուկը:* Եվրասիա համագործակցության հիմնադրամ, Շվեդիայի Միջազգային զարգացման և համագործակցության գործակալություն (SIDA), Երևան, 2011:
9. «Հայհեղինակ» հասարակական կազմակերպություն, Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպություն (մշակված է 2006 թ. անգլերեն բնօրինակի հիման վրա), *Ստեղծագործական արտահայտություններ: Ընդհանուր գիտելիքներ հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին, նախատեսված է փոքր և միջին ձեռնարկությունների համար:* «Մտավոր սեփականությունը բիզնեսի համար» շարք 4, «Հայհեղինակ» ՀԿ, «Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպություն» հրատ., N 918, 2009:
10. Հարությունյան Ն., Գրիգորյան Ա., *Կրթության զարգացման և որակավորման խնդիրները:* Մանկավարժական միտք (1-2), Տաթև գիտակրթական համալիր, «Զանգակ» հրատ., Երևան, 2013, 5-11:
11. Մարզպանյան, Հ., *Շուկայական համակարգի գիտելիքահենք էվոլյուցիան և պետության նոր տնտեսական դերը:* Լրաբեր հասարակական գիտությունների, N 1, 2012, 95-107:
12. Մտավոր սեփականության գործակալություն (թարգմ.՝ «Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպություն» անգլերեն բնօրինակից, 2007 թ.), *Սերտիր անցյալը, կերտիր ապագան: Արվեստը և հեղինակային իրավունքը:*«Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպություն» հրատ., N 935 AR, 2009:
13. Մտավոր սեփականության գործակալություն (թարգմ.՝ անգլերեն բնօրինակից), Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպություն (ՄՍՀԿ), *Պատկերացում հեղինակային իրավունքի մասին:* N 909 AR, Երևան, 2009:
14. Պետրոսյան Հ., *Մասնագիտական կրթության որակի ապահովման գործընթացի կառավարման մանկավարժական տեխնոլոգիաներ (տեսություն և պրակտիկա)*: Մենագրություն, Երևան, «ԱՆ-ՋՈՆ» հրատ., 2010:

15. Վարդանյան Գ., *Գիտելիքահենք տնտեսություն. հնարավորություններ և մարտահրավերներ:* Երևան, «Գիտություն» հրատ., 2008:
16. Վարդանյան Ս., *Հեղինակային իրավունք և հարակից իրավունքներ*: ԱՄՆ Կառավարության «SABIT ALUMNI» անհատական դրամաշնորհ, Երևան, 2010:
17. Վարդանյան Ս., *Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների կոլեկտիվ կառավարում*: ԱՄՆ Կառավարության «SABIT ALUMNI» անհատական դրամաշնորհ, Երևան, «Էդիթ Պրինտ» հրատ., 2010:
18. Վարդանյան Ս. (թարգմ.), Մտավոր սեփականության գործակալություն (թարգմ.՝ ԱՄԿ և ՄՍՀԿ անգլերեն բնօրինակից, 2004 թ.), *Մտավոր սեփականության գաղտնիքները: Ուղեցույց փոքր և միջին արտահանողների համար:* Մտավոր սեփականության գործակալություն, United Nations Sales N E.04.III.T.2., 2010:
19. Антонова М. А. (2006). *Управление интеллектуальной собственностью на рынке образовательных услуг: на примере высшего учебного заведения: Дисс.* Московская финансово-промылшенная академия, 08.00.05 - Экономика и управление народным хозяйством (экономика, организация и управление предприятиями, отраслями, комплексами: сфера услуг), Москва.
20. Бентли Л., Шерман Б. (2004). *Право интеллектуальной собственности. Авторское право* (Пер. С анкгл. В.Л. Вольфсона). СПб, Юридический центр Пресс, 535с.
21. Данилова Н. (2013). *Роль организационной культуры в развитии интеллектуального капитала организации. Материалы международной научной конференции "Обеспечение академических свобод вузов и конкурентных условий - залог высококачественного образования.* Ереван, Издательство Северного университета.
22. Коршунова Н. М. (2006). *Интеллектуальная собственность: краткий учебный курс.* Москва; НОРМА, 304с.
23. Самохвалова Е. 2007. Управление интеллектуальной собственностью вуза. Высшее образование в России // *Научно-педагогический журнал Министерства образования и науки Российской Федерации,* 11/07, 72-77.

24. Abramovitz. M. & David P. (2001). Two Centuries of American Macroeconomic Growth. From Exploitation of Resource Abundance to Knowledge-driven Development. Stanford Institute for Economic Policy Research, August, *SIEPR Discussion Paper 01-05,*Stanford.
25. Barnhart R.K. (Ed.) (1988). *Chambers Dictionary of Etymology* – Edinburgh: Chambers.
26. Carlaw K., Oxley L., Walker P., Thorns D., & Nuth M. (2006). *Beyond the Hype: Intellectual Property and the Knowledge Society/Knowledge Economy*. UK:Blackwell Publishing Ltd.
27. Cheema Z. A. (2011). Conceptual Awareness of Research Scholars about Plagiarism at Higher Education Level: Intellectual Property Right and Patent. Preston University Islamabad. *International Journal of Academic Research, Vol. 3 No. 1. Part II*, 665-669.
28. Cohen. W., Nelson R., & Walsh J. (2002). Links and Impacts: The Influence of Public Research on Industrial R&D. *Management Science, 48(1),* 1-23.
29. Crews K. (2017). *Copyright, Education and Libraries. Armenian Law and the International Experience*. Seminar on 27th of October, Yerevan, American University of Armenia.
30. Crown D. F. & Spiller M. S. (1998). Learning from the Literature: A Review of Empirical Research. *Journal of Business Ethics, 17*, 683-700.
31. Curaj A., Liviu M., Pricopie R., Salmi J., &Scott P. (2015). The European Higher Education Area. Between Critical Reflections and Future Policies. *Springer*, Cham; Heidelberg; New York; Dordrecht; London.
32. Davis B. G. (1993). *Preventing Academic Dishonesty. Tools for Teaching*. San Francisco, CA: Jossey-Bass.
33. Etzkowitz H. & Leydesdorff L. (1997). *Universities and the Global Knowledge Economy. A Triple Helix of University-Industry-Government Relations*. New York; London: Pinter.

34. Evans E., Craig D., & Mietzel G. (1993). Adolescent's Cognitions and Attributions for Academic Cheating: A Cross-national Study.*The Journal of Psychology, 127(6),* 585-602.
35. Farrington D. J. (2001). *Borderless Higher Education: Challenges to Regulation, Accreditation and Intellectual Property Rights*. Kluwer Academic Publishers. Netherlands, Minerva 39, 63-84.
36. Kashkur M., Parshutin S., & Borisov A. (2010). Research into Plagiarism Cases and Plagiarism Detection Methods. Scientific *Journal of Riga Technical University, Computer Science, Information Technology and Management Science, Vol. 44,* 139-144.
37. Klausman J. (1999). *Teaching About Plagiarism in the Age of the Internet*. Teaching English in the Two-Year College 27, 209-12.
38. Kling R. & Lamb R.; Brynjolfsson E.& Kahin B. (Eds.)(2000). *IT and Organizational Change in Digital Economies: ASociotechnical Approach,Understanding theDigital Economy – Data, Tools, and Research*. Cambridge, MA: MIT Press.
39. McCabe D. L. & Trevino L. K. (1993). Academic Dishonesty: Honor Codes and Other Contextual Influences. *Journal of Higher Education, 64(5),* 522-538.
40. McCabe D. L. & Trevino L. K. (2002). Honesty and Honor Codes. Washington: *Academe, 88(1),* 37- 41.
41. McCabe D. L. & Trevino L. K. (1997). Individual and Contextual Influences on Academic Dishonesty: A Multicampus Investigation. *Research in Higher Education, 38(3),* 379-396.
42. Micklethwait J. and Wooldridge A. (2003). *A Future Perfect: The Challenge and Promise of Globalization*. New York: Random House.
43. Molas-Gallart J., Salter A., Patel P., Scott A., & Duran X. (2002). *Measuring Third Stream Activities*. Final Report to the Russel Group of Universities. Brighton: SPRU, University of Sussex.
44. Munro D. (2000). The Knowledge Economy. *Journal of Australian Political Economy 45*, 5–17.

45. Musselin Ch. & Teixeira P.N. (Eds.) (2014). Reforming Higher Education. Public Policy Design and Implementation. *Springer Dordrecht Heidelberk,* Vol. 41, New York.
46. Office for Harmonization in the Internal Market (Trade Marks and Designs) (2015). *Intellectual Property and Education in Europe: Study on IP Education in School Curricula in the EU Member States with Additional International Comparisons*. Report, September.
47. Overbey G. A. U. & Guiling S. F. (1999). Student Perceptions of Plagiarism and the Evaluation of Assignments.*Journal of Excellence in College Teaching, 10(3),* 3–22.
48. Powell W. & Snellman K. (2004). The Knowledge Economy. *Annual Review of Sociology,* Vol. 30,199-220.
49. Rockman H. B. (2004). An Internet Delivered Course: Intellectual Property Law For Engineers And Scientists. 34th ASEE/IEEE Frontiers in Education Conference, October 20-23, Savannah, GA, The Institute of Electrical and Electronics Engineers (IEEE).
50. Salem M. I. (2014). Higher Education as a Pathwayto Enterpreneurship. *International Business & Economics Research Journal-March/April*. Vol. 13, N 2, 289-294.
51. Scanlan C. L. (2006). Strategies to Promote a Climate of Academic Integrity and Minimize Student Cheating and Plagiarism. NJ.:*Journal of Allied Health, 35(3),* 179-185.
52. Shattock M. (2003). *Managing Successful Universities. Berkshire: Society for Research into Higher Education*. Open University Press.
53. Weisburd S. I. (2003). *Strategies in Creation of Intellectual Property Technology Assets, Seminar: Handling Intellectual Property Issues in Business Transactions*. Practicing Law Institute, New York, 141-173.

ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐ, ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆ, ՓԱՍՏԱԹՂԹԵՐ, ԿԱՐԳԵՐ

54. «Բարձրագույն կրթության մասին» ՀՀ օրենքի նախագիծ
55. «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենք (ընդունման ամսաթիվ՝ 14.12.2004):

56. Բեռնի կոնվենցիա, Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպություն (ստորագրման ամսաթիվ՝ 09.09.1886), https://www.aipa.am/u_files/file/International/BerneConvention.pdf:
57. «Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին» ՀՀ օրենք (ընդունման ամսաթիվ՝ 05.12.2000):
58. Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվաբանական (2014 թ. ապրիլի 30-ից՝ լեզվահասարակագիտական) համալսարանի բակալավրի և մագիստրատուրայի ուսանողների գիտելիքների գնահատման կարգ (հաստատման ամսաթիվ՝ 27.04.2009):
59. Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվաբանական (2014 թ. ապրիլի 30-ից՝ լեզվահասարակագիտական) համալսարանի պրոֆեսորադասախոսական անձնակազմի պատվո վարքականոն (հաստատման ամսաթիվ՝ 06.12.2011):
60. Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվաբանական (2014 թ. ապրիլի 30-ից՝ լեզվահասարակագիտական) համալսարանի 2013-2017 թթ. ռազմավարական ծրագիր:
61. Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվաբանական (2014 թ. ապրիլի 30-ից՝ լեզվահասարակագիտական) համալսարանի ուսանողի ուղեցույց, Երևան, Լինգվա, 2004:
62. Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարանի ենթակառուցվածքային հավատարմագրումից հետո մշակված գործողությունների պլան, 2016:
63. Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարանի փորձնական ինստիտուցիոնալ հավատարմագրման նպատակով իրականացված փորձաքննության 2013 թ. զեկույցում ներկայացված խորհրդատվություններից բխող գործողությունների պլան-ժամանակացույց, 2015:
64. Կենտրոնական Ասիայի ամերիկյան համալսարանի կանոնադրություն, 2015:
65. Կենտրոնական Ասիայի ամերիկյան համալսարանի «Մտավոր սեփականության իրավունք» և «Թվային գրագրություն» առարկայական նկարագրեր, 2015:

66. Կենտրոնական Ասիայի ամերիկյան համալսարանի ուսանողների ակադեմիական ազնվության մշակույթի վերաբերյալ կանոնակարգ (հաստատման ամսաթիվ՝ 27.02.2015):
67. Կենտրոնական Ասիայի ամերիկյան համալսարանի ուսանողների ուղեցույց, https://auca.kg/uploads/Final%20Version%20with%20fotos%20NEW.pdf (20.06.2017):
68. Հայաստանի Հանրապետության 2014-2025 թթ. հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագիր, ՀՀ կառավարության 2014 թ. մարտի 27-ի N 442 Ն որոշում:
69. Հայաստանի Հանրապետության մաքսային օրենսգիրք (ընդունման ամսաթիվ՝ 06.07.2000):
70. Հայաստանի Հանրապետության մտավոր սեփականության իրավունքների պաշտպանության ռազմավարություն, ՀՀ կառավարության N 22 որոշում, (ընդունման ամսաթիվ՝ 10.06.2011):
71. Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն (ընդունման ամսաթիվ՝ 05.07.1995):
72. Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգիրք (ընդունման ամսաթիվ՝ 05.05.1998):
73. Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգիրք (ընդունման ամսաթիվ՝ 01.07.1998):
74. Հայաստանի Հանրապետությունում մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման կարգը հաստատելու և ՀՀ կառավարության 2000 թվականի հուլիսի 7-ի N 372 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին ՀՀ կառավարության 30 հունիսի 2011 թվականի N 978-Ն որոշում:
75. «Հեղինակային իրավունքի մասին» ՀՀ օրենքի նախագիծ:
76. «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» ՀՀ օրենք, (ընդունման ամսաթիվ՝ 15.06.2006):

77. Մասնագիտական ուսումնական հաստատության ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծության ձևաչափ, Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն հիմնադրամ, www.anqa.am/hy/հավատարմագրում/#Papers:
78. Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր (ընդունման ամսաթիվ՝ 10.12.1948) (թարգմ.՝ ՄԱԿ-ի հանրային տեղեկատվության վարչության երևանյան գրասենյակ), http://www.un.am/res/Human%20Rights/Armenian%20Documents/UDHR_arm.pdf, http://www.un.am/res/Human%20Rights/, Armenian%20Documents/UDHR_arm.pdf :
79. Մտավոր սեփականության հուսալի և արդյունավետ պահպանության իրականացման հայեցակարգ, ՀՀ կառավարության 2009 թ. ապրիլի 2-ի Ն 14 արձանագրային որոշում:
80. Ստեղծագործությունների հրապարակային կատարման, հեռարձակման, ձայնագրությունների միջոցով վերարտադրության, վարձույթով տալու, դեկորատիվ-կիրառական արվեստի ստեղծագործություններն արդյունաբերության մեջ վերարտադրելու համար հեղինակային վարձատրության նվազագույն դրույքաչափերը սահմանելու և ՀՀ Կառավարության 1999 թվականի ապրիլի 22-ի N 251 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին ՀՀ կառավարության N 506-Ն որոշում (ընդունման ամսաթիվ՝ 11.01.2007):
81. Փարիզի կոնվենցիա, Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպություն (ընդունման ամսաթիվ՝ 20.03.1883), https://www.aipa.am/u_files/file/International/parisconvenrus.pdf:
82. Открытый Кыргызстан (Open KG), Народное образование и наука в Кыргызстане; Конференции научные РИНЦ, 2014: http://www.open.kg/about-kyrgyzstan/history/kyrgyzstan-during-the-soviet-period/571-narodnoe-obrazovanie-i-nauka-v-kyrgyzstane.html.
83. “Treaty Proposal on Limitations and Exceptions for Libraries and Archives” Version 4.3, 05.07.2012; http://www.ifla.org/node/5858, https://www.ifla.org/files/assets/hq/topics/exceptions-limitations/tlib_v4_4.pdf.

84. International Association of Universities (2012). Observatory Magna Charta Universitatum, IAU-MCO Guidelines for an Institutional Code of Ethics in Higher Education: https://www.iau-aiu.net/IMG/pdf/ethics_guidelines_finaldef_08.02.13.pdf.

ՀՀ ԲՈՒՀԵՐԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

85. Գավառի պետական համալսարանի կանոնադրություն (նախկին կանոնադրություն), ՀՀ կառավարության 2002 թ. սեպտեմբերի 12-ի No. 1535-Ն որոշում:
86. Գավառի պետական համալսարանի կանոնադրություն, ՀՀ կառավարության 2016 թ. հունիսի 9-ի N 660-Ն որոշում:
87. Երևանի Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարանի կանոնադրություն, ՀՀ կառավարության 2014 թ. նոյեմբերի 27-ի N 1407-Ն որոշում:
88. Երևանի Մովսես Խորենացու անվան համալսարանի կանոնադրություն (որպես ՍՊԸ՝ կանոնադրության գրանցում՝ 07.08.96 թ., փոփոխված տարբերակ՝ 21.12.1999 թ. և 01.03.2004 թ.):
89. Երևանի պետական համալսարանի կանոնադրություն (նախկին կանոնադրություն), ՀՀ կառավարության 2011 թ. օգոստոսի 4 –ի N 1117-Ն որոշում:
90. Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվաբանական համալսարանի կանոնադրություն, ՀՀ կառավարության 2002 թ. հոկտեմբերի 31-ի N 1929-Ն որոշում:
91. Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարանի կանոնադրություն, ՀՀ կառավարության 2014 թ. ապրիլի 30-ի N 456-Ն որոշում:
92. Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան կանոնադրություն, ՀՀ կառավարության 2002 թ. 24 հոկտեմբերի N 1813-Ն որոշում:
93. Հայաստանի ազգային ագրարային համալսարանի կանոնադրություններ (գործող և նախկին կանոնադրություններ), https://anau.am/images/stories/pastatxter/

kanonadrutyun/1.pdf, https://anau.am/images/stories/pastatxter/kanonadrutyun.pdf (20.01.2016):

94. Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի կանոնադրություն, ՀՀ կառավարության 2014 թ. նոյեմբերի 13-ի N 1290-Ն որոշում:
95. Հայաստանի ամերիկյան համալսարանի կանոնադրություն՝ 2012 թ. նոյեմբերի 26-ին վերանայված և վերահաստատված Կալիֆոռնիայի Հոբաբարձուների խորհրդի կողմից, http://aua.am/wp-content/uploads/2016/02/AUACBylawsAMENDED-AND-RESTATED-October-2015-.pdf (20.12.2015):
96. Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան կանոնադրություն, ՀՀ Կառավարության 2005թ. հոկտեմբերի 6-ի N 1718-Ն որոշում, նույն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին 2012 թվականի նոյեմբերի 15-ի N 1436-Ն որոշումներ:

ՀՀ ԲՈՒՀԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՆՔՆԱՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ԶԵԿՈՒՅՑՆԵՐ

97. Գավառի պետական համալսարանի ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծական զեկույց, 2016:
98. Երևանի Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարանի ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծական զեկույց, 2013:
99. Երևանի Մովսես Խորենացու անվան համալսարանի ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծական զեկույց, 2015:
100. Երևանի պետական համալսարանի ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծական զեկույց, 2013:
101. Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական պետական լեզվաբանական (2014 թ. ապրիլի 30-ից՝ լեզվահասարակագիտական) համալսարանի ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծական զեկույց, 2012:
102. Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծական զեկույց, 2015:
103. Հայաստանի ազգային ագրարային համալսարանի ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծական զեկույց, 2012:

104. Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծական զեկույց, 2012:
105. Հայաստանի ամերիկյան համալսարանի ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծական զեկույց, 2014:
106. Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծական զեկույց, 2014:
107. «Մխիթար Գոշ» հայ-ռուսական միջազգային համալսարանի ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծական զեկույց, 2013:

ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ

108. Կենտրոնական Ասիայի ամերիկյան համալսարան, Ղրղզստան, https://auca.kg/:
109. «Հայհեղինակ» հասարակական կազմակերպություն, http://www.armauthor.am/home.html:
110. «Հայաստանի բարձրագույն կրթության համակարգում բարեվարքության ամրապնդում և կոռուպցիայի դեմ պայքար» համաժողովի զեկույց (գլխ. զեկուցող՝ Միլիցա Պոպովիչ), նոյեմբերի 16-17, 2015 թ. Եվրոպայի խորհուրդ/Եվրոպական միություն, Արևելյան գործընկերության երկրների համար գործընկերություն հանուն լավ կառավարման, https://rm.coe.int/16805937a5, https://www.coe.int/hy/web/yerevan/strengthening-integrity-and-combatting-orruption-in-higher-education-in-armenia (20.10.2017):
111. Ղրղզստանում մտավոր սեփականության ու նորարարությունների պետական ծառայություն (Кыргызпатент), http://patent.kg/index.php/ru/ (15.10.2015):
112. Միլովանովիչ Մ. (համահեղինակներ՝ Սեներիկ Ի., Ավետիսյան Մ., Խավանսկա Տ.), Կոռուպցիայի դեմ պայքարը և բարեվարքության արմատավորումը Հայաստանի կրթական ոլորտում, 2015, http://www.osf.am/wp-content/uploads/2016/01/Integrity-report_final_arm_12.11.2015.pdf (15.12.2017):
113. Մտավոր սեփականության գործակալություն, ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարություն, https://www.aipa.am/hy/about-us/:
114. Մտավոր սեփականության իրավունքի կենտրոն Հայաստանում, www.ipr-center.org:

115. Սմիթ Յ., Բարձրագույն ուսումնական հաստատություններում (բուհ-եր) դերակատարների էթիկայի կանոնագիրք, Եվրոպայի Խորհրդի «Հայաստանի բարձրագույն կրթության համակարգերում բարեվարքության ամրապնդում և կոռուպցիայի դեմ պայքար» ծրագիր, 2016, http://ysu.am/uploaded/CodesofEthics_IanSmith_ARM_01.30.2016.pdf (28.11.2017):
116. Վարդանյան Ս., *Հեղինակային իրավունքները և հարակից իրավունքները Հայաստանում: Հետազոտություն և օրենսդրության տեղեկատու:* «Գրքի հարթակ» ծրագիր, Հայաստանի հրատարակիչների ազգային ասոցիացիա, «Next Page» հիմնադրամ, Հրատարակիչների միջազգային ասոցիացիա, 2012, http://www.bookplatform.org/images/activities/226/copyrarm_thewholebook.pdf, http://www.bookplatform.org/images/resources/67/copyrights_in_arm_analysis_svardanyan.pdf (10.12. 2016):
117. Auril/Universities UK 2002. Managing Intellectual Property. The Guide to Strategic Decision-Making in Universities; http://www.auril.org.uk/Portals/26/documents/strategic_guide.pdf (03.15.2014).
118. Barrow A., Batchelor L. R., Breger A., JD, Duval-Couetil N., Scott L., Skinner J., Speser Ph., & Weilerstein Ph. (2014). *Managing Student Intellectual Property Issues at Institutions of Higher Education: An AUTM Primer*. AUTUM Technology Tranfer Practice Manual, 3rd ed., Vol. 2; http://venturewell.org/open2015/wp-content/uploads/2014/11/TTP_V2_StudentIP.pdf (28.08.2017).
119. Bretag T. (2013). *Challenges in Addressing Plagiarism in Education*. PloS Med, 10(12); http://journals.plos.org/plosmedicine/article?id=10.1371/journal.pmed.1001574 (28.08.2017).
120. Crews K. (2017). *Study on Copyright Limitations and Exceptions for Libraries and Archives: Updated and Revised*. Standing Committee on Copyright and Related Rights, World Intellectual Property Organization. Thirty-Fifth Session, November 13-17, Geneva; http://www.wipo.int/edocs/mdocs/copyright/en/sccr_35/sccr_35_6.pdf, (15.12.2017).

121. EIFL-IP. Draft Law on Copyright: including Model Exceptions and Limitations for Libraries and Consumers; http://www.eifl.net/eifl-draft-law-copyright, http://www.eifl.net/country/armenia (02.02.2018).
122. ELCA – Electronic Information for Libraries (EIFL)–IP, EIFL in Armenia; http://www.eifl.net/country/armenia, http://www.eifl.net/country/armenia (15.02.2018).
123. Hendershott, A., Drinan, P. F., & Cross, M. (2000). Toward Enhancing a Culture of Academic Integrity. *NASPA Journal, 37(4),* 587-597; http://www.tandfonline.com/doi/pdf/10.2202/1940-1639.1164 (15.11.2017).
124. IFLA Committee on Copyright and Other Legal Matters; http://www.ifla.org/III/clm/p1/ilp.htm (10.01.2018).
125. Inoue T. (2010). *Strategies and Methodologies for Designing IP Education and Training Programs IP Education and Training Programs for Different Target Groups.* WIPO Regional Workshop on Effective Management of Intellectual Property Academies: Challenges and Responces, (February 2-4). Jakarta, INPIT-National Center for Industrial Property Information and Training; http://www.wipo.int/edocs/mdocs/aspac/en/wipo_ip_jkt_10/wipo_ip_jkt_10_topic03_01.pdf (19.12.2017).
126. Intellectual Property Office (2011).*Intellectual Asset Management for Universities;* http://www.ipo.gov.uk/ipasset-management.pdf (11.03.2017).
127. International Quality Group of Council for Higher Education Accreditation 2017; http://www.chea.org/ (10.08.2017).
128. iParadigms LLC. (2012). *White Paper. The Plagiarism Spectrum. Instructor Insights into the 10 Types of Plagiarism,* TURNITIN; http://www.ed.ac.uk/files/atoms/files/10-types-of-plagiarism.pdf (16.12.2017).
129. Organization for Economic Co-operation and Development (OECD) (1996). The Knowledge-based Economy. *General Distribution OCDE/GD (96)102,* Paris; https://www.oecd.org/sti/sci-tech/1913021.pdf (28.07.2017).
130. Organization for Economic Co-operation and Development (OECD) 2009. The Future of International Migration of OECD Countries; https://books.google.am/books?id=jAJwhqtODWgC&lpg=PA83&ots=QdnR4pZmU2&dq=Unemployment%20migration%2

0in%20OECD%20countries&pg=PP1#v=thumbnail&q=Unemployment%20migration%20in%20OECD%20countries&f=true (20.04.2017).

131. Park W. (2010). The Copyright Dilemma: Copyright Systems, Innovation and Economic Development. *Journal of International Affairs, 64(1);* http://www.jstor.org/stable/24385185 (10.11.2017).
132. "Plagiarism". *English Oxford Living Dictionaries, Oxford University Press,* 2018; https://en.oxforddictionaries.com/definition/plagiarism (26.01.2018).
133. Quality Assurance and Combating Academic Corruption. Quality Assurance and the Challenge of Addressing Academic Corruption, Webinar N 3; http://www.chea.org/4DCGI/cms/review.html?Action=CMS_Document&DocID=1083&MenuKey=main (11.11.2017).
134. Yu P. K. (2012). *Intellectual Property Training and Education for Development*, 28 Am. U. Int'l L. Rev. 311; https://scholarship.law.tamu.edu/cgi/viewcontent.cgi?article=1400&context=facscholar (02.12.2017).
135. Varghese N. V. (2017), *Academic Corruption: Plagiarism.* Council for Higher Education Accreditation (CHEA), CHEA International Quality Group, Webinar, Series N 2; http://www.chea.org/4DCGI/cms/review.html?Action=CMS_Document&DocID=1061&MenuKey=main, http://www.chea.org/userfiles/webinar/ciqg-webinar-071017.mp4, http://www.chea.org/userfiles/webinar/varghese-july2017-webinar-slides.pdf (30.10.2017).
136. World Intellectual Property Organization (WIPO), http://www.wipo.int/about-ip/en/ (18.03.2016).
137. World Intellectual Property Organization 2008. WIPO Intellectual Property Handbook. N 489(E), 2nd edition; http://www.wipo.int/edocs/pubdocs/en/intproperty/489/wipo_pub_489.pdf (15.12.2014).

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

ՀԱՎԵԼՎԱԾ 1. «ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ» ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑԻ ՆԿԱՐԱԳԻՐ

Դասընթացի անվանում	Մտավոր սեփականության պահպանման հիմնախնդիրները բարձրագույն կրթության ոլորտում		
Դասընթացի տեսակ	Պարտադիր/կամընտրական		
Կրթական մակարդակ	Բակալավր		
Մասնագիտություն	Մանկավարժություն		
Որակավորում	Մանկավարժ		
Դասընթացի տևողությունը	1 կիսամյակ		
Կրեդիտի քանակ	5		
Գնահատման բաղադրիչներ	**Բաղադրիչ**	**100%**	**Բաղադրիչի անվանումը**
	Բ1	10%	Ներկայություն/մասնակցություն
	Բ2	30%	Միջանկյալ գրավոր գնահատում (թեստ)
	Բ3	30%	Ամփոփիչ գրավոր գնահատում
	Բ4	30%	Ինքնուրույն հետազոտական աշխատանք /պաշտպանությամբ/

1. ԴԱՍԸՆԹԱՑԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ

Դասընթացը բաղկացած է տեսական և գործնական բաղադրիչներից, որոնց համալիր կիրառումը նպատակաուղղված է ուսանողների շրջանում մտավոր սեփականության առարկայի մասին հստակ պատկերացումների կազմմանը և ոլորտային առանցքային և ընդհանրական գիտելիքների ձեռքբերմանը: Տեսական բաղադրիչը ներառում է դասախոսություններ (ուսուցման ակտիվ և ինտերակտիվ մեթոդների կիրառմամբ) և ներկայացումներ ներկայացվող թեմաների շուրջ, որոնցից ձեռք բերված գիտելիքներն ամրապնդվում են անհատական և խմբային քննարկումների, գործնական վարժությունների, տեսաերիզների դիտումների, սեմինարների և դեպքերի ուսումնասիրությունների միջոցով: Դասընթացը ներկայացնում է մտավոր սեփականության ոլորտում առկա հիմնախնդիրների հիմնական շրջանակը՝ թույլ տալով ուսանողին յուրացնել տրամադրված գիտելիքը և դրանք կիրառել գործնական վարժությունների միջոցով, ինքնուրույն կատարել հետազոտական աշխատանքներ

ներկայացվող թեմաների շրջանում, ինքնուրույն կերպով ուսումնասիրված խնդիրները ներկայացնել ու հիմնավորել քննարկումների ժամանակ:

Դասընթացում ընդհանուր բովանդակային շրջանակը ներառում է՝

- գիտելիքահենք տնտեսության և գիտելիքահենք հասարակության ժամանակակից տեսությունները, ժամանակակից մեկնաբանությունները, զարգացման միտումները,
- մտավոր սեփականության ոլորտի զարգացման պատմությունն ու էությունը, ոլորտի հիմնախնդիրների փոխկապակցվածությունը գիտելիքահենք տնտեսության զարգացման հետ,
- մտավոր սեփականության պահպանման ոլորտը կարգավորող միջազգային և ազգային դաշտերը (հեղինակային իրավունքի շեշտադրմամբ), առկա խնդիրներն ու դրանց դրսևորումները բարձրագույն կրթության ոլորտում,
- բարձրագույն կրթության փոխազդեցությունը մտավոր սեփականության ոլորտի բարելավման վրա, առկա մարտահրավերներն ու հաղթահարման ռազմավարական ու մանկավարժագիտական ուղիները,
- ՀՀ-ում մտավոր սեփականության պահպանման ոլորտի հիմնախնդիրներն ազգային քաղաքական, սոցիալ-մշակութային և ակադեմիական առանձնահատկությունների տեսանկյունից
- ՀՀ-ում մտավոր սեփականության պահպանման ու կարգավորման ոլորտի հիմնական դերակատարները (ներառյալ բուհերը), նրանց գործունեության ազդեցությունը մտավոր սեփականության պահպանման խնդիրների լուծմանն ուղղված գործընթացներում:

2. ԴԱՍԸՆԹԱՑԻ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Դասընթացի **նպատակն է** ուսումնասիրել մտավոր սեփականության ոլորտի և դրան սերտ առնչություն ունեցող հիմնախնդիրները բարձրագույն կրթության ոլորտում՝ բացահայտելու մտավոր սեփականության և գիտելիքահենք տնտեսության սերտ կապը, գիտելիքահենք հասարակության զարգացման առկա խնդիրներն ու բարձրագույն կրթության արդյունավետ իրականացման միջոցով այդ խնդիրների հաղթահարման հնարավորությունները:

Դասընթացի նպատակից բխում են հետևյալ **խնդիրները**՝

- ուսանողներին տրամադրել առանցքային ընդհանրական գիտելիքներ մտավոր սեփականության ոլորտի և բարձրագույն կրթության ոլորտում այդ ոլորտի առկա հիմնախնդիրներիմասին՝ վերջիններիս քննարկելով կրթության կառավարման և մանկավարժագիտական տեսանկյուններից,

- ուսանողների շրջանում հիմնարար պատկերացում ձևավորել մտավոր սեփականության ոլորտի, դրա ճյուղերի (հեղինակային իրավունքի շեշտադրմամբ), դրա հիմնական ճյուղերի և առանձնահատկությունների մասին և դրանք դիտարկել բուհերի տեսանկյունից,
- խթանել ուսանողների ակադեմիական ազնվության պահպանմանն ուղղված օրինակելի կայուն վարքի դրսևորումն ուսումնառության բոլոր փուլերում:

3. ԴԱՍԸՆԹԱՑԻ ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Դասընթացի ավարտին ուսանողը պետք է <u>իմանա</u>՝

1. մտավոր սեփականության պահպանման հիմնախնդիրները, դրանցառաջացման նախադրյալները, զարգացման պատմությունը, էությունն ու առանձնահատկությունները,
2. մտավոր սեփականության պահպանման ազգային ու միջազգային մակարդակներում առկա արդի հիմնախնդիրները,
3. մտավոր սեփականության պահպանման հիմնախնդիրների փոխկապակցվածությունը գիտելիքահենք տնտեսության և կրթության զարգացման հետ,
4. մտավոր սեփականության և կրթության զարգացմանմիտումներն ու մարտահրավերները ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատություններում,
5. մտավոր սեփականության իրավունքի, մասնավորապես հեղինակային իրավունքի պահպանման ազգային և միջազգային օրենսդրական դաշտի հիմքերն ու կրթությանը և ուսումնառությանն առնչվող առանցքային դրույթները,
6. ակադեմիական ազնվության պահպանման ընդունված կանոններն ու գրագողության կանխարգելման մարտավարությունները:

Դասընթացի ավարտին ուսանողը պետք է <u>կարողանա</u>՝

1. կիրառել մտավոր սեփականության ոլորտի հենքային ընդհանուր գիտելիքներն ուսումնառության բոլոր փուլերում,
2. առանձնացնել մտավոր սեփականության հիմնական ճյուղերն ու տեսակները ևբացատրել դրանց առանձնահատկությունները,
3. տարբերակել մտավոր սեփականությամբ (հեղինակային իրավունքով) պահպանվող և չպահպանվող օբյեկտները,
4. տարբերակել գրագողության հիմնական տեսակները, գիտական աղբյուրներին հղում կատարելու ընդունված ձևերն ու գիտահետազոտական աշխատանքներին ներկայացվող պահանջների ապահովման եղանակները,
5. վերլուծել հեղինակային իրավունքի պահպանման հիմնախնդիրները

մանկավարժագիտության և կրթության կառավարման ոլորտներում,

6. համեմատական վերլուծություն կատարել հեղինակային իրավունքի պահպանման տարբեր փորձառություններ ունեցող բուհերի միջև և առաջադրել ՀՀ բուհերում լավագույն փորձի տեղայնացման մանկավարժական ուղիներ,
7. բացահայտել և գնահատել ակադեմիական անազնվության խնդրի դրսևորումներն ու դրանց ազդեցությունն անձի զարգացման, անհատական ու մասնագիտական որակների ձևավորման և բուհերի կրթական միջավայրի վրա,
8. ցուցաբերել վերլուծական-քննադատական մոտեցում մտավոր սեփականության իրավունքների պահպանման և խախտման վերաբերյալ դեպքերի ուսումնասիրությունների և դիտարկումների ժամանակ,
9. կիրառել ակադեմիական ազնվության պահպանման մարտավարություններն ուսումնառության և գիտահետազոտական աշխատանքների կատարման գործընթացներում:

Դասընթացի ավարտին ուսանողը պետք է <u>տիրապետի</u>՝

1. մտավոր սեփականության և հատկապես հեղինակային իրավունքի պահպանման ռազմավարական և մանկավարժագիտական մոտեցումներին, մասնավորապես՝
   - գիտահետազոտական աշխատանքների արդյունավետ կատարման տեխնիկաներին,
   - գիտական շարադրանքի և ակադեմիական ու տեղեկատվական գրագրության չափանիշներին, սկզբունքներին ու կանոններին,
   - էլեկտրոնային և ոչ էլեկտրոնային գիտական ռեսուրսներից օգտվելու կանոններին և պայմաններին և դրանց հղումներ կատարելու ձևերին,
   - ժամանակակից ուսուցման և տեղեկատվական էլեկտրոնային և ոչ էլեկտրոնային տեխնոլոգիաներին,
   - ակադեմիական ազնվության պահպանման կայուն վարքի ձևավորման և գրագողությունից խուսափելու մարտավարություններին:
2. զարգացած և զարգացող երկրների բուհերում հեղինակային իրավունքի պահպանմանն առնչվող հիմնախնդիրներին առաջադրված տեսագործնական լուծումներին, ՀՀ բարձրագույն կրթության համակարգում լավագույն փորձի տեղայնացման տեսագործնական մոտեցումներին,
3. խմբային քննարկումներում, թիմային և անհատական հետազոտական աշխատանքներում մտավոր սեփականության պահպանման ոլորտի հիմնադրույթներն արտացոլելու,

հակափաստարկներ առաջադրելու, հիմնավորումներ կատարելու, քննադատական-վերլուծական մոտեցումներ և ոլորտի առանցքային գիտելիքները ցուցաբերելու կարողունակություններին:

4. ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ, ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ

Ուսումնառության մեթոդներ	Դասավանդման մեթոդներ	Գնահատման մեթոդներ
• ակտիվ և ինտերակտիվ քննարկումներ • գիտաժողովներին/ սեմինարներին մասնակցություն և կարծիքների փոխանակում • անհատական/խմբային աշխատանքների ներկայացում • մտագրոհ • խնդրի լուծման վրա հիմնված վարժություններ • բովանդակային վերլուծություններ և հիմնավորումներ • դեպքի ուսումնասիրություն • ցուցադրվող տեսաերիզների շուրջ դիտարկումների կատարում • մասնագիտական գրականության ընթերցում և առանցքային դրույթների վերհանում	• ակտիվ և ինտերակտիվ դասախոսություններ (ներառյալ հրավիրվյալ դասախոսի կամ ոլորտի մասնագետի կողմից դասախոսություններ) • ներկայացումներ • մտագրոհ • քննարկումներ, հարցադրումներ • սեմինարներ • խնդրի լուծման վրա հիմնված վարժություններ • բովանդակային վերլուծություններ • դեպքի ուսումնասիրություն • ուսանողի կողմից անցկացվող քննարկումներ • խմբային/թիմային աշխատանքներ • տեսաերիզների դիտում և քննարկում • մասնագիտական խորհրդատվության տրամադրում /մենթորինգ/	• միջանկյալ/ամփոփիչ գնահատումներ, թեստեր • գործընկերային գնահատում (դասախոս-ուսանող, ուսանող-ուսանող) • ինքնագնահատում • բաց հարցադրումներ • գործնական վարժություններ • լսարանում հանձնարարվող առաջադրանքներ • դեպքի ուսումնասիրություն • անհատական/թիմային հետազոտական աշխատանքներ • մասնագիտական գրականության ընթերցում • հարցումների իրականացում

5. ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

Այս դասընթացի իրականացման համար անհրաժեշտ գրականությունը կարող է ամբողջությամբ ընդգրկել այս ատենախոսությունում օգտագործված հայալեզու և օտարալեզու մասնագիտական գրականությունը:

6.ԳՆԱՀԱՏՄԱՆ ՍԱՆԴՂԱԿ	
Այս դասընթացի վերջնարդյունքների գնահատման համար դասախոսն ընտրում է տվյալ բուհում կիրառվող գնահատման սանդղակը:	
7. ԴԱՍԸՆԹԱՑԻ ԲԱՇԽՈՒՄՆ ԸՍՏ ԹԵՄԱՆԵՐԻ ԵՎ ՇԱԲԱԹՆԵՐԻ	
1	**Շաբաթ 1. Ներածություն. մտավոր սեփականության ոլորտի, գիտելիքահենք տնտեսության և կրթության փոխկապակցվածությունը** 1.1. Ներկայացնել դասընթացի ընդհանուր նկարագիրը,նպատակն ու խնդիրները: 1.2. Ներկայացնել մտավոր սեփականության, գիտելիքահենք տնտեսության և կրթության ոլորտի (բարձրագույն կրթության շեշտադրմամբ) փոխկապակցվածությունն ապահովող գործոնները, արդի հիմնախնդիրները, կրթության ոլորտում մտավոր սեփականության ոլորտի խնդիրների արտացոլումը:
2	**Շաբաթ 2. Մտավոր սեփականության ոլորտի առանձնահատկությունները** Ներկայացնել և քննարկելմտավոր սեփականության ոլորտը, հիմնական ճյուղերը (հեղինակային իրավունքի շեշտադրմամբ), դրանց առանձնահատկությունները:
3	**Շաբաթ 3. Հեղինակային իրավունքի պահպանումը և առկա խնդիրները բարձրագույն կրթության ոլորտում** Ներկայացնել և քննարկել մտավոր սեփականության տեսակ համարվող հեղինակային իրավունքի պահպանմանն առնչվող հիմնախնդիրները, հեղինակային իրավունքի առանձնահատկությունները, հեղինակային իրավունքով պահպանվող և չպահպանվող օբյեկտները:
4	**Շաբաթ 4. Մտավոր սեփականության և հեղինակային իրավունքի պահպանման ազգային և միջազգային փորձը** Ներկայացնել մտավոր սեփականության և հեղինակային իրավունքի պահպանման ազգային և միջազգային փորձը, ոլորտի հիմնական դերակատարների գործունեությունը և ազդեցությունը:
5	**Շաբաթ 5. Հեղինակային իրավունքի պահպանման ազգային օրենսդրական դաշտը** Ներկայացնել և քննարկել «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» ՀՀ գործող օրենքի հիմնադրույթներն ու առանձնահատկությունները, դրանց արտացոլումը ՀՀ բուհերի գործունեության շրջանակում:
6	**Շաբաթ 6. Հեղինակային իրավունքի պահպանման ազգային օրենսդրական**

	դաշտում նախատեսվող փոփոխությունները Ներկայացնել և քննարկել «Հեղինակային իրավունքի մասին մասին» ՀՀ գործող օրենքի նախագիծը, հիմնադրույթներն ուառանձնահատկությունները: Կատարել համեմատական վերլուծություն հեղինակային իրավունքին առնչվող գործող օրենքի և օրենքի նախագծի միջև, բացահայտել փոփոխություններն ու դրանց հնարավոր ազդեցությունը ՀՀ բուհերի գործունեության վրա:
7	**Շաբաթ 7. Բուհերի դերը մտավոր սեփականության և հեղինակային իրավունքի պահպանման ոլորտի բարեփոխման գործում** Ներկայացնել և քննարկել մտավոր սեփականության և հեղինակային իրավունքի պահպանման մի շարք հիմնադրույթների գործնական կիրառումն ու դրսևորումները ՀՀ բուհերում, բուհերի դերակատարությունը մտավոր սեփականության և հեղինակային իրավունքի պահպանման գործում:
8	**Շաբաթ 8. Սեմինար** Քննարկել և ամփոփել 1-ից 7-րդ շաբաթների ընթացքում ներկայացված թեմաները:
9	**Շաբաթ 9. Միջանկյալ գրավոր գնահատում** Գրավոր միջանկյալ գնահատման թեմաներն ընդգրկում են ուսումնառության 1-7-րդ շաբաթների ընթացքում քննարկված և 8-րդ շաբաթում ամփոփված թեմաները:
10	**Շաբաթ 10. Հրավիրյալ դասախոսի/մտավոր սեփականության ոլորտի մասնագետի կամ փորձագետի կողմից դասախոսություն**
11	**Շաբաթ 11. Ակադեմիական ազնվությունը որպես հեղինակային իրավունքի պահպանման ակադեմիական դրսևորում** Ներկայացնել *ակադեմիական ազնվություն* հասկացությունը, դրա տեսակները, խախտման դրսևորումներն ու առանձնահատկությունները: Քննարկել ակադեմիական ազնվության խախտման դրսևորումները (գրագողության խնդրի շեշտադրմամբ) ու ամենատարածված սխալները բուհերում և առաջադրել ակադեմիական անազնվության դրսևորումների կանխման ռազմավարական և մանկավարժագիտական մոտեցումներ ՀՀ բուհերի համար:
12	**Շաբաթ 12. Դեպքի ուսումնասիրություն** Հանձնարարել ուսումնասիրել դեպքը (օրինակ ակադեմիական ազնվության խախտման դեպք), դիտարկման միջոցով բացահայտել և քննարկել խնդիրները, առաջադրել համապատասխան լուծումներ:
13	**Շաբաթ 13. Սեմինար**

	Քննարկել 1-ից 12-րդ շաբաթների ընթացքում ներկայացված թեմաները և ամփոփել ձեռքբերված արդյունքները:
14	**Շաբաթ 14. Ամփոփիչ գրավոր գնահատում** Գրավոր ամփոփիչ գնահատման թեմաներն ընդգրկում են ուսումնառության 1-ից 13-րդ շաբաթների ընթացքում քննարկված թեմաները:
15	**Շաբաթներ 15, 16. Թիմային աշխատանքի ներկայացում (պաշտպանությամբ)** Ուսանողների կողմից մշակված ակադեմիական ազնվության վարքականոնի մոդելի ներկայացում: Թիմային աշխատանքի կատարմանը ներկայացվող պահանջները մանրամասն ներկայացված են 7-րդ բաժնում:
16	

7. ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐ

ԹԻՄԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔ. ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԱԶՆՎՈՒԹՅԱՆ ՎԱՐՔԱԿԱՆՈՆԻ ՄՇԱԿՈՒՄ

Թիմային աշխատանքը ենթադրում է է 3-ից 4 ուսանողներից բաղկացած խմբերի կողմից կատարված աշխատանքի ներկայացում՝ հիմնված թիմի բոլոր անդամների մասնակցությամբ կատարված հետազոտության արդյունքների վրա: Յուրաքանչյուր թիմ մշակելու է ՀՀ բուհերի ուսանողների համար ակադեմիական ազնվության վարքականոն համապատասխան հիմնավորված դրույթներով:

Հետազոտական աշխատանքը ենթադրում է ինքնուրույն և թիմային աշխատանքների համակցում՝ տեսական ու գործնական բաղադրիչների համալիր կիրառմամբ: Հետազոտական աշխատանքի կատարման և ամբողջ ուսումնառության ընթացքում ուսանողները պետք է հետևեն ակադեմիական գրագրության և հետազոտական աշխատանքի կազմման կառուցվածքային հիմնական պահանջներին (ներածություն, հիմնական բովանդակություն, եզրակացություն, օգտագործված գրականության ցանկ): Աշխատանքը տեսական մասից բացի պետք է ներառի նաև գործնական մաս (ակադեմիական վարքականոնի մոդելի դեպքում գործնական նշանակությունը ենթադրում է բուհերում դրա կիրառական նշանակությունը): Թիմային աշխատանքը պետք է էլեկտրոնային և թղթային տարբերակներով հանձնել աշխատանքի պաշտպանությունից 5 աշխատանքային օր առաջ:

- ***Թիմային/հետազոտական աշխատանքին ներկայացվող բովանդակային պահանջները***՝

Ուսումնասիրությունը կատարվում է հաջորդական փուլերով, որոնց միջև գոյություն

ունի տրամաբանական պատճառահետևանքային կապ: Այն կատարվում է հետևյալ հաջորդականությամբ՝

- գրականության ընտրություն, ձեռքբերում, ուսումնասիրում,
- գրականության համառոտագրում,
- աշխատանքի պլանի կազմում (ըստ անհրաժեշտության՝ աշխատանքի սևագիր տարբերակի քննարկում դասախոսի հետ),
- աշխատանքի շարադրում:

Հետազոտական աշխատանքի կատարման ընթացքում ուսանողները պետք է օգտագործեն այս դասընթացի շրջանակում ձեռք բերված գիտելիքները, հմտություններն ու կարողությունները: Հետևապես թիմի յուրաքանչյուր անդամ պետք է համակցի տեսական գիտելիքն ու գործնական հմտությունները՝ կիրառելով վերլուծական-քննադատական մոտեցում ուսումնասիրված նյութերի մշակման ժամանակ: Ուսանողները պետք է ինքնուրույն մտածելու կարողություն դրսևորեն հետազոտված նյութը ներկայացնելու, փաստերը վերլուծելու, ընդհանրացումներ կատարելու և կոնկրետ եզրահանգումներ անելու համար:

- ***<u>Թիմային/հետազոտական աշխատանքին ներկայացվող տեխնիկական պահանջները՝</u>***

- ընդհանուր ծավալը՝ նվազագույնը 9 էջ, առավելագույնը 12 էջ,
- աշխատանքը ներկայացվում է տիտղոսաթերթով, որը ներառում է սպասարկող ամբիոնի անունը /գլխատառերով/, հեղինակի անունը, ազգանունը, հայրանունը /գլխատառերով/, ղեկավարի անունը և ազգանունը /գլխատառերով/,
- տեքստի լուսանցքները՝ վերև՝ 25 մմ, ներքև՝ 25 մմ, աջ՝ 25 մմ, ձախ՝ 25 մմ,
- շարվածքի տառատեսակը՝ Sylfaen,
- հիմնական տառաչափը՝ 12,միջտողային ինտերվալը՝ 1.5,
- գրականության ցանկը պետք է դասակարգված լինի ըստ այբբենական կարգի և ընդգրկի առնվազն 6 անուն/գրականություն (գրականությունը պետք է լինի հավաստի գիտական աղբյուրներից, և աշխատանքի տեքստի ներսում պետք է պարտադիր հղումներ կատարվեն օգտագործված գրականության ցանկում ներառված բոլոր աղբյուրներին),
- օգտագործված գրականության ցանկում ներառված գիտական աղբյուրները պետք է լինեն ամբողջական (աղբյուրի հեղինակը, վերնագիրը, հատորը, հրատարակության

տեղը, տարեթիվը /մամուլի դեպքում նաև համարը/ և էջը):

Թիմային/հետազոտական աշխատանքի գնահատման ժամանակ հաշվի են առնվելու բովանդակային և տեխնիկական պահանջները, աշխատանքի ներկայացման ձևերն ու հմտությունները և ներկայացված աշխատանքի վերաբերյալ հարցադրումներին տրվող պատասխանների հիմնավորվածությունը:

8. ԼՐԱՑՈՒՑԻՉ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԴԱՍԸՆԹԱՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

- Արգելվում է գրագողությունը, այլոց մտքերը /մտավոր սեփականության/ օգտագործելու դեպքում ուսանողը պարտավոր է նշել աղբյուրը՝ ըստ ընդունված ակադեմիական ձևաչափի: Գրագողության հայտնաբերման դեպքում աշխատանքը գնահատվում է զրո:

- Ուսանողները պետք է կարողանան օգտվել էլեկտրոնային գիտական աղբյուրներից՝ հստակ տարբերելով արժանահավատ և ոչ արժանահավատ աղբյուրները: Օտարալեզու գրականությունից օգտվելը խրախուսվում է:

- Դասընթացի ընթացքում տեսագրումն ու ձայնագրումն արգելվում է: Տեսագրված և ձայնագրված նյութերի տարածումը կարող է կատարվել միայն դասախոսի թույլտվությամբ:

ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՄԱՍԻՆ ՀՀ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐ

Այս հավելվածում ներկայացվում են այն առաջարկություններն ու հիմնավորումները[17], որոնք տեղ են գտել ՀՀ հեղինակային իրավունքի մասին օրենքի նախագծում՝ հիմնված Ք. Քրուզի կատարած ուսումնասիրությունների ու առաջարկությունների, ինչպես նաև ՀՀ-ում շահագրգիռ բոլոր կողմերի մասնակցությամբ իրականացված բազմաթիվ քննարկումների արդյունքում վերհանված խնդիրների վրա: Ստորև ներկայացվող առաջարկություններն ու հիմնավորումները վերաբերում են մասնավորապես գրադարանների և արխիվների, որոշ դեպքերում՝ նաև բարձրագույն ուսումնական հաստատությունների կողմից հեղինակային իրավունքով պահպանման ենթակա օբյեկտների օգտագործմանը: Պետք է նշել, որ ներկայացված տասն առաջարկություններից ինն ընդունվել են և ընդգրկվել «Հեղինակային իրավունքի մասին» ՀՀ օրենքի նախագծում:

1. Ստեղծագործության պահպանում

Գրադարաններին և արխիվներին պետք է թույլատրել առանց հեղինակի (կամ այլ իրավատիրոջ) համաձայնության ստեղծագործությունը պահպանելու նպատակով պատճենահանումներ կատարել իրենց ֆոնդերի հրապարակված և չհրապարակված ստեղծագործություններից (ներառյալ ստեղծագործությունները տարբեր ձևաչափերի փոխելը):

Հիմնավորում

Սույն դրույթը ներկայացնում է բացառություն վերարտադրության իրավունքին: Այս դրույթով գրադարաններին և արխիվներին թույլատրվում է վերարտադրել անհրաժեշտ քանակությամբ օրինակներ և սպասարկել դրանք ընթերցողներին բնօրինակների փոխարեն, որոնք կարող են շատ հին ու վնասված կամ հազվագյուտ օրինակներ լինել: Սույն դրույթը պետք է կիրառելի լինի բոլոր կատեգորիաների ստեղծագործությունների համար անկախ տեսակից ու ձևաչափից և հնարավորություն

[17] Առաջարկությունների փաթեթը և համապատասխան հիմնավորումները տրամադրվել է eIFL-IP համակարգող և Հայաստանի ամերիկյան համալսարանի Տեղեկատվության և սպասարկման բաժնի վարիչ, գրադարանավար և հեղինակային իրավունքի հարցերով զբաղվող մասնագետ Հասմիկ Գալստյանի կողմից:

տա գրադարաններին և արխիվներին պահպանելու բոլոր տեսակի ստեղծագործությունները վնասվելուց, մաշվելուց և կորստից:

2. Ստեղծագործության միջգրադարանային մատակարարում

Առանց հեղինակի (կամ այլ իրավատիրոջ) համաձայնության գրադարաններին պետք է թույլատրվի ստեղծագործությունների օրինակներ միմյանց մատակարարել փոստով, ֆաքսով կամ էլեկտրոնային անվտանգ փոխանցման միջոցներով այն պայմանով, որ ստեղծագործության օրինակը տպագրելուց հետո էլեկտրոնային ֆայլն անմիջապես ոչնչացվի: Ստեղծագործության օրինակը ստացող գրադարանը կարող է տպագիր օրինակը տրամադրել իր օգտագործողներին:

Հիմնավորում

Սույն դրույթը ներկայացնում է բացառություն փոխատվության և տարածման իրավունքին: Ոչ մի գրադարան իր երկրի ներսում չի կարող ձեռք բերել բոլոր հրատարակված գրքերն ու ամսագրերը կամ թվային ստեղծագործությունները: Որոշ գրադարաններ ունեն տարբեր թեմաներով ընդհանուր ֆոնդեր, որոշ գրադարաններ՝ միայն մասնագիտական կամ հազվագյուտ գրականության ֆոնդեր: Հետևաբար, գրադարանների և արխիվների հիմնական գործառույթներից է ընթերցողների խնդրանքովստեղծագործությունների փոխանակումը միմյանց: Միջգրադարանային գործառույթներն առանցքային նշանակություն ունեն գրադարանների ֆոնդերի բազմազանությունը, գիտելիքի առավելագույն մատչելիությունն ու օգտատերերին լավագույն սպասարկում ապահովելու համար:

Գրադարաններին տրվում է օրինական կերպով ձեռք բերված ստեղծագործությունների փոխատվության և տարածման իրավունք:

3. Ստեղծագործության թարգմանություն

Առանց հեղինակի (կամ այլ իրավատիրոջ) համաձայնության ուսուցիչը կամ ուսանողը կարող է թարգմանել ստեղծագործությունը պայմանով, որ դա արվում է ոչ առևտրային նպատակներով: Այսպիսի թարգմանությունը կարող է օգտագործվել բացառապես անձնական, կրթական, ուսումնական և գիտահետազոտական նպատակների համար:

Առանց հեղինակի (կամ այլ իրավատիրոջ) համաձայնության գրադարանները և

արխիվները կարող են թարգմանել օրինական կերպով ձեռք բերված կամ մուտք գործած ստեղծագործությունները պայմանով, որ այդ ստեղծագործությունները մատչելի չեն իրենց օգտագործողներին մայրենի լեզվով: Այսպիսի թարգմանությունը կարող է օգտագործվել բացառապես անձնական, կրթական, ուսումնական և գիտահետազոտական նպատակների համար:

Հիմնավորում

Սույն դրույթը ներկայացնում է բացառություն թարգմանության իրավունքին: Համաշխարհային գրականության գերակշիռ մասը գրված է շատ տարածված չինարեն, անգլերեն, ֆրանսերեն իսպաներեն լեզուներով: Սա խոչընդոտում է միջազգայինգիտական գրականության ու տեղեկության հասանելիությունն այլ ազգերի համար: Գրադարանները և արխիվները այն հիմնական կառույցներն են, որոնք գիտաշխատողներին, հետազոտողներին շարունակական կրթությամբ զբաղվողներին ապահովում են անհրաժեշտ գրականությամբ: Այսօր ինտերնետի միջոցով օգտվողներին համաշխարհային գիտական պաշարներին մուտք ունենալու նոր հնարավորություններ են ընձեռվում: Շատ երկրներում գրադարանավարներին և արխիվիստներին խնդրում են թարգմանչական ծառայություններ մատուցել, որը հնարավոր է իրականացնել նոր տեխնոլոգիաների և մեքենայական թարգմանությունների միջոցով: Այսպիսով, սույն բացառությամբգրադարաններին և արխիվներին թույլ կտրվի կատարել թարգմանություններ ըստ օգտվողների խնդրանքի բացառապես կրթական, ուսումնական նպատակներով:

4. Ստեղծագործության վերարտադրություն անձնական և հետազոտական նպատակների համար

Անհատ օգտագործողները կարող են վերարտադրել ստեղծագործություններն ուսումնական, հետազոտական, ստեղծագործական և այլ անձնական նպատակների համար առանց շահույթ հետապնդելու: Այս բացառությունը պետք է ընդգրկի թե՛ տպագիր, թե՛ էլեկտրոնային ստեղծագործությունները:

Հիմնավորում

Սույն դրույթը թույլատրում է յուրաքանչյուր անձի վերարտադրել և՛ տպագիր, և՛ էլեկտրոնային ստեղծագործությունը ոչ առևտրային նպատակների համար:

5. Ստեղծագործության վերարտադրություն կրթական և գիտահետազոտական հաստատությունների կողմից

1. Գրադարանին կամ այլ ուսումնական հաստատությանը պետք է թույլատրված լինի օրինական ճանապարհով ձեռք բերված ստեղծագործությունները վերարտադրել լսարանային պարապմունքների կամ հեռակա ուսուցման համար այնպես, որ չվնասվեն հեղինակի կամ այլ իրավատիրոջ շահերը: Ուսուցիչը կամ ուսանողը պատճենումներ կարող է անել բացառապես ուսումնական նպատակների համար, անկախ ստեղծագործության ձևաչափից և նպատակն արդարացնող ծավալով:

2. Ուսումնական հաստատությունները ստեղծագործության վերարտադրված օրինակները կարող են ընդգրկել տպագիր և էլեկտրոնային ուսումնական փաթեթների և այլ ծրագրերի մեջ, որոնք նախատեսված են օգտագործել ուսումնական միջավայրում (ներառյալ առկա, հեռակա, առցանց, ուսումնական, գիտահետազոտական կրթական և գրադարանային միջավայրերում) անվտանգ ներքին ցանցի միջոցով, որտեղ կարող են մուտք ունենալ միայն տվյալ ուսումնական հաստատության դասավանդողներն ու ուսուցիչները:

3. Ուսումնական հաստատությանը պետք է թույլատրվի վերարտադրել նաև ամբողջ դասագիրքը, եթե այն տպագրությունից դուրս է եկել ոչ պակաս, քան երկու տարի առաջ, օրինական օրինակները չեն վաճառվում տվյալ երկրում կամ մատչելի չեն գնելու համար, կամ ստեղծագործության իրավատիրոջը անհնար է գտնել:

Հիմնավորում

Սույն դրույթը բացառություն է վերարտադրության, տարածման, հանրությանը մատչելի դարձնելու իրավունքին:Նոր տեխնոլոգիաները հնարավորություն են տալիս ստեղծելու ապահով վիրտուալ ուսումնական միջավայր և առավել ժամանակակից ու արդյունավետ եղանակներ դասավանդելու, սովորելու ուփոխգործունեության համար: Այս դրույթը թույլ է տալիսդասավանդողներին և ուսումնառողներին ապահով ներքին ցանցում օգտվելու գիտական ռեսուրսներից և արդյունավետորեն իրականացնելու ուսումնական գործընթացը: Հետևաբար, բացառությունները պետք է այնքան ընդլայնվեն, որ ապագա ուսանողները կարողանան էլեկտրոնային ստեղծագործություններն ազատ օգտագործել այնպես, ինչպես իրենց նախորդ

սերունդներն են կարողացել տպագիր ստեղծագործություններն օգտագործել:

6. Անհայտ հեղինակի ստեղծագործությունների վերարտադրում

Գրադարաններին և արխիվներին պետք է թույլատրվի վերատադրել և հանրությանը մատչելի դարձնել անհայտ հեղինակի ստեղծագործությունները, երբ իրավատերը չի կարող նույնականացվել, կամ նրա գտնվելու վայրը չի կարող պարզվել ոչ առևտրային նպատակով օգտագործման համար ի շահ հասարակության, եթե անհիմն կերպով չեն վնասվում իրավատիրոջ օրինական շահերը: Եթե իրավատերը հայտնվում է, ապա գրադարանները և արխիվները պարտավորվում են հետագա օգտագործման համար թույլտվություն ստանալ կամ դադարեցնել ստեղծագործության օգտագործումը:

Հիմնավորում

Սույն դրույթը ներկայացնում է բացառություն վերարտադրության, վերամշակման, հարմարեցման, հանրությանը հաղորդակցման իրավունքին: Նպատակն է գրադարաններին և արխիվներին թույլատրել վերարտադրել, թվայնացնել իրենց ֆոնդերը պահպանության և հանրությանը մատչելի դարձնելու նպատակով: Այլապես կխափանվի գրադարանների և արխիվների հիմնական գործառույթներից մեկը՝ ազգային և միջազգային մշակութային ժառանգության պահպանումը:

7. Ստեղծագործությունների վերարտադրում հաշմանդամների համար

Առանց հեղինակի կամ այլ իրավատիրոջ համաձայնության գրադարաններին և արխիվներին պետք է թույլատրվի փոխել ստեղծագործության ձևաչափը տեսողական, ընթերցանության և այլ արատներ ունեցող անձանց համար մատչելի դարձնելու նպատակով, հաշմանդամներին տրամադրել այդ մատչելի օրինակները ցանկացած միջոցներով (ներառյալ ոչ առևտրային փոխատվությունը կամ էլեկտրոնային փոխատվությունը լարերով կամ անլար միջոցներով): Անձը կամ կազմակերպությունը, որը ցանկանում է նախաձեռնել նման գործունեություն, պետք է այդ ստեղծագործության կամ դրա օրինակների օրինական հասանելիություն ունենա և գործունեությունը նախաձեռնի առանց շահույթ հետապնդելու: Հաշմանդամը, ում հաղորդվել է ստեղծագործությունը, կարող է անձնական նպատակների համար վերարտադրել այն առանց իրավատիրոջ թույլտվության:

Առանց հեղինակի կամ այլ իրավատիրոջ համաձայնության պետք է թույլատրվիհաշմանդամների համար արտահանել կամ ներկրել այլ երկրներից ձևափոխված ստեղծագործություններ այն պայմանով, որ այդ ձևափոխությունը կատարվել է ոչ առևտրային նպատակներով:

Հիմնավորում

Սույն դրույթը ներկայացնում է բացառություն վերարտադրության, ձևափոխման, թարգմանության, վերամշակման, տարածման հանրությանը հաղորդելու գույքային իրավունքին՝ ի շահ հաշմանդամ անձանց սպասարկման:

Մարդու իրավունքները խախտվում են, երբ գիտելիքի մատչելիությունը խոչընդոտվում է հաշմանդամների համար: Նոր տեխնոլոգիաները հնարավորություններ են ստեղծում տեսողական, ընթերցանության և այլ արատներ ունեցող անձանց նույնպես մուտք ունենալու գիտական ու տեղեկատվական ռեսուրսներին կրթության, հետազոտության և այլ նպատակների համար: Էլեկտրոնային հրատարակությունները միշտ չէ, որ մատչելի են նրանց համար: Այս բացառիկ դրույթը թույլ կտա գրադարաններին և արխիվներին փոխելու ստեղծագործության ձևաչափը հաշմանդամներին այն մատչելի դարձնելու նպատակով, ինչպես նաև կնպաստի համընդհանուր ներդաշնակ հասարակության ստեղծմանը: Բացառությունները պետք է կիրառելի լինեն բոլոր ձևաչափերի համար:

8. Պաշտպանության տեխնիկական միջոցներ

Գրադարաններին պետք է թույլատրվի շրջանցել պաշտպանության տեխնիկական միջոցները ստեղծագործության բարեխիղճ օգտագործումն ապահովելու նպատակով: Գրադարաներին և արխիվներին պետքէ թույլատրվի ձեռք բերել անհրաժեշտ ծառայություններ կամ միջոցներ շրջանցումն իրականացնելու համար:

Հիմնավորում

Սույն դրույթն ընդգրկում է բացառություն գրադարաների և արխիվների համար «Տեխնիկական միջոցների պաշտպանությունը» հոդվածի նկատմամբ: Այս բացառությունը թույլատրում է գրադարաներին և արխիվներին շրջանցելպաշտպանության տեխնիկական միջոցները՝ օրենքով իրենց հասանելիք բացառություններից ու սահմանափակումներից օգտվելու համար: Ըստ այս

բացառության՝ շրջանցումը թույլատրվում է իրականացնել այն պայմանով, որ գրադարանները և արխիվներն ունենան տվյալ ստեղծագործության օրինական տիրապետման իրավունք և հրատարակիչներից պահանջեն տրամադրել իրենց միայն մաքուր թվային տարբերակներ (այսինքն՝ այնպիսի տարբերակներ, որոնք զերծ կլինեն պաշտպանության միջոցներից) կամ տրամադրեն իրենց անհրաժեշտ գաղտնաբառերը, կոդերը ստեղծագործության օգտագործման համար:

Պաշտպանական տեխնիկական միջոցները խնդրահարույց են գրադարանների համար, քանի որ պաշտպանության տեխնիկական միջոցները չեն կարող տարբերակել օրինական և անօրինական օգտվողներին, և պաշտպանության տեխնիկական միջոցները, որոնք չեն դադարում գործելուց նույնիսկ հեղինակային իրավունքի ժամկետն անցնելուց հետո, շարունակում են խոչընդոտել մշակութային արժեքները հանրամատչելիությանը նույնիսկ այն ժամանակ, երբ տվյալ ստեղծագործությունն այլևս չի պահպանվում հեղինակային իրավունքով:

9. Պատասխանատվության սահմանափակում

Պատասխանատվության սահմանափակման վերաբերյալ դրույթ պետք է լինի գրադարանների և գրադարանային ոլորտի աշխատողների համար, որոնք արդարացի են աշխատումև համոզված են կամ բավարար հիմքեր ունեն համոզվելու, որչենխախտում հեղինակային իրավունքի մասին օրենքը:

Հիմնավորում

Սույն դրույթը պատասխանատվության սահմանափակում է ապահովում գրադարանների և արխիվների աշխատողներին ընթերցողների կողմից կատարված ոչ միտումնավոր խախտումների համար, եթե՝

- տվյալ ստեղծագործությունն օգտագործվել է գրադարանների և արխիվների համար օրենքով թույլատրելի բացառությունների շրջանակներում:
- հիմքեր կան, որ տվյալստեղծագործության նյութի պաշտպանության ժամկետը լրացել է, և այն դարձել է հանրության սեփականությունը, կամ տվյալ նյութը բաց բովանդակությամբ արտոնագրով է ձեռք բերված:

10. Գույքային իրավունքների գործողության ժամկետը

Գրական գեղարվեստական ստեղծագործությունների համար գույքային

իրավունքների պահպանության ստանդարտ ժամկետն ընդգրկում է հեղինակի կյանքի տարիները և նրա մահից հետո 50 տարի՝ ինչպես ամրագրված է Բեռնի կոնվենցիայում և TRIPS պայմանագրում:

Հիմնավորում

Գույքային իրավունքների գործողության ժամկետի երկարաձգումը նշանակում է, որ տեղեկությունը շարունակում է ավելի երկար մնալ որպես մասնավոր սեփականություն՝ ի օգուտ իրավատերերի և ի վնաս գրադարանների, կրթության ոլորտի և այլ շահագրգիռ կողմերի:

Վերոնշյալ 10 առաջարկություններից միայն վերջինը՝ գույքային իրավունքների գործողության ժամկետի փոփոխությունը, չի ներառվել «Հեղինակային իրավունքի մասին» ՀՀ օրենքի նախագծում, այսինքն՝ նշված ժամկետն ընդգրկում է հեղինակի կյանքի տարիները և նրա մահից 70 տարի (50 տարվա փոխարեն): Վերոնշյալ առաջարկություններն ու դրանց հիմնավորումները հիմք են հանդիսացել հեղինակային իրավունքին առնչվող ազգային օրենսդրական դաշտի բարելավման համար՝ մի կողմից ի շահ ակադեմիական հանրության, բուհերի, գրադարանների և այլ շահակիցների, մյուս կողմից՝ ի նպաստ արժեքավոր գիտելիքի հանրամատչելիության ապահովմանը և դրա փոխանցման ուղիների դյուրացմանը:

Որպես հավելում՝ պետք է նշել նաև վերոնշյալ հիմնավորումներից մասնավորապես 6-րդին՝ անհայտ հեղինակի ստեղծագործությունների վերաբերյալ դրույթին առնչվող միջազգային ընդհանուր փորձի մասին: Անհայտ հեղինակի կամ «որբ» ստեղծագործությունների իրավատերերին գտնելը դժվար է, հաճախ անհնար: «որբ» ստեղծագործությունների դեպքում անհնար է թույլտվություն ստանալ դրանց այնպիսի օգտագործման համար, որը սահմանված չէ հեղինակային իրավունքի մասին օրենքով: Հետևապես դրանց օգտագործման համար թույլտվություն է պահանջվում: Հեղինակային իրավունքի ԱՄՆ գրասենյակի հայտարարության համաձայն՝ արդյունքում հասարակությունն է տուժում, քանի որ միայն իրավատիրոջը չգտնելու պատճառով տվյալ ստեղծագործությունը մատչելի չէ, և հավանական է, որ իրավատերը ողջ չէ, հետևապես չկա նաև հասարակություն, ում կարող են փոխանցվել

հեղինակի գույքային իրավունքները: Դյուքի համալսարանի իրավաբանական դպրոցի հանրության սեփականության ուսումնասիրության կենտրոնը պարզել է, որ «որբ» ստեղծագործություններն ամենայն հավանականությամբ 20-րդ դարի մշակութային արժեքների մեծ մասն են կազմում: Կան նոր հեղինակներ, որոնք ցանկանում են օգտվել այդ ստեղծագործություններից, սակայն չեն կարողանում գտնել իրավատերերին, որոնցից կարելի է թույլտվություն ստանալ: Միևնույն ժամանակ չի բացառվում, որ գտնվի իսկական իրավատերը, որը, որպես կանոն, ուրախությամբ ընդունում է իր ստեղծագործության օգտագործման փաստի տնօրինումը՝ ստանալով նվազագույն փոխհատուցում: Ի վերջո, իրավատիրոջը չգտնելու պատճառները կարող են տարբեր լինել, օրինակ, այն, որ հեղինակի անունն անհայտ է կամ եթե անգամ հայտնի է, հեղինակը մահացել է, չունի ժառանգներ, և մահվան տարեթիվը նույնպես հայտնի չէ: Հնարավոր է նաև, որ տվյալ ստեղծագործությունն ընդգրկի այլ հեղինակների աշխատանքներ, որոնք նույնպես հեղինակային իրավունքով պահպանված են, և նրանցից մեկն անհայտ է: Անհայտ հեղինակների ստեղծագործությունները կարող են լինել գրական ստեղծագործություններ, ֆիլմեր, լուսանկարներ, տարբեր տիպի այլ ստեղծագործական աշխատանքներ [Գալստյան 2012: 35-36]:

Հատկանշական է, որ որոշ երկրներ փորձել են առաջարկել որոշ հնարավոր լուծումներ, օրինակ՝ Կանադայում Հեղինակային իրավունքի հարցերով զբաղվող վարչությունը կարող է տրամադրել բացառիկ արտոնագրեր այն հրատարակված ստեղծագործությունների օգտագործման համար, որոնց իրավատերերին հնարավոր չէ գտնել: Նման արտոնագիր ստանալու համար անհրաժեշտ է համապատասխան դիմումի ձև լրացնելով հանձնաժողովին հիմնավորել և ցույց տալ, որ ջանքեր են գործադրվել իրական իրավատիրոջը գտնելու համար: Եթե հանձնաժողովը գտնում է, որ իսկապես ջանքեր են գործադրվել, առաջարկում է որոշակի պայմաններ և վճարվող վարձ տվյալ ստեղծագործությունն օգտագործելու համար: ԱՄՆ-ում Հեղինակային իրավունքի գրասենյակը 2006 թ. հրապարակել է զեկույց, որում նշվում է, որ անհայտ հեղինակի ստեղծագործությունների ենթադրյալ հրատարակիչները պետք է ամենայն մանրամասնությամբ փնտրեն իրավատերերին: Եթե օրինական իրավատերերը

հայտնվում են և պահանջում վճար իրենց ստեղծագործությունների օգտագործման դիմաց, ապա նրանց պետք է տրամադրվի խելամիտ փոխհատուցում, որը, սակայն փոխհատուցում չէ տրված հեղինակային իրավունքի խախտման համար: Եվրախորհուրդը նույնպես 2006 թ. ընդունած «Երաշխավորագիր թվային գրադարանների համար» (Recommendation on Digital Libraries) փաստաթղթով քաջալերում է արտոնագրային մեխանիզմների զարգացումն ու իրավատերերի հետ համագործակցությունը հատկապես անհայտ հեղինակի և չտպագրված ստեղծագործությունների ոլորտում: ԵՄ անդամ երկրները, հետևապես, կողմ են անհայտ հեղինակի և հանրության սեփականություն դարձած ստեղծագործությունների ցուցակով դիմողներին ապահովելուն [Գալստյան 2012: 38]: Հայաստանի Հանրապետությունում դեռևս չկան հստակ ձևակերպումներ կամ արտոնագրեր, որոնք կսահմանեն անհայտ հեղինակների ստեղծագործությունների օգտագործման կանոնները:

ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈԼՈՐՏԻ ԱՌԱՆՑՔԱՅԻՆ ԴԵՐԱԿԱՏԱՐՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ (ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ՂՐՂԶՍՏԱՆԻ ՕՐԻՆԱԿՈՎ)

Կարևորելով մտավոր սեփականության (ՄՍ) կրթության կազմակերպման և իրականացման համապարփակ դիտարկման ապահովումը՝ սույն հետազոտության շրջանակն ընդգրկում է նաև ՀՀ-ում և Ղրղզստանում գործող՝ ՄՍ իրավունքի պահպանման խնդիրներով զբաղվող առանցքային կառույցների գործունեության ուսումնասիրության, ինչպես նաև վերջիններիս ներկայացուցիչների հետ ունեցած հանդիպում-քննարկումների և խորքային հարցազրույցների արդյունքները: Ղրղզստանում կազմակերպվել են քննարկումներ Մտավոր սեփականության ու նորարարությունների պետական ծառայության ենթակայության ներքո գործող Մտավոր սեփականության պետական ֆոնդի, Հեղինակային և հարակից իրավունքների պետական գործակալության և Պատենտային պետական գրադարանի ներկայացուցիչների հետ: ՀՀ-ում ուսումնասիրվել են Մտավոր սեփականության գործակալության Հեղինակային և հարակից իրավունքների բաժնի, «Հայհեղինակ» հասարակական կազմակերպության, Մտավոր սեփականության իրավունքի կենտրոնի և EIFL-IP (Էլեկտրոնային տեղեկատվություն գրադարանների համար)[18] միջազգային հասարակական կազմակերպության գործունեությունն ու դերակատարությունը ՄՍ բնագավառի բարելավման խնդրում և այդ կազմակերպությունների ներկայացուցիչների՝ որպես ՄՍ ոլորտի մասնագետների մոտեցումները: ՄՍ ոլորտի կարգավորմամբ զբաղվող վերոնշյալ կառույցների գործունեությամբ չի սահմանափակվում ՄՍ պահպանման ոլորտի դաշտը, սակայն այդ կառույցներն ազգային մակարդակում ՄՍ ոլորտի բարեփոխման այն հիմնական դերակատարներն են, որոնց հետ ակտիվ համագործակցության շնորհիվ բուհերը կարող են արդյունավետորեն լուծել ՄՍ կրթության կազմակերպմանն առնչվող մի շարք առանցքային խնդիրներ:

[18] Հայաստանում EIFL-ը սկսել է գործել 1999 թ. ի վեր՝ էլեկտրոնային գրադարանների կոնսորցիումին ՀՀ անդամակցությամբ, http://www.eifl.net/country/armenia:

Ե՛վ ՀՀ-ում, և՛ Ղրղզստանում բարձրագույն կրթության իրականացման շրջանակում ՄՍ ոլորտի խնդիրների լուծման ինստիտուցիոնալ մոտեցումները գլխավորապես հիմնվում են քննարկվող երկու երկրներում ազգային քաղաքականության և միջազգային դիրքորոշումների վրա, քանի որ Ղրղզստանը և Հայաստանը Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպության (WIPO) անդամ երկրներից են և համապատասխանաբար միացել են միջազգային համաձայնագրերին՝ ստանձնելով միջազգային պարտավորություններ[19]:

Ղրղզստանում Մտավոր սեփականության ու նորարարությունների պետական ծառայությունը (Кыргызпатент) զբաղվում է մտավոր սեփականության իրավունքի պահպանման և նորարարությունների զարգացման հիմնախնդիրներով՝ ապահովելով ոլորտում պետական քաղաքականության իրականացումն ու խթանելով ոլորտային օրենսդրական դաշտի բարեփոխումը: Այս իրավաբանական մարմնի գործունեության նպատակն է պահպանել ՄՍ օբյեկտներն ու զարգացնել նորարարական գործունեությունը՝ ազգային և միջազգային օրենքներին համահունչ: Համապատասխանաբար, Մտավոր սեփականության ու նորարարությունների պետական ծառայության ներքոգտնվող **Մտավոր սեփականության պետական ֆոնդը**, որը սերտ համագործակցում է հեղինակային և հարակից իրավունքների պետական գործակալության և պատենտային պետական գրադարանի հետ, աջակցում է ստեղծագործ անհատներին և նորարարներին՝ նրանց տրամադրելով նյութական (օրինակ՝ ստեղծագործական աշխատանքների տպագրության համար ֆինանսական ռեսուրսներ) և ոչ նյութական աջակցություն: Համեմատական կարգով հարկ է նշել, որ ՀՀ-ում ՄՍ պահպանման ոլորտի առանցքային դերակատարներից են Մտավոր սեփականության գործակալությունը և մասնավորապես այդ գործակալության կառուցվածքային ստորաբաժանման՝ Հեղինակային և հարակից իրավունքների բաժինը, ինչպես նաև «Հայհեղինակ» հասարակական կազմակերպությունը, Մտավոր սեփականության իրավունքի կենտրոնը, որոնք իրենց գործունեության շրջանակներում խթանում են ազգային մակարդակում ՄՍ ոլորտի բարելավումը և հանրությանը

[19] Հայաստանի Հանրապետությունը 1993 թվականից, և Ղրղզստանը՝ 1991 թվականից ի վեր Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպության (WIPO) անդամ երկրների շարքում են:

շարունակաբար հաղորդակից են դարձնում ՄՍ ոլորտի արդի հիմնախնդիրների լուծման գործընթացներին:

Բիշկեկում գտնվող **Պատենտային պետական գրադարանն** իր գործունեությամբ փաստում է իր առանձնահատուկ ներդրումը երկրում ՄՍ ոլորտի բարեփոխման խնդրում: Գրադարանը զբաղվում է գիտական ու գրական ռեսուրսների պահպանմամբ, ստեղծել է և շարունակաբար համալրում է ռեսուրսների էլեկտրոնային բազան, գրանցում է ՄՍ օբյեկտները և ակտիվիամագործակցում է ուսումնական հաստատությունների հետ (միջոցառումների կազմակերպում, աշակերտների և ուսանողների իրազեկության բարձրացմանն ուղղված աշխատանքների իրականացում և այլն): Պատենտային գրադարանի օգտատերերից են նաև նորարարները, որոնց՝ գրադարանի ծառայություններից օգտվելու հիմնական նպատակն է գրադարանի աջակցությամբ տվյալների շտեմարանում փնտրել և գտնել պատենտներ, առևտրային ապրանքանիշներ, մոդելներ և ՄՍ պահպանման ենթակա այլ օբյեկտներ: Գրադարանը համապատասխանաբար նրանց տրամադրում է ապրանքանիշների վերաբերյալ տվյալներ և պաշտոնական եզրակացություն:

Մտավոր սեփականության կրթության կազմակերպման և իրականացման առաջնային դերակատարների՝ ուսումնական հաստատությունների հետ համագործակցության վերաբերյալ պետք է նշել, որ Ղրղզստանում ՄՍ ոլորտում գործող կառույցներն ակտիվորեն համագործակցում են հատկապես հանրակրթական դպրոցների, բուհերի, ազգային գրադարանի և շահագրգիռ այլ կառույցների հետ՝ կազմակերպելով վերապատրաստումներ, կլոր-սեղան քննարկումներ, սեմինարներ, ռադիո- և հեռուստահաղորդաշարեր, տարածելով տեղեկատվական թերթիկներ ու գրքեր: Տեխնիկական և հասարակագիտական ուղղվածություններ ունեցող որոշ համալսարաններում նման ակտիվ և արդյունավետ համագործակցության արդյունքում ներմուծվել է կամընտրական դասընթաց՝ *պատենտաբանություն* (իրավաբանություն, տնտեսագիտություն, կրթության կառավարում և հարակից այլ մասնագիտություններով ուսանողների համար): Այդ դասընթացի շրջանակում ուսանողները ձեռք են բերում ՄՍ ոլորտի (հատկապես արդյունաբերական սեփականության բնագավառի) բազային գիտելիքներ: Բացի այդ, Մտավոր սեփականության պետական ֆոնդի և այլ

կառույցների նախաձեռնությամբ շարունակաբար կազմակերպվում են տեղեկատվական այցեր Ղրղզստանի այլ շրջաններ: Հատկանշական է նաև, որ շրջաններում կազմակերպվող տեղեկատվական այցերի համար ընտրված թիրախային խմբերը հիմնականում բուհերն են, որոնցից էլ ընտրվում են հետագա մասնագիտական վերապատրաստումների համար մասնակիցներ: Այս ռազմավարությունը պայմանավորված է նրանով, որ ՄՍ ոլորտին առնչվող վերապատրաստումները, դասընթացներն ու միջոցառումները, որոնք հիմնականում կենտրոնացված կերպով իրականացվում են մայրաքաղաք Բիշկեկում, երկրի ոչ բոլոր շրջաններում ապրող հանրությանը և ուսանողներին են հնարավորություն ընձեռում ներգրավվելու ոլորտի հիմնախնդիրների իրազեկման, քննարկման և բարելավմանն ուղղված միջոցառումներին: Ղրղզստանի այլ շրջաններում կազմակերպվող դասընթացներն ու կլոր-սեղան քննարկումներն իրականացվում են հատկապես էներգետիկայի, արդյունաբերության, բժշկության ու կրթության ոլորտների, ինչպես նաև փոքր և միջին բիզնեսի ներկայացուցիչների ու ձեռներեցների համար:

Ելնելով իր գործունեության առանձնահատկություններից ու նպատակներից՝ Մտավոր սեփականության պետական ֆոնդն ամեն տարի նախատեսում և տրամադրում է կրթաթոշակներ բոլոր այն ուսանողների համար, ովքեր որևէ նորարարություն են իրականացրել կամ ստեղծագործական աշխատանքի արդյունքում արտադրանք են ստեղծել: Հաղթողներին տրվում է ֆինանսավորում օրինակելի մոդելների համար՝ հաշվի առնելով վերջիններիս անհրաժեշտությունն ու օգտակարությունը երկրի սոցիալ-տնտեսական վիճակի բարելավման համար: Այս դիրքորոշումը հավաստում է, որ ՄՍ ոլորտի բարելավման աշխատանքներն ինչպես բուհերի, այնպես էլ պետական կառույցների կողմից հետևողականորեն են կազմակերպվում և իրականացվում: Հետևապես ստեղծարարությունն ու նորարարությունը խթանող նման հաջողված փորձը կարելի է համարել օրինակելի:

Հայաստանում ՄՍ պահպանության և այդ ուղղությամբ պետական քաղաքականության իրականացման (ներառյալ վեճերի լուծման) գործառույթները ստանձնել են մի շարք պետական մարմիններ և ոչ պետական կառույցներ, որոնցից են ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարությունը (նախկինում՝ ՀՀ

էկոնոմիկայի նախարարություն) և դրա կազմում գտնվող ՀՀ մտավոր սեփականության գործակալությունը, ՀՀ դատարանները և այլ իրավապահ մարմիններ, ՀՀ օրենքով նախատեսված գործունեություն իրականացնող ոչ պետական կառույցներ:

ՀՀ օրենքով նախատեսված գործունեություն իրականացնող ոչ պետական կառույցներ, որոնցից են.

- **«Հայհեղինակ» հասարակական կազմակերպությունը,** որի շուրջ 16-ամյա գործունեությունն ուղղված է մտավոր սեփականության ոլորտում հեղինակային իրավունքների իրացմանն ու պահպանության խթանմանը: «Հայհեղինակ»-ի գործունեությունը նպատակաուղղված է դատարանում, պետական և ոչ պետական մարմիններում հեղինակների շահերի ներկայացմանը, հեղինակային իրավունքով պահպանվող ստեղծագործություններն օգտագործող կազմակերպությունների հետ թույլտվության համաձայնագրերի կնքմանը, հեղինակային վարձատրության հավաքմանը, բաշխմանն ու կազմակերպությունների անդամներին դրա վճարմանը և այլն [Խաչիկյան, Ներսիսյան, «Հայհեղինակ» ՀԿ 2008: 9, 268, http://www.armauthor.am/home.html]:
- **Մտավոր սեփականության իրավունքի կենտրոնը** [IPRC, www.ipr-center.org], որի առաքելությունն է նպաստել ՀՀ-ում գիտելիքահենք տնտեսությանզարգացմանն ուՄՄ իրավունքի ոլորտի բարելավմանը, հասարակությանը իրազեկել այս բնագավառին առնչվող փոփոխությունների, զարգացումների ու առաջընթացի վերաբերյալ, խթանել ՀՀ-ում նորարարությունն ու ստեղծարարությունը տարբեր ծրագրերի, գիտաժողովների, վերապատրաստումների և այլ միջոցառումների կազմակերպման միջոցով:
- ՄՄ ոլորտում իրավաբանական և ֆիզիկական անձանց խորհրդատվական ծառայություններ տրամադրող կազմակերպություններ ու ընկերություններ:

ՄՄ ոլորտի մասնագետները նշում են, որ ՀՀ-ն վերջին տասնամյակում առաջընթաց է գրանցել ՄՄ իրավունքի պահպանման ոլորտում, որոնցից թվին են դասվում նաև հեղինակային իրավունքին առնչվող օրենսդրական դաշտում կատարված փոփոխությունները («Հեղինակային իրավունքի մասին» ՀՀ օրենքի նախագծի մշակում), ՄՄ իրավունքի պահպանման վերաբերյալ ակադեմիական

հանրության իրազեկվածության մակարդակի բարձրացումը, բուհական և ոչ բուհական գրադարանավարության շրջանակում մասնագիտական վերապատրաստումների իրականացումը և այլն: Այսուհանդերձ, ակադեմիական միջավայրում ոլորտային փոփոխություններն անխուսափելիորեն առաջ են բերում նոր խնդիրներ՝ կապված թվային միջավայրում ստեղծագործությունների հասանելիության ապահովման, միջազգային չափանիշներին համապատասխանելու առավել մեծ ձգտման, գիտական արտադրանքների ստեղծման, արդյունավետ օգտագործման և տարածման նկատմամբ պահանջների խստացման և այլ պահանջների հետ: ՀՀ-ում ՄՍ ոլորտի մասնագետները, որոնք համագործակցում են բուհերի հետ, գտնում են, որ ՄՍ իրավունքի պահպանման պատասխանատվությունն ավելի շատ դասավանդողներինն է, քանի որ նրանք օրինակ են ծառայում ուսումնառողների համար, ՄՍ իրավունքի իրավախախտումներն ուսումնական գործընթացներում կանխելու և վերահսկման գործառույթներ ունեն և որպես մանկավարժներ՝ կոչված են խթանելու ուսումնառողների ստեղծագործական մտքի զարգացումն ու բարոյական արժեհամակարգի ամրապնդումը: Այս մանկավարժական խնդիրների հաղթահարումը պահանջում է նաև դասավանդողների՝ ՄՍ ոլորտի (հատկապես հեղինակային իրավունքի) այն հիմնադրույթներին քաջատեղյակության անհրաժեշտությանը, որոնք ուղղակիորեն առնչվում են իրենց մանկավարժական, գիտամեթոդական և դասավանդման գործունեությանը:

ՄՍ ոլորտի մասնագետները շարունակաբար շեշտադրում են նաև ավագ դպրոցներում ՄՍ իրավունքին առնչվող առարկա ուսուցանելու կամ դասընթաց(ներ) իրականացնելու անհրաժեշտությունը, քանի որ ՄՍ ոլորտի պահպանման ոլորտում առկա ազգային ու ինստիտուցիոնալ խնդիրները, ներառյալ ՄՍ իրավունքների խախտման դեպքերը հանրային իրազեկվածության ու իրավագիտակցության ցածր մակարդակի, ՄՍ ոլորտի ոչ բավարար գիտելիքների արդյունք են: Հետևապես, մասնագետները ՄՍ ոլորտի բարելավման խնդիրն ուղղակիորեն կապում են ուսումնական հաստատություններում ՄՍ կրթության իրականացման անհրաժեշտության հետ: Օրինակ՝ ավագ դպրոցներում կարելի է ՄՍ իրավունքին առնչվող առարկա կամ որոշ դասընթացներ ուսուցանել հասարակագիտության,

բարոյագիտության, մարդու իրավունքների և հարակից այլ առարկաների շրջանակներում՝ խթանելով աշակերտների իրավական և քաղաքացիական դաստիարակության խնդիրների լուծումը և ապահովելով ՄՍ պահպանման ոլորտի ընդհանուր գիտելիքների փոխանցումը: Բուհերում ՄՍ պահպանման ոլորտին առնչվող առարկաների կամ դասընթացների ներմուծումը նույնպես կարևորվում է, և այս պարագայում շեշտադրվում է ոլորտային առավել խորքային գիտելիքների փոխանցումը, ստեղծարարության ու նորարարության խթանումը և գիտելիքահենք հանրության զարգացումը:

ՄՍ կրթության կազմակերպման խնդիրը, ի վերջո, համընդհանուր բնույթ ունի և պահանջում է ինչպես ուսումնական հաստատությունների, այնպես էլ հասարակության, պատկան մարմինների և շահագրգիռ այլ կողմերի ակտիվ դերակատարությունը: Սույն հետազոտության շրջանակում ՄՍ ոլորտի մասնագետների հետ կազմակերպված քննարկումները փաստում են, որ ՀՀ-ում գործող մասնագիտական կազմակերպությունները պատրաստ են ակտիվացնելու համագործակցությունն ուսումնական հաստատությունների հետ ևիրականացնելու վերապատրաստումներ բուհերում:

ՄՍ պահպանման ոլորտում իրավախախտումների վերաբերյալ մասնագետները նշում են, որ ՄՍ իրավունքների պաշտպանությամբ զբաղվող կառույցներից (օրինակ՝ ՀՀ ոստիկանության վարչության 6-րդ բաժին) և պաշտպանական մեխանիզմներից զատ իրավատերը նախևառաջ ինքը պետք է պաշտպանի իր իրավունքները, իսկ ուսումական հաստատությունները պետք է մշակեն իրենց ներքին կանոնակարգերը՝ մի կողմից հստակեցնելով իրենց պահանջները և մյուս կողմից խթանելու նորարարությունների, ստեղծագործական մտքի զարգացումը: Պետության դերը մեծ է իրավախախտումների կանխարգելման ու վերահսկման տեսանկյունից: Օրինակ, պետք է գործեն համապատասխան պետական կառույցներ, որոնք կվերահսկեն և կարգելեն անօրինական բազմացմամբ կամ արտատպմամբ զբաղվող պատճենահանման կենտրոնների գործունեությունը (որպես հեղինակների գույքային իրավունքները խախտողներ): Այդուհանդերձ, հեղինակն ինքը պետք է առաջինը բարձրաձայնի իր իրավունքների խախտման վերաբերյալ, եթե հայտնաբերել է

խախտման դեպք, սակայն իրավախախտումն ապացուցելը հեշտ չէ, քանի որ հեղինակային իրավունքով պահպանվող օբյեկտները պետական պարտադիր գրանցման ենթակա չեն՝ ի տարբերություն արդյունաբերական սեփականության օբյեկտների (լոգոներ, ապրանքային նշաններ, գյուտեր և այլն): Որպես ապացուցման մեխանիզմ՝ պետք է հիմնվել միջազգային փաստաթղթերի և ոլորտը կարգավորող ՀՀ օրենսդրական դաշտի վրա: Մասնավորապես «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» գործող ՀՀ օրենքում առկա է ստեղծագործության ի պահ թողնելու վերաբերյալ դրույթ [Գլուխ 2, Հոդված 8], որի հիման վրա հեղինակը կարող է նախքան ստեղծագործության հրապարակումը ի պահ թողնելիր ստեղծագործությունը և գրանցել ի պահ թողնելու ամսաթիվը՝ ստանալով համապատասխան տեղեկանք (որպես լրացուցիչ ապացույց) (ՀՀ-ում հեղինակը կարող է իր ստեղծագործությունն ի պահ թողնել «Հայհեղինակ» ՀԿ-ում):